4478

9(47.92)
Г-62

9(47.92)
Բ-62

Բ. ԲԻԲԻՆԵՅՇՎԻԼԻ

9(47.92)

25 ՏԱՐԻ

Հ.Ս.Խ.Հ. ՊԵՏՀՐԱՏ
19 * ԵՐԵՎԱՆ * 31

19 AUG 2011
24 JAN 2006

Բ. ԲԻԲԻՆԵՅՇՎԻԼԻ

9(47.92)
Բ-62
1471

25 ՏԱՐԻ

5351

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1931

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна

05 MAR 2013

4478

ԹԵՍԱԿԱՆ ԳՐ...
Гос. Б...
ՀԱՍՌ-Арм...
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мяс...

Ф

6128-70

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Հրատ. № 1541. Պատվեր. 6324 (ր). Պատ. 1373. Տիրաժ 3000.

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Ընկեր Բ. Բիբինեյշվիլու սույն գրքույկն իր խոշոր մասով վերաբերում է նախահոկտեմբերյան շրջանի Վրաստանում ծավալվող հեղափոխական շարժմանը: Հեղինակը իբրև մասնակից այդ դեպքերին՝ գրի յե առել իր 25 տարվա հիշողությունները, տալով առատ և հարուստ նյութ Անդրկովկասի հեղափոխական շարժումների ուսումնասիրողին: Իր հիշողությունները նա լրացրել է տեղ-տեղ առանձին պատմական վավերագրերով, օգտագործելով այդ նպատակի համար պետական արխիվային ֆոնդերը: Բիբինեյշվիլու այս գործը վրացերեն մի քանի հրատարակություն է ունեցել—նրա առանձին հոդվածները լույս են տեսել ռուսական ժուռնալներում: Մեզ համար այս գրքույկը նույնպես մեծ արժեք ունի իբրև միջոց՝ ծանոթանալու համար Վրաստանի անցյալ հեղափոխական շարժումներին: Հեղինակը չի գրում պատմություն, նա չի տալիս վերլուծություններ և չի հանում ընդհանրացումներ: Այդպիսի նպատակ նա իրեն չի առաջադրել: Նա պատմում է դեպքերը ինչպես գիտի, նկարագրում է գործողությունները ինչպես յեղել են, տալիս է առանձին նկարագրեր, առանձին դեմքեր, վորոնք այդ շարժումների մեջ կենտրոնական տեղ են գրավել: Այս գրքույկում ընթերցողը կտեսնի առանձին նկարագրեր Ստալինի, Ե-

Նաւքիձեյի, Կեցխովելու, Կամոյի և մի ամբողջ շարք հեղափոխական գործիչների կյանքից առանձին փաստեր, իրողություններ, վավերագրային հիշատակություններ, վորոնք գրքույկն ե՛լ ավելի արժեքավոր են դարձնում: Միանգամայն իրավացի յե վրացերեն վերջին հրատարակության առաջաբան գրողը, թե ընթերցողը այս գրքից չի կարող կտրվել, մինչև չվերջացնի ընթերցումը մինչեվ վերջին յերեսը: Իսկ այդպիսի հափշտակությամբ կարդացվում ե այս գրքույկը:

Մեր յերիտասարդությունը, մեր աճող նոր սերունդը այս գրքույկով ձեռք ե բերում մի արժեքավոր գործ իր կոմունիստական դաստիարակությունն ավելի կոփելու, ավելի ամրապնդելու համար:

Մեզ մնում ե ցանկանալ, վոր հատկապես մեր յերիտասարդության մեջ այս գրքույկը մեծ չափով տարածվի:

Ա. Հ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Ընդգրկել քառորդ դար, մինչև իսկ յերբ ինքդ ես ապրել այն ու կրել սեփական կաշվիդ վրա,— դժվար խնդիր ե, յեթե չասենք ծանր ու ընդ սմին պատասխանատու և առանձնապես դժվար, յերբ վերաբերում ե այն մի շրջանի, վոր ընդգրկում ե իր մեջ ամբողջ յերեք հեղափոխություններ...

Մեկը նրանցից— Հոկտեմբերյանը, նոր շրջան, նոր դարագլուխ բացեց մարդկության պատմության մեջ, իսկ յերկուսն ինքնին վիթխարի լինելով հանդերձ, սրա նախապատրաստական աստիճաններն են հանդիսանում:

Ահա այդպիսի մի շրջան ե բաց անում մեր առաջ հեղինակն իր այս մեմուարներով:

Հեղափոխությունը հրաշք չի, նա չի խորտակում որինաչափության ընդհանուր շղթան, բայց տարբերվելով զարգացման խաղաղ ընթացքից, լրացնում ե ու վերջացնում վերջինիս կուտակած քանակական փոփոխությունները, լրացնում ե փոթորկալի, թեև ընդհատումներով և այդ տեսակետից ներկայացնում ե նա իրենից չափազանց որիգինալ մի յերեվույթ: Բայց հեղափոխություններն ել տարբերվում են իրարից իրենց թափի խորությամբ ու լայնությամբ, իրենց ազգային ու համաշխարհային նշանակությամբ ու իրենց շարժիչ ուժերով: Վոմանք նրանցից սահմանափակվում են

մի պետության կամ ազգի շրջանակներում, մյուսները զարգանում են բաց դաշտում մարդկության պատմության մեջ և դրա համար էլ հանդիսանում են ընդհանուրի ուշադրության առարկան:

Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը, վոր բուրժուական հեղափոխությունների դարաշրջան բացեց, մինչեվ այժմ էլ ուսումնասիրության առարկա չէ հանդիսանում, թեև հեղափոխություններ տեղի չեն ունեցել նրանից թե առաջ և թե հետո: Նրա օրիգինալությունն անսպառ է իր լիակատար արմատականությամբ հանդերձ:

Բայց նրա հետ միասին միանգամայն իրավամբ է 1905 թվի հեղափոխությունը, վորը թեև չպսակվեց հաղթանակով, սակայն իր հզոր դղրդյունով ցնցեց բազմամիլիոն ռուս գյուղացիության մինչ ստորին խորքերն ու զարթեցրեց իրենց անշարժությամբ հռչակված արևելյան ժողովուրդներին (Տաճկաստան, Պարսկաստան) իրենց դարավոր քնից: Այդ հեղափոխության ժամանակ, մարդկության պատմության մեջ առաջին անգամ, պրոլետարիատը հանդես է գալիս հեղափոխության հեգեմոնի դերում, իր յետևից տանելով գյուղացիությանն ու ճնշված ազգերին: Յեվ նրա այդ հեղափոխությունից հետո տեղի ունեցավ Փետրվարյան հեղափոխությունը, ապա Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունը, վորն իրենով բացեց պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանը:

Ահա այդ յերեք հեղափոխություններն է նկարագրում իր գրքի մեջ սույն գրքի հեղինակը, կենդանի, գործող անձերով, միաժամանակ արտացոլելով ժողովրդական մեծ շարժման բնորոշ գծերը: Բանվորներ, գյուղացիներ, խոհարարուհիների վորդիք ու իրենք

խոհարարուհիներն — ահա այն գործող անձինք, վոր իրենց ուսերի վրա տարան հեղափոխության ինչպես հանդիսավոր, այնպես էլ առօրյայի ամբողջ ծանրությունն ու արհավիրքը:

Հեղափոխությունն իր փանատիկներն ունի, վորոնք հեղափոխությունը դարձնում են իրենց առօրյա զբաղմունքը, վորոնք որ-ավուր կառուցում են հեղափոխությունն այնպես հասարակ, պարզ ու բնականորեն: Կառուցում են միանգամայն գիտակցորեն ու ակտիվ, հաղթահարելով խմբակայնությունը, դուրս վանելով տնայնագործական յեղանակն ու միշտ շարժման գլուխ անցնելով և հենց դրանով էլ աչքի ընկնում իրենց գերազանցությամբ նախկին մարտիկներից, վորոնք անձնատուր եյին լինում հասարակական ուժերի սանձարձակ տարերքին ու թնդանոթի միս եյին հանդիսանում իրենց ապագա ու ներկա թշնամիների ձեռին:

Ծանր է ընկած մարտիկների մասին պատմել ու կենդանի մնացածների վերաբերմամբ անաչառություն պահպանելը: Հեղինակը կարողացել է զինվել չափավորության զգացմունքով ու տալ իսկական գեղարվեստական ձեվով ճշգրիտ դեպքերը:

Այստեղ կան թե պրոպագանդայի խմբակներ, թե գործարանային բանվորների հետ կապ հաստատելու աշխատանքներ, թե՛ մարտական դրամարկղներ, թե՛ տպարանական մամուլներ, թե՛ կեղծ անձնագրեր, թե՛ գործադուլներ, թե՛ զինված ապստամբություններ, թե՛ բանտեր ու աքսորներ և թե՛ բանտերից փախուստներ ու ուրիշ շա՜տ բաներ, վոր մարդուն հասարակ հեղափոխականից դարձնում են աշխատավորության ազատագրական գործի համար անձնազոհ մարտիկ:

Կարիք չկա գրքի մանրամասների մեջ ընկնելու: Ով բաց անի այն, նա իսկույն կզգա հեղափոխության հունն ու չի կարող այլևս կտրվել նրանից մինչև վերջին յերեսը: Ճշգրիտ, անկեղծ տոնն ու գրավիչ պատկերները բնորոշում են գիրքն ու ինքնին բավարար հանձնարարական են նրա համար:

Մ. ՏՈՐՈՇԵԼԻՁԵ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

1. Վրացական գյուղն 80-ական թվականներին:
2. Հայրենի գյուղում:
3. Տեսուչ Մուսնիցկին:
4. Թիֆլիսի հաշվապահական կուրսերում:
5. Գարեջրի գործարանում:
6. Բանվոր դասի դրությունն 90-ական թվականներին:
7. Ավագ յերեց Վոստորգովը:
8. «Կվալին» և բանակռիվն Ի. Ճավճավաձեյի հետ:
9. Աշխատանք բանվորական խմբակներում ու ընկերներիս ձերբակալումը:
10. 1901 թվի մայիսմեկյան ցույց Թիֆլիսում:
11. Կազմակերպության քայքայումը 1902 թվին իմ ձերբակալումը:

Գյուղացիների ազատությունը, որ Ռուսաստանում հայտարարվեց փետրվարի 19-ի մանիֆեստով, Վրաստանում իրագործվեց 1864—67 թվականներին։

Ճորտ գյուղացին դարձավ ժամանակավոր պարտա-ված գյուղացի, որը ստիպված էր իր ամբողջ կյանքում փրկանք վճարել «ազատ» հողի համար։ Սակայն ազատվելով կալվածատերից, նա ընկավ բյուրոկրատի ճանկը, որը հանձին գավառապետի, պրիստավի ու քյոխվի չոքեց գյուղացու բկին, ծծելով նրա վերջին հյութը։

«Ազատագրված» գյուղը մնում էր իր մռայլ խոր անշարժության մեջ ու ապրում նյութական խիստ կարիքի ճիրաններում։ Փող էր պետք հողը յետ գնելու համար, փող՝ հարկերը վճարելու համար, փող՝ տերտերին, պետական ծանր կոռ ու բեկարը, մեկուսացումն ու կուլտուրական կենտրոններից կտրված լինելը, սնոտիապաշտությունն ու նախապաշարումը —ահա 70-ական 80-ական թվականների վրացական գյուղի ընդհանուր պատկերը։ Բացառություն չէր կազմում և Գուրիան։

Գուրիայի այդպիսի խուլ գյուղական անկյուններից մեկում ծնվել եմ յես 1880 թվին, գյուղական մի աղքատ բանվորի ընտանիքում։ Հայրս ապրում էր պետական հողի վրա, որը նույնիսկ ծայրահեղ կարիքի ժամանակ ո՛չ ծախելու իրավունք ուներ, ո՛չ գրավ դնելու։

Ծնողներս իսկապես ճակատի քրտինքով եյին ճարում իրենց մի կտոր հացը։ Հայրս հողն եր մշակում, մայրս՝ ծխախոտագործությամբ ու չերամապահությամբ եր պարապում, վորպեսզի կերակրեն ընտանիքն ու վճարեն պետական հարկերը։

Գյուղում հայրս համարվում եր դպիր (կարդացող)։ Նա բավական տանելի կերպով կարողանում եր կարդալ ու գրել, վոր այն ժամանակ հազվագյուտ յերեվույթ եր մեր գյուղում։ Նրա իղձն եր՝ հնարավորություն տալ ինձ ավարտելու գյուղական դպրոցը։ Յերբ յոթ տարեկան եյի յես, այբբենարանը տվեց ձեռքս։ Հիշում եմ, մի որ առավոտյան տարավ ինձ դեպի գետակը, վոր հեռու չեր մեր տնից։ Մենք նստեցինք կողք-կողքի, յես վոտներս կախեցի ջրի մեջ։ Այսպիսի որիգինալ շրջապատում, կատարելով վաղուց ի վեր հաստատված սովորության պահանջները, սկսվեց իմ ուսումը։ Հայրս ցույց տվեց ինձ այբուբենի առաջին յերկու տառը։

Հենց նույն թվին ել նա տարավ ինձ մերձակա Վանի գյուղը, վոր տասներկու վերստի վրա յեր մեր գյուղից ու տեղավորեց նոր բացված դպրոցում։

Այստեղ ուսուցիչ եր Իսիդորե Ռամիշվիլին—հետագայում հայտնի մենշեվիկ ու Պետական Դումայի անդամ։

Յես ապրում եյի հորաքրոջս մոտ, ապրում եյինք մենք շա՛տ աղքատ։ Իսիդորե Ռամիշվիլին լավ ուսուցիչ եր համարվում, բայց հաճախ թակում եր յերեխաներին։

Յես կպա հորս ոձիքից, վոր ժողովրդական դպրոցը ավարտելուցս հետո ինձ փոխադրի Ոզուրգեթի քաղաքային դպրոցը։ Մայրս աջակցում եր ինձ։ Բայց

հայրս միտք չեր անում այդ քայլն անել, վորովհետեվ մեր ընտանիքի նյութական դրությունը չափազանց ծանր եր։

Յերկար վորոնումներից ու չարչարանքից հետո հորս հաջողվեց անտառապահի (ոբյեզդչիկ) պաշտոն գտնել ամսական տասչորս ռուբլի ռոճիկով։

Յերեք տարի հետո, 1890 թվին վերջապես ինձ վիճակվեց փափագիս հասնել։ Ինձ տեղավորեցին Ոզուրգեթի քաղաքային դպրոցն, ուր ես սովորեցի մինչև 1896 թիվը։

Դժվար ե այժմ պատկերացնել, թե ի՞նչպիսի աննորմալ պայմաններում անցկացրի յես այդ վեց տարին։ Մատնանիշ կանեմ թեկուզ հենց միայն այն, վոր մի փոքրիկ սենյակում ապրում եյինք հինգ թե վեց աշակերտ ու չորս հոգի տանտերերը։ Աշակերտա—նախկերնիկներից ամեն մեկս ամսական յերեք ռուբլի եյինք վճարում և դրանով իննը թե տասը հոգի պահպանում եյինք մեր գոյությունը։

Այդպես եր մեր տնտեսականը։

Մեր կյանքի գաղափարական քաղաքական կողմի մասին խոսելու հարկ չկա։ Այդ ժամանակ անթափանց ռեակցիայի շրջանն եր, Ալեքսանդր 3-րդ ինքնակալի իշխանության ժամանակ, յերբ բոլոր վո՛չ ռուսների ճակատին խարանված եր «այլազգու» կնիքը։ Յուրաքանչյուր «այլազգու» մեջ իշխանությունը տեսնում եր մի դավաճանի։ Ծայրամասերում տարվում եր ռուսացման խիստ քաղաքականություն։ Այստեղ կատեգորիկ կերպով արգելված եր մայրենի լեզվով խոսելն ու դասավանդելը։

Մասնավորապես վրացական լեզուն բյուրոկրատ-

ների կողմից ուրիշ կերպ չեր կոչվում, քան յեթե «շան լեզու»:

Այսպիսով ցարական կառավարությունն ինքը հող եր տանում, վոր մեր մեջ զարգացնի վոչ միայն բողոք ու ատելության վոգին դեպի միահեծան բռնակալությունը, այլ և զարգացնում եր ազգային վոգին:

Նրանք, ովքեր այն ժամանակ սովորում եյին Ոզուրգեթի քաղաքային դպրոցում, անշուշտ կհիշեն տեսուչ Մուսնիցկուն —մի դաժան բյուրոկրատ ու «իսկական-ռուս հայրենասեր», չնայելով իր լեհական ծագումին:

Հիշում եմ այսպիսի մի դեպք, յերբ Ալեքսանդր 3-րդի մահվան լուրը մեզ հասավ, մենք անչափ ուրախացանք: Կայսեր մահը մեզ ուրախացրեց ամենից շատ նրա համար, վոր նա անսահման վիշտ պատճառեց տեսուչ Մուսնիցկուն: Աշակերտությունը հավաքեցին դպրոցի բակում և այստեղ տեսուչ Մուսնիցկին հայտնեց մեզ «ցավալի» նորությունը: Աչքերն արցունքոտ, նա ասում եր, վոր մեծ դժբախտություն ե պատահել, չկա այլևս ցար-բատյուշկան... և ընդհանրապես այն ամենն, ինչ ասում են այդպիսի դեպքում «պատրիոտները»:

Հազիվ եր նա արտասանել այդ խոսքերը, յերբ մի խմբակ աշակերտների մեջ պոռթկաց դեմոնստրատիվ մի ծիծաղ, մի հռհռոց... Մուսնիցկին կատաղեց ու հրամայեց վողջ աշակերտությունը փակել դպրոցի ներքին հարկում: Այստեղ նա մեզ պահեց հինգ ժամ շարունակ: Այդ դեմոնստրացիայի հետևանքով մի քանի աշակերտներ արտաքսվեցին դպրոցից: Ավելի փոքրերս ազատվեցինք:

Այն ժամանակներում վոչվոք չեր էլ մտածում սովորող յերիտասարդության քաղաքական ու մտավոր դաստիարակության մասին: Դասատուների մեծամասնությունը խուլիգան-շովինիստներ եյին ու հարբեցողներ կամ կարյերիստ-չինովնիկներ, վորոնք, իհարկե, վոչ մի համարմունք չունեյին աշակերտության մեջ: Բացառություն եյին կազմում յերկու դասատու միայն՝ ռուսներից Կիրպիչնիկովը, իսկ վրացիներից՝ Իվ. Գոմարթելին: Դրանց վերաբերմունքը դեպի աշակերտությունը միանգամայն մարդասիրական ու ընկերական եր, վոր այն ժամանակներում հազվագյուտ բան եր:

1896 թվին յես ավարտեցի Ոզուրգեթի քաղաքային դպրոցի դասընթացը: Իմ գիտական պաշարն, իհարկե, չափազանց աղքատիկ եր: Պետք եր շարունակել ուսումը, բայց ավա՜ղ, ծնողներիս նյութական դրությունն անհաղթահարելի արգելք եր հանդիսանում միշտ: Յես ստիպված եյի մի ամբողջ տարի տանը մնալ, այն ժամանակ, յերբ ընկերներիս մեծամասնությունը, վոր ավելի հարուստ ընտանեկան ծագում ունեյին, մտան գիմնազիաներն ու սեմինարիաները: Այդ ժամանակ յես առաջին անգամ զգացի, թե ի՛նչ ե նշանակում նյութական անհավասարությունը, վորքա՛ն անուժ ե աղքատությունն ու ինչքա՛ն մեծ՝ հարստության ուժը, և իմ մատաղ սրտում բույն դրեց ատելության միկրոբը հարուստների դեմ:

Յես շատ կրոնամոլ եյի ու մխիթարվում եյի նրանով, վոր հարուստներն իրենց հատուցումը կստանան այնաշխարհում, ուր նրանց վիճակված ե այրվել դժոխքի բոլբոլական կրակի մեջ: Յես սիրում եյի կրկնել Ավետարանի խոսքերը՝ «ավելի հեշտ ե ուղտին ասեղի ծակով անցնել, քան հարուստին դրախտ ընկնել»:

Յես էլ, մայրս էլ հանգիստ չեյինք տալիս հորս

խնդրելով, որ մեկն ու մեկից պարտք վերցնի մի գումար, որով ես կարողանամ Թիֆլիսում գոնե մի տարի հաշվապահություն սովորել: Ես խոստանում էի հետո մի տարում ավարտել հաշվապահության դասընթացը, վճարել ինձ վրա ծախսված ամբողջ գումարն ու օգնել փոքր յեղբայրներիս կրթություն տալու:

Վերջապես հայրս վճռեց յերեք հարյուր ռուբլի պարտք վերցնել տարեկան 24 տոկոսով ու 1897 թվականի աշնանը յես ճանապարհ ընկա Թիֆլիս ու մտա Մանվելյանցի հաշվապահական կուրսերը: Հարստության և աղքատության հակասությունները այստեղ ինձ համար ավելի պարզ դարձան: Ատելության զգացմունքը դեպի բուրժուաները, առանձնապես դեպի վաճառականությունը, վորի հետ յես ավելի հաճախ էի շփվում, իմ մեջ քանի գնում աճում էր:

Ինչպես հայտնի յե, 90-ական թվականներին մեր մոտ տեղի ունեցավ տնտեսական լիակատար հեղաշրջում: Հին նահապետական կազմը քայքայվեց միանգամայն: Անհետացան համքարական կազմակերպությունները ու նրանց հետ ընկան մի շարք արհեստներ: Գյուղացին սկսեց գնալ օտարություն աշխատանքի, ըստ վորում նրա հողամասն այնքան քիչ էր, վոր չէր բավականանում հարկերը վճարելուն ու ընտանիքը կերակրելուն:

Քաղաքի բանվորը, դեռ նոր դուրս յեկած պատմական ասպարեզ, յենթարկվում էր սոսկալի շահագործման: Չկար դեռ վոչ մի տեսակի արհմիութենական կազմակերպություն, վոր պաշտպաներ նրա շահերը: Նա ամբողջապես գտնվում էր տիրող իշխանության տակ, վորին բոլոր ուժերով պաշտպանում էր բյուրոկրատիան: Հազվագյուտ չեյին այնպիսի դեպքեր, յերբ բանվորն աշխատում էր օրական 17÷18 ժամ: Բանվորներն ապրում էյին կեղտոտ բարակներում, ստանալով մուրացիկ օրավարձ —յերեսունից-քառասուն կոպեկ օրական:

6128-70

Առաջին գործարանը, բամբակի գործվածքների, բացվեց Թիֆլիսում յոթանասնական թվականներին, հայտնի կապիտալիստ յեղբ. Միրզոյևների ձեռքով: Այնուհետև յերևան յեկան Բոզարջյանցի ծխախոտի գործարանը և ուրիշները:

Բոլոր այս հիմնական ձեռնարկություններում, ինչպես և նրանց հետ կապված, նրանց նպաստող ճյուղերում, տեղի ուներ անընդհատ պայքար բանվորների ու նրանց վարձող տերերի միջև:

«Իսկրա» թերթն այսպես է բնորոշում բանվորների դրությունն այդ ձեռնարկություններում.

«Տերերի քմահաճույքին տրված է լիակատար ազատություն. ինչ կամենում են, այն էլ անում են առանց վոչվոքից ու վոչնչից վախենալու և հանդիսանում են բանվորների կյանքի ու առողջության լիակատար տեր ու տնորենը, իսկ բանվորները՝ նրանց ճորտը»:

«Նավարկության բոլոր ծառայողներն, սկսած նավաստուց մինչև նավապետը, ամեն րոպե կարող են պաշտոնից դուրս շպրտվել առանց վորևէ տուգանքի վճարման: Անմիջապես նրա բոլոր իրերը շպրտում են նավից նավահանգիստ ու հայտնում միայն, վոր նա այլևս ծառայող չէ: Ինչո՞ւ համար: Հարբեցողության: Պայմանագրի համաձայն ծառայողին հարբեցողության համար կարելի յե դուրս անել պաշտոնից, առանց վճարելու նույն պայմանագրի համաձայն նրան հասանելիք փողը: Յեթե պաշտոնազուրկը, վոր բնավ չի հարբել, դիմի դատարան, [illegible] կներկայացնի տասնյակներով պա[illegible] գործը կտանի անպայման»:

ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна

«Կամայականությունը թագավորում է և նավթարդյունաբերության մեջ: «Նավթագործարանների գոդող բաժանմունքներում բանվորները հիվանդանում են կոկորդային ու կրծքի հիվանդություններով, վորովհետև այդ արհեստանոցներում օդը լցված է զանազան թթվուտների գոլորշիներով: Այդ գործարանների նավթ լցնելու բաժանմունքներում նավթից բանվորների վոտները ուռչում են ու ծածկվում վերքերով: Դժվար է Բաթումում մի բանվոր գտնել, վոր հիվանդ չլինի ջերմով ու հոդացավով»:

«Նավթամբարների վրա սանդուխները չեն ամրացված: Բանվորին հրամայում են բարձրանալ այնտեղ: Նա բարձրանում է, սանդուխի հետ միասին գլորվում ու խեղանդամում վոտքը կամ ձեռքը: Նա դատարան է դիմում, տերը քաշ է տալիս գործը յերկու-յերեք տարի դատարանի զանազան ինստանցիաներում: Խեղանդամ մարդը, աշխատանքի անընդունակ, առանց մի կտոր հացի մնացած, դառնում է մուրացիկ: Նրան «փրկում է» վոստիկանությունն ու ետապով ուղարկում հայրենիք: Աշխատանք չգտնելով այնտեղ, կաղը վերադառնում է քաղաք ու այդպես սկսվում անվերջ թափառումները ետապներում ու բանտերում: Վերջապես նրան կանչում են դատարան, բայց ծանուցագիրը չի հասնում նրան ու գործը դադարեցնում են պահանջողի չներկայանալու պատճառով»:

«Անմխիթար պատկեր են ներկայացնում և արևելյան Անդրկովկասի ձկնագործարանները: Այս գործարաններում գարնանը հավաքվում են մեծ մասամբ յեկվոր պրոլետարներ — յերկար ձմռան ընթացքում քաղցից տանջված ու հազիվ մի կերպ կյանքերը գարուն գցած: Վորքան ավելի սոված, նշանակում է այնքան ավելի

նվաստացած ժողովուրդ: Գրագետները քիչ են և տերերն ընդարձակորեն օգտվում են այս հանգամանքից: Օրինակ, յերբ բանվորը վարձվում է, տերը վերցնում է նրա անձնագիրը, բայց բանվորական գրքույկ չի տալիս: Բանվորներին անասունի պես քշում են կեղտոտ տախտակե հեղակները (բարակները): Սննդի մասին խոսելն էլ ավելորդ է: Անձամբ պետք է լինել այդ ձկնագործարաններում, վորպեսզի կարելի լինի նրանց մասին գաղափար կազմել: Իսկ յեթե մեկն այդ զրկված մարդկանցից համարձակվի բողոքել, տերն առանց վորևե խոսքի դուրս է շպրտում նրան, հաճախ առանց տալու անձնագիրն ու աշխատածի վարձը: Զրկված բանվորը դիմում է իշխանությանը, վորն ամենից առաջ անձնագիր է պահանջում: Բանվորն սկսում է բացատրել, բայց նրան չեն լսում: Տուր անձնագիրդ կամ գրքույկդ: Բայց վո՛չ մեկը կա, վո՛չ մյուսը: Յերբեմն իշխանությունը տեղեկություն է հարցնում, տերը պատասխանում է, վոր վարձը վճարել է, անձնագիրն էլ վերադարձել: Այն ժամանակ վոստիկանությունը ձերբակալում է բանվորներին իբրև անանձնագիր ու քշում հայրենիք: Այս ձևով պատրաստվում են անգործ թափառաշրջիկներ: Բայց ամենամեծ չարիքը ձկնագործական բանվորների նյութական անապահովությունն է: Վորսը լավ է — աշխատավարձ վճարվում է, վորսը վատ է — բանվորը վոչինչ չի ստանում:

Տերը փախչում է և նրան վոչվոք չի հետապնդում: Ցավ վորովհետև դրավական չի պահանջվում, հաճախ ամբողջ բանվորական խմբեր յերկու-յերեք ամիս աշխատելուց հետո մնում են առանց կոպեկ աշխատավարձի»

«Բաթումի գործարաններում սովորություն է աշխատանքի ժամանակը գողանալն ու հաշվից յետ գնելը: Շատ անգամ բանվորներն իրենց վաստակի կեսն են ստանում, իսկ մյուս կեսը դուրս են գալիս անպետք արտադրանքի փոխարեն, թեև բանվորները դրանում իսկի մեղք չունեն, վորովհետև աշխատանքի վատ կատարման պատճառը հին, փչացած մեքենաներն են: Իսկ Մանթաշևի գործարանում մեքենաներն աշխատանքի յեն դրվում կես, յերբեմն նույնիսկ մեկ ժամ շչակից առաջ:

«Բաթում քաղաքում առանձնապես զարգացած է անչափահասների աշխատանքը: Մանթաշևի գործարանում աշխատում են 17—8 տարեկան յերեխաներ: Յերեխաներն աշխատում են նույնքան ժամ, վորքան չափահասները և վորովհետև այստեղ արտադրությունն աչքի յե ընկնում իր չափազանց անկայունությամբ և պատվերների ժամանակ Մանթաշևի գործարանում աշխատանքի ժամերի թիվը հասնում է շաբաթական 105 ժամի, ապա բանվոր յերեխաներն ստիպված են լինում օրական 15—16 ժամ անընդհատ կանգնել դազգյահի յետև: Պատվերների կրճատման հետ սովորաբար կրճատվում է և բանվորների կեսը»:

« Մեր գործարաններում,— գրում է «Искра»-ի Բաթումի նույն թղթակիցը,— թագավորում է նաև բանվորների հետ բռունցքով հաշիվ տեսնելու սովորությունը: Բանվորներին ծեծում են վերահսկիչները, վարիչները, մեխանիկները և նույնիսկ դիրեկտորները»:

1898 թվի գարնանը յես ավարտեցի հաշվապահական դասընթացներն ու սկսեցի պաշտոն վորոնել: Միանգամայն պատահաբար, մի ամիս չանցած, գրասենեկային ծառայողի պաշտոն գտա Վիտցենի գարեջրի գործարանում, ուր աշխատում եյին այն ժամանակ 80 հոգի բանվոր: Գործարանում յես ընկա ինձ համար միանգամայն նոր պայմանների մեջ, բանվորների շրջանում: Յես բոլորովին անփորձ տասնյոթտասնութ տարեկան պատանի եյի, աղգայնական արամադրություններով ու առանց վորևէ լուրջ գիտելիքների: Իմ առաջ բացվեց նոր պատկեր, նոր սոցիալական հարաբերություններ ու մի կողմից գործարանատերը— ինքը նախկին բանվոր-տակառագործ, այժմ դաժան շահագործող, մյուս կողմից՝ բանվորական մասսան աշխատանքի ու կյանքի սոսկալի պայմաններում: Այստեղ կային զանազան ազգության բանվորներ՝ վրացինեը, հայեր, ռուսներ, գերմանացի-գաղթականներ:

Կապիտալիստն ինքը գերմանացի յեր: Սակայն նրա համար միևնույն եր, թե բանվորն ինչ ազգի յե: Նրան հետաքրքրում եր վերջինիս բանվորական ուժը, եներգիան ու աշխատասիրությունը, ինչպես շահագործման օբյեկտ, ինչպես միջոց իր կապիտալը բազմապատկելու: Մյուս կողմից տարբեր ազգության բանվորների միացյալ աշխատանքը նույն գործարանում, նույն գործի վրա, այլևս նրանց մեջ ազգայնական թշնամության հող չեր թողնում:

Այս նոր կյանքն ու նոր հարաբերությունները, այն սոսկալի պայմանները, վորոնց մեջ հարկադրված եյին աշխատել բանվորներն, ու նրանց չափազանց յետամնացությունը, ինձ վրա խորը տպավորություն թողին: Յես ինձ նպատակ դրի ինչպես եվ լինի օգնել բանվորներին բարելավելու իրենց տնտեսական դրությունը: Սակայն առաջին հերթին անհրաժեշտ եր գտ

պաշտպանել նրանց գոյության ունեցող փոխհարաբերությունների պարզորոշ գիտակցությունը, կամ ավելի ճիշտ՝ հարկադրել նրանց վերլուծել այդ փոխհարաբերությունները:

Այդ ժամանակ Թիֆլիսում, Կիրոչնի փողոցի վրա գոյություն ուներ Կալյուժնայայի գրադարան-ընթերցարանը, ուր հավաքվում եր հեղափոխականորեն տրամադրված յերիտասարդությունը: Յես սկսեցի հաճախել այդ գրադարանն ու պարապել այնտեղ: Այստեղ առաջին անգամ յես ծանոթացա ուսուցչական ինստիտուտի աշակերտները Պրոկոֆի (Ալյոշա) Ջափարիձեյի, Սերգեյեվի, Դոմաստրոյեվի, Պ. Պուկարյովի, Վլ. Մխչերևի, Պավ. Կալանդաձեյի և այլոց հետ, վորոնք աշխատում եյին գլխավորապես աշակերտության մեջ: Սկզբներում յես ստանում եյի նրանցից անլեգալ գրքույկներ, և հենց նրանք եյ օգնում եյին ինձ ընտրել ընթերցանության համար քաղաքատնտեսական գրքեր:

Առանձնապես մտերմացա յես Ալյոշա Ջափարիձեյի հետ: Նրա հետ յես գնում եյի անլեգալ ժողովներ ու նրան եյ օգնում ընդհատակյա բնույթ կրող գործնական ձեռնարկություններում:

1893 թվին վրացի բելետրիստ ու հասարակական գործիչ Գիորգի Ծերեթելու*) խմբագրությամբ լույս տեսավ «Կվալի» («Ակոս») թերթը:

Վերջինս (Ծերեթելին) դրականապես տարբերվում եր հին ձևի շատ ու շատ ինտելիգենտներից նրանով,

*) Գիորգի Ծերեթելին—վրացի բելետրիստ և հասարակական գործիչ, խմբագիր վրացական «Կվալի» թերթի, վոր հետագայում դարձավ դեմոկրատների մարքսիստական լեգալ օրգան, դեմոկրատ:

վոր ազատ եր ազգայնական նեղ գծից: Վրացի ու հայ ազգայնականների գրական պայքարի մեջ Գ. Ծերեթելին առանձին տեղ եր գրավում ե, իր համոզմունքներով լինելով դեմոկրատ, անպայման համբերող վերաբերմունք եր ցույց տալիս դեպի ուրիշ ազգությունները, վոր բնակվում եյին բազմազգ Կովկասում:

«Կվալի» թերթում Ն. Ժորդանիայի օպորտունիստական հոդվածների հետ միասին սկսեցին լույս տեսնել և մեր ընկեր Ֆ. Մախարաձեյի*) հեղափոխական-մարքսիստական հոդվածները, իսկ 1898 թվից «Կվալին» արդեն դարձավ մարքսիզմի լեգալ օրգանը, վոր մահացու պայքարի մտավ վրացական նացիոնալիզմի հետ:

Վրացական նացիոնալիստական ինտելիգենցիայի գաղափարախոս (իդեոլոգ), հայտնի հրապարակախոս ու բելետրիստ Իլյա Ճավճավաձեն**) արդեն զգում եր

*) Ընկ. Ֆ. Մախարաձեն յեռանդուն պայքար եր մղում վրացական նացիոնալիստների դեմ, ի թիվս վորոց և Իլյա Ճավճավաձեյի: 1907 թվին վերջինս սպանվեց ագրարային շարժումների ժամանակ: Օգտվելով սրանից, վրացի նացիոնալիստները կատաղի հարձակում սկսեցին ընկ. Ֆ. Մախարաձեյի դեմ, վերջինիս դուրս բերելով իբրև մեղավոր և տեղի ունեցած տրագեդիայի գաղափարական ներշնչող: Ընկ. Մախարաձեյի այդ հալածանքի դեմ, վոր մի քանի տարի տևեց, իր ձայնը բարձրացրեց Վրաստանի բանվոր դասակարգը, վորն իր միջամտությամբ վերջ դրեց վրացական նացիոնալիստների այդ անարժան դեմագոգիային:

**) Իլյա Ճավճավաձեն հայտնի վրացի գրող-հրապարակախոս ու հասարակական գործիչ եր: Վրացական ավատագույն «Իվերիա» թերթի խմբագիրն ու ղեկավարն եր: Նացիոնալիստ, սպանվեց 1907 թվին ագրարային շարժման ժամանակ Սագուրամո գյուղում (Թիֆլիսի նահ. Դուշեթի գավառ):

նոր դարաշրջանի մերձեցումը: Նացիոնալիզմի տակի հողն սկսել էր տատանվել ու Ի. Ճավճավաձեն, վոր մի ժամանակ փառաբանում էր Պարիզի Կոմունան, հայտնի կերպով նոր շարժման օպոզիցիայի կողմը բռնեց: Իր խմբագրած «Իվերիա» թերթի էջերում Ճավճավաձեն արշավանք սկսեց «Մեսամե դասի»-ի դեմ (վրացական մարքսիստների լեգալ անունն է):

«Ախալ-Մոսուլի» կեղծ անվան տակ Ճավճավաձեն իր հոդվածներում այն միտքն էր արծարծում, թե՝ ժողովուրդն ինքնին, առանց ինտելիգենցիայի— զերո յե: Յեթե սկզբից ջնջենք միավորը, զերոներն ինչքան-էլ լինեն, վոչ մի նշանակություն չունեն: Զերոների այդպիսի հավաքածու յե հանդիսանում և ժողովուրդը, յերբ հրաժարվում է ինտելիգենցիայի ղեկավարությունից: «Մեսամե դասի» և «Կվալի» թերթերում տպվում էին բանվորների ու գյուղացիների բողոքները Ի— Ճավճավաձեյի աշխատավոր մասսաների վերաբերմամբ այդ վիրավորական յելույթների դեմ:

Ինձ հանձնարարվեց բացատրել իմ ծառայած գործարանում աշխատող բանվորներին ազ-նացիոնալիստական շրջանների ու «Մեսամե-դասի»-ի մեջ տեղի ունեցող բանավեճի էությունը: Իմ զեկուցման հետեվանքով Վեոցելի գարեջրի գործարանի բանվորներն էլ ուղեցին իրենց բողոքը գրավոր արտահայտել «Իվերիա»-յի ու նրա ղեկավարի դեմ:

Մյուս աշխատանքը, վորին յես Ալյոշա Ջափարիձեյի ղեկավարությամբ ամենամոտ մասնակցություն ունեցա, դա հայտնի սև հարյուրակային-խուլիգան ավագ յերեց Վոստորգովի ապականիչ գործունեության դեմ հեկտոգրաֆի վրա մի թերթիկի տպումն էր: Այդ «խիստ բարոյական» լուսավորչի արկածների շը—

նորհիվ Թիֆլիսի իգական գիմնազիաներից մեկում մի գիմնազիստկա յերրորդ հարկից ինքն իրեն նետել էր ցած ու մահացու ջախջախվել:

Յերկրի վերաբնակեցումն ու բնիկների ռուսացումը կառավարության ազգային քաղաքականության հիմքն էր հանդիսանում Կովկասում: Ռուսաստանից յեկվոր հոգևորականությունն ամեն կերպ աջակցում էր այդ քաղաքականությանը, ծառայեցնելով դրան հոգևոր դպրոցները, սեմինարիաները, թեմական ու յեկեղեցական-ծխական դպրոցները: Այդ քաղաքականության ամենայեռանդուն վարիչն էր ավագ յերեց Վոստորգովը:

Վոստորգովը յեռանդուն կերպով կպավ արմատախիլ անելու «սեպարատիզմն» ու տեղացիների, գլխավորապես վրացիների մտքի մեջ արմատացնելու «ռուսական պետականության ու կուլտուրայի սկզբունքները»:

„Вестник грузинского экзархата“ թերթի էջերում, վոր լույս էր տեսնում Վոստորգովի ղեկավարությամբ, սկսվեց խիստ հալածանք այլադավանների դեմ: Վրացի հոգևորականությունն ընկավ մուրճի ու զնդանի մեջ: Մի կողմից նա, ըստ իր բնույթի, չէր կարող կատարելապես հարել հեղափոխական, թեկուզ և ազգայնական գունավորումով, շարժմանը: Մյուս կողմից նա ժողովրդական մասսաների հետ հավասար տուժում էր ռուսացումից ու չէր կարող պասիվ մընալ: Այսպիսով վրացի հոգևորականությունն սկսեց հայտնի ու ակտիվ դեր խաղալ ազատագրական շարժման ուժեղացման մեջ Վրաստանում: Վոստորգովի վոհմակն ամեն կերպ աշխատում էր դիմագուրկ անել նրան: Վրացական յեկեղեցին զրկվեց ինքնուրույնու—

թյունից (ավտոկեֆալիայից)։ Հոգևորականությունն ստիպված էր ապրել ծխականների յեկամուտով, վորանք հետզհետե նվազում էին հեղափոխական շարժման զարգացման հետ միասին։ Բյուրոկրատիայի ռուսացման քաղաքականությունը խիստ կերպով ազդեց վրաց հոգևորականության այն ներկայացուցիչների գրպանի վրա, վորոնք ժամասացությունը կատարում էին վրացական լեզվով։ Այս ամենը չափազանց ուժեղացնում էր դժգոհությունը նրանց շրջանում։

Սակայն հազիվ թե մեկը համարձակվեր ծպտուն հանել Վոստորգովի վոհմակի դեմ։ Կառավարությունը խիստ կերպով պատժում էր հոգևոր դասի բողոքարկուներին, զրկելով կարգից, պաշտոնից ու աքսորելով կայսրության հեռավոր ծայրերը։ Լրտեսությունն ու խաբարբզանությունը տարածվեց Վրաստանի հոգևոր դպրոցներում։ Ռուսացնողները Վոստորգովի ղեկավարությամբ դիմում էին հին դեղատոմսի օգնության՝ «բաժանիր, վոր տիրես»։

Մինգրելիայում (Վրաստանի մի մասն է) վոստորգովյանները ատելություն էին սերմանում վրացիների դեմ ու քարոզում, թե անհրաժեշտ է մինգրելական գավառաբարբառը գրական բարբառ դարձնել ու նրանով դասավանդել դպրոցներում։ Գտնվեց և մի ուսուցիչ Աշորդիա, վոր Կրիլովի առակները թարգմանեց մինգրելերեն, «հնարեց» մինգրելական այբուբեն, վորի հիմքն էին կազմում ռուսական տառերն առանձին պոչերով զարդարված։ Աշորդիան նույնիսկ «մինգրելերեն լեզվով» դասագիրք հրատարակեց տեղական դպրոցներում դասավանդելու համար։

Վոստորգովյանները ճիշտ նույնպիսի քաղաքականություն էին վարում և Վրաստանի մյուս ծայրամասերում՝ Ոսեթիայում, Աբխազիայում և Աջարստանում, ամեն տեղ թշնամություն ու ատելություն սերմանելով դեպի վրացիներն ու այդպիսով խորխորատ ստեղծելով իսկապես հիմնական վրացիների մեջ, վոր բնակվում էին զանազան գավառներում։

Միաժամանակ քողարկվելով իր բարձր-պատրիոտական գործունեությամբ, Վոստորգովը վարում էր ցոփ անձնական կյանք, ամեն տեղ տարածելով ապականություն ու անբարոյականություն։

Նույն 1898 թվին յես ծանոթացա ընկ. Սոսո Ջուղաշվիլու (Ստալին) և Ռ. Կալաձեյի*) հետ ու վերջնականապես խորասուզվեցի անլեգալ աշխատանքի մեջ։ Ընկ. Սոսոն (Յոսիֆ Ջուղաշվիլի) և Ռաժդենը (Ռաժդեն Կալաձեն) այն ժամանակ ծառայում էին Թիֆլիսի Ֆիզիկական օբսերվատորիայում։ Յես հաճախ լինում էի նրանց մոտ, վերցնում էի անլեգալ գրականություն և ստանում հրահանգներ ու դիրեկտիվներ գործարանի բանվորների շրջանում հեղափոխական աշխատանք տանելու համար։ Գործարանում յես կազմակերպեցի մի փոքրիկ խմբակ և պարապելու ու առաջավոր բանվորներից մեկին գրագիտություն սովորեցնելու համար ընկ. Ռ. Կալաձեյի խորհրդով հրավիրեցի ընկ. Սոսո Ջուղաշվիլուն (Ստալին)։

1898 թվականի վերջին, դեկտեմբեր ամսում յես ՌՍԴԲԿ Թիֆլիսի կազմակերպության անդամ դարձա։

1898 թվին ընկ. Յոսիֆ Ջուղաշվիլույ հետ

*) Ռ. Կալաձեն գրականագետ է, Վրաստանի ավագագույն մեծամասնականներից մեկը։ Մասնակցել է սոցիալ-դեմոկրատների 1892 թվի առաջին անլեգալ կոնֆերենցիային Կվիրիլիում (Քութայիսի նահանգ)։

գործարանում անլեգալ աշխատանքը վարում էի յես, միաժամանակ կատարելով կազմակերպության և ուրիշ հանձնարարություններ։ Այդ ժամանակներում յես արդեն ծանոթ էի ընկ. Զ. Ջոդրիշվիլու, Մ. Բոճորիշվիլու, Սև. Ջուղելու, Լ. Կեցխովելու, Վանո Ստուրուայի, Մոխեվլու, (Դ. Խարթիշվիլի և ուրիշ ընկերների հետ, վորոնք այն ժամանակ կանգնած էին կազմակերպության գլուխը։

Հեղափոխական շարժման ուժեղացման հետ Կովկասում, առանձնապես Թիֆլիսում, սկսեցին և ստեղծվել այդ շարժման արտահայտության ու դեմոնստրացիայի վորոշ ձևեր։ Ամենահասարակ ու սիրված ձևերից մեկը «մայովկան» էր։ Մայովկաները Թիֆլիսում սկսվեցին 1898 թվից։ Առաջավոր բանվորները փոքրիկ խմբերով հավաքվում էին քաղաքից դուրս վորևէ տեղ՝ անտառում, պուրակում, դաշտում կամ գետափին։ Այստեղ արտասանում էին ճառեր, յերգում հեղափոխական յերգեր։ Ժողովները կրում էին տոնական բնույթ, չնայելով նրան, վոր մասնակցողներին ամեն րոպե սպառնում էր այս կամ այն պատիժը։ Լրտեսները, իսկ յերբեմն և կուլակների պահակախմբերը հետախուզում էին մայովկայի մասնակցողներին։ Այդ հետախուզումները յերբեմն ընդունում էին ուղղակի մարդորսի բնույթ։

1899 թվին յես մասնակցեցի մի մայովկայի, վոր տեղի ունեցավ Նախալովկայի*) այն կողմը, լեռան վրա։ Մայովկային մասնակցում էին մոտ յոթանա-

*) Նախալովկան—Թիֆլիսի անդր-կայարանային մասն է, վոր բնակված է մեծ մասամբ բանվորներով։

սուն ընկերներ, վորոնցից մեծամասնությունը բանվորներ էին։ Ինտելիգենտներ շատ քիչ կային։

Այդ որը Թիֆլիսի առաջավոր բանվորներն առաջին անգամ տոնում էին աշխատանքի միջազգային տոնը կարմիր դրոշակների հովանու տակ, վոր զարդարված էին, Մարքսի, Էնգելսի ու Լասսալի պատկերներով։

1900 թվի Աղի լճի*) մայովկային ներկա էին մոտ հինգ հարյուր բանվորներ։

Մայովկաներն ահագին ազդեցություն ունեյին բանվորների վրա։ Բանվորական խմբերն աճում էին սունկի պես։ Շարժումն ստանում էր մասսայական բնույթ։

Նույն թվին, ոգոստոսի սկզբի օրերին, Թիֆլիսի կոմիտեյի ղեկավարությամբ տեղի ունեցավ Անդրկովկասյան յերկաթուղիների դեպոյի ու գլխավոր արհեստանոցների բանվորների մի մեծ գործադուլ, վորին մասնակցում էին չորս հազարից ավելի բանվորներ։ Գործադուլը ցնցեց ամբողջ պաշտոնական Թիֆլիսը։ Վոտքի կանգնեցրին ամբողջ ժանդարմերիան ու վոստիկանությունը։ Շատ բանվորներ ձերբակալվեցին ու աքսորվեցին հայրենիք, վոր չափազանց նպաստեց հուզմունքի ու անբավականության ուժեղանալուն գյուղում։

Գործադուլի ժամանակ չափազանց դժվար դարձավ պրոկլամացիաներ բաց թողնել։ Թիֆլիսի կազմակերպության հանձնարարությամբ յես, Ն. Կալաձեն ու դրաշար Վլաս Մգելաձեն իմ բնակարանում, Կրասնոգորսկի փողոցի վրա (դա հողաչափի ընկ— Վ. Գորգիլա—

*) Աղի լիճը Թիֆլիսի շրջակայքում մի լիճ է, վոր շրջապատված է բլուրներով։

ձեյի տպարանն էր, վոր ամառը գնացել էր ամառանոց, ինձ ու Ն. Կալանձեյին թողնելով իր տպարանում), շինեցինք շատ հասարակ պրիմիտիվ մի տպարան.— բերինք տառեր, տառարկղ ու մի գլան. Շարվածքի վրա դնում էյինք թղթի թաց թերթերը, թուղթը շփում շորի խոզանակով ու վերցնելով թերթերը բնագրի պարզ արտատպումով, չորացնում էյինք աթոռների վրա:

Մի անգամ էլ պրոկլամացիայի պատրաստի շարվածքը բերինք, կարծեմ «Իվերիա» թերթի տպարանից:

Գործադուլից հետո մեր տպարանը լուծարքի յենթարկեցինք: Տառարկղը այրեցինք, տառերը թափեցինք արտաքնոցը, իսկ «անմեղ» խոզանակը վերադարձրինք իր սովորական պարտականությունները կատարելու:

1901 թվին յես ապրում էյի Թիֆլիսում ընկ. Նեստոր Կալանձեյի հետ միասին Իգմայիլովսկի փողոցի վրա: Մեզ մոտ հաճախ գալիս էյին ընկերներ: Այս հանգամանքը չէր վրիպել լրտեսների ու հետախույզների, շպիկների ու ֆիլերների ուշադրությունից: Կազմակերպվեց հետախուզում: Հետախույզներն ամբողջ շաբաթներով հսկում էյին մեր տան վրա: Նկատելով այս բանը, յես հավաքեցի բոլոր անլեգալ բաները (գրքեր, բրոշյուրներ ու թարգմանություններ), հուշակավոր խոզանակի հետ միասին տվի ընկեր Գ. Կալանդաձեյին, վոր ապրում էր մեզանից վոչ հեռու: Միանգամայն աչքից թողի, վոր մեզ հետ միասին հետախուզման առարկա կարող էր յեղած լինել և նա:

1901 թվի մարտի 21-ի գիշերը հանկարծ մեզ մոտ թափվեցին ժանդարմները: Ուշի-ուշով խուզարկելուց

հետո, վոր վոչ մի արդյունք չունեցավ, նրանք բռնեցին ընկ. Ռ. և Ի. Կալանձեներին ու ինձանից վերցնելով միայն ծոցի գրքույկս ու մասնավոր նամակներս, այս անգամ ինձ հանգիստ թողին: Այնուհետև խուզարկության յենթարկվեց ու ձերբակալվեց և ընկեր Գ. Կալանդաձեն, վորի մոտից վերցրել էյին բավական մեծ քանակությամբ անլեգալ գրականություն: Նրա մոտից վերցրած նյութերի մեջ շատ կային իմ ձեռքով գրված թարգմանություններ ու բնագիր հոդվածներ: Առաջին խուզարկությունն ինձ վրա խոր տպավորություն թողեց: Յես ստացա իմ մարտական մկրտությունը: Սկզբում նույնիսկ ինձ մի փոքր վիրավորված զգացի, վոր ինձ ազատ թողին, իսկ ընկերներին ձերբակալեցին, բայց հետո այդ զգացմունքը փոխվեց հաստատ վորոշման՝ տանելու յեռանդուն ընդհատակյա աշխատանք:

Նույն 1901 թվի ապրիլի 22-ին Թիֆլիսում, Սալդատսկի բազարի*) վրա տեղի ունեցավ մայիսմեկյան առաջին բացարձակ ցույցը:

Թիֆլիսն առաջին անգամ տեսավ իր փողոցներում հեղափոխության կարմիր դրոշակը և նա գտնվում էր հին հեղափոխական բանվոր Առաքելի (Ոքուաշվիլի) կոշտ ձեռքերում: Այդ օրը Թիֆլիսի պրոլետարիատը բացարձակ դուրս յեկավ հեղափոխական կռվի հին կազմի հետ: Ժանդարմերիան նախորոք պատրաստվել էր այդ օրվան համար: Ցույցն սկսվելուն պես նրանք թափվեցին ցուցարարների վրա: Սկսվեց մի տուր ու դմփոց: Մի կողմից ժանդարմները, փաստիկաններն ու

*) Սալդատսկի բազարը Թիֆլիսի շուկային հրապարակներից մեկն է, վոր հարմար է ցույց կազմակերպելու համար:

ձիավոր կազակներն, իսկ մյուս կողմից բանվորները՝ զինված փայտերով, տեղ-տեղ և ատրճանակներով մըտան բռնցքամարտի:

Սակայն «կարգը շուտով վերահաստատվեց»: Դրոշակակիր Առաքելն ու շատ ուրիշ բանվորներ ձերբակալվեցին և ուղարկվեցին բանտ:

Ինկատի առնելով այս դեպքի չափազանց կարևորությունը, մենք առաջ կբերենք Թիֆլիսի ժանդարմական վարչության պաշտոնական հաշվետվությունն այս դեպքի մասին, վոր բավական մանրամասն նկարագրում է այն:

«Ապրիլի 21-ի յերեկոյան գործակալությունը տեղեկություն ստացավ, թե՝ մայիսյան տոնակատարությունը, վոր սկզբում նշանակված եր ապրիլի 18-ին, տեղի պիտի ունենա ապրիլի 22-ին: Այդ որն առավոտյան ժամի 9-ի մոտերքը բանվորները պիտի հավաքվեն Սոլդատսկի բազարում, գալով այնտեղ զամբյուղներով և այլն իբր գնումների համար, իսկ հետո արդեն միանալով պիտի բարձրացնեն կարմիր դրոշակ: Այս տեղեկությունները յերեկոյան ժամի մոտ 10-ին գործակալության վարիչը ներկայացրեց Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետին և նրա կարգադրությամբ իսկույն հաղորդվեց Թիֆլիսի նահանգապետին ու վոստիկանապետին: Վորովհետև, ստացված նախկին տեղեկությունների համաձայն, անկարգությունները տեղի պիտի ունենային կայարանի մոտ, և սրա համապատասխան, զորքի գլխավոր մասերը, վոր նշանակված եյին ադմինիստրացիային աջակցելու, կենտրոնացած եյին կայարանին մոտ ընկած վայրերում, ուստի ի նկատի առնելով այս, Թիֆլիսի նահանգապետն իսկույն փոխեց դասավորումն,

ուժեղացնելով զորքերի քանակը Սոլդատսկի բազարի մոտերքն և պահակային մասեր դնելով Գոլովինսկի պրոսպեկտի ճանապարհը կտրելու համար ամբոխի շարժման առաջ»:

«Ապրիլի 22-ին Սոլդատսկի բազարում, վոր սովորաբար շատ մարդաշատ է լինում կիրակի որերը, արտասովոր կերպով քիչ առևտրականներ ու ժողովուրդ կար: Բայց բազարի մոտերքն՝ Ալեքսանդրյան այգում ու վեր բարձրացող փողոցներում Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության գործակալության վարիչն ու վոստիկանության աստիճանավորները գտան մարդկանց փոքրիկ խմբակներ, վոր կանգնած եյին առանց վորևե գործի և հենց դրանով ել ուշադրություն եյին գրավում: Առավոտյան ժամի մոտ 11-ին այդ մարդիկ փոքրիկ պարտիաներով՝ մեկ-յերկուական մարդ, սկսեցին իջնել դեպի բազարը: Մասամբ խառնվելով ամբոխին, մասամբ ել գրավելով մայթերը, դրանք սկսեցին կամաց-կամաց սեղմվել դեպի Ալեքսանդրյան այգու գրավաճառների անկյունը և հետո ինչ-վոր մեկի շվվոցին հանկարծ բոլորը թափվեցին փողոցի մեջտեղն ու կազմեցին մի միջուկ, դեպի վորն ամեն կողմից սկսեց խռնվել ժողովուրդը: (Մի քանի տվյալների համաձայն, վորոնք, սակայն, չեն ստուգված գրագրությամբ, հենց այդ մոմենտին ժողովրդից մեկը ատրճանակ է արձակել վեց անգամ): Աղմուկով ու շվվոցներով ամբոխն սկսեց շարժվել առաջ: Վոստիկանական 3-րդ մասի պրիստավ Գեդևանովը, վոր գտնըվում եր հենց անկարգությունների ծագած վայրում, փորձում է համոզելով կանգնեցնել այդ շարժումը, բայց ի պատասխան նրա խոսքերի լսվեցին սպառնալիքներ, իսկ դրանից հետո ամբոխի կենտրոնում գտնը-

վող գյուղացի Գիորգի Թաթանաշվիլին փորձ արեց բարձրացնել շտապ կերպով հատակի չոտկի կոթին կպցրած հեղափոխական կարմիր դրոշը Լասալի, Էնգելսի ու Մարքսի պատկերներով ու վոսկի ներկերով նկարած Կոմունիստական մանիֆեստի» կոչի խոսքերով: Հենց նույն րոպեյին պրիստավ Գեդևանովն ընկավ ամբոխի մեջ ու խլելով Թաթանաշվիլու ձեռքից դրոշակը, տվեց Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետի ոգնական Ռոտմիստր Լավրովին: Ամբոխը, վոր աշխատում եր պահել դրոշակը, հարձակվեց պրիստավի ու անմիջապես նրա մոտ գտնվող վոստիկանական աստիճանավորների վրա ու սկսեց ծեծել նրանց: Վոստիկանությունը պաշտպանվում եր մասամբ թրերով, բայց գլխավորապես մանիֆեստանտներից խլած փայտերով ու ձողերով, վոր պոկված եյին բաղարի ճաղերից:

Վոստիկաններից ինչ-վոր մեկը կանչում ե՝ «պրիստավին ծեծում են»: Այդ կանչի վրա զինվորների մասսան, վոր բաց եր թողնված բաղար, գլխավորապես թնդանոթաձիգներ, հասան վոստիկանության ոգնության: Տեղի ունեցավ ընդհանուր տուր ու դըմփոց, և յերկու-յերեք րոպե չանցած, ամբոխը չդիմանալով զինվորների հարձակման, սկսեց փախչել դեպի Ներքև Փուլի ուղղությամբ, Որբելյան նրբախողոցով: Հենց նույն ժամանակ բաղարի կողմից յերևացին կազակներն ու ամբոխը բաժան-բաժան արին խմբերի, վորոնք ուղղվեցին զանազան կողմեր մերձակա փողոցներով: Գոլովինսկի պրոսպեկտի ուղղությամբ խուժող ամբոխի մի մասի առաջը կտրեցին ձիավոր պահակները, իսկ մնացած փոքրիկ խմբերին վերջնականապես ցրվեցին կազակների ջոկատներն ու ժանդարմական

դաշտային հեծելազորը, վորոնց բերել եյին V ու X քաղաքամասերի պրիստավները:

Չնայելով խիստ կատաղի կռվին, վորի ժամանակ տեղացիներից վոմանք կատարյալ մոլեգնության եյին հասել, վոստիկանությունը մի շարք ձերբակալություններ կատարեց ու ամբոխի միջից բռնվեցին այն անձինք, վոր շատ թե քիչ ուշադրություն եյին գրավում: Այսպես, որինակ, մի վոստիկան-լրտես, խլելով Գիորգի Թաթանաշվիլու ձեռքից փայտի կտորը, վորի ծայրին փորձում եր նա ամրացնել դրոշակը, ու այդ փայտով պաշտպանվելով իրեն շրջապատող խռովարարներից, կռվի ամենատաք միջոցին բռնում ե հենց նույն Թաթանաշվիլուն ու բաց չի թողնում ձեռքից մինչև վոստիկանատուն ուղարկելը»:

«Բոլոր վերոգրյալներից կարելի յե յեզրակացնել, վոր ապրիլի 22-ի անկարգությունները կազմակերպված եյին շտապ, վոչ մի կանոնավոր սիստեմ չեր նըկատվում նրանց մեջ և պետք ե յենթադրել, վոր այդ գործի ինիցիատորները շարժման սկզբնական կետ ընտրելով վոչ թե արհեստանոցները, ինչպես յենթադրըվում եր առաջ, այլ բաղարը, այդպես են վարվել, զգալով իրենց անուժությունը և հույսերը դնելով սովորաբար այնտեղ (բաղարում) գտնվող հազարավոր ամբոխի վրա, վոր կազմված ե լինում գրեթե բացառապես տեղացիներից, վոր շատ հեշտ գիտեն բորբոքվել և միշտ պատրաստ են մասնակցել ամեն տեսակ կռվի: Եվ թերևս արդարանար նրանց այդ հույսը, յեթե այդ ամբոխի մեջ չլինեյին զինվորներ, վոր իսկույն վոստիկանության կողմն անցան»:

«Անկարգությունների սկզբին ամբոխի ցույց տված ծայրահեղ լարված ընդդիմությունը վոստիկանական

աստիճանավորներին իսկույն չքացավ, հենց վոր յերեվացին կազակներն և ձերբակալվածներին տարան 3-րդ վոստիկանատուն մեծ մասամբ միանգամայն հանգիստ ու խաղաղ կերպով, բացառությամբ մի քանի հոգու, վորոնցից առանձնապես աչքի յեր ընկնում կատարելապես մոլեգնած գյուղացի Լեոնտի Մամալաձեն, վոր հանկարծ գրպանից հանելով ատրճանակը, արձակեց առաջից գնացող ձերբակալվածներին ուղեկցող 2-րդ քաղաքամասի վոստիկան Աղաֆոն Կիտայեվի վրա, վորին վիրավորեց յերկու գնդակով ձախ թիակի տակից ու աջ աղդրի մեջտեղից»:

«Մամալաձեյին ուղեկցող վոստիկաններն ու մոտ գտնվող կազակները հարձակվեցին նրա վրա ու խիստ ծեծեցին նրան: Այս բանը պատճառ դարձավ վոստիկանատուն տանելիս ծեծի յենթարկելու մյուս ձերբակալվածներին: Ճանապարհին պատահող անբարեհույս մարդիկ, տեսնելով, վոր ձերբակալվածներին ծեծում են, փորձեցին ոգտվել այդ հանգամանքից ու նորից գրգռել ամբոխին վոստիկանության դեմ, բայց, վորովհետև նրանք հենց իրենք էլ իսկույն ձերբակալվում եյին, ուստի նրանց գրգռումները վո՛չ մի հաջողություն չունեցավ»:

«Թեև լուրեր եյին տարածված, թե ցուցարարներից շատերը շատ ծանր վիրավորված են ու նրանցից վոմանք հազիվ թե ապրեն, սակայն ապրիլի 25-ին կատարված բժշկական քննությունը ցույց տվեց, վոր այդ բոլորից միայն ապրիլի 22-ին քաղաքային հիվանդանոց ուղարկված Կոստանդին Դավիդովը և գյուղացի Նեստոր Գոգոմեչաձեն ստացել են ծանր վնասվածքներ, վորոնք պատճառ են դարձել որգանիզմի շատ խիստ խանգարման:

Դավիդովի ծոծրակի շրջանում կար վեց սանտիմետր յերկարությամբ մի վերք ու խիստ ջարդվածքներ քունքատեղի շրջանում, վոր խանգարումներ եյին առաջ բերել միզային սիստեմի մեջ ու շատ վատ ազդել վողնաշարի վրա: Ինչ վերաբերում է մնացած իննը հոգուն՝ Դավիթ Աղամելովին, Ռոստոմ Վիրոցելուն, Լեոնտի Մամալաձեյին, Նիկոլայ Վիգորբինին, Զաքարիա Փերիաշվիլուն, Նիկոլոզ Ղվինիաշվիլուն, Յոսեբ Գիորգոբիանուն և Սիմեոն Տեր-Միմյոնովին, ապա նրանց ստացած ջարդվածքներն ու վերքերը քննության կողմից ճանաչված են թեթև:

Վոստիկանական աստիճանավորներից, բացի վերևում հիշած վոստիկան Աղաֆոն Կիտայեվից, վոր վիրավորված է յերկու գնդակով, վոստիկանապետ Կավալյովից, վորի տակի ձին վայր ընկնելու պատճառով դուրս է ընկել աջ վոտի թաթը, ջարդվածքներ ստացել կողքին ու աջ ծնկան խուփին, պրիստավ Գեղեվանովը, վոր վիրավորվել է ձախ ձեռքից ու խիստ ջարդվածքներ ստացել ամբողջ մարմնին, բացի սրանցից վոստիկաններ՝ Տիմոֆեյ Պիսչիկովը, Իվան Ստուպակովը, Միխայիլ Գուրիցկին, Յոսիֆ Շչերբակը և դաշտային հեծյալ ստրաժնիկներ՝ Կոստանդին Շեվցովը, Բանուխա Մորգիլյեվն, Ալեքսանդր Տիբելովը և Նիկիտա Գերասիմենկոն ստացել են շատ թե քիչ ջարդվածքներ ու վերքեր, վոր ծանր չեն և հիվանդանոցային բժշկություն չեն պահանջում»:

«Կեսորվա ժամին քաղաքը միանգամայն հանգիստ եր»:

«Անկարգություններ եյին սպասվում քաղաքի առավելապես բանվորներով բնակված մասում— Դիդու-

բեյում, լուրեր էյին տարածված, թե բանվորները մըտադիր են պարոմով անցնել Քուռի հակադիր ափն ու այնտեղ, քաղաքից դուրս կազմակերպել կռիվ, սակայն յեթե այդպիսի մտադրություն իսկապես յեղել էլ է, իրագործվել չեր կարող այն, ըստ վորում Դիդուբեն ու Քուռի այն կողմը Դիդուբեյի հակադիր քաղաքամասերը բռնված էյին Նիժեգորոդյան դրագունյան 44-րդ գնդի հեծելավաշտով, իսկ Քուռի անց ու դարձը դադարեցված եր և նրա պահպանությունը հանձնված հրացանաձիգ դասակին»:

«Ինչպես նշեցինք վերևը, հասարակությունից վոմանք, ձերբակալվածներին վոստիկանատուն տանելիս, փորձ արին գրգռել ամբոխին ձերբակալվածներին ուղեկցող վոստիկանության դեմ: Այդպիսի անձնավորություններ էյին՝ վարչական կարգով Ս.-Պետերբուրգից Կազանսկի Մայր Տաճարի մոտի ցույցի համար աքսորված Սառա Ցինկելշտեյնը, Նինա Նոսարը և Ալեքսանդր Շակոլը, վոր 1899 թվի անկարգությունների համար արտաքսված է Խարկովի համալսարանից, ուսանող Ոտտո Գիրցելը և Ջրային վարչության կոնդուկտոր Սամսոն Պայիճաձեն: Նոսարը, Շակոլն ու Ցինկելշտեյնն ըստ յերևույթին գիտեյին առաջիկա անկարգությունների մասին, ըստ վորում ապրիլի 22-ի հենց առավոտվանից նրանք շրջում էյին Գոլովինսկի պրոսպեկտում, անմիջապես Սալդատսկի բազար տանող փողոցների մոտերքը, ուր նկատել եր նրանց Թիֆլիսի վոստիկանապետն ու դրանից էլ առաջ ուշադրություն դարձրել նրանց վրա, նրանց չափազանց տարորինակ ու գրգռիչ վարքի շնորհիվ: Հենց վոր բազարում լսվում է աղմուկը, Ցինկելշտեյնը, Շակոլն ու Նոսարն իսկույն վազում են այնտեղ, բայց մինչև նրանց հասնելն այնտեղ, անկարգությու-

ներն արդեն ճնշված էյին: Տեսնելով, վոր կազակներն ու վոստիկանները ծեծում են Մամալաձեյին, Շակոլը ձեվացնում է, թե իբր իրան հիստերիկ է բռնում, իսկ Նոսարն ու Ցինկելշտեյնը սկսում են փողոցային խոսքերով հայհոյել վոստիկանության աստիճանավորներին, վորի պատճառով թաղային վերահսկիչ Ջուբրիցկու կարգադրությամբ ձերբակալվում են և ուղարկվում վոստիկանատուն: Շակոլը համոզելով, վոր իր հիստերիկան ամբոխի վրա վո՛չ մի ազդեցություն չունեցավ, իսկույն ինքն իրան հավաքում է ու նույնպես սկսում է խառնվել վոստիկանության գործողություններին, բայց տեղն ու տեղը ձերբակալվում է: Ուսանող Գիրցելին ժողովրդի միջից մեկը մատնացույց արեց, վոր նա քարեր է գցել վոստիկանության վրա և բացի այդ, վորովհետև նա պաշտպան կանգնեց ձերբակալվածներից մեկին, այդ պատճառով էլ այն բանտարկյալին ուղեկցող կազակները մտրակներով ծեծեցին և սրան ու բերին վոստիկանատուն: Ինչ վերաբերվում է Պայիճաձեյին, նա հանդիպելով ձերբակալվածներին, հրեց ուղեկցող վոստիկաններից մեկին»:

«Բացի Ս.-Պետերբուրգի անկարգություններին մասնակցելուց, Շակոլի, Նոսարի և Ցինկելշտեյնի վընասակար ուղղության մասին վկայում է և այն հանգամանքը, վոր հենց վոր նրանց բերին 3-րդ վոստիկանատան վարչատունը, այնտեղ, ուր նրանք կանգնած էյին, հատակի վրա գտնվեց մի թռուցիկ, վորի յերևան գալն ուրիշ վոչնչով չի կարելի բացատրել, բացի նրանից, վոր գցած պիտի լիներ դրանցից մեկն ու մեկը»:

«Մետեխի բերդը լեփ-լեցուն լցված լինելու պատճառով ձերբակալվածներից վոչվոքի հնարավոր չեղավ մեկուսի խցում բանտարկել: Թաթանաշվիլին, Մամա-

լաձեն ու Պայիճաձեն տեղավորվեցին ուրիշ գործերով բանտարկվածների հետ, Շակոլը, Նոսարն ու Ցինկեր-չտեյնը—միասին, ու մնացած բոլորը մի ընդհանուր խցում»։

«Շատ կարճ ժամանակից, խիստ համառ հարաբերություն սկսվեց բանտարկյալների միջև, վորը մի փոքր հետո այնքան խիստ բնույթ ստացավ, վոր Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետը ստիպված յեղավ կարգադրել, վոր խուզարկեն բերդի այն ամբողջ մասը, վոր նշանակված եր քաղաքային հանցավորների համար։ Խուզարկությունը հաստատեց, վոր բանտարկյալների միջև գոյություն ունի ամենալայն դրկանություն, ինչպես և ազդանշանների միջոցով շատ կանոնավոր կազմակերպված խոսակցություն՝ Քուռի վրայով՝ չբանտարկվածների հետ»։

«Իբրև այս դրության շնորհիվ, ինչպես և պետք եր սպասել, մեղադրյալների կողմից վո՛չ մի խոստովանություն տեղի չունեցավ»։

«Տեսնելով, վոր հետագայում կալանքի տակ պահելը այլևս անօգուտ է և, ինկատի առնելով, վոր բոլոր բանտարկյալները խոսք առ խոսք ժխտում են իրենց վորևե կերպ մասնակցությունն անկարգություններին, իրենց ձերբակալությունը բացատրելով սոսկ հասարակ պատահականությամբ կամ վոստիկանության սխալմունքով, 1901 թվի հոկտեմբերի 6-ին նրանց առաջարկվեց իրենց ցուցակագրողի միջոցով, վոր միանգամայն ընդունելով, վոր նրանցից վոմանց ձերբակալությունը շատ հավանորեն կարող է վոստիկանության սխալմունքի հետևանք լինել, սակայն անհնարին է թույլ տալ, վոր նրանց մեջ չկա վո՛չ մի հանցավոր և, վորովհետև այդ անձանց համառության ու իրենց մեղքը չը

խոստովանելու պատճառով ձգձգվում է դատարությունն ու պատճառ դառնում նրանց բոլորին յերկար պահելու բանտում, անմեղներին էլ մեղավորների հետ, ապա նրանց հնարավորություն է տրվում յերկու օրվա ընթացքում իրենք իրենց խղճով վորոշեն, թե ո՛վ է իրենցից իսկապես մեղավոր, ու հայտնեն, վորից հետո մնացածները կազատվեն կալանքից։ Բանտարկյալները այս առաջարկը համակրանքով ընդունեցին, վորից հետո հոկտեմբերի 8-ին Նիկոլայ Վիգորբինը, ընդհանուր սենյակում բանտարկված բոլորի կողմից ու նրանց ներկայությամբ հայտնեց, վոր՝ փոխադարձ քննադատությամբ ապրիլի 22-ի անկարգություններին մասնակցելու մեջ մեղավոր են ճանաչել իրեն, Առաքել Ոքուաշվիլուն, Ցոսրեբ Գիորգոբիանուն, Լավրենտի Ջոխաձեյին, Նիկոլոզ Ջեղդինիձեյին և Նիկոլոզ Տոմասաձեյին, իսկ մնացածներին անմեղ։ Վերևում թվարկված վեց հոգին պահվեցին ձերբակալված, իսկ մնացածներն իսկույն արձակվեցին, միաժամանակ Վիգորբինի հայտարարությունը հաստատվեց արձանագրությամբ»...

Այս յելույթը վճռական հարված տվեց հեղափոխական շարժմանը վո՛չ միայն Վրաստանում, այլև ամբողջ Անդրկովկասում։

Մայիսմեկյան բացարձակ դեմոնստրացիան Թիֆլիսում հեղափոխական կյանքի մեջ գրավեց բանվոր դասակարգի նորանոր խավեր։ Ընդհատակյա աշխատանքը չափազանց ուժեղացավ։ Ամեն կողմից պրոպագանդիստներ եյին պահանջում։

Այդպես շարունակվեց մինչև 1901 թվի վերջը։

1902 թվի փետրվարի միջին թվերում տապալվեց Թիֆլիսի ամբողջ կազմակերպությունը։ Ձերբակալվե-

ցին դրեթե բոլոր առաջավոր բանվորներն ու ինտելիգենտները։ Անձեռնմխելի մնաց միայն Սոսո Ջուղաշվիլին, վորն այդ ժամանակ աշխատում էր Բաթումում։

Ձերբակալվածների մեջ էին՝ Զ. Ջոդրիշվիլին, Առաքել Ոքուաշվիլին, Գ. Չխեյձեն, Գ. Ղարաջեը, Կալ. Գոգուան, Սև. Ջուղելին, Վասո Ցաբաձեն, Պ. Մաճարաձեն, Գուրեշիձեն և ուրիշները։

Պարզ էր, վոր պրովոկատորը յեղել էր կազմակերպության հենց կենտրոնում։ Յեվ հիրավի, հայտնվեց, վոր այդ պրովոկատորը յեղել է բանվոր Ստարոստենկոն։

Թիֆլիսի նոր կոմիտեն կազմվեց ազատ մնացած առաջավոր բանվորներից։ Անհրաժեշտ էր մտցնել այնտեղ և յերիտասարդ ինտելիգենտներից։ Հիշում եմ, մի անգամ հավաքվել էինք ընկ. Դ. Մոխևու (Խարթիշվիլի) բնակարանում։ Այնտեղ էին՝ ընկ. Դաթո Կեցխովելին, ինքը Մոխևին և յես։ Քննում էինք այն հարցը, թե ինտելիգենտներից ում կարելի յե մտցնել կոմիտեյի մեջ։ Խոսեցին մի ընկերոջ մասին, վորը շատ յեռանդով պարապում էր խմբակում ինքնակրթությամբ և չէր շտապում անցնել գործնական աշխատանքների։ Ընկեր Լադոն էլ չհամբերեց ու բացականչեց.

— Ի՞նչ ժամանակ է հիմա փիլիսոփայությամբ պարապելու։ Հիմա պետք է գիտենալ, թե ինչպես պետք է խանչալը խրել թշնամու սիրտը։

Մյուս անգամ ժողովն իմ բնակարանում տեղի ունեցավ։ Ինձ մոտ յեկավ ընկ. Դ. Մոխևին և հայտնեց, վոր իրան ու Քեշիշյանցին Թիֆլիսի կոմիտեն հանձնարարել է բանակցել ինտելիգենտների հետ, վորոնց յես ցույց տվի։

Ժողովին բացի ինձանից, Մոխևուց ու Քեշիշյանից ներկա էին՝ Արչիլ (Ռոստոմ) Դոլիձեն, Բերձենիշվիլին և արհեստագիտական ինստիտուտի ինչ-վոր աշակերտ, ծագումով թուշ։

Սկսվեցին բանակցությունները։

Ընկ. Մոխևին (Խարթիշվիլի) առաջարկեց, վոր ինտելիգենտներն աշխատեն բանվորների ղեկավարությամբ, կամ ավելի ճիշտ, վոր նրանք կազմակերպության անդամների ցուցումով, վորպիսիք պիտի լինեն միայն բանվորները, կատարեն կոնկրետ հանձնարարություններ։ Ինտելիգենցիայի ներկայացուցիչ ընկեր Դոլիձեն պահանջում էր, վոր ինտելիգենտները մտնեն կազմակերպության մեջ բանվորների հետ հավասարապես, իբրև լիակատար իրավունքներ ունեցող անդամ։ Չնայելով իմ բոլոր ջանքերին, համաձայնություն չկայացավ։ Դա 1902 թվի փետրվարի վերջերին էր։

Յես չարունակեցի աշխատել Թիֆլիսի կոմիտեյի ղեկավարությամբ, մինչև նրա նոր տապալումը։

Այդ տապալումը տեղի ունեցավ մարտի 30-ի գիշերը։

Այս անգամ նորից ձերբակալվեցին կազմակերպության գրեթե բոլոր անդամները։ Ակներև էր, վոր մեզ մոտ աշխատում էր պրովոկատորի փորձված ձեռքը։

Այդ պրովոկատորն, ինչպես հավատացնում էին ընկերներից վոմանք,—Քեշիշյանցն էր։

Այն ժամանակ յես ապրում էի Ստրելկովի փողոցի վրա։ Ինչպես հետո պարզվեց, մարտի 30-ի գիշերը ժանդարմները յեկել են ինձ մոտ, բայց պատահաբար դռնապանը տանը չի յեղել, վոր դուռը բաց անի նրանց համար, և նրանք հեռացել են, բնակարանին մոտ թողնելով մի լրտես։

Մարտի 31-ին, Նավթլուղի *) մոտ, Կախեթյան ճանապարհի վրա, նշանակված եր կոմիտեյի նիստը: Օրակարգում դրված եր Մայիսի 1-ի տոնակատարության հարցը: Բայց այս անգամ տոնակատարությունը չհաջողվեց կազմակերպել, վողջ կազմակերպության տապալման շնորհիվ: Յես պետք է բարձրանայի Մթածմինդա դրաշար ընկեր Վասո Ուրուշաձեյի մոտ ու բերեյի նրան ժողովի: Առավոտյան ժամի 8-ն եր, յերբ յես դուրս յեկա տնից: Դռների մոտ յես նկատեցի ինչ-վոր շպիկանման մի արարած, բայց ուշադրություն չդարձրի վրան ու ուղղվեցի դեպի Ավճալյան փողոցը: Դեռ չեյի անցել մի քանի քայլ, յերբ ինձ կանգնեցրեց վոստիկանն ու հայտնեց. «Դո՛ւք, պարոն, ձերբակալված եք»:

Յես բողոքեցի և ուզում եյի շարունակել ճանապարհս, յերբ հանկարծ հայտնվեցին յերկու ժանդարմ, վորոնք ինձ տարան վո՛չ անհայտ ռոտմիստր Լավրովի բնակարանը:

Լավրովը ժամի 1-ին միայն բարեհաճեց վեր կենալ: Նա դիմեց ինձ ներողություններով.

— Ներեցեք ինձ, պատանի՛, յես լուսաբացին միայն դարձել եմ տուն: Խուզարկում ու ձերբակալում եյի ձեր ընկերներին:

Նա վոտից գլուխ դիտեց ինձ ու, տեսնելով, վոր յես մաքուր եմ հագնված, ասաց.

Սակայն, յերիտասա՛րդ, դուք արտաքինով իսկի նման չեք սոցիալիստի: Ինչո՞ւ այդպիսի գործի ձեռնամուխ յեղաք:

Յես դրան վոչինչ չպատասխանեցի:

---

*) Յերկաթուղային կայարան Թիֆլիսի մոտ:

Այնուհետև նա ինձ առաջարկեց իրենց հետ միասին գնալ պաշտոնատեղս — Վետցելի գարեջրի գործարանը:

Որը կիրակի յեր ու փողոցում խռնված եր շատ ժողովուրդ:

Վորպեսզի անցորդների ուշադրությունը չգրավենք մեզ վրա, նա հրամայեց ժանդարմներին մեզնից հեռու, մեր յետևից գալ, իսկ ինքը գնում եր ինձ հետ, աշխատելով ճանապարհին խոսել ինձ հետ: Այդպիսի յերթը՝ կողք-կողքի բանվորական շարժման հայտնի խեղդողի հետ, չափազանց չփոթում եր ինձ: Յես շարունակ մտածում եյի, թե՝ ի՞նչ կասեն հիմա ընկերները, յերբ տեսնեն ինձ Լավրովի հետ խոսելիս:

Գործարան գալուստ պես, ժանդարմներն առաջին հերթին խուզարկեցին դրասենյակն, առանձնապես խնամքով քրքրեցին իմ սեղանի ու պահարանի արկղներն և հետո ինձ տարան տուն ու թեև դատապարտելի վոչինչ չգտան, այնուամենայնիվ ինձ ձերբակալեցին:

Խուզարկության ժամանակ Լավրովի ձեռն ընկավ խնայողական դրամարկղի գրքույկս, վորով յերեք տարվա ընթացքում, դրեթե յուրաքանչյուր ամիս, կանոնավոր մուծելով վորոշ գումար, հավաքել եյի 735 ռուբլի: Այդ գրքույկը նրան չափազանց հետաքրքրեց: Նա յերկար չեչտակի նայեց ուղղակի աչքերիս մեջ ու ասաց.

Այս փողերը կգործադրվեն աստվածահաճո գործերի — յեկեղեցիների ու վանքերի շինության:

Լավրովի սպառնալիքն իրագործվեց: *) Փողերը բռնագրավվեցին:

---

*) Անլեգալ «Барьба пролетариата» թերթում 1904 թ. № 5—6) հետևյալ նկատողությունն է տպված այդ առթիվ:—

Այս վրդովեցուցիչ փաստի վրա, ինչպես միապետության հակաօրինական արարքների մի նմուշի, Ոզուրգեթի գյուղացիությունը հրավիրեց Կովկասի փոխարքայի լիազոր Սուլթան Կրիմ-Գիրեյի ուշադրությունը:

Սուլթան Կրիմ-Գիրեյն իր զայրույթը հայտնեց, փաստը համարեց անհավատալի ու քարտուղարին հրամայեց արձանագրել այն, իսկ Ոզուրգեթի գյուղացիներին խոստացավ ստուգել նրանց հաղորդած փաստը:

Սա Գուրիայի գյուղացիների հարցաքննության ժամանակն եր. 1904 թվին:

Սկսվեցին սովորական «գրագրությունները» բանտարկյալի մասին:

Ամենից առաջ հարց տվեց Ոզուրգեթի գավառապետին ու Քութայիսի նահանգական դատարանին դատավարության մասին: Այնուհետեվ ստացված տեղեկությունների հիման վրա կազմում ե բնութագիր վոստիկանության դեպարտամենտի համար:

1902 թվի մայիսի 27-ից Թիֆլիսի ժանդարմական վարչությունը նորից ուղարկում ե վոստիկանության դեպարտամենտը հետեվյալ ամփոփումը.

«Մի նմուշ կառավարության բռնություններից». 1902 թվի մարտին խուզարկվում ու ձերբակալվում ե Բ. Բիբինեյշվիլին: Խուզարկության ժամանակ ժանդարմները նրա մոտ գտնում են խնայողական դրամարկղի № 14411 գրքույկը, վորով նա չորս տարվա ընթացքում, զանազան ժամանակներում մուծել ե գանձարկղը 735 ռուբլի (տոկոսներով ասում են մոտ 800 ռ.): Զզվելի ժանդարմ Լավրովը, ինչպես յերեվում ե, այդ փողերն ընդունել ե «Բանվորական դրամարկղի» տեղ ու վերցրել ե գրքույկը: Չորս ամսից հետո Բիբինեյշվիլուն բաց են թողնում բանտից վոստիկանության հսկողության տակ. բայց գրքույկը չեն վերադարձնում, թեև Բիբինեյշվիլին խնդիր-խնդրի հետեվից ե ուղարկում: Իսկ գրքույկն

«Ամսի 6-ին և 17-ին իմ կատարած №№ 2149 և 28 քննությունների մեջ հիշված Վարֆոլոմեյ Բիբինեյշվիլին սկզբում ձերբակալվեց կանխապես անկարգությունների առաջն առնելու նպատակով, ըստ վորում մեր ունեցած գործակալական տեղեկությունների համաձայն, նա կառավարում եր գաղտնի դրամարկղը և այժմ «կոմիտետը» լուծարքի յենթարկելուց հետո, մտել նրա նոր կազմի մեջ: Խուզարկության ժամանակ Բիբինեյշվիլուց վերցվեց խնայողական դրամարկղի գրքույկը—735 ռուբ. գումարի: Այդ գրքույկի առթիվ Բիբինեյշվիլին սկզբում տվեց շատ անկայուն, իրար հակասող բացատրություններ, իսկ հետո վերջնականապես ցույց տվեց, թե՝ նա այդ փողերը հավաքել ե իր 40-50 ռուբլի ամսական ռոճիկից, վորով միաժամանակ ապրել ե և ինքն ու պահել գիմնազիստ յեղբորը. ընդ վորում անցյալ տարվա ընթացքում նրան հաջողվել ե յետ դցել 530 ռուբլի: Թեև Բիբինեյշվիլու տված բացատրությունը միանգամայն անհավատալի յե և հիշյալ գրքույկով պահվող փողերը միանգամայն կասկածելի, բայց այնուամենայ-

այդ ժամանակ ճանապարհորդում ե բոլոր ինստանցիաներում՝ ժանդարմների մոտից— դատախազի մոտ, դատախազից—Գալիցինին, Գալիցինից—Մուրավյովին, հետո Ֆոն-Պլեվեյին և այլն: Բոլորը տեսնում են, բոլորը հոտոտում են այդ գրքույկը, մի՞նչև հասնում ե հենց իրեն՝ Նիկոլայ 2-րդին, վորը հրամայում ե այդ փողերը՝ «իբրև հակապետական նպատակների հատկացված, գրավել հօգուտ գանձարանի»: Ահա թե ո՞ւր եր հասնում լիրբ միահեծան կառավարության կամայականությունը: Ի՞նչ ապահովություն ունենք, այս բոլորից հետո, թե նույնպես չեն վարվի և մյուսների խնայողությունների հետ, չեն սեփականի այն ամենը, ինչ մուծել են մարդիկ պետական գանձարկղները: Պարոն Լավրովներն ափսոսալու բան չունեն, բացի այն, վոր այդ փողերի կեսն իրենց գրպանն ե մտնում և դրա համար նրանք ստանում են և՛ աստիճաններ, և՛ շքանշաններ:

նիվ այդ ավյալները բավական չեն Բիբինեյշվիլուն քննության յենթարկելու համար «Սոցիալ-դեմոկրատների բանվորական կուսակցության Թիֆլիսի խմբակի» գործով, ուստի և նրա գործը դրված է քննելու Ֆրանչեսկի, Կուրնատովսկու, Ժորդանիայի և այլոց գործի հետ (լիտ. Ա. Ներկայացված է 1901 թվի հուլիսի 19-ին ընդ. №3021), որից բավականաչափ նյութեր կան Բիբինեյշվիլուն յենթարկելու դատի իբրև մեղադրյալ: Ներկայիս ստուգելով այն վրացերեն գրությունները, որ վերցված են Բիբինեյշվիլուց, հայտնաբերված է մի ծոցի գրքույկ, ուր մանրամասն գրված են Բիբինեյշվիլու դրամական հաշիվները: Այդ հաշիվներից յերեվում է, որ Բիբինեյշվիլին ամբողջապես ծախսել է այն բոլորն, ինչ ստացել է իր ծառայությունից, և որ միանգամայն անկախ այդ փողերից, որ կազմում է նրա ռոճիկը, կատարված վերջին քննության համաձայն, նա ունեցել է ինչ-որ դրամական հաշիվներ մեղադրյալների մեծամասնության հետ:

Այսպիսով հետագա քննությունն անշուշտ հնարավորություն կունենա կատարելապես հաստատելու, որ այն փողերը, որ պահվում են Բիբինեյշվիլուց վերցված խնայողական դրամարկղի գրքույկով, ո՛չ թե նրա սեփականությունն է, այլ «խմբակի» դրամարկղի մի մասը (կեսը):

Գործակալական տեղեկությունների համաձայն, դրամարկղի կեսի բռնագրավումը թաքցնում են բանվորներից (թեև շատերը գիտեյին արդեն), որի համար վճռել են դրամարկղի խլված մասը դուրս բերել ծախք, մի քանի ամսվա ընթացքում, ինչպես արվեց մի անգամ, յերբ կորել էր 100 ռուբլի:

Ընդ. ամին ներկայացված դրամարկղի սույն թվի

մարտ ամսվա հեկտոգրաֆիական հաշիվը հաստատում է գործակալության ցուցումները. բանտարկյալներին նպաստ նշանակված է անհավատալի մի մեծ գումար՝ 301 ռուբլի, և մնացորդ ցույց է տրված գրեթե նույնքան, որքան և նախորդ ամսից»:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Սոսո Ջուղաշվիլի (ՍՏԱԼԻՆ)։

2. Աբել Ենուքիձե։

3. Լադո Կեցխովելի։

Ըստ հիշողությունների ու փաստաթղթերի։

Բանտը մեզ՝ ընդհատակյա մարդկանցս, պարապ միջոց էր տալիս: Այստեղ մենք հանրագումար էինք անում մեր արածների ու քաշածների նկատմամբ, կազմում էինք նոր պլաններ, սովորում էինք, ճանաչում մեկմեկու: Այս էր պատճառը, որ կյանքը բանտում էլ մեզ համար կանգ չէր առնում: Արտաքին աշխարհի հետ հարաբերությունները մեր կյանքն ավելի բազմակողմանի էին դարձնում: Բանտի վարչութ. հետ ունեցած մեր պայքարը մեզ պահում էր միշտ լարված դրության մեջ: Բայց ակամա պարապությունն, այնուամենայնիվ, ամենից լավ էր բնորոշում բանտը ազատությունից: Մինչև իսկ այժմ իմ հիշողությունների մեջ ինձ համար ավելի հեշտ է կտրվել դեպքերի հոսանքից, քան այն րոպեյին, երբ գրում եմ «բանտ» խոսքը:

Պետք է կտրվել դեպքերի հոսանքից, որպեսզի գոնե համառոտ պատմեմ մեր ժամանակի յերեք խոշորագույն հեղափոխականների մասին, Անդրկովկասի անլեգալ կազմակերպությունների յերեք տիտանների մասին:

Յես ի նկատի ունեմ ընկերներ՝ Սոսո Ջուղաշվիլուն, Աբել Ենուքիձեյին և Լադո Կեցխովելուն, որոնց հերոսական գործունեության մասին, Անդրկովկասի մեծամասնականների առաջավոր շարքերում, այնքան հաճախ հիշվում է այս գրքի էջերում:

Իմ ընդհատակյա աշխատանքի հենց առաջին քայլերում յես հանդիպեցի մի մարդու, վորին վիճակված եր աչքի ընկնող դեր խաղալ նախ Վրաստանի հեղափոխական շարժման մեջ, այնուհետև Անդրկովկասի և վերջիվերջո ժողովուրդների այն հսկա կոլեկտիվի, վորը ներկայիս կոչվում ե Խ.Ս.Հ. Միություն:

Յես խոսում եմ ընկ. Ջուղաշվիլի-Ստալինի մասին, վոր բոլշևիկյան ընդհատակյան յեռանդուն կազմակերպողներից մեկն եր և ներկայիս կանգնած ե Համ. Կ.(բ)Կ.-ի ղեկավարների շարքում:

Ընկ. Ստալինն իր մեջ միացնում եր մի շարք հատկություններ, վոր շատ հազիվ ե պատահում մի գործչի մեջ. միաժամանակ՝ կազմակերպչի ու կոնսպիրատորի տաղանդ ու լարված հետաքրքրություն սոցիալական հեղափոխության պրոբլեմների տեսականորեն մշակման խնդրում:

ՌՍԴԲԿ Կովկասի կազմակերպությունների յերկու հոսանքների բաժանվելու մոմենտին ընկ. Ստալինը հարեց այդ հոսանքներից նրան, վորը մի վայրկյան անգամ չեր մոռանում բանվոր մասսայի շահերի առաջնությունը մնացած բոլոր հասկացողությունների համեմատությամբ—այսինքն բոլշևիզմին: Յեվ վո՛չ մի օր, վո՛չ մի ժամ անգամ նա չթողեց ագիտացիոն ու պրոպագանդիստական անողոք պայքարն ինչպես մենշևիզմի, այնպես ել քաղաքական մտքի մյուս հոսանքների դեմ, վոր այնքան ուժեղացել եյին 1905 թվին: Ընդհատակյա աշխատավոր, անխոնջ պրոպագանդիստ, ագիտատոր ու հրապարակախոս, սուր, կծու ու շեշտակի գրչով—ահա թե ինչ տեսքով ե պատկերանում իմ առաջ այն ժամանակվա Ստալինը:

Ինքնատիպ անցան ընկ. Ստալինի աշակերտական տարիները: *)

Ընկ. Ջուղաշվիլի-Ստալինը ծնվել ե արհեստավորի ընտանիքում, Վրաստանի փոքրիկ քաղաքներից մեկում՝ Գորիում 1881 թվին:

Նրա հայրը կոշկակար եր, իսկ մայրը՝ օրով բան անող: Սկզբնական տարիներում նա սովորել ե Գորու հոգևոր դպրոցում, իսկ հետո մի կերպ ընկնելով Թիֆլիս մտել ե հոգևոր սեմինարիան:

Իննսունական թվականներին եր այս, վոր այնքա՛ն նշանակալից եյին վրացական հասարակայնության համար—դա մի շրջան եր բեկման ու տնտեսական նոր հարաբերությունների առաջացման: Ութսունական թվականներին յերկաթուղին միացնում ե Անդրկովկասի յերկու ծայրակետերը՝ Բաքուն ու Բաթումը, վորի հետեվանքով այս յերկու քաղաքների նշանակությունը յերկրի տնտեսական կյանքում արագ կերպով աճում ե: Թիֆլիսում յերեվան են գալիս յերկաթուղային արհեստանոցներ: Ուժեղանում են՝ Ճիաթուրայում մարգանեցի արտադրության աշխատանքներն, իսկ Տղվիբուլում՝ քարածուխի մշակումը: Գյուղի կիսապրոլետարացած տարրերը թողնում են իրենց նստած տեղերն ու թափվում այնտեղ, ուր աշխատանք կա: Ծնունդ ե առնում նոր դասակարգ—պրոլետարիատը: Հիրավի, փոքրաթիվ ե նա, սակայն շատ շուտով նա ուժ ե զգում իր մեջ միանալու, աճում ե ու կազմակերպում մի հզոր ուժ, վոր դառնում ե Կովկասի բոլոր հեղափոխական ազատագրական շարժումների ավանգարդը:

*) Ընկ. Ստալինի սեմինարիայում անցկացրած ժամանակամիջոցի մասին գրելիս օգտվում եմ ընկ. Գ. Պարկաձեյի հուշերից և ընկ. Բակուրաձեյի հիշողություններից, վոր տպված են «Դրոշա» թերթի 1924 թվի № 9-ում: Բ. Բ.

Մինչև իննսունական թվականները ինչպես գրականության մեջ, այնպես էլ հասարակական կյանքում ղեկավարող դեր էր խաղում ազնվականությունն ու նրա ծոցից առաջ յեկած վրացական ինտելիգենցիան։ Տընտեսական նոր հարաբերությունների ծագումով ազնվականության նշանակությունն ընկնում է։ Նրան դուրս է մղում հրապարակից մի կողմից բուրժուազիան, մյուս կողմից պրոլետարիատը։

Միաժամանակ պատմության նախաբեմում ելեվան է գալիս և նոր ինտելիգենցիան—մեծ մասամբ ռազնաչինեցները։*)

Սրանք յեկվորներ էյին զանազան դասակարգերից։ Սրանք դառնում են նոր դասակարգի իդեոլոգներ ու իրենց յերիտասարդական ամբողջ խանդով կռվի յեն նետվում ազնվականների լիբերալիզմի դեմ, վոր կրում էր ազգայնական գունավորում։ Ձևակերպում ու ամրապնդում են իրենց դիրքերը բանվորական առաջին բըջիջները—հետագայում ամրակազմ ու ճյուղավորված սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։Սոցիալիստական ինտելիգենցիան զինակոչվում էր գլխավորապես նախկին սեմինարիստներից։ Սեմինարիստների հեղափոխական յելույթներն, առաջին հայացքներից միանգամայն անմեղ առիթներով, արթնացնում են թմրած ազգաբնակության ու տարեցտարի մղում դեպի ավելի ու ավելի համարձակ քայլեր։ Ռեակցիայի դարշապարի տակ, վոր դառնում է առանձնապես ավելի զզվելի ու անտանելի ռուսացման կոպիտ քաղաքականու-

*) Վոչ ազնվական, այլ մանր-բուրժուական ծագումով ինտելիգենտ հասարակական գործիչներ— 70—80-ական թվականներին։ Ծ. Թ.

թյան շնորհիվ, վոր առանձին համառությամբ ու կեղծավորությամբ կիրառվում էր տերտերների ու կարյերիստ վարդապետների ձեռքով։ Հալածանքն այն ամենի դեմ, ինչ կենդանի յե, հալածանքն առողջ մտքի դեմ, վրացական գրքերի ընթերցման արգելքը և առանձնապես լրագրերի—չա՛տ ու չա՛տ կոնֆլիկտներ են ստեղծում սեմինարիայի պատերի մեջ։

Ահա այսպիսի մթնոլորտում ստացավ ընկ. Ստալինն իր կրթությունը Թիֆլիսի սեմինարիայում։

Նա վառվռուն, սրտաբաց, ուրախ ու տաղանդավոր մի պատանի յեր։ Սովորում էր լավ։ 1894 թվին նա առաջին դասարանումն էր։ Ըստ ընդհանուր շաբլոնի, պետք էր յենթադրել, վոր ընկ. Սոսո Ջուղաշվիլին իբրև «լավ աշակերտ», լավ համարմունք պիտի ունենար նաև դպրոցական վարչության առաջ։ Սակայն ա՛յս տեսակետից նա խիստ կերպով տարբերվում էր «լավ աշակերտների» մեծամասնությունից։ Նա չի հակադրում իրան դպրոցական մասսային ու մեծանում է բացարձակապես ազատ դպրոցական վարչության ազդեցությունից։ Ընկ. Սոսոն հետաքրքրվում է գրականությամբ ու յեռանդով կարդում։ Յերբեմն նույնիսկ գրում է վոտանավորներ։

Աշակերտական խմբակն ընկ. Սոսոյի ղեկավարությամբ սկսում է պարապել ֆիզիկայով ու բնագիտությամբ, հետո անցնում է սոցիոլոգիայի ուսումնասիրության ու վերջիվերջո հասնում մարքսիզմին։ Սակայն այս ամենը բնավ չէր խանգարում այդ խմբակի անդամներին և յերեխայական չարություններ անել։ Հաճախ կարելի յեր տեսնել, թե ինչպես ընկ. Սոսոն Միշա Դավիթաշվիլու մեջքին նստած, սլանում է միջանցքներով ու բղավում՝ „Я-СТАЛЬ, Я-СТАЛЬ"։ Ընկ.

Սոսո Ջուղաշվիլու պսեվդոնիմը, վորով նրան ճանաչում են այժմ ամբողջ Ս.Ս.Հ.Մ–ում, ծնունդ է առել այն հեռավոր տարիներում մանկական չարաճճիությունների ժամանակ, վորի մասին հենց նոր պատմեցինք:

Չորրորդ դասարանում ընկ. Սոսոյի մեջ առաջ է գալիս խիստ բեկում: Ինչպես ասել ենք արդեն, սկզբում նա շատ լավ եր սովորում, բայց չորրորդ դասարանում նա կտրուկ կերպով «իջնում է» հնգերից միավորների: Դասատուները չեյին կարողանում հասկանալ, թե ինչ է պատահել նրան: Իսկ պատահել եր այն, վոր նրա համար անտանելի նեղ եյին դարձել սեմինարիայի պատերը: Նրան գրավում եր հեղափոխականի ու մարտիկի կյանքը:

1899 թվին նրան արտաքսում են սեմինարիայից:

Դպրոցական պատերից դուրս գալով, ընկ Ստալինը մտնում է ծառայության Թիֆլիսի ոդերևութաբանական կայանը: Նա ուժեղ թափով ուսումնասիրում է մարքսիզմի թեորիան ու կապեր հաստատում սոցիալ–դեմոկրատիայի տեղական կազմակերպության հետ: Միևնույն ժամանակ նա չի կտրում իր կապերը սեմինարիայի հետ: Նա առաջվա պես ղեկավարում է աշակերտական խմբակը: Հենց այդ ժամանակներումն էլ նա մտերմանում է ընկ Կամոյի հետ, վոր իր ժամանակին դարձավ անվախ ու համարձակ հեղափոխական:

Մենք կարող ենք բերել մի շատ պայծառ փաստ, վոր բնորոշում է ընկ. Ջուղաշվիլուն իր զարգացման այն շրջանում: Նա ընդհարվում է Սեյիթ Դևդարիանու հետ (Սան—հետագայում հայտնի մենշևիկ): Տարաձայնությունների առաջ յեկան այն խնդրից, թե ինչ յեղանակով տանել ինքնակրթության խմբերի պարապմունքները: Դևդարիանին խորհուրդ եր տալիս անխտիր կարդալ ամեն ինչ, առանց բացառելու և բելետրիստիկան: Իսկ ընկ. Սոսոն կողմնակից եր բացառապես մարքսիստական գրականության ընթերցանության, վորպեսզի թանկագին ժամանակն իզուր չկորչի: Յեվ նա հաղթող հանդիսացավ այդ վեճի մեջ:

1900 թվին ընկ. Ջուղաշվիլին արդեն կուսակցության ականավոր անդամ է: Նա աշխատում է Թիֆլիսի, Բաթումի, Քութայիսի, Գուրիայի Ճիաթուրայի և այլ տեղերի սոցիալ–դեմոկրատական կազմակերպությունների մեջ: Թիֆլիսում նրա ղեկավարությամբ տեղի յե ունենում ծխախոտագործների գործադուլը, վոր վերջանում է բանվորների հաղթանակով:

1901 թվին նա թողնում է ոդերևութաբանական կայանի իր ծառայությունն ու ամբողջապես անձնատուր լինում անլեգալ աշխատանքների: Նա անմիջական մասնակցություն է ցույց տալիս ընդհատակյա տեխնիկական աշխատանքներին: Թիֆլիսի կազմակերպությունն այն ժամանակ տպարան չուներ և նա ստիպված է լինում ընկ. Մ. Դավիթաշվիլու ու Գ. Պարկաձեյի հետ հեկտոգրաֆի վրա տպել թռուցիկները:

Այն ժամանակ դեռ սոցիալ–դեմոկրատական կազմակերպության հետ տարաձայնությունները կատարելապես չեյին հայտնաբերված, սակայն ընկ. Սոսոն մեր լավագույն մարքսիստների հետ միասին, ինչպիսիք են Ալ. Ծուլուկիձեն, Լ.Կեցխովելին (հետագայում յերկուսն էլ հայտնի բոլշևիկներ) և ուրիշները, միշտ հարում է հեղափոխական թևին:

1903 թվին Ժընևի համագումարում ընկ. Սոսոն արդեն գտնվում եր բոլշևիկ—լենինյանների շարքում: Մոտավորապես այդ ժամանակներից նա և ընկ. Շահու–

մյանը դառնում են ո՛չ միայն Վրաստանի, այլ և ամբողջ Անդրկովկասի բանվորական շարժման ղեկավարներ։

Ընկեր Ստալինն, ինչպես ասացի արդեն, չափազանց հմուտ կոնսպիրատոր էր։ Այդ պատճառով էլ «Օխրանկան» (պահնորդական բաժինը) երկար ժամանակ հետևում էր նրան, բայց ոչ մի արդյունք չէր ստանում։ Նա առաջին անգամ պատասխանատվության ենթարկվեց 1901 թվին միայն, այսինքն ընդհատակյա աշխատանքներ սկսելուց երեք տարի հետո միայն, որ այն ժամանակվա համեմատությամբ շատ մեծ ժամկետ է։

Այդ ժամանակներում «առանց որոշ պարապմունքների» Յոսիֆ Ջուղաշվիլին (ընթերցողն անշուշտ կարժեքավորի ժանդարմական այս արհամարհական հատկետը՝ «առանց որոշ պարապմունքի մարդ», որով ցուցանշվում էին հեղափոխության ամենահամառ ու ամենավտանգավոր աշխատավորները) — արդեն լավ հայտնի էր ժանդարմական թաղիներին և հայտնի էր ո՛չ իբրև շարքային աշխատավոր, այլ իբրև ղեկավար կուսկազմակերպության։ Մենք այստեղ առաջ կբերենք հետաքրքիր նյութեր Թիֆլիսի ժանդարմական վարչության «ժողովածուից», որոնք ցույց կտան, թե ընկ. Ստալինի այն ժամանակվա աշխատանքներն ինչպես էին պատկերացնում իրենց նրան հետապնդող թշնամիները։

Ահա առանձին հատվածներ այդ «ժողովածուից»։

«Հոկտեմբերի 28-ին, կիրակի, առավոտյան ժամը 8-ին Վագզալնի փողոցի վրա տեղի ունեցավ երկաթուղային առաջավոր բանվորների ժողովը, ինտելիգենտ Յոսիֆ Ջուղաշվիլու մասնակցությամբ»։

Առաջին անգամ ընկ. Ստալինը ձերբակալվել է Բաթումում։ Նրան դատական քննության ենթարկեցին «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Թիֆլիսի խմբի» գործով։

Անհետաքրքիր չէ առաջ բերել այստեղ ընկեր Ստալինի բնութանիշները, որ կազմել է ժանդարմական պոլկովնիկ Շաբելսկին 1902 թվի հունիսի 17-ին Բաթումում։

1. Հասակը — 2 արշին 4 և կես վերշոկ։
2. Մարմնակազմը — միջակ։
3. Տարիքը — 23։

ա. Ձկա՞ն արդյոք որևէ առանձնահատկություններ մարմնի մասերում։ — Ձախ ոտի երկրորդ և երրորդ մատները երկար են։

բ. Զունի՞ արդյոք կեցվածքի առանձին մաներներ (ձևեր) — Ոչ։

4. Իր արտաքինով թողած տպավորությունը — սովորական։
5. Մազերի գույնը—գլխի վրա—մուգ շագանակագույն, բեղերն ու մորուքը շագանակագույն։

Մազերի տեսքը — ուղիղ, կանգնած։
Մազերի սանրվածքը — առանց մազամեջ գծի։
Թրաշո՞ւմ է մազերը — չի թրաշում։

6. Աչքերի գույնն ու մեծությունը — մուգ թխագույն, միջին մեծության, ակնոցներ չի կրում։
7. Գլխի կազմվածքը—սովորական։
8. Քթի գծագրությունն ու չափը — քիթը ուղիղ և երկար։

9. Ճակատի գծագրությունը և չունի՞ արդյոք առանձին նշաններ — ուղիղ, վոչ բարձր։

10. Դեմքի գծագրությունն ու կաշվի գույնը — դեմքը յերկար ե, մուգ, ծաղկված ծաղկից մնացած չեչով։

11. Բերանի խոռոչը, պակաս չե՞ն ատամները — ստորին ծնոտի աջ կողմը պակաս ե առաջին սեղանատամը։

12. Բերանի, կզակի գծագրությունը և նրանց արտաքին առանձնահատկությունները—բերանը միջակ ե, կզակը—սուր, խոսելիս առանձնահատուկ սովորություններ չունի։

13. Ձայնի բնույթը և չի՞ կակազում արդյոք — ձայնը հանդարտ ե, չի կակազում։

14. Ականջների գծագրությունը — միջին չափի։

15. Քայլվածքն ու նրա առանձնահատկությունները—սովորական։

16. Չունի՞ արդյոք հիվանդության հետքեր — Ձախ ականջի վրա խալ ունի, յերեսը ծաղկված ե ծաղկից մնացած չեչով։

Հաստատելով ընկ. Ստալինի չափազանց ակտիվությունն ու իրենց ձեռքից խուսափելու մեծ շնորհքը, ժանդարմերիան սկսեց առանձին խստությամբ հետապնդել նրան։ Յեվ չնայելով ընկ. Ստալինի մեծ փորձառությանը, նախահեղափոխական յերկար տարիներում նա քիչ չե դերի ընկել թշնամի ուժերի ձեռքը։ Նրան բանտարկում եյին կամ աքսորում «կայսրության հեռավոր վայրերը»։ Սակայն վո՛չ մի կերպ չեր հաջողվում կոտրել այդ մեծ հեղափոխականի անհողդողդ կամքը։ Նա անդուսպ կերպով ձգտում եր դեպի ազատություն ու անմիջապես անցնում ընդհատակյա աշխատանքի։ Ստորև բերված «տեղեկանքները» ցույց

տան, թե ի՞նչպիսի աչալրջությամբ ժանդարմերիան հետևում եր ընկ. Ստալինին և ինչքա՛ն մեծ եր նրա հեղափոխական «ցուցակ ծառայությանը».

ՏԵՂԵԿԱՆՔ

Վարչական կարգով աքսորի առաջարկված Յոսիֆ Վիսարիոնովիչ ՋՈՒՂԱՇՎԻԼՈՒ մասին

Մեղադրյալի ազգանունը, հայրանունը, կոչումը, ծննդավայրը կամ վո՞րտեղի վրա յե գրված և ընտանեկան դրությունը։	Ջուղաշվիլի Յոսիֆ Վիսարիոնովիչ, գյուղացի Թիֆլիսի նահանգի և գավառի Դիդի-Լիլո գյուղից, ամուրի։
Տարիքը	30
Տեղեկանք հանցավորության մասին և մեղադրյալների տված բացատրությունները։	Մեղադրվում ե Բաքվի ժանդարմական վարչության պետի 1910 թ. ^{26}/VI թվակիր № 3475 վորոշման (վոր գտնվում ե սրան կցված ընդ. № 75/1910 գործում) մեջ հիշված արարքների համար։ Իրան մեղավոր չի ճանաչում։
Վո՞րտեղ և ի՞նչ ժամանակից կալանքի տակ ե պահնորդական օրենքի կարգով։	Բաքվի բանտում, 1910 թվի ^{26}/III-ից կալանքը հաշվելով Բաքվի ժանդարմական վարչության պետի կարգադրության, իսկ 1910 թ. ^{27}/VI-ից Բաքվի քաղաքապետի։
Յենթարկվա՞ծ ե նախնական քննության կամ ձևական հարց ու փորձի, մեղադրանքի եյությունը, պատժի ի՞նչ չափեր են	1902 թվին յենթարկված ե քննության Քութայիսի ժանդարմական վարչության մեջ 121 հոդ. համաձայն և Թիֆլիսում պատ-

ինկատի առնվում ե՞նչ ուղղությունն ե նախատեսնվում տալ դատական գործին։

ժագրքի 250 հոդ. համաձայն։ Վերջին հարցաքննությունը վըճռված ե վարչական կարգով և բարձրագույն կարգադրությամբ 1903 թ. 9/VII աքսորվել ե Արեվելյան Սիբիր վոստիկանության հսկողության տակ բացարձակ յերեք տարի ժամանակով, վորտեղից փախել ե և վորոնվում ե վոստիկանության դեպարտամենտի 1904 թվի մայիսի 1-ի № 5500 շրջաբերականի համաձայն։

Այնուհետև 1908 թվի մարտի 28-ին Բաքվի հետախուզչ վոստիկանության, աստիճանավորների ձեռքով բռնվում ե անհայտ վոմն, վոր անվանում ե իրան Քութայիսի նահանգի և գավառի Մաղլակի գյուղացի Կայոս Նիժերաձե, վորին խուզարկելիս մոտը գտնվել են կուսակցական բովանդակության գրագրություններ։ Այս գործի առթիվ Բաքվի վարչության կից պահնորդական կարգով կատարված գրագրությամբ պարզվում ե, վոր Նիժերաձեն վերոհիշյալ Ջուղաշվիլին ե։ Այս գործի առթիվ գրագրությունը վերջացած ե և ներքին գործերի պ. մինիստրի կարգադրությամբ վորոշված Նիժերաձեյին (նույն և Ջուղաշվիլի) աքսորել Վոլոգդայի նահանգը վոստիկանության բացարձակ հսկողության տակ յերկու տարի ժամանակով, ժամկետը հաշվե-

լով 08 թվի նոյեմբերի 20-ից, բայց աքսորավայրից փախել ե և յերկրորդ անգամ վորոնվում ե վոստիկանության դեպարտամենտի 1909 թ. օգոստոսի 19-ի № 151385/53 շրջաբերականի համաձայն։ Ուրիշի փաստաթղթով ապրելու համար Ջուղաշվիլին քրեական դատի յե յենթարկվում պատժագրքի 977 հոդվածի համաձայն։

Տեղական իշխանությունների յեզրակացությունը նախատեսնվող վարչական կարգով տրվելիք պատժի չափի մասին։

Աքսորել Սիբիրի հեռավոր մասերը վոստիկանության բացարձակ հսկողության տակ հինգ տարի ժամանակով։

Կոփվելով բռնակալության դեմ մղած պայքարում, ընկ. Ստալինը միշտ կենդանի օրինակ եր հանդիսանում տոկունության ու կայունության, առանց վորոնց չի կարող իր գործը կատարել վո՛չ մի խոշոր կոնսպիրատոր։ Ընդ սմին նա խիստ պահպանում եր կուսակցական դիսցիպլինան, և այսպես կոչված «հին գվարդիան», վոր վաղուց ի վեր աշխատում եր նրա հետ ձեռք-ձեռքի տված, այդ տեսակետից շատ բան սովորեց նրանից։ Այստեղ հետաքրքիր են նույնիսկ մանրամասները, այսպես, օրինակ, ընկ. Ստալինը հանցանք եր համարում ամեն տեսակի ուշացում, վորի մեջ այնքան հաճախ մեղավոր ելինք հանդիսանում գրեթե մենք բոլորս։

Իմ հիշողության մեջ դեռ մնում ե մի դեպք, յերբ ընկերներից մեկն ուշացել եր կոմիտեյի ժողովից։ Ընկ. Ստալինը նրա գլխին այնպիսի մի օյին սարքեց, վոր մենք բոլորս զարմացած մնացինք. «Ցեխե անգամ հարազատ մայրդ մերձիմահ ե, այնուամենայնիվ իրա-

վունք չունես մեզ հարկադրել, վոր քեզ սպասենք», — վերջացրեց իր զայրացկոտ ճառը ի խրատ մեզ բոլորիս։ Սա հնչում էր ըստ յերեվույթին շատ խիստ, բայց այնպես ինչպես կարող էր կռվել մի հեղափոխական, վոր բռնակալական կարգերի սոսկալի պայմաններում իր վրա յեր վերցրել հեղափոխության հաջող յելքի պատասխանատվությունը։

Անխնայորեն շիտակ ու խիստ էր ընկեր Ստալինը և այն ընկերների վերաբերմամբ, վորոնք այս կամ այն առանձնահատուկ հանգամանքի շնորհիվ թույլ կտային իրենց քաղաքական թեկուզ մազաչափ զիջում. Հիշում եմ այսպիսի մի դեպք։ Մինգրելո-Գուրիական կուսակցական կոմիտեյի հին կազմի անդամ Գարմեն Ճիճինաձեն բանտում իր ժամկետը նստելուց հետո, կառավարությանը տվել էր ինչ վոր աննշան բովանդակությամբ մի խնդիր։ Ընկ. Ստալինի ցասումին չափ չկար։ Նա առհասարակ անխնա խարազանում էր ամենքին, ով էլ լիներ նա, յեթե իրան թվար, վոր նա նսե-

ափոխական մարտիկի կոչումը։ Այդպես անողոք ու պահանջկոտ էր նա և վերեվում հիշված կուսակցական կոմիտեյի վերընտրության ժամանակ։

Ընկ. Ստալինը մի անգամ չէ, վոր ապշեցրել է մեզ իր համարձակությամբ։

Նրա համարձակությունն ազատում է կոնսպիրատորին պասսիվությունից և յերբեմն հասցնում է փայլուն հետևանքների։ Հիշում եմ այսպիսի պատկեր. Քութայիսում մենք թաղում էյինք կազակներից սպանված խարազներին (սախական վոտնաման կարողներ)։ Թաղումն այնքան հսկայական էր, վոր կողմնակի հասարակությունն ապշած էր ու շարունակ հարցնում էյին, թե՝ ում են թաղում։ Ընկեր Ստալինը, վոր գնում էր հան-

դիսի հետ, բարձր ու ամենքին լսելի ձայնով կանչում էր՝

«Մենք թաղում ենք դահիճների ձեռքով սպանված բանվոր-պրոլետարներին, վերցրեք գլխարկներդ»։ Անողոք ու անխնա յեր ընկ. Ստալինը հակառակորդների վերաբերմամբ, մանավանդ հաճախակի դիսկուսիաների ու բանակռվային ընդհարումների ժամանակ մենշևիկների հետ։ Այս բանը գիտենալով, մենշևիկները խուսափում էյին նրա հետ գործ ունենալուց, իսկ մեր ընկերները հենց վոր նեղն ընկնեյին, նրա օգնությանն էյին դիմում ու նրան հրապարակ հանում։

Յերկարամյա յեռուն աշխատանքից ու մենշևիկների հետ անընդհատ ընդհարվելուց հետո Վրաստանում, ընկեր Ստալինը ռեակցիան սկսվելուց յերկու տարի անցած, 1907 թվին անցնում է Բաքու աշխատելու, իսկ այնուհետեվ Ռուսաստանի և մյուս արդյունաբերական կենտրոնները։

Նրա հետագա հեղափոխական գործունեյությունն իմ հիշողությունների շրջանակից դուրս է, ուստի և նրան յես այստեղ ձեռնամուխ չեմ լինի։

Ընկեր Աբել Սաֆրոնովիչ Ենուքիձեն ծնվել է 1877 թվի նոյեմբերի 3-ին Քութայիսի նահանգի Ռաճայի գավառի Ծկալտիսի գյուղում։ Սովորել է Տփխիսի տեխնիկական դպրոցում, վորի դասընթացն ավարտել է 1897 թվին։

Դեռ աշակերտական նստարանից ընկ. Ենուքիձեն սկսեց մասնակցել աշակերտական խմբակներին։ Այդ խմբակներում ընկ. Աբելն առաջին անգամ ծանոթանում է ընդհատակյա գրականության։ Դպրոցն ավար-

վելուց հետո նա ծանոթանում է Անդրկովկասի երկաթուղիների գլխավոր արհեստանոցները, որտեղ մտերմանում է մարքսիստական խմբերի հետ։ Այդ ժամանակվանից ընկ. Աբելը դառնում է կուսակցության անխոնջ աշխատավոր ու բանվորներին կազմակերպող։

1898 թվի վերջերին ընկ. Աբելին պաշտոնով տեղափոխեցին Բաքու։ Նրա ջանքերի ու անսպառ յեռանդի շնորհիվ Բաքվում կազմակերպվում է առաջին սոցիալ-դեմոկրատական բջիջը։ Այնտեղ տեղափոխված ընկ. Վլադ. Կեցխովելու հետ ընկ. Աբելը հիմք է դնում Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության, վորը հետագայումայնքան մեծ դեր խաղաց Անդրկովկասի ու ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատի հեղափոխական շարժման մեջ։

1899–1902 թվերին ընկ. Աբելը դառնում է Բաքվի կազմակերպության վոգին։Կապեր հաստատելով Թիֆլիսի ու Բաթումի ՍԴԿ կուսակցության հետ, նա կարողանում է միացնել Անդրկովկասի արդյունաբերական յերեք կենտրոնները՝ Բաքուն, Թիֆլիսն ու Բաթումը, այդ կենտրոնների կուսկազմակերպությունների միջեվ ստեղծել համերաշխություն ու այդպիսով տալ նոր ու ուժեղ զարկ ամբողջ յերկրի հեղափոխական շարժմանը։

Ընկ. Աբելի այդ ղեկավարչական դերն, իհարկե, չխուսափեց ժանդարմերիայի աչքից։Ժանդարմերիայի կազմած Սոց.-Դեմ.-Ռուս. կուսակցության Թիֆլիսի ու Բաքվի խմբերին վերահսկելու աքեմյան ամենից լավ պատկերում է ընկ. Ա. Ենուքիձեյի աշխատանքի այդ կողմը, պարզ կերպով ցուցադրելով նրան իբրև գլխավոր դեմք, վորի հետ կապված են Բաքվի կազմակերպության բոլոր թելերը։ Ժանդարմե-

բիայի գործակալների շրջանում նա հայտնի էր «Жаронный» մականունով։

Բայց ընկ. Ա. Ենուքիձեյի ամենագլխավոր գործն իր հեղափոխական աշխատանքի ասպարեզում հանդիսանում է Բաքվի ընդհատակյա տպարանի կազմակերպումը մյուս ընկերների հետ միասին։ Այդ տպարանն այնքան լավ եր կազմած, վոր կարողանում եր ծառայել վո՛չ միայն Բաքվին ու Թիֆլիսին, վո՛չ միայն Անդրկովկասին, այլ և ամբողջ Ռուսաստանին, հեղեղելով այն հեղափոխական հրատարակություններով։

Բաքուի տպարանում տպվում եյին թռուցիկներ, թերթեր, բրոշյուրներ ու գրքեր։

Բաթումի միջոցով ընկ. Ենուքիձեն կապ է հաստատում արտասահմանյան «Искра»-ի ղեկավար ընկ. Լենինի հետ, ստանալով նրանից դիրեկտիվներ, «Искра»-ի համարներ ու այլ հրատարակություններ։

Բաքվի տպարանը հարյուրավոր ու հազարավոր օրինակներով արտատպում եր «Искра»-ի համարներն և ուրիշ բոլշևիկյան հրատարակություններ ու այդպիսով դառնում պրոպագանդի ու լենինիզմի գաղափարները նախկին ռուսական կայսրության ազգաբնակության լայն մասսաների մեջ տարածող մի ուժեղ գործիք։

Ընկ. Աբել Ենուքիձեն լավագույն ու լավագույն դիրք գրողն եր ու լենինիզմի գաղափարները տարածողը։

Ընկ. Աբել Ենուքիձեն առաջին անգամ ձերբակալվեց 1902 թվի ապրիլին, Բաքու քաղաքում տեղի ունեցած դեմոնստրացիայի կապակցությամբ մեղադրվելով «սոցիալ-դեմոկրատական ընկերակցության» պատկանելու մեջ։

Գործը գլուխ չեկավ, ինարկե, առանց ցուցակագրության, չափ ու ձևի ժանդարմերիայի կողմից։ Առաջ ենք բերում հետևյալ տեղեկությունները Բաքվի ժանդարմական վարչության պետի սեպտեմբերի 4-ին կազմած արձանագրությունից։

1. Ե՞րբ է ուղարկված լիտ. Ա.։	1902 թ. սեպտ. 5-ին № 2368։
2. Ազգը, անունը և հայրանունը (ամուսնացածներին (կանանց) հիշել և սկզբնական ազգը)	Ենուքիձե Աբել Սաֆրոնովիչ։
3. Ծննդյան տարեթիվը . . .	3 նոյեմբերի 1877 թ.
4. Ծննդավայրը	Քութայիսի նահանգի Ռաճայի գավ. Ծկադիսի գյուղ։
5. Դավանությունը	Ուղղափառ։
6. Ծագումը	Գյուղացի։
7. Ազգությունը	Վրացի։
8. Հպատակությունը . . .	Ռուսահպատակ։
9. Կոչումը	Գյուղացի։
10. Մշտական բնակավայրը .	Բաքու։
11. Վո՞րտեղ է գրված . . .	Ծննդավայրում։
12. Պարապմունքը	Մասնագիտությամբ տեխնիկ է, 1901 թվի մարտի 1-ից ծառայում է «Ելեկտրական ուժ» ընկերության մոտ։
13. Ապրուստի միջոցները . .	Ռոճիկը՝ ամսական 75 ռուբլի։
14. Ընտանեկան դրությունը (անուն, հայրանունը կնոջ կամ մարդու, յերեխաների անունները, նրանց պարապմունքն ու բնակավայրը) .	Ամուրի յե։
15. Ազգակցական կապերը . .	Հայրը՝ Սաֆրոն Գավրոլիչ, մայրը՝ Վարվառա Իվանովնա, Ենուքիձե, ապրում են Քութայիսի նահանգի Ռաճայի գավ. Ծկադիսի գյուղում և պարապում գյուղատնտեսությամբ։
16. Ծնողների կամ նրանց փոխարինողների մշտական բնակավայրը	Ծկադիսի գյուղը։
17. Ծնողների տնտեսական դրությունը	Հայրն ունի հող, բայց քիչ է։
18. Կրթության տեղը . . .	1885-ին կամ 1886-ին մտել է Խոտեվի գյուղի գյուղական դպրոցը, ուր մնացել է յերեք տարի և վերջացրել է դասընթացը։ Այնուհետև 1889-ին մտել է Ախալ-Սենակի տարրական դպրոցը, վորն ավարտել է 1892 թվին. 1893 թվին մտել է Թիֆլիսի տեխնիկական դպրոցը, վորի դասընթացն ավարտել է 1897 թ.։
19. Ո՞ւմ հաշվով է կրթությունն ստացել	Իր հաշվով։
20. Յեղե՞լ է արտասահմանում, յե՞րբ, վո՞րտեղ հատկապես և ի՞նչ նպատակով . . .	
21. Ենթարկվե՞լ է առաջ պատասխանատվության . .	1902 թվի ապրիլի 21-ին կալանքի տակ է յեղել Բաքվի ցույցի առթիվ։

22. Ներկայիս քննության յեն-թարկելու հիմքը .	Դիմիտրի Բաքրաձեյի հետ ունեցած ընդհանուր բնակարանի խուզարկության արդյունքները:
23. Դատի յենթարկվելու ժամանակը	1902 թ. 4-ին սեպտեմբերի:
24. Հարցաքննության տեղը .	ք. Բաքու:
25. Ժամանակն ու տեղը խուզարկության կամ ձերբակալության	Խուզարկությունը կատարված է Բաքու քաղաքում սեպտեմբերի 2-ին:
26. Առաջին հարցաքննության ժամանակը	5 սեպտեմբերի 1902 թ.:
27. Ի՞նչ է հայտնաբերված խուզարկության ժամանակ .	Ցերկաթուղական ծառայողների մեջ հեղափոխական գաղափարներ տարածելու պրոյեկտի սեվագրությունը, հատվածներ «Իսկրա»-ից, ծածկագիր նամակ ագիտացիոն գրականություն ուղարկելու մասին, տառեր, թղթի թերթեր, վորոնց վրա նշանակված են հանցավոր հրատարակության օրինակների քանակը:
28. Ձեռք առնված պատժի միջոցները	Կալանքի տակ է առնված Բաքվի բանտում սեպտեմբերի 4-ից:

Ընկեր Աբել Ենուքիձեյի ձերբակալվելուց հետո անմիջապես տպարանը հեռացվում է նրա բնակարանից: 1902 թվի սեպտեմբերի սկզբներին ընդհատակյա

տպարանը բոլորովին պատահաբար հայտաբերվում է Հաջիկաբուլ կայարանում: Ցերկաթուղական գործակալներից մեկի հայտարարության համաձայն, մեքենավար Վիկտոր Բաքրաձեյի մոտ գտնում են մոտ չորս ու կես փութ տպարանական չարվածք:

«Բռնվելու հետեվյալ որը չարվածքը վերարտադրվեց, տպագրելով Բաքվի նահանգական տպարանում, ընդ վորում, չնայելով վոր այդ 15 չարվածքից շատերը ցրիվ եյին յեկել բռնելու ժամանակ, այնուամենայնիվ ստացվեցին վրացերեն ու ռուսերեն բնագրի կտորներից շատ թե քիչ պարզ արտահայտված արտատպումներ»:

Այստեղ տպված եյին՝

Վրացերեն թռուցիկ՝ «Կորչի միապետությունը» ,ըստ ժանդարմների արտահայտության «վրդովեցուցիչ խիստ բովանդակությամբ», վոր խիստ տարածված է յեղել ինչպես զորքերի, այնպես էլ Թիֆլիս ու Բաքու քաղաքների և Թիֆլիսի ու Քութայիսի նահանգների ազգաբնակության մեջ:

2. Վրացերեն հեղափոխական «Բրձոլա» թերթի հոդվածի և վրացերեն մի թռուցիկի մի մասը հարյուրամյա հոբելյանի առթիվ՝ «Նամակ վրացի բանվորներին»:

3. Թռուցիկ՝ «Քաղաքացիներ, մարտի 9-ին Բաթում քաղաքում զորքը սպանել է 11 բանվորների»:

4. Թռուցիկ՝ «Ընկեր բանվորներ», վոր տարածված է Բաքու քաղաքում:

5. Թռուցիկ՝ «Ընկեր բանվորներ», և այլն և այլն և այլն:

Ժանդարմերիան ամեն կերպ աշխատում էր քաբշ տալ ընկ. Աբելին ընդհատակյա տպարանի գործի մեջ, փաստեր գանել նրան դատի տալու և այլն և այլն։

Դարձյալ սկսվում են հարցաքննությունները։

Հայտնի ռոտմիստր Ռունիչը (վորը հետագայում սպանվեց տերրորիստների ձեռքով) 1902 թ. հոկտեմբերի 22-ին արդեն Թիֆլիսում ընկ. Ենուքիձեյի վրա կազմում է արձանագրություն հետևյալ բովանդակությամբ».

1. Հասակը	2 արշին 7 վերշոկ։
2. Տարիքը	25։
3. Մարմնակազմը	Կանոնավոր։
4. Արտաքին տեսքով թողած տպավորությունը	Կիսաինտելիգենտ։
5. Գլխի մազերի, բեղերի, հոնքերի գույնը . . .	Բակենբարդ մորուքը և թերթևունքը— չեկ, վոսկեգույն։
Մազերի տեսքը . . .	Մի փոքր խուճուճ։
Մազերի սանրվածքը . .	Առաջից-յետ։
Թրաշո՞ւմ է մազերը . .	Չի թրաշում։
6. Աչքերի գույնն ու մեծությունը, չունի՞ առանձնահատուկ նշաններ արտաքին տեսքի մեջ, աչքերի արտահայտության, հեռատե՞ս է, թե՞ կարճատես, դնո՞ւմ է ակնոցներ	Մուգ շագանակագույն, միջին մեծության, տեսողությունը նորմալ է։
7. Գլխի կազմը և նկատելի արտաքին առանձնահատկությունները	Կլոր, $7^1/_2$ սանտիմետր շրջագծով։
8. Ճակատի գծագրությունը և չունի՞ արդյոք առանձին նշաններ	Ճակատն ուղիղ, 6 սանտիմետր յերկարությամբ և 14 սանտ. լայնությամբ։
9. Քթի գծագրությունն ու չափը	Քիթն ուղիղ, յերկար. $5^1/_2$ սանտ., մի քիչ սուր, ծայրն անկանոն, կորվածքի հետևանքով։
10. Դեմքի գծագրությունը, կաշվի գույնը և չկա՞ն արդյոք առանձին արտաքին նշաններ դեմքի կաշվի վրա . . .	Ձվաձև, գունատ-վարդագույն, տեղ-տեղ ծաղկից մնացած սպիներով։
11. Բերանի խոռոչը, պակաս չե՞ն արդյոք ատամներից և վորո՞նք հատկապես . .	Պակաս են յերկու սեղանատամները վերին ձախ ծնոտի վրա։
12. Բերանի, կզակի գծագրությունը և նրանց արտաքին առանձնահատկությունները. չունի՞ արդյոք առանձին սովորություններ խոսելու ժամանակ (բերանը ծռել, ծըպտալ)	Բերանն ուղիղ է, կզակը՝ կլոր։
13. Ձայնի բնույթը և չի՞ կակազում արդյոք	Չի կակազում։
14. Ականջների գծագրությունը, չափն ու նրանց արտաքին առանձնահատկությունները	Կանոնավոր։
15. Քայլվածքն ու նրա առանձնահատկությունները . .	Կանոնավոր։
16. Չունի՞ արդյոք մարմնի վրա հիվանդության հետքեր— խալեր և առհասարակ աչքի ընկնող առանձնահատկություններ	Մարմնի վրա աջ կողմից սպիների հետքեր կան, վո՛չ այնքան մեծ։

Գաղտնի բնակարանում գտնվել եյին նաև ընկ. Ենուքիձեյի ծածկագիր նամակները, դրամարկղի հաշիվներ, կուսակազմակերպությունների հետ ունեցած գրագրություններ և մի ձեռագիր, վոր պատկանում է

ընկ. Աբելին և վորի մեջ շարադրված եր գործունեության ծրագիրն ու կոչ քաղաքական ազատություն ձեռք բերելու, իշխանությունը բանվոր դասակարգին փոխանցելու ուղիով։

Պաշտոնական «գրագրությունների» արդյունքն այն յեղավ, վոր 1903 թվի սկզբներին ընկ. Աբելին աքսորեցին իր ծննդավայր Ծկալիսի գյուղը—Քութայիսի նահանգի Ռաճայի գավառում։

1904 թվի հունիսին ընկ. Աբել Ենուքիձեն աքսորվեց յերեք տարով Արխանգելսկի նահանգը։ Շուտով նա վերադառնում է աքսորից ու անցնում 1905 թվի հեղափոխական կռվին։ Հեղափոխության պարտվելուց հետո նա վերադառնում է Բաքու ու բոլոր ուժերով լծվում Բաքվի բոլշևիկների կազմակերպության աշխատանքներին իբրեվ անհողդողդ կուսակցական ու մեկը ղեկավարներից։ Ամենաանմիջական մասնակցություն ցույց տալով կուսակցական հեղափոխական կյանքի բոլոր բնագավառներում, 1907–9 թվականներին նա մի քանի անգամ նստել է Բաքվի բանտում, վորտեղից հաճախ վիճակվում եր նրան մյուս ընկերների հետ միասին (Ստալին, Օրջոնիկիձե) ուղղություն տալ Բաքվի կազմակերպության աշխատանքներին ու մասնակցել նրա տպագրական հրատարակությունների խմբագրությանը։

1911 թվի հոկտեմբերին ընկ. Աբելը դարձյալ նստում է Բաքվի բանտն ու այնուհետև նորից աքսորվում, այս անգամ արդեն 5 տարով, կայսրության հեռավոր նահանգները։

Մոտ յերեսուն տարի ընկ. Աբելը պայքարում է պրոլետարական մեծ կուսակցության առաջավոր շար-

քերում, մի վայրկյան անգամ չթողնելով նրան, նույնիսկ ռեակցիայի ամենամռայլ մոմենտներին։

Հրաշալի աշխատավոր լինելու հետ միասին ընկեր Աբելը միաժամանակ լավագույն բարեկամ ընկեր եր բոլոր այն կուսակցականների համար, վորոնց հետ առընչություն եր ունենում ինքը, խոսքով ու գործով շրջապատողների մեջ յեռանդ մտցնելով ու հավատ ներշնչելով դեպի սոցիալիզմի ու պրոլետարական հեղափոխության հաղթանակը։

Լադո Կեցխովելին ծնվել է 1878 թվին։ 1893 թվին մասնակցել է Թիֆլիսի սեմինարիայի անկարգություններին, իսկ 1896 թվին արդեն յենթարկվում է քաղաքական հարցաքննության Կիևի ժանդարմական վարչության կողմից։

1900 թվին ընկ. Լադոն ղեկավարում եր Թիֆլիսի ձիաքարշի (տրամվայի) գործադուլը, իբրեվ այդ գործադուլի գլխավոր կազմակերպող։ Ընկ. Լադոյին վորոնում եր Թիֆլիսի ժանդարմերիան, սակայն նա ժամանակին թաքնվեց ու ընկավ վ.ստիկանության դեպարտամենտի 1901 թվի մարտի 12-ի «վորոնման շրջաբերականի մեջ»։ 1902 թվի սեպտեմբերի 3-ին ընկ. Լադո Կեցխովելին ձերբակալվում է իբրև գլխավոր կազմակերպող հեղափոխական ընկերության ու գաղտնի տպարանի, վոր, ինչպես պարզել է ժանդարմերիան, բաց է թողել հիսունից մինչեվ վաթսուն զանազան տեսակի թռուցիկներ և ուրիշ հրատարակություններ, վորոնց բովանդակությունն է յեղել՝ կոչ միապետությունը տապալելու։

Ընկ. Կեցխովելու ղեկավարությամբ լույս են տեսել և մի շարք թռուցիկներ զորքի անունով, վոր պա-

բունակելիս են յնդել՝ «կոչ զինվորներին բացարձակ խռովության (բունտի) ու անհնազանդության, ընդ որում վերջին թռուցիկների ցրումը զորքերի մեջ, ինչպես պարզել է քննությունը, կազմակերպված եր շատ ընդարձակ կերպով և նյութ է ծառայել մի քանի առանձին, ինքնուրույն քննությունների, որոնց ժամանակ դատի յեն կանչվել ու դատապարտվել շատ շատերը»:

Բանտում յեղած ժամանակ ընկ. Լ. Կեցխովելին իրան պահել է ինչպես վայել է իսկական հեղափոխական հերոսին, որին անծանոթ են կասկածի ու փոքրոգության զգացմունքները:

Նրա անզուսպ բնավորության գեղեցկագույն պատկերացումը տալիս է նրա «խնդիրը» հանուն Թիֆլիսի ժանդարմական վարչության պետի.

...Խնդրում եմ ժանդարմական վարչության պետին հաղորդել ինձ, թե՝ հարցաքննության պիտի յենթարկվեմ յես, թե՞ ոչ և յեթե պիտի յենթարկվեմ, յե՞րբ հատկապես: Յերբ պ. պետը կարևոր է համարում ինձ հարցաքննել, ապա խնդրում եմ, թյուրիմացությունների առաջն առնելու համար, որ կարող են ծագել, հարցաքննության ժամանակ ձեռքի տակ ունենալ բոլոր այն փաստաթղթերը, որոնք բռնել են Ենուքիձեյի բնակարանը խուզարկելիս, ինչպես ինձ ձերբակալելու ժամանակ, այնպես էլ Բաքրաձեյին ու Ենուքիձեյին ձերբակալելիս, միաժամանակ և նրանք, որ գտնվել են ինձ մոտ, նույնպես և Հավլաբարում բռնված շրիֆտի արտատպումները:

Այնուհետև, յես խնդրում եմ ժանդարմական վարչության պ. պետին հայտնել ինձ, թե արդյոք զրկվա՞ծ եմ յես հարազատներիս հետ տեսակցության իրավունքից, թե՞ ոչ:

Յեթե զրկված եմ, ինչի՞ հետևանք է այդ կարգադրությունը: Ինչու՞ թույլ չեր տրված, կամ ինձ չեր հասցրած Շեքսպիրի հեղինակությունները վրացերեն լեզվով, որ բերել եր ինձ տալու յեղբայրս տեսակցության ժամանակ ստացված թույլտվությամբ (բանավոր, ռոտմիստր Բունիչի կողմից): Կարևոր չի՞ համարի արդյոք ժանդարմական վարչության պ. պետը բավարարել իմ խնդիրներս բացատրելով թե ի՞նչ օրենքների հիման վրա թույլ չտրվեց ինձ օգտվելու հետևյալ գրքերից. «Կապիտալ» հեղինակություն Կ. Մարքսի, «Սոցիալիզմի պրոբլեմները»՝ Ե. Բերնշտեյնի. «Ֆրանսիական հեղափոխության պատմությունը»—Թամրոյի և Լավլոի (բոլորը ռուսերեն) և հնարավոր չի՞ համարի արդյոք պ. պետը ինձ իրավունք տալ օգտվելու այդ գրքերից»:

Լ. ԿԵՑԽՈՎԵԼԻ

1 հունվարի 1903 թ.

Բանտային ռեժիմը ո՛չ միայն չի կարողանում ընկճել նրան, այլ չի կարողանում կտրել դրսի աշխարհի անց ու դարձից, ընդ որում նա շարունակ յեռանդուն անլեգալ գրագրություն ուներ դրսի աշխարհի հետ:

Ինչպես յերևում է Թիֆլիսի ժանդարմական պետի անունով գրված հաղորդագրությունից, խուզարկության ժամանակ բանտարկյալ Կեցխովելու խցում գտնվել են՝ «սեղանի վրա, գրքերի մեջ» 1) ռուսերեն հեղափոխական փոստնավոր «Նոր մարսելյոզ», որի մեջ առանձնապես ուշագրավ է հետևյալ տունը.

„В стране подавленной бесправьем,
Вам слышно-ль—близок ураган.
То в смертный бой с самодержавием
Вступает русский великан...“

2) մի թղթի կտոր, վրան գրված վրացերեն նամակ, տարօրինակ բովանդակությամբ, վոր սկսվում է այսպես՝ «Ցեղրայր Միկկիչ», և վորի պատճենը թարգմանության հետ ներկայացնում ենք ընդ սմին, 3) բաց նամակի բլանկ, ռուսերեն մակագրությամբ՝ հիշատակ Վիկտոր Բաքրաձեյից (Բաքրաձեն մոտ ժամանակներս արձակվեց բանտից, վոր բռնված էր Կեցխովելու հետ նույն գործով): Հարցաքննության ժամանակ այս առթիվ Կեցխովելին բացատրեց, թե «Մարսելյոզի» վոտանավորն ինքը Կեցխովելին է գրել դեռ ազատ յեղած ժամանակ և պատահմամբ հետը բերել է բանտ: Վոր բաց նամակի վրա ինքը Կեցխովելին է մակագրել և վո՛չ թե Վիկտոր Բաքրաձեն, իսկ վրացերեն նամակի մասին, վոր հիշված է հաղորդագրության յերկրորդ կետում, ինքը՝ Կեցխովելին միանգամայն վոչինչ չգիտե, ինչպես և չգիտե, ո՞վ է գրել և ի՞նչ առթիվ է գրել այդ նամակը»:

Ժանդարմերիան ի նկատի առնելով այս, կարգադրում է «մեղադրյալ Վլադիմիր Կեցխովելուն արգելել գրական պիտույքներով ոգտվելն առնվազն մի ամիս ժամանակով, ի նկատի առնելով նրա կողմից այդ պիտույքներն ի չարը գործ դնելը»:

1903 թ. հուլիսի 3-ին քաղաքական բանտարկյալները Մետեխի բանտում «անկարգություն» են կազմակերպում, վորի մեջ ղեկավարող դեր են խաղում Լադո Կեցխովելին և Զ. Զոդրիշվիլին: Կեցխովելին «աղաղակելով իր խցից պահանջում էր վերացնել նշանակված պատիժը, սպառնալով հակառակ դեպքում անկարգություն անել, իսկ 1903 թ. հուլիսի 15-ին, ցերեկվա ժամի 2-ին Կեցխովելին փորձում էր իր խցի դուռը կոտրել, նախ պատուհանի կիսափեղկով, վոր հանել էր պատուհանից, վոր նայում է դեպի պահակը, իսկ փեղկը կոտրվելուց հետո—տաբուրետկով, վորը նույնպես փշուր-փշուր է անում: Իսկ պատուհանի մյուս փեղկի վրա ջարդում է բոլոր ապակիները»:

Անկարգության մասնակցողները յենթարկվում են հետևյալ պատիժներին.

«Զաքարիա Զոդրիշվիլին, Վլադիմիր Կեցխովելին՝ նստում են մութ «կարցեր» (պատժարան) յուրաքանչյուրը յոթն որ, սննդի վորոշ սահմանափակումներով, Արչիլ Դոլիձեն և Վիտալի Բլոկը—զրկվում են անկողնից, տաք կերակրից, զբոսանքից ու գիրք կարդալու իրավունքից, յուրաքանչյուրն յերեք որ ժամանակով, իսկ Կլավդիա Ֆրանչեսկին զրկվում է գրագրության, տեսակցության, զբոսանքի ու գիրք կարդալու իրավունքից մի շաբաթ ժամանակով: Այնուհետև № 31 ընդհանուր գաղտնի խցից փոխադրվում են միանձնյա խցերը հետևյալ բանտարկյալները՝ Ֆրանչեսկին, Կալխտրաձե Գողուան և Կուրնատովսկին—ինչպես մյուս բանտարկյալների վրա վատ ազդեցություն ունեցողներ: Յերբ վերոհիշյալ կարգադրությունն ի կատար էր ածվում, Զոդրիշվիլին համառում էր, բողոքելով, թե՝ վո՛չ վոք իրավունք չունի իրեն այդպիսի պատժի յենթարկելու, Բլոկը, յերբ վերցնում էին նրա անկողինն ու գրքերը, խնդրում է, վոր պատուհանի փեղկերն էլ վերցնեն, հակառակ դեպքում միևնույն է,

նա կկատարալ քայլը։ Երբ Դոլմձեն բաց թողեց ձեռքից անկողինն, սկսեց բղավել՝ «սա իշխանություն չէ, այլ բարբարոսներ, ավազակներ, անպիտաններ...» և այլն, իսկ Կլավդիա Ֆրանչեսկին, երբ հայտնեցին նրա վրա դիսցիպլինար կարգով դրված պատիժն ու փոխադրեցին ընդհանուր բաժնից միանձնյա խուցը, հիվանդանոցի միանձնյա խցում, ասաց, որ նա այդ մոմենտից կատարելապես ու ամեն բանում համակրում է իր յեղբայրակիցներին»։

Ընկ. Լադոն 1903 թվի օգոստոսի 17-ին ընկավ պահակի գնդակով։ Չկար այլևս բանվոր դասակարգի լավագույն մարտիկներից մեկը։ Մեր կուսակցության Թիֆլիսի և Բաքվի կոմիտեները թռուցիկներ բաց թողին այդ առթիվ, որոնց մեջ տալիս են ընկ. Լադոյի գործունեյության բնութագիրը։

Թիֆլիսի Կոմիտեյի թռուցիկի մեջ ասված է՝

«Ընկերնե՛ր.

Կիրակի առավոտյան ժամը $10^1/_2$-ին Մետեխի բանտում, փակ խցի մեջ հրացանի գնդակով տեղն ու տեղն սպանված է ազատության ու սոցիալիզմի անխոնջ մարտիկ Լադո Կեցխովելին։ Ցերեկասարդ օրերից մինչև իր վերջին շունչը նա պաշտպանում էր մարդու սրբազան իրավունքներն ու բողոքում ամեն տեսակի կամայականության ու բռնության դեմ։ Վոչ բանտի մութ պատերը, վո՛չ ցուրտ ու մութ պատժարանը.—չկարողացան թուլացնել նրա թափը պայքարի։ Ամբողջ բանտը ամեն որ լսանում էր նրա անդուսպ աղաղակից՝ «Կորչի միապետությունը, կեցցե հանրապետությունն ու սոցիալիզմը»։

Կոնսպիրատիվ նկատառումներով մենք սահմված ենք լռել շա՛տ խոշոր հեղափոխական ձեռնարկությունների մասին, որոնց հոգին յեղել է նա։ Դեռ պատանի, Թիֆլիսում նա մասնակցում է սեմինարիայի 1893 թ. հուզմունքներին, որի համար և արտաքսվում է դպրոցից։ Այնուհետև նա գնում է Կիյևի սեմինարիան, բայց շուտով բանտ է ընկնում։ 1897 թվից նա ամենայեռանդուն մասնակցություն է ունենում Կովկասի բանվորական շարժմանը։ Թիֆլիսում կազմակերպում է առաջին գործադուլը ձիաքարշի բանվորների, բայց մի կոնդուկտոր մատնում է նրան ու նա անցնում է ընդհատակյա դրության։ Նա գնում է Բաքու և ուրիշների հետ միասին հիմքը դնում Բաքվի կազմակերպության։ Անցյալ տարի աշնանը պատահաբար բանտարկեցին նրան Բաքվում։

Հանդիսա վոսկորներից, ժողովրդական ազատության սքանչելի՛ մարտիկ։

Ընկերնե՛ր, այս վրդովեցուցիչ վոճիրը չթողնենք առանց բողոքի։

Կորչի՛ միապետությունը։

Կեցցե՛ դեմոկրատական հանրապետությունը։

Կորչե՛ն կապիտալիստները։

Կեցցե՛ սոցիալիզմը։

Թիֆլիսի Կոմիտե»։

Ընկ. Կեցխովելու ավելի մանրամասն բնութագիրը տվել է Բաքվի Կոմիտեն, բնաբան վերցնելով հետևյալ յերկտող վոտանավորը.

«Համառ բազե, թշնամու դեմ պայքարում
Դու քաջի պես ընկար կռվում արնաքամ...»։

Այնուհետև թռուցիկի մեջ ասված է՝ Թիֆլիսի

բանտում գնդակահարեցին Վլադիմիր Կեցխովելուն (Լադո): Այդ ստոր սպանության մանրամասնությունները դեռ հայտնի չեն: Հանձին սպանվածի մեր կուսակցությունը կորցրեց բանվոր դասակարգի գործի համար կռվող իր ամենահայտնի ու յեռանդուն մարտիկներից մեկին»:

«Վլադիմիրը մարտիկների շարքը մտավ ամենածանր ժամանակներում, յերբ բանվոր դասակարգը կարծես քնած էր խորը քնով ու իշխանության դեմ կռիվը տարվում էր անհատ բանվորների ու ինտելիգենտների ձեռքով: Տասը տարի առաջ էր այդ: Այն ժամանակ, Վլադիմիրը դեռ պատանի, արտաքսվեց Թիֆլիսի սեմինարիայից, անկարգություններին մասնակցելու համար: Նա գնաց Ռուսաստան, ուր մնաց յերկու տարի: Այդ շրջանում վերջնականապես ու կայուն կազմակերպվեց Վլադիմիրի մտավոր մակարդակը: Կռիվ, կռի՛վ անողոք կամայականության ու գարշելի միահեծան կառավարության դեմ: Բանվորների առաջին ընդհարումներից կառավարության ու կապիտալիստների հետ, նրա սիրտը բաբախեց ուրախությունից: Դրանց մեջ լսում էր նա վորոտը գալիք փոթորկի, վոր պիտի սրբեր բռնության ու անիրավության ճնշումը»:

«Յեվ նա շտապեց հայրենիք, ուր այնքան անհրաժեշտ եյին մարտիկներ, այնքան անհրաժեշտ հավատ ներշնչել դեպ անկումը այս ճնշման ու ստրկական շրջանների»:

«Թիֆլիսն ուրախացրեց նրան: Մի բուռ ինտելիգենտ աշխատավորների փոխարեն, վոր նա թողել էր Թիֆլիսում, այժմ գտավ հարյուրավոր, հազարավոր անվեհեր մարտիկներ բանվոր դասակարգից: Յեվ վո՛չ թե վախկոտ, փոքրիկ խմբակներ, վոր հավաքվում

եյին դողդողալով կես գիշերին Թիֆլիսի խուլ փողոցներով, նա գտավ այժմ բանվորների ահագին բանակ, վոր համարձակ, դրոշը ձեռքերին, մարդաշատ հրապարակներում ու փողոցներում բարձրաձայն հայտարարում եյին իրենց պահանջները մարդկային արժանավայել կյանքի: Իր ազնիվ ու խիզախ բնավորությամբ վողջ թափով Վլադիմիրը նվիրվեց պայքարի մեծ ու սուրբ գործին: Բայց շուտով նկատվեց թշնամիների կողմից ու ստիպված էր անցնել անլեգալ դրության, ապրել ուրիշի անունով: Այդպես ապրեց նա Կովկասում հինգ տարի, թաքնվելով զանազան անունների տակ, մերթ Թիֆլիսում, մերթ Բաթումում, յերբեմն էլ վորևէ խուլ գյուղում: Այդ միջոցին նա չուներ իր անձնական կյանքը: Չգիտնալով ի՞նչ է հոգնածությունն ու հանգիստը, Վլադիմիրը (կամ Լադոն, ինչպես անվանում եյին նրան), այդ ժամանակն անցկացրեց մաշող աշխատանքի ու անընդհատ պայքարի մեջ աշխատավորների շահի համար: Մերթ աշխատում էր նա բանվորների խմբերում, մերթ կազմակերպում Թիֆլիսում ահագին գործադուլ, մերթ Ոզուրգեթի գավառի վորևէ խուլ անկյունում կոչ էր անում գյուղացիներին թոթափել տիրող բռնակալության լուծն ու հարել պայքարող պրոլետարիատին, վերջապես յերբեմն էլ ամենաանտանելի պայմաններում կանգնած տպարանական մամուլի յետևը, որ ու գիշեր աշատում, գրքույկներ տպագրելով բանվորների ու գյուղացիների համար»:

«Շա՜տ բան կարող եյինք պատմել, ընկերնե՛ր, այդ վեհ գործչի զարմանալի գործունեյության մասին, բայց հարկադրված ենք թողնել այդ ավելի նպաստավոր ժամանակների, ըստ վորում շատ անձնավորություններ ու շահեր կապված են նրա հետ և նրա կյանքի մանրա-

ժամանությունները պատմելը կվնասեր այն գործին, վորին Լադոն նվիրեց իր կյանքը»։

«Բայց մի բան ակտի ասենք ձեզ, ընկերնե՛ր, մեր շարքերից դուրս յեկավ մեր ամենահանդուգն ու ամենա ուժեղ աշխատավորներից մեկը, վոր թանգագին գործին տվեց այն ամենն, ինչ կարող է տալ մարդը—իր յերջանկությունն, իր ուժերն ու իր կյանքը»։

«Ցեվ ամենալավ արձանն ու վարձատրությունն այդպիսի մարտիկներին կլինի անողոք կռիվն այն բռնակալության դեմ, վոր սպանում է նրանց, այն վայրենի կամայականության դեմ, վոր խլում է մեզանից մեր ամենալավ բարեկամներին»։

«Մենք հուսով ենք, ընկերնե՛ր, վոր սպանված ընկերոջ հիշատակն ամուր կմնա մեր հիշողության մեջ։ Ցեվ այդ հիշատակն ավելի կամրապնդի մեր հավատը դեպի սուրբ գործի մերձավոր հաղթանակը, մեր հաստատ հավատը, վոր ամեն մի մեծ մարտիկի մահվամբ մոտենում ենք ցանկալի նպատակին...»

«Կորչե՛ն դահիճներն ու ինկվիզիտորները»։

«Կորչի՛ բռնակալությունը»։

25/V 1903 թ.

Կովկասի Սոցիալ-դեմոկրատական Բանվորական Միության Բագվի Կոմիտե

Կուսակցական կազմակերպություններին յերկար ժամանակ չհաջողվեց պարզել ընկ. Կեցխովելու սպանության իսկական պատկերը։ Սկզբում այդ սպանությունը ներկայանում էր վորպես մի ճակատագրական պատահականություն, վորի առանձին մոմենտները տեղի յին ունեցել յերևի հետևյալ կարգով։

Կեցխովելին մոտենում է խցի պատուհանին ու չի հեռանում այնտեղից, չնայելով պահակի պահանջին։ Պահակն արձակում է հրացանն ու ընկ. Կեցխովելին ընկնում է։

Այդպես էր պատկերանում գործն սպանությունից անմիջապես հետո։

Սակայն ստորև բերված փաստաթուղթը միանգամայն ուրիշ լույս է սփռում այդ չարագործության վրա, խորտակելով հենց նոր առաջ բերված պարզ պատկերը։

Այդ փաստաթուղթն ստորագրել է ժանդարմական հայտնի ռոտմիստր Ռունիչը (վոր հետագայում սպանվեց), վոր բնորոշում է ընկ. Կեցխովելուն ժանդարմերիայի տեսակետից, վորպես մի ամենավտանգավոր հեղափոխականի։ Ռունիչն յերկյուղ է կրում, վոր յեթե Կեցխովելու դեմ նախազգուշական առանձին միջոցներ չձեռնարկվեյին, ապա նրան աքսորել չի հաջողվի։ Նա կփախչի արտասահման «և ապագայում իր ծայրահեղ համոզմունքներով անշուշտ մեծ չարիքներ կպատճառի»։ Ժանդարմները յենթադրում էյին, վոր Կեցխովելին հատկապես այդ նպատակով «միջնորդություն է հարուցել ազատել իրեն կալանքից և աքսորել նախորոշված տեղը»։

Այս փաստաթուղթը կարդալուց մի շաբաթ հետո սպանում են ընկ. Կեցխովելուն։ Սոսր սպանությունն անկասկած նախապես մտածված էր ժանդարմների կողմից ու վարպետորեն իրագործված։

Ահա այդ փաստաթղթի բովանդակությունը.

Կոպիա

Թ. գ. 510,

Ներկայացնելով ընդ սմին գրագրությունները, պատիվ ունեմ զեկուցանելու Նորին Բարեծննդության Թիֆլիսի Նահանգական Ժանդարմական Վարչության պ. Պետին, որ մեղադրյալ Վլադիմիր Կեցխովելին, ի թիվս մյուս այն հանցանքների, որոնց մասին հիշված է մայիսի 31-ի № 3105 զեկուցմանս մեջ հանուն Ոստիկանության դեպարտամենտի, կատարված քննությունը պարզեց նաև այն, որ յեղել է գաղտնի տպարանի գլխավոր կազմակերպողը, այն տպարանի, ուր տպվել են գրեթե բոլոր այն թռուցիկներն ու հեղափոխական հրատարակությունները, որ լույս են տեսել ու զանազան ժամանակներում տարածվել Թիֆլիսի, Քութայիսի ու Բաքվի նահանգների շրջանում մինչև Կեցխովելու բանտարկությունն, այսինքն մինչև 1902 թվի սեպտեմբեր ամիսը: Ընդ որում նույն քննությամբ գլխավորապես պարզվել է այն, որ Կեցխովելին ուրիշ մեղադրյալների հետ միասին իր գաղտնի տպարանում տպել է այն թռուցիկը, որ ուղղված էր զորքերին և որի նպատակն էր կոչ անել զինվորներին բացարձակ խռովության ու անհնազանդության: Եվ ինչպես հաստատված է, այդ թռուցիկները տարածվել են չափազանց մեծ քանակությամբ Թիֆլիսի տակ կանգնած մոտ հարյուր հազար զորքի մեջ, որ հավաքված էին այնտեղ 1901 թվի սեպտ. վերջին Բարձրագույն զորատեսի համար, Վրաստանը Ռուսաստանի հետ միացնելու հարյուրամյակի տոնակատարության առթիվ, ընդ որում հիշյալ թռուցիկների տարածումը զորքերի մեջ նյութ է ծառայել այդ մասին մի քանի անգամ քննություններ կատարելու:

Բացի այս, նույն քննությունից յերևում է, որ Վլադիմիր Կեցխովելին գրեթե յերկու տարի շարունակ որոնվում էր, իբրև զինվորագրությունից խուսափող, նույնպես և Ոստիկանության դեպարտամենտի կողմից, իբրև մեղադրվող մի այլ քաղաքական գործի մեջ, որի համար անպայման պիտի յենթարկվեր ձերբակալման, մինչդեռ Կեցխովելին, իր ընդարձակ հեղափոխական կապերի ու ծանոթությունների շնորհիվ, ուրիշներնի անվան տակ, կեղծ անձնագրերով, հենց այն միջոցին, յերբ խիստ որոնում էին նրան, կարողանում է մի քանի անգամ միանգամայն անպատիժ անցնել ռուսական սահմանն ու դառնալով ազատ թափառել այդ ամբողջ ժամանակամիջոցում այնպիսի համեմատաբար խոշոր կենտրոններում, ինչպիսիք են Թիֆլիսը, Բաքուն ու կազմակերպել այնպիսի բարդ ու վտանգավոր ձեռնարկություն, ինչպիսին հանդիսանում է գաղտնի տպարանը, որն անընդհատ գործել է գրեթե յերկու տարի շարունակ, և որի մի մասը դեռ մինչև օրս էլ մնում է չհայտնաբերված և որի կազմակերպումն, ինչպես հաստատված է դարձյալ քննությամբ, նստել է ահագին փողեր, որ հանգանակվել է զանազան անձանցից:

Հայտնելով վերոգրյալը, ընդ սմին պատիվ ունեմ զեկուցել, որ թեև մինչև հարցաքննության վերջնական վճիռը Կեցխովելու նախնական աքսորը որևէ հեռավոր վայր միանգամայն ցանկալի յե, բայց ի նկատի առնելով քննությամբ հաստատված նրա լուրջ ու մեծ նշանակությունը հեղափոխական շարժման մեջ, շատ օգտակար կլիներ Կեցխովելու անձի ապահովության համար աքսորի ժամանակ նրա դեմ ձեռք առնել

վորեւե առանձին, հատուկ միջոց, ըստ վորում Կեցխովելին հենց վոր ազատվի, առաջին հնարավոր դեպքում կփախչի արտասահման և առաջիկայում իր ծայրահեղ համոզմունքներով անշուշտ մեծ չարիքների պատճառ կդառնա և ըստ յերևույթին հենց այդ նպատակով հիշյալ Կեցխովելին միջնորդություն ե հարուցել ազատելու իրեն կալանքից և աքսորել նախապես վորոշված վայրը։

Ընդ սմին ավելացնում եմ սրան, վոր դեռ հայտնի չե, թե իմ կատարած քննության հետեվանքով ի՞նչ պատժի պիտի յենթարկվի Կեցխովելին և ո՞ւր աքսորվի, ըստ վորում «Կեցխովելու և այլոց» հարցաքննության գործը գտնվում ե Թիֆլիսի Սուդեբնի Պալատի Պ Դատախազի մոտ ի հայեցողություն»։

Ռոտմիստր Ռունիչ

10-ն *ոգոստոսի* 1903 *թ.*

Թիֆլիս

Պատճեն

Թ. գ. 498

Պետերբուրգ

Վոստիկանության դեպարտամենտին.

Այսոր քաղաքական հանցավոր Վլադիմիր Կեցխովելին Մետեխի բանտում անկարգություն առաջ բերելով և ընդ սմին մյուս բանտարկյալներին ես դրդելով անկարգության, սկսեց քանդել պատից աղյուսներն ու նետել Քուռի վրա ձորի գլխին նեղ հրապարակի վրա կանգնած պահակին, վորն արձակեց հրացանն և սպանեց նրան։ Կատարվում ե քննություն։

Իսկականն ստորագրել ե և ուղիղ ե.

Պոլկովնիկ (ստորագրություն)

Թ. գ. 499

Վոստիկանության դեպարտամենտին.

18 *ոգոստոսի* 1903 *թ.* № 5013

Կեցխովելու սպանության մասին.

Ի հետևումն անցնող հուլիս 26–*ի թվակիր* № 2775 *Վոստիկանության Դեպարտամենտիդ գրության, վոր ուղարկել ե ինձ Բաքվի նահանգական վարչության պ. Պետը, և ի լրումն իմ սույն ոգոստոս ամսի* 17–*ի հեռագրական հաղորդագրության, պատիվ ունեմ այսու զեկուցել, վոր «Անդրեյ Բալույեվի և այլոց» գործով քննության յենթարկվող Վլադիմիր Կեցխովելին սույն ոգոստոսի* 17–*ին առավոտյան ժամի* 11–*ին տեղն ու տեղն սպանվեց իր խցում պահակի գնդակով, վերջինիս վրա պատից պոկած աղյուսներ նետելու համար։*

Պոլկովնիկ (ստորագրություն)

ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Բանտում խռովություն (բունտ) հունիսի 8-ին:
2. Գործադուլներ և հուզմունքներ Բաթումում:
3. Առաջին անլեգալ խմբակները Բաթումի բանվորների շրջանում:
4. Գործադուլ «Черноморский Вестник» թերթի տպարանում:
5. Մարտի 9-ի անցքերը:
6. Բանվորական շարժման աշխուժացումը Բաթումում:
7. 1905 թվի հեղափոխության նախօրյակին:
8. Բաթումն առաջին հեղափոխության շրջանում:
9. Բաթումի պրոլետարիատի դերը Գուրիայի գյուղացիության զարթոնքի խնդրում:

Մետեխի բերդը բռնկոտ լիքն էր քաղաքականներով․

. . . .

Այդ պատճառով էլ ինձ ուղարկեցին 8-րդ վոստիկանական բաժինն ու տեղավորեցին մի խոնավ ու մութ նկուղում։

Իմ խցի մոտ գտնվում էր արտաքնոցն, իսկ մյուս կողմից կապած էին պրիստավի յերեք այծերը։

Նկուղում կանգնած էր մի զարշելի հոտ ու խոնավություն։ Այստեղ նստացրին ինձ ուղիղ մի ամիս ու կես և վերջիվերջո հիվանդացա յես հոդացավով։ Հենց իմ կողքիս, հետևյալ խցում բանտարկվում էին փողոցային գողերը, գրպանահատներն ու հարբեցողները։

Հետևյալ որն այստեղ բերին յերկու բանվորների։ Նրանք հարբած էին քթից-բերնից ընկած։ Սկզբում նրանց ուզեցին գողերի հետ նստացնել, բայց նրանք վոչ մի կերպ չհամաձայնեցին ու աղմուկ բարձրացրին։ Լսվում էին հետևյալ խոսքերը․

«Մինիստր Բոգոլեպովին սպանեցինք, իսկ այժմ ձեր հերթն է, դահիճներ»։

Յես իսկույն վեր թռա տեղիցս և ուզեցի իմանալ, թե բանն ինչո՞ւմն է, յե՞րբ են սպանել։

Սակայն մերձակայքում վո՛չ մի կողմնակի մարդ չերևաց։ Այն ժամանակ յես վորոշեցի դիմել վոստիկանին։

Պետք էր ընտրել նրանցից մեկն ու մեկին՝ ամենալավին, ու հետո հարաբերության մեջ մտնել: Յես սկսեցի խոսել դեսից-դենից, աշխատելով բարեկամանալ յերկու վոստիկաններից մեկն ու մեկի հետ: Յերկուսն էլ շատ հետաքրքիր անձնավորություններ դուրս յեկան: Առաջինը լեհ էր, ընդ սմին չափազանց աստվածավախ մի կաթոլիկ, ծայրահեղ միապետական ու իսկական յեզվիտ: Առավոտները նա գալիս էր մոտս ու սկսում մի այսպիսի զրույց.

«Ի՜նչ հրաշալի առավոտ է: Յեվ յեղանակն էլ սքանչելի յե: Այսօր յես վաղ վերկացա ու գնացի Մուշտայիդ: Այ վո՜րտեղ է իսկական կյանքը: Իսկ այստեղ ի՞նչ է: Գարշահոտություն: Ի՞նչպես կարող է մարդս ապրել այսպիսի գարշահոտության մեջ: Իսկապես վոր ավելի լավ է մարդ մեռնի, քան այսպիսի կյանք անցկացնի: Յեվ հետո ախր ի՞նչ է սպասում ձեզ առաջիկայում—բանտ, տաժանակիր աշխատանք ու քանի գնա ավելի վատ ու ավելի վատ...»:

Այս վոգով նա տանում էր ինձ հետ իր անվերջ զրույցը: Յեվ այդ զրույցը կրկնվում էր ամեն առավոտ, մինչև վոր հայհոյեցի յես նրան ու վռնդեցի խցից:

Մյուսն ուկրայինցի յեր, միանգամայն հակապատկեր առաջինին ու բարի բնավորությամբ: Նրա վորդին այդ ժամանակներն աշխատում էր Անդրկովկասյան յերկաթուղիների գլխավոր արհեստանոցներում: Նա շարունակ գանգատվում էր ու ասում.

«Ի՞նչպես պիտի գնդակ արձակեմ իմ վորդու ընկերների վրա, յեթե ինձ տանեն նրանց դեմ...»:

Այդ ժամանակներն Ուկրայինայում, Խարկովի և Յեկատերինոսլավի նահանգներում ագրարային հուզ-

մունքներ կային: Յես հաճախ խոսում էյի նրա հետ այդ հուզմունքների մասին: Շուտով մենք շատ մոտեցանք ու բարեկամացանք:

Նա կատարում էր իմ բոլոր հանձնարարությունները: Պատահում էր, յերբ խիստ հոգնած էր լինում նա, մտնում էր ինձ մոտ ու քնում: Յերբ մոտենում էր փոխանակելու ժամանակը, յես ձայն էյի տալիս նրան:

Սկզբներում նա վախենում էր, թե չլինի՞ հանկարծ իր հերթապահության ժամանակ յես փախչեմ:

«Յեթե դուք փախչեք,—ինձ կկախեն»,—ասում էր նա:

Իսկ յերբ յես հիվանդացա հոգացավով ու սկըզբում մերժեցին տեղափոխել Մետեխ, նա համաձայնեց իր հերթապահության ժամանակ ինձ ազատ դուրս թողնելու: Բայց դրան կարիք չեղավ, վորովհետև այնուամենայնիվ շուտով հրամանն ստացվեց ինձ Մետեխ տեղափոխելու:

Վոստիկանատան սոսկալի տանջարանից հետո Մետեխի բերդի փոքրիկ խուցս ինձ ուղղակի դրախտ թվաց:

Ինձ ամեն ինչ այստեղ դուր էր գալիս. միջին հարկը, տեսարանը Քուռի վրա, փոքրիկ խուց յերկաթե ցանկապատով ցանցած մի պատուհանով: Խցերի յերկարությամբ ձգվում էր մութ միջանքը, փոքրիկ «վալչոկներով» (ծակերով), վորտեղից վերակացուների ամենատես աչքը հսկում էր մեզ վրա:

Իսկ շուրջը—ընկերներ, յեղբայրներ: Յեվ բոլորը նույն դրության, ինչ դրության դու յես: Նրանց մեջ դուցե պատահեյին ֆիզիկապես թույլ մարդիկ, բայց հոգեպես ուժեղ էյին բոլորը, ամուր իրենց համոզ-

մունքների մեջ, յեփված միապետության դեմ մղած պայքարում: Բոլոր այդտեղ նստածները անձնվեր մարտիկներ եյին մարդկության իդեալների համար:

Խցիս պատերի վրա մնացել եյին այնտեղ յերբեմնի նստած հեղափոխականների գրությունները: Ով—յե՞րբ ե նստել, ո՞ւր ե փոխադրվել կամ ուղարկվել և այլն: Իսկ պատերից մեկի վրա բանտային այբուբենի աղյուսակն իր բացատրությամբ:

	1	2	3	4	5	6	7	8	9
1	ա	բ	գ	դ	ե	զ	ը	թ	ժ
2	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ
3	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ	ռ
4	ս	վ	տ	ր	ց	ու	փ	ք	ֆ

Ի՞նչպես ոգտվել նրանից, ի՞նչպես գործածել ընկերների հետ գաղտնի խոսակցելու համար:

Այդպիսի աղյուսակներ կային նկարված բոլոր խցերի պատերի վրա: Այբուբենի առանձին տառերը հաղորդվում են պատը թխկացնելով: Առաջին թխկոցը ցույց ե տալիս տողը, մի փոքրիկ ընդմիջում, հետագա իրար հաջորդող թխկոցները ցույց են տալիս այն կարգը, վորտեղ գտնվում ե աղյուսակի մեջ ցանկացած տառը: Օրինակ՝

Հարց՝ «ո՞վ ես դու», արտահայտվում ե այսպես. 3–5 (ո), 4–2 (վ), 1–5 (ե), 4–1 (ս), 1–4 (դ), 4–6 (ու)

Պատասխան «Վանո»՝ 4–2 (վ), 1–1 (ա), 3-3 (ն), 3-5, (ո), 3-3 (ն):

Հետեվյալ առավոտը յես արդեն անգիր գիտեյի այդ «որիգինալ» այբուբենն ու կարող եյի խոսել պատի միջոցով: Սկզբում յես հուզվում եյի ու խառնխառնում տառերը, բայց վորքան մեծ եր հրճվանքս, յերբ հաջողվեց ինձ իմանալ, թե ով ե հարևանս, ու հաղորդել նրան, թե ով եմ յես:

Մենք վերջացրինք խոսակցությունը: Պատուհանիս մոտ կանգնած դիտումեմ մոլեգնող Քուռը: Հանկարծ հենց քթիս տակ տեսնում եմ վերևի հարկից իջնում ե թելի վրա կապած մի վարունգ: Յես իսկույն խլում եմ վարունգը: Միջից մի նամակ ե դուրս գալիս, վոր ուղարկել եյին յերրորդ հարկի մեծ խցից, ուր բանտարկված եյին քսան յերկու քաղաքական բանտարկյալներ: Նամակը գրել եր բանվոր Լեոնտի Մամալաձեն, վոր լսելով իմ բանտարկության մասին, ինձ խորհուրդներ եր տալիս, թե՝ ինչպես պահեմ ինձ հարցաքննության ժամանակ: Յես գրեցի պատասխանն ու կապեցի նույն թելին:

Յեվ այսպես մեկուսացած խցում յես ինձ բնավ մենակ չեյի զգում:

Հաճախ դրսի ընկերներից ել մոտենում եյին բանտին Քուռի մյուս ափից: Նրանք կանգնում եյին մեր պատուհանների դեմ հանդիման ու աշխատում թաշկինակի ուղղահայաց ու հորիզոնական շարժումներով նույն այբուբենի միջոցով մեզ հաղորդել դրսի նորությունները:

Բայց ավա՜ղ, շուտով զրկվեցինք այս բավականություններից: Մի չափազանց վո՛չ հրաշալի օր բոլոր պատուհանները Քուռի կողմից մեխեցին տախտակներով: Բաց թողին պատուհանների վերևի մի փոքրիկ մասը միայն, վորպեսզի գոնե մի փոքր լույս թափանցի խցերը:

Մի քանի օր անցած մի փոքրիկ թուղթ եմ ստանում «Այսոր յերեկոյան թեյից հետո մենք ջարդում ենք «դագաղները» (բանտարկյալներն այդպես եյին անվանում պատուհանի տախտակները):

Յես մտածմունքի մեջ ընկա: Ախր այնքան թույլ եյի կազմվածքով, վոր չեյի կարող սեփական ուժերով ջարդել տախտակներն, իսկ յեթե չջարդեմ, ընկերներս պիտի կարծեն, թե յես վախեցա ու դրա համար ել չմիացա իրանց:

Հենց վոր վերջացավ յերեկոյան թեյը, «հարձակումն» սկսվեց տախտակների վրա: Աղմուկը լսվում եր բոլոր խցերում:

Յես ել բարձրացա պատուհանի ներքնատախտակին ու սկսեցի բոլոր ուժով ջարդել «դագաղը»: Տախտակներից չորսն ընկան վայր, բայց յերկուսը դեռ մնում եյին: Այդ միջոցին պահակ զինվորներն սկսեցին հրացանաձգություն: Ընկ. Մգելաձեն քիչ եր մնացել սպանվի: Ինչ ել լիներ «դագաղներն» արդեն ջարդված եյին ու նետված Քուռը: Քուռի մյուս ափին մեզ հասնում եյին խրախուսական բացականչություններ.

—«Բրավո՛», «Ուռա՛»...

Մի ժամից հետո խուցս լցվեց ժանդարմներով ու օֆիցերներով, վոր յեկել եյին ինձ խուզարկելու:

Յես գերագո՛ւյն հաճույք եյի զգում, տեսնելով նրանց կատաղությունը: Յերբ ինչ-վոր պալկովնիկ,

փոխարքայի դրասենյակից, գոռգոռալով ու հայհոյելով հայտնեց, վոր ինձ յերկու շաբաթ զրկում են սընընդից, թողնելով միայն ցամաք հացով ու ջրով, զրկում են տեսակցության իրավունքից, գրքից, սպիտակեղենից ու լամպից (լամպի տեղ ճրագ տվին),— յես միայն ժպտում եյի:

Պալկովնիկն ավելացրեց, վոր պատուհանները նորից կմեխվեն և անկարգությունները կրկնվելու դեպքում բանտարկյալներին կհագցնեն «հանգստացնող շապիկներ»:

Յերեկոյան բոլորիս մեկ-մեկ կանչեցին դրասենյակ ու յենթարկեցին հարցաքննության, բայց հայտնաբերել «պագրոմի» նախաձեռնողին— վոչ մի կերպ չհաջողվեց:

Բոլոր բանտարկյալներն, ինչպես մի մարդ, նույն պատասխանն եյին տալիս.

—«Յերբ ուրիշներն սկսեցին ջարդել, յես ել իմ դագաղս սկսեցի»:

Թիֆլիսի նահանգային ժողովրդական վարչության մոտ հետևյալ տեղեկությունները կան այդ անցքի մասին:

Ներկայիս հետաքրքրական ե հետևվել, թե՝ ինչպես «կապյոննի» թղթերի ձնադունդը, վոր նվիրված եյին մեր ապստամբության «դագաղների» դեմ, գլորվում ե մի ինստանցիայից դեպի մյուսը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №

«1902 թվի հունիսի 10-ին յես՝ ժանդարմական առանձին կորպուսի շտաբս-ռոտմիստր Շիրմա, պետական կարգի ու հասարակական հանգստության պահպանու-

թյան կանոնների հիման վրա, վորը հաստատված են 1881 թվի օգոստոս ամսվա 14-րդ օրը, հարցաքննեցի ներքոհիշյալին, վորը ցույց տվեց՝

«Իմ ազգանունս է Մանուկ Ավետիսյանց:

Քսաներկու տարեկան եմ, հայ-գրիգորյան դավանության:

Կոչումով գյուղացի յեմ Յերևանի նահանգի Եջմիածնի գավառի Բաղարջուղ գյուղից, շարքային զինվոր, Թիֆլիսի գրենադերյան 15-րդ գնդի 6-րդ վաշտի:

Ինձ առաջարկված հարցերին պատասխանում եմ.

Սույն հունիսի 9-ին ցերեկվա ժամի վեցի ու յոթի միջև յես պահակ եյի կանգնած Մետեխի բերդում Քուռ գետի կողմից: Հանկարծ լսեցի, վոր յերկրորդ հարկի պատուհանում, վոր գտնվում է վեցերորդ պահականոցի հենց դեմ ու դեմ, բանտարկյալը փոքով սկսեց ջարդել դրսից պատուհանին մեխած տախտակը, իսկ հետո և մյուսները: Այն ժամանակ յես սկսեցի ազդանշանի սուլոցներ տալ: Չնայելով դրան այդ միջոցին այն բանտարկյալը, վոր կոտրել եր իր պատուհանի տախտակն, սկսեց ինչ-վոր գոռալ իր պատուհանից իր պատուհանին մեխած տախտակները: Այնուհետև և այն տեղի բանտարկյալն ու սկսեց նույնպես ջարդել իր պատուհանին մեխած տախտակները: Այնուհետև նրա հետևից սկսեցին ջարդել և մյուս պատուհանի տախտակները:

Այն բանտարկյալը, վոր առաջինը ջարդեց իր պատուհանի տախտակներն և իմ ձախ կողմս գտնվող նրա հարևանն սկսեցին բղավել ինձ՝ «մի տալ սուլոցներ»ու ինձ աղյուսներ նետել, իսկ մյուսները տախտակ-

ներ եյին նետում: Այն ժամանակ յես մի անգամ արձակեցի հրացանս առանց նշան բռնելու, ուղղելով միայն դեպի այն պատուհանները, վորտեղից ինձ վրա աղյուսներ եյին նետում: Հրացանս արձակելուց հետո տախտակների կոտրատելը դադարեց և այդ ժամանակ ինձ մոտ յեկան պահակի պետն ու պահադիրը: Ուրիշ վոչինչ չեմ տեսել:

Վկան անգրագետ է:

Իսկականն ստորագրել է շտաբս-ռոտմիստր... Ծիրմա:

Թարգման տիտուլյարնի սովետնիկ... Պոնով

Ասածներիս ավելացնում եմ, վոր այն բանտարկյալների դեմքերը, վոր ինձ վրա աղյուսներ եյին նետում ու կանչում թե՝ «սուլոցներ մի տա», յես չկարողացա տեսնել խավարանցումի պատճառով ու այժմ բոլորովին չեմ հիշում:

Վկան անգրագետ է:

Ստորագրեցի շտաբս-ռոտմիստր... Ծիրմա:

Թարգման-տիտուլյարնի սովետնիկ... Պոնով:

Իսկականի հետ ուղիղ է:

Ի. ա. Թիֆլիսի նահանգ. ժանդարմական վարչության պետի՝

Ռոտմիստր (ստորագրություն)

Ոգնական
Թիֆլիսի նահանգակ.
ժանդարմ. վարչութ.
պետի
Թիֆլիս
«9» հուլիսի 1902 թ.
№ 396.

Պարոն
Գ Ա Ղ Տ Ն Ի
Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության
պ. Պետին

Ընդ սմին պատիվ ունեմ ներկայացնել Ձերդ Գերազանցության Մետեխի բերդի գաղտնի բաժանմունքի

բանտարկյալների հրացաքննության արձանագրություն-ները Իրակլի Ծուլաձեյի, Պոլիկարպե Մաճարաձեյի, Միխեյիլ Գուրեշիձեյի, Պյոտր Սկորոբոգատկոյի, Վասիլ Ցարաձեյի, Վլադիմիր Ցաչվիլու, Գիորգի Նինուայի, Բարթոլմե Բիբինեյշվիլու, Պյոտր Մոն-տինի, Երաստ Ջանոլաձեյի, Ցասոն Մեգրելիձեյի, Ո-հաննես Անանովի, Գեորգ Վարդանյանցի, Նիկալայ Ե-րիքովի և Կալիստրատե Գոգուայի—միաժամանակ պա-տուհանները պաշտպանող տախտակները կոտրատելու առթիվ:

Ռոտմիստր Ցիսա:

ՀՆՈՒԱԳԻՐ

Պետերբուրգ

Ոստիկանության Դեպարտամենտի Դիրեկտորին.

Այսոր յերեկոյան ժամի 7–ին Մետեխի բերդի բան-տում քսան և յոթ խցերի քաղաքական բանտարկյալներ ընդհանուր համաձայնությամբ յերկաթե ճաղերի հե-տևից փոցերով ջարդեցին պատուհանների տախտակ-ները, որ հենց նոր մեխված էյին պատուհանից հա-ղորդակցության առաջն առնելու համար Պահակն ար-ձակել է մի անգամ հրացանը Գեներալ Ֆրեզեյի կարգա-դրությամբ զրկված են ծխելուց կարդալուց գրագրու-թյունից տեսակցությունից սեփական սննդից մի ամիս ժամանակով նախազգուշացնելով կրկնվելու դեպքում ձեռքի շղթաներով Հրամայված է տախտակները քսան-չորս ժամվա ընթացքում նորից մեխել Մանրամասնու-թյունները փոստով

Ի. տ. Վարչության պետի Ռոտմիստր (ստորագրութ.)

9 հունիսի 1902 թ.

Թիֆլիս

Մ. Ց.
ՎԱՐԻՉ
Թիֆլիսի Մետեխի
բերդի բանտի

Բաժանմ. նահանգ.
բանտի
« 8 » հունիսի 1902 թ.
№ 4602
Թիֆլիս

ԳԱՂՏՆԻ

Նորին Գերազանցություն ժան-դարմական նահանգային վարչության պարոն Պետին

Պատիվ ունեմ այսու տեղեկացնել Ձերդ Գերազան-ցության, որ իմ խնամքին հանձնված բանտի բոլոր քաղաքական բանտարկյալներն այսոր յերեկոյան ժամի 6-ին խռովություն բարձրացրին և բոլորը միաժամա-նակ ջարդեցին այն տախտակները, որ մեխած էյին նը-րանց խցերի պատուհաններին: Ընդ սմին հաղորդում եմ, որ խռովության ժամանակ դրսի վեցերորդ պա-հականոցի պահակը մի անգամ հրացան արձակեց, ան-կարգության առաջն առնելու դիտավորությամբ:

Վարիչ բանտի.... (ստորագրություն)

Ո. Ն. Գ.
Թիֆլիսի
ոստիկանապետ
« 8 » հունիսի 1902 թ.
№ 1374

ԳԱՂՏՆԻ

Պատճեն պատճենից

Թիֆլիսի նահանգական բանտի
պարոն բանտապետին

Ի հետևումն իմ տված զեկուցման Նորին Գերազան-ցություն Կովկասի քաղաքացիական մասի Գլխավոր Կառավարչի Պարոն Պաշտոնակատար գեներալ-լեյտե-նանտ Ֆրեզեյին, Թիֆլիսի պարոն Նահանգապետի ներ-կայությամբ, այն անկարգությունների մասին, որ ա-ռաջ բերին քաղաքական բանտարկյալներն, այսոր յե-

րեկոյան ժամի 6-ին Նորին Գերազանցության գեներալ-լեյտենանտ Ցրեգելն բարեհաճեց հրամայել՝

1) Անկարգություններին մասնակցող բոլոր բանտարկյալներին զրկել ծխելու իրավունքից,

2) զրկել կարդալու իրավունքից բացի հոգևոր բովանդակության գրքերից,

3) զրկել գրագրության իրավունքից,

4) զրկել տեսակցության իրավունքից,

5) զրկել իրենց սեփական միջոցներով ուտեստի նյութեր և կալանքի վայրերում թույլատրված այլ առարկաներ ձեռք բերելու իրավունքից:

Այս բոլոր սահմանափակումները կիրառել նկատված խռովարկուների վերաբերմամբ մի ամիս ժամանակով, բայց, եթե քաղաքական բանտարկյալներն իրենց առաջիկա վարքով կապացուցեն իրենց անկեղծ զղջումը, Նորին Գերազանցությունն իրավունք է տալիս ձեզ սահմանված կարգով միջնորդություն հարուցել առանձնապես այս գործի վերաբերմամբ, կրճատելու ժամկետը վերոթվյալ սահմանափակումների: Ընդ սմին Նորին Գերազանցություն գեներալ-լեյտենանտ Ցրեգելն հրամայեց առաջիկայում նման խռովություններ կրկնվելու դեպքում, խռովությունների առաջն առնելու նպատակով, անմիջապես շղթայել բոլոր հանցավոր քաղաքական բանտարկյալներին և նստացնել լույս պատժարաններ (կարցերներ) ընդհանուր բանտարկյալների համար սահմանված ժամկետով, պարտավորեցնելով այդ միջոցները կիրառելու դեպքում անմիջապես տեղեկացնել ինձ, Նորին Գերազանցությանը զեկուցելու համար:

Ներկա առաջադրությունն ուղարկվում է ձեզ ան-

միջապես ու ճշգրիտ կիրառելու համար, միաժամանակ հայտարարելու քաղաքական բանտարկյալներին:

Իսկ վաղն ևեթ ձեռնարկել վերանորոգելու խըռովությունների ժամանակ բանտարկյալների բոլոր կոտրատածները:

Իսկականն ստորագրել է՝

Վոստիկանապետ ԿԱՎԱԼՑՈՎ

Ուղիղ է: Գրասենյակի գործավարի

օգնական (ստորագրութ.)

ՑՈՒՑԱԿ

Տփխիսի Մետեխի բերդի քաղաքական բանտարկյալների

Անուն և ազգանուն	Ծանոթություն
Ովհաննես Անանով Պոլիկարպե Մաճարաձե Վլադիմիր Ցաշվիլի Բարթլոմե Բիբինեյշվիլի Վասիլ Ցարաձե Պետր Սկորոբոգատկո Միխեյիլ Գուրեշիձե Վլասա Մգելաձե Պյոտր Մոնտին Իրակլի Ծուլուկիձե Զաքարի Զոդրիշվիլի Կիրիլե Կախեթելիձե Գիորգի Նինուա,	Նորին Գերազանցություն Կովկասի քաղաքացիական մասի Գլխավոր Կառավարչի Պարոն Պաշտոնակատար գեներալ-լեյտենանտ Ցրեգելի հրամանի համաձայն հունիսի 8-ից մի ամիս ժամանակով զրկվում են՝ գիրք կարդալու իրավունքից, բացի հոգևոր բովան-

Անուն և ազգանուն	
Երաստ Ջանտաձե	դակության գրքերը, գրագրության, ազգականների հետ տեսակցության ու իրենց սեփական միջոցներով ուտեստ ձեռք բերելու իրավունքներից։
Ցասոն Մեղրելիձե	
Կոստանտին Ամիրիլի	
Սեվերիան Ջուղելի	
Դավիթ Քափանաձե	
Ցակով Կոչետկով	
Կալիստրատե Գոգուա	
Նիկալայ Երիքով	
Գեորգ Վարդոյանց	
Սիլվեստր Ջիբլաձե	
Ասատուր Կախոյանց	
Լեոնտի Մամալաձե	
Իպպոլիտ Ֆրանչեսկի	
Գեորգի Թաթանաշվիլի	
Վիկտոր Կուրնատովսկի	
Գարեգին Ղազիկյանց։	

Ծանոթ․—«Վարդոյանցն ու Ղազիկյանցը բացի հիշյալ դիսցիպլինար պատժից, յենթարկված են կարցերային բանտարկության յերեքական որով, զրկելով անկողնից ու տաք կերակրից, սպառնալիքների ու կոպտության համար։

Թիֆլիսի Մետեխի բերդի կառավարիչ՝ (ստորագրութ.)

Ողոստոսին ինձ ազատեցին Մետեխի բերդից և աքսորեցին Գուրիա, ծննդավայրս՝ Սուրեբի գյուղը ապրելու ոստիկանության հատուկ հսկողության տակ։ Դա

այն ժամանակներումն էր, յերբ Գուրիա եյին լցվել Բաթումից «անկարգությունների» համար աքսորված բանվորները, վորոնք Գուրիայի հեղափոխականացման խնդրում չափազանց մեծ դեր խաղացին, ըստ վորում գյուղացիությունը լայն կերպով հեղափոխության մեջ ներգրավելու համար հողը վաղուց պատրաստ եր։

Գործադուլներն ու հուզմունքները Բաթումում ըսկսվեցին դեռ 90-ական թվականներին։ 1891 թվին Ռոտշիլդի գործարանի բաժանմունքներից մինում գործադուլ հայտարարվեց, միջամտեց ժանդարմերիան, ձերբակալվեցին մոտ 20 բանվորներ։ Գործադուլը վերջացավ անհաջող։

1893 թվին նույն բաժանմունքում դարձյալ գործադուլներ տեղի ունեցան։ Գլխավոր պահանջն եր կիրակնորյա աշխատանքի վերացումը։ Գործադուլի ղեկավարների թվումն եյին և բանվորներ՝ Բեսարիոն և Միխակո Կալանդաձեները։

Առաջին անլեգալ խմբակները Բաթումի բանվորների շրջանում յերևան յեկան 1894—6 թվականներին մի խումբ մարքսիստների ղեկավարությամբ։

Այդ խումբը կապեր հաստատեց բանվորների հետ ու տանում եր հեղափոխական պրոպագանդ, դաղտնի խմբեր կազմակերպելով առաջավոր բանվորներից։

Հեղափոխական մարքսիզմի գաղափարները վառ արձագանք գտան Բաթումի պրոլետարների սրտում։ Մոտավորապես 1900 թվականներին, չնայելով խիստ ճնշումներին, բոլոր ձեռնարկությունների մեջ կազմակերպվեցին բջիջներ, վորոնք աստիճանաբար ղեկավար ազդեցություն ձեռք բերին։

Առաջին մարքսիստական խմբակը Բաթումում կազմեցին՝

1) Ն. Լուզինը, 2) Գ. Ֆրանչեսկին, 3) ինժեներ Կոդանը և ուրիշները:

Լուզինը «Սարատովի թերթ»-ի թղթակիցն եր: Լուզինն ու Ֆրանչեսկին ապրում եյին մասնավոր դասերով: Կոդանը, վոր Ղարսի յերկաթուղու շինողներից մինն եր, մարքսիստական կրթությամբ, գործնական մեծ ընդունակությունների տեր մի մարդ եր: Բանվորներից այդ ժամանակ աչքի եյին ընկնում Վանո Մդերաձեն, Մաքսիմե Ծուլաձեն և ուրիշները:

1896 թվի մայիսին այդ խումբը քաղաքից դուրս կազմակերպեց առաջին անլեգալ ժողովը, ուր վորոշում հանվեց սոցիալ-դեմոկրատական ծրագրային պահանջներով:

1897 թվի առաջին մարքսիստական խումբը Բաթումում ցրիվ յեկավ: Մի մասը ձերբակալվեց, իսկ մյուսը քաղաքից հեռացավ:

Առաջին հեղափոխությունից մի քանի տարի առաջ Բաթումում գործում եր հայտնի հետադեմ, մարդատյաց Պայլը:

Նա հրատարակում եր «Черноморский Вестник» թերթը, վորի եջերում զանազան ազգությունների միջև ատելություն ու թշնամանք եր սերմանում ու ծառայում բռնակալական բյուրոկրատիայի կոլոնիզատորական ռուսացման նպատակներին Սև ծովի ափերում:

«Черноморский Вестник»-ը հալածում եր այն ամենն, ինչ առաջադեմ ու ազնիվ եր ու ինքնըստինքյան հասկանալի յե, վոր արժանանում եր ընդհանուրի ատելության:

Ընդ սմին թերթին ծառայող բանվորները նյութական ծանր պայմանների մեջ եյին:

1901 թվի հուլիսին «Черноморский Вестник»-ի գրաշարները գործադուլ հայտարարեցին, պահանջելով աշխատավարձի հավելում ու աշխատանքի ժամանակի կրճատում: Իշխանությունը դիմեց խստությունների. բանվորների մի մասը ձերբակալվեց ու հեռացվեց աշխատանքից, մի մասն ել ստիպված յեղավ վերսկսել աշխատանքը:

Այդպիսով, մի կողմից ձեռք առնված միջոցների, մյուս կողմից բանվորների անդիտակցության շնորհիվ, գործադուլը վիժեց:

1902 թվի մարտի 9-ին Բաթումում տեղի ունեցավ մի սոսկալի տրագեդիա: Կապիտալիստներն ու վոստիկանությունը բանվորների սպանդանոց կառուցեցին:

Դա առաջին մասսայական արյունհեղությունն եր, առաջին բացարձակ մասսայական գնդակահարումը բանվորների:

Մարտի 9-ի դեպքից առաջ տեղի ունեցան հետեվյալ անցքերը: 1902 թվի հունվարի 31-ին Մանթաշեվի գործարանի բանվորները, վրդովված գործարանի կառավարչի արարքներից, դադարեցրին աշխատանքը: Ձեռնարկության վարչությունը դիմեց վոստիկանության ոգնության, վորը ձերբակալեց հարյուրից ավելի բանվորներ: Չնայած ծայրահեղ խստություններին, բանվորները համառ կերպով կանգնած եյին իրենց ա-

սածին ու պահանջում եյին անմիջապես արձակել բանտարկյալներին։

Գործադուլը շարունակվեց յերկու շաբաթից ավել և վերջացավ բանվորների լիակատար հաղթությամբ։

Բոլոր վռնդված բանվորները յետ ընդունվեցին։ Ճաշվա ընդմիջումը մի ժամից դարձավ ժամ ու կես։ Գործարանի կառավարիչն արձակվեց և բանվորներն ստացան իրենց լրիվ աշխատավարձը հունվարի 31-ից մինչև փետրվարի 18-ը։

Այդ միջոցին Ռոտշիլդի գործարանում կառավարիչը կարգադրեց արտաքսել հին բանվորներին, իր կարծիքով, իբրև քաղաքականապես անբարեհույս մարդիկ։

Բանվորները պատասխանեցին գործադուլով։ Գործադուլն սկսվեց փետրվարի 29-ին։

Մարտի 6-ին Բաթումի զինվորական նահանգապետը կանչեց բանվորներին և հրամայեց անմիջապես վերսկսել աշխատանքները։ Նահանգապետի հրամանն, իհարկե, բանվորները չկատարեցին և այն ժամանակ սկսվեցին խստությունները։ Ձերբակալվեցին 32 հոգի, իսկ գործարանը շրջապատվեց զորքերով ու վոստիկաններով։

Մարտի 8-ին բանվորները ցույց կազմակերպեցին, պահանջելով արձակել ձերբակալվածներին։

Վոստիկանությունն ապարդյուն կերպով աշխատում եր ցրել ամբոխը։ Վերջապես վոստիկանությունը տեսնելով իր անզորությունը, արձակեց բանտարկյալներին, բայց յերբ բանվորները վերադառնում եյին փոխադրական մասի բակով, վոստիկանու-

թյունը դարան եր սարքել այնտեղ․ յերկու վաշտ զինվորներ գրոհ տվին բանվորների վրա ու շատերին սպանեցին անխղճորեն։

Մյուս որը փոխադրական մասի մոտ հավաքվեց բանվորների մեծ բազմություն։ Փոխադրական բանտի շենքի մոտ բանվորական մասսայի ու զինվորների մեջ ընդհարում առաջացավ։

Զինվորները հրամանատարի կարգադրությամբ կրակեցին անզեն ամբոխի վրա։ Սպանվեցին 14 ու վիրավորվեցին 40-ից ավելի։

Այս գազանային վարմունքին բանվորները պատասխանեցին ընդհանուր գործադուլով Բաթումի բոլոր գործարաններում ու ձեռնարկություններում։

Ադմինիստրացիան շտապ կարգով Թիֆլիսից նոր զորքեր պահանջեց․ չորս վաշտ հետևակ, յերկու հարյուրյակ կազակներ և յերկու հարյուրյակ ստրաժնիկներ։

Նույն 1902 թվի դեկտեմբերին մեծ գործադուլ տեղի ունեցավ Ռոտշիլդի պրոմիսլաներում։ Գործադուլին մասնակցում եյին հազար հինգ հարյուր բանվորներ։ Գործադուլը տևեց տասն որ։ Գլխավոր պահանջն եր վերադարձնել տուգանքի փողերը, վորոնցից կազմվել եր մի մեծ գումար։

Կատաղած վարչությունը դուրս արեց բոլոր բանվորներին և վորոշեց վռնդվածներից վոչ վոքի յետ չընդունել։

1903 թվին Բաթումում սկսվում ե մեծ կենդանացում։ Այդ ժամանակ Բաթումում աշխատում եյին վե-

ցից մինչև տասնչորս հազար բանվորներ։ Աշխատանքը յեռում եր բոլոր ձեռնարկներում, բայց միաժամանակ բանվորների ու ձեռնարկողների հարաբերությունները ավելի ու ավելի սրվում եյին։

Անցքերի ոբյեկտիվ ընթացքով բանվորական մասսաներն արագ կերպով հեղափոխականանում եյին։

Բանվորների այդ մարտական տրամադրությունը վառ կերպով արտահայտվեց 1903 թվի մարտի 9-ի ցույցով, վոր կազմակերպվել եր (1902 թվի) մարտի 9-ի անցքերի տարեդարձին։ Ցույցին մասնակցում եյին յերեք հազարից ավելի բանվորներ։ Ահա թե ինչ ե հաղորդում «Искра»-ն (№ 37) այդ ցույցի մասին.

«Բանվորները չորս ծածանվող դրոշակներով շրջեցին ամբողջ քաղաքն, յերգելով ու կանչելով՝ «Կեցցե՛ քաղաքական ազատությունը...»։ Ճանապարհին ցրում եյին թռուցիկներ ու արձակում ատրճանակներ։ Փշրեցին տեղական «Черноморский Вестник» մարդատյաց լրագրի խմբագրության ապակիները, վորից հետո յերեք հազարից ավելի բանվորներ ուղեվորվեցին դեպի կայարան։ Ցույցը զուգադիպում եր 21 բանվորների (1902 թվի մարտի 9-ի անցքերին մասնակցող) դատաստանական պրոցեսի ավարտմանը։ Շնորհիվ հրաշալի պաշտպանության, նրանց վերաբերմամբ դատարանը մարտի 8-ին արձակեց գրեթե արդարացուցիչ վորոշում»։

Յեվ հարյուրավոր բանվորներ կանգնեցրին գնացքը, վորի մեջ գնում եյին նահանգական դատարանի կազմն ու մեղադրվող բանվորների յերկու պաշտպան-

ները։ Պաշտպաններին սրտառուչ ովացիա սարքեցին բանվորները։ Գնացքը կանգնեց յոթ րոպե։ Իշխանությունը բոլորովին գլուխը կորցրել եր։ Վոստիկանությունն ու զորքերը վազվզում եյին ամբոխի յետևից, բայց վոչինչ չեյին կարողանում անել։ Չեյին համարձակվում կտրուկ միջոցների դիմել, վորովհետև ցուցարարները զինված եյին։ Յեվ վերջիվերջո բանվորները փաթաթեցին դրոշակներն ու հանգիստ ցրվեցին, տոնելով իրենց հաղթանակը գլուխը կորցրած իշխանության դեմ»։

1902—1903 թվականներին սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությունը գտնվում եր միանգամայն վստահելի—ներկայիս առաջնորդ ու վետերան, այն ժամանակ դեռ յերիտասարդ, բայց անզուգական ընդհատակյա գործիչ ու կազմակերպիչ ընկ. Սոսո Ջուղաշվիլու (Ստալինի)—ձեռին։

1905 թվի հեղափոխության սկզբին Բաթումի բանվորությունն ուներ մարտական լիակատար պատրաստականություն։ Բանվոր դասի արհեստակցական ու քաղաքական կազմակերպություններն այնքան ամրապնդվել եյին, վոր կարողանում եյին իրենց կամքը թելադրել կապիտալիստական դասին ու բոլոր ուժով նրան պաշտպանող բյուրոկրատիային։

Ահա թե ինչպես ե բնորոշում այդ շրջանը ժանդարմական պաշտոնական ժողովածուն.

«Շարժումը Բաթումում սկիզբն առավ ու զարգացավ 1900–1901 թվականներից, Կովկասի Միութենական Կոմիտեյի ջանքերով և ինտելիգենտ ուժերի աջակցությամբ, վորոնք մասամբ տեղական բնակչության

ներկայացուցիչներից եյին, մասամբ էլ յեկվոր ուսանողներ բնիկներից, վոր գալիս եյին համալսարանական քաղաքներից, առանձնապես Պետերբուրգից, Մոսկվայից, Կիևից, ուր հակապետական շարժումը կրում եր վորոշ ու պլանային սիստեմի արտացոլումն, ընդ վորում սկզբներում շարժմանը մասնակցում եյին բացառապես ինտելիգենտ ուժեր, ամեն ազգությունից՝ վրացիներ, լեհեր, հայեր, հրեաներ»:

Հիմնականում շարժման նպատակ եր դրված՝ խախտել գոյություն ունեցող պետական կարգը, աշխատելով—իրենց համեմատաբար զարգացած ներկայացուցիչների բանվոր պրոպագանդով իրենց ուսմունքն անցկացնել բանվորների մեջ՝ Բաթումի նավթի և այլ գործարանների ու նավահանգստային բանվորների, վորոնց թիվը աշխատանքի յեռուն ժամանակներում հասնում եր վեցից-յոթ հազարի: Բայց բանվորներն սկզբում չըմբռնելով, թե իրենք ինչ շահ կունենան գոյություն ունեցող կառավարչական ձևի փոխվելուց, անտարբեր եյին դեպի պրոպագանդիստների ուսմունքը: Այն ժամանակ ինտելիգենցիան վորոշեց զարգացնել բանվորներին Մարքսի թեորիայի («Աշխատանք և կապիտալ»), քաղաքատնտեսության և Դիկշտեյնի ուսմունքին («Ով ինչով ե ապրում») վերաբերյալ գրքերի ընթերցանությամբ, այդպիսով իրենց ուսմունքին տալով զուտ սոցիալ-դեմոկրատական բնույթ: Այնուհետև սկսեցին բացատրել բանվորներին միահամուռ պայքարի օգուտները: Ուսմունքն սկսվեց ամենամեծ «Բնիտո» գործարանից, ուր բանվորների թիվն հասնում ե յերկու հազարի, վորոնք ազգությամբ 80 տոկ. վրացիներ եյին, 8 տոկ. ռուսներ, 6 տոկ.

թուրքեր, 5 տոկ. հայեր և 6 տոկ. ուրիշ ազգություններ:

Այդ գործարանից գիտակից բանվորները կազմում եյին խմբակներ ու դուրս գալիս պրոպագանդայի մյուս մեծ ու փոքր գործարանները, օրինակ, Մանթաշևի № 1 գործարանը, վոր 1000-ից ավելի բանվոր ունի, Մանթաշևի № 2-ը (700-ից ավելի), Խաչատուրյանցի գործարանը (500-ից ավելի) և մյուսները»:

Բանվորների գլուխն անցավ ղեկավար մարմինը, վոր սկզբներում իրեն անվանում եր «Բաթումի Հեղափոխական Կոմիտե», իսկ հետո շուտով փոխեց և սկսեց կոչվել «Բաթումի սոցիալ-դեմոկրատական բանվորական Կոմիտե»:

«Հակակառավարչական ուսմունքի հաջող ընթացքին նպաստեցին շատ կողմնակի ու պատահական պատճառներ: Դրանց թվին պիտի վերագրել ամենից առաջ ազգային հարցը: Բաթումի բանվորների մեջ շատ վրացիներ կան (առանձնապես գուրիացիներ), վորոնք սակավահողության հետևանքով չկամենալով հողի մշակությամբ պարապել, իջել են թափվել դրսի աշխատանքի ու իրենք բնավորությամբ դյուրագրգիռ ու տարվող ամեն նորություններով, մանավանդ դրավիչ պրոպագանդով, յերբ աշխատում եյին ներշնչել նրանց, թե խաղաղ կերպով կարելի յե խլել հարուստներից նրանց բոլոր կարողությունը, առանց վորևե ջանք ու ճիգի (?), դրավիչ եր և այն գիտակցությունը, թե՛ իրենք՝ բանվորները ուժ են և իբրև այդպիսին նրանք կարող են հասնել ամեն բանի, ինչ վոր ուզենան: Հենց այս բանի վրա յել հիմնվելով նրանք սկսեցին մի

չարք պահանջներ անել գործարանատերերից, ինչպես բանվորակ· որը կրճատել, աշխատավարձն ավելացնել ու իրենց պահանջները վերջին ժամանակներս հասցրին այնտեղ, վոր նրանց ձգտումներն անցան ամեն խելացի սահմանն ու ավելի շուտ նման եյին թալանչության: Այս անչափ ու անսահման պահանջներն ի նկատի առնելով բոլոր գործարանատերերն ստիպված եյին փակել իրենց գործարաններն և այժմ քաղաքը կատարելապես մեռել ե, իսկ բոլոր բանվորները մնացել են անգործ պրոլետարներ, վորոնց մի մասը ցրվեց գյուղերը, իսկ մյուս մասը զբաղված ե հիմնարկություններն ու մարդկանց կողոպտելով, սպառնական նամակներով փող կորզելով, ծածկվելով Կոմիտեյի անվան տակ, ընդ վորում, ինչպես բնիկներ, իրենց ամեն մի պահանջին կցում են մահվան սպառնալիք, վորն և իրագործում են: Հենց այդ սպառնալիքներն ել ստեղծեցին այն տերրորը, վոր վրացիների ձեռին ծառայում ե իբրև հզոր զենք իրենց նպատակին հասնելու համար: Այս պատճառներով մնացած ազգությունները համեմատաբար քիչ պիտի հարեն նրանց: Վոչ վոք չի համարձակվում դուրս գալ, մատնել մեղավորներին, ինչպիսի մարդիկ ել լինեն նրանք, չկան վկաներ, անմըտություն ե աշխատակիցներ վորոնելը: Տերրորի շընորհիվ Բաթումի վողջ ազգաբնակչությունն այնպես հուզված դրության ե, վոր բավական ե առևտրական, շարքով մի գզգզված տեղացի–լակոտ անցնի ու սպառնալի արտասանի միայն՝ փակել խանութները, իսկույն փակվում ե ահագին վաճառատունն ու նրա հետևից և բոլոր խանութները: Այս բանով ընդարձակ կերպով օգտվում ե «Բաթումի Կոմիտեն» և յերկու անգամ արդեն մեռցրեց քաղաքը, փակել տալով բոլոր խանութներն ու հետո պարծենալով իր թռուցիկների մեջ, թե՝ հասարակությունը համակրում ե ընդհանուր շարժմանը և այդ պատճառով ել առևտրականներից վո՛չ վոք չուզեց բանալ խանութը, յերբ պահանջում եր այդ վոստիկանությունը»:

«Շարժմանը նպաստեցին և գործարանների դիրեկտորներից ու կառավարիչներից վոմանք, ինչպես որինակ՝ «Բնիտո» գործարանի իսկական դիրեկտոր (տեսուչ) պարոն Գիենը: Ինչպես ֆրանցուզ, հանրապետական, նա ի սրտե չի համակրում միապետական գաղափարն ու բանվորների բոլոր հայտարարություններն աշխատում եր բավարարել տնավարի, առանց իշխանության միջամտության: Ինչպես համակրող ազատագրական շարժման, նա միշտ թաղցնում եր հանցավորներին, ընդունում իր մոտ վարչական կարգով ուրիշ քաղաքներից աքսորվածներին, վորոնք մեծ չարիք հանդիսացան, ինչպես բոլոր գործադուլների ու ցույցերի կազմակերպողներ: Յերբեք իշխանությանը չեր տալիս այն թռուցիկները, վոր այնքան մեծ քանակությամբ տարածվում եյին բանվորների մեջ: Պարոն Գիենի այդպիսի սկզբնական զիջողականությունը, առևտրական մըցման տեսակետից, հարկադրեց մյուս կառավարիչներին ևս զիջումներ անել: Բայց վարչության այդ զիջողականությունը բանվորների հանդեպ, պրոպագանդիստների թելադրությամբ բացատրվում եր իբրև նրանց անզորության հետևանք և յերբ արդյունաբերողներն սկսեցին փորձել ավելի հաստատակամ լինել, այն ժամանակ արդեն կարիք զգացվեց իշխանության միջամտության, հատկապես այն ժամա-

նակ, երբ չարիքն արդեն իր խորը արմատներն էր գցել»։

«Ադմինիստրացիայի բոլոր տեսակներն սկզբում բնավ չնշմարեցին սկսվող հակակառավարչական շարժման սիմպտոմները, իսկ նկատեցին այդ երևույթն այն ժամանակ միայն, երբ նա ձևակերպվել էր արդեն հայտնի ցույցի մեջ, վոր տեղի ունեցավ 1903 թվին Բաթում քաղաքում։ Այդ պատճառով էլ դուրս եկավ, վոր բռնեցին միայն շարքային ցուցարարներին, իսկ առաջնորդները խուսափեցին, վորովհետև ինչպես Բաթում քաղաքում, այնպես էլ նրա Բարցխանա և Խոլոդնայա արվարձաններում, վորտեղ ապրում էին գլխավորապես բանվորներ և վորտեղ տարվում էր պրոպագանդան, գոյություն չուներ, ինչպես չունի և մինչև որս վոչ մի ցուցակագրություն, վո՛չ մի մարդահամար։ Ամենքը գործում են առանձին-առանձին, չկա փոխադարձ համերաշխ աշխատանք։ Այդ տեսակետից պայծառ որինակ է հանդիսանում Բաթում քաղաքի ներկայիս վոստիկանապետ կապիտան Ջիքովանին, վոր պարծենում է իր արենակցական ընդարձակ կապերով, վոր իբր ոգտակար է այն տեսակետից, վոր նա չտվեց վո՛չ մի ոգտակար ցուցում, վո՛չ վոք չհայտաբերվեց անլեգալներից, բացարձակապես վո՛չ մի տեղեկանք չի կարելի ստանալ վոստիկանության միջոցով, թե վորտեղ է ապրում տվյալ անձնավորությունը. միշտ նույն պատասխանը՝ չի հայտնաբերված։ Շարժմանը նպաստել է և այժմ էլ ոգնում է բնիկների հայրենակցությունն ու ազգակցությունը։ Վոստիկանությունն ամբողջապես, բացի մի պրիստավից ու վոստիկանապետի ոգնականից,—բնիկներ են, քաղաքային

վարչությունը լցված է բնիկներով, մի խոսքով պրոպագանդիստներն ու կազմակերպության մասնակիցներն արագ կերպով տեղ են գտնում ու ձեռք բերում լեգալ դրություն, իսկ շնորհիվ հայրենակցության հաջող կերպով աշխատում, հավատացած, վոր հայրենակիցը, թեպետ և պրիստավ կամ վորևէ այլ մեկն ադմինիստրացիայից, իրանց կպահեն, ըստ վորում կամ սպառնալիքից կվախենան, կամ հենց իրենք էլ, ինչպես բոլոր բնիկները, հույս ունեն, վոր ազատագրական շարժման ոգնությամբ ձեռք կբերեն անջատումն Ռուսաստանից։ Անհրաժեշտություն է զգացվում լավ, ազնիվ և ռուս վոստիկանական կազմի։ Հիրավի, լեզվի անծանոթությունն սկզբում կկասեցնի աշխատանքը, սակայն կարելի յե վստահելի թարգմաններ գտնել»։

«Պատահական պատճառներն, ինչպես՝ պատերազմը, մի շարք հասունացած վերանորոգչական խնդիրներ, վոր ծեծվում էին մամուլում, նույնպես ըղձալի կերպով նպաստեցին Բաթումի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գործունեյության բարձրացմանն ու նրա արտահայտություններին։ Շարժմանը հարեց նաև աշակերտությունը։ Բացի այս, երբ Բաթումում, ի նկատի առնելով խիստ շարժումն ու տերորը, մտցվեց զինվորական դրություն, ազգաբնակչությունը միանգամայն հիասթափվեց նրանից, ըստ վորում գեներալ-նահանգապետի ներկայությունը վո՛չ միայն չնվազեցրեց չարիքն, այլ կարծես թե ընդհակառակը. այսպես որինակ գեներալ-նահանգապետի թույլտվությամբ կազմակերպվում էին միտինգներ (անասնաբույժ Վարդանյանը) քաղաքային վարչության մեջ։ Չնայելով խուզարկու մարմնի նախազգուշացման,

վոր այնտեղ ո՛չ թե բանվորների ազգաբնակության կարիքներն են քննվում, այլ խոսում են միապետության տապալման մասին,— այնուամենայնիվ այդպիսի ժողովները շարունակում են տեղի ունենալ: Դրանց օրինակով հենց քաղաքային վարչության մեջ սկսեցին հավաքվել գործակատարները, տնային ծառայողներն ու ամեն տեսակի արհեստավորներ, նույնպես իբր թե իրենց կարիքները քննելու, այն ինչ դառում եյին «կորչի միապետությունը»:

«Ազգաբնակության խելամիտ մասը բացարձակ ասում եր, վոր մարդու կյանքն ու գույքը վո՛չ վոքի կողմից չի ապահովված, զինվորական դրությունը գոյություն ունի թղթի վրա միայն: Զգացվում եր ինչ վոր տատանում, անվճռողականություն: Յեթե ապիտառորեն այսոր ձեռ են դցել ու կալանքի տակ դրել, վաղը ազատ արձակում են: Խուզարկու մարմինների համար հեղափոխական շարժման դեմ պայքարելն աննպատակ եր դառնում, շնորհիվ այն բանի, վոր դատախազությունն ու քննիչ մարմինները քրեյական նոր օրենսդրությունը մեկնաբանում եյին ըստ իրենց, օրինակ յերբ պետք եր լինում հաստատել այն փաստը, թե տվյալ անձնավորությունը գրականությունը պահում ե տարածելու համար թե վոչ, նրանք մեկնաբանում եյին, թե տարածելու նպատակով չի պահվում ըստ վորում վո՛չ մի տվյալ չկա այդ բանը հաստատող»:

«Դրսից նայողներին թվում եր, թե իշխանությունները չեն կամենում լրիվ կերպով օգտագործել այն իրավունքները, վոր տրված են նրանց, այլ լայն կերպով մեկնաբանում եյին ազատամիտ հայացքների

տեսանկյունով, յենթադրելով, թե ներկայիս ավելի օգտակար ե ազգաբնակությունը խաղաղացնել մարդասիրական միջոցներով, քան խստություններով, մինչդեռ մութ ուժերը շարունակում եյին գործել տեռորի ու բռնության միջոցով, վորի համար եւ մնացած խելամիտ ազգաբնակությունը դադարել ե հավատալ օրինականությանն ու ադմինիստրացիայի ուժին ու բարձրակոչ ասում ե, վոր վո՛չվոք չկա իրեն պաշտպանող»:

Հենց այդ ժամանակները պրոպագանդիստներն իրենց ուժերն ուղղեցին դեպի յերկաթուղին, վորպեսզի գանձարանի յեկամուտները պակասեցնեն, ու դեպի զորքը, վորպեսզի գրավեն նրանց իրենց կողմն ու անվնաս դարձնեն այն դեպքերում, յերբ կկանչվեն նրանք ժողովրդական անկարգությունները ճնշելու: Յեվ բավական մեծ թվով կողմնակիցներ գտան նրանք: Վրացական կուսակցությունը շարունակ բամբասում ե կազակներին, թե նրանք գող են, իսկ վերջին ժամանակներս փորձում են պրոպագանդով նրանց եւ իրենց կողմը գրավել»:

«Հայ բանվորները նույնպես հարել են բանվորական շարժմանը, բայց մնացած բոլոր հայերն, առանձնապես ինտելիգենցիան, գլուխ բարձրացրին այն ժամանակ միայն, յերբ խլեցին նրանց յեկեղեցական կալվածները: Ներկայիս այդ հարցն արդեն կորցրել ե իր սուր բնույթը, բայց նրանք շարունակ աշխատում են օգնել իրենց Տաճկաստանի յեղբայրակիցներին ու միշտ զբաղված են զենքի տեղափոխությամբ դեպի հայկական կենտրոնները՝ Յերեվան, Ալեքսանդրապոլ և այլն, վորտեղ, ըստ յերեվույթին կազմակերպվում են խմբեր և ուղարկվում Տաճկաստան: Ամենավերջին ժամանակ-

ներս նկատվում են մեծ քանակությամբ բռներ, զենքերով լցված, վոր ուղարկվում են արտասահմանից և ռուսական գործարաններից Գուրիայի և Կովկասի մյուս մասերի համար։ Մեծ քանակությամբ զենք ու փամփուշտներ գողացվում են նաև զինվորական մասերից»։

Առաջին հեղափոխության շրջանում Բաթումը խոշոր դեր խաղաց։ Այս բանը վկայված է պաշտոնապես նաև ժանդարմական իշխանության կողմից։ Ահա թե ինչպես է բնորոշվում այդ մոմենտը պահնորդական պունկտի վարիչ Ռոտմիստր Ռոժանովը, վոր այն ժամանակ գործում էր Բաթումում։

«Հակակառավարչական շարժումը Բաթում քաղաքում և Ոզուրգեթի գավառում սպառնալի չափերի յե հասնում, վորը Գուրիայում հասել է կատարյալ անարխիայի, վարակելով Ներքին Աջարիան ու լցնելով Բաթում քաղաքը հեղափոխական տարրերով»։

«Անհրաժեշտ է յեռանդուն պայքար մղել լիառատ ու լավ վարձատրվող գործակալների միջոցով»։

Այնուհետև ժանդարմը խնդրում է ավելացնել գործակալություններ կազմակերպելու համար բաց թողնվող գումարը։

Ինչպես հայտնի յե, ի պատասխան հունվարի 9-ի դեպքերի, Անդրկովկասի բոլոր կողմերում գործադուլներ պայթեցին։ Այդ շարժման մեջ Բաթումի պրոլետարիատն առաջին տեղն էր բռնում։ Դեռ հունվարի 17-ին այստեղ գործադուլ հայտարարեցին Նավահանգստի ու յերկաթուղու բանվորները, իսկ հունվարի 19-ին գործադուլին միացավ Բաթումի վողջ պրոլետարիատը։

Այս մոմենտից շարժումը շարունակ բարձրանում էր ու բարձրանում։ Բաթումի բանվորությունն զգաստ հետևում էր վողջ Ռուսաստանի հեղափոխության զարգացմանն ու արագ կերպով արձագանքում բոլոր շատ թե քիչ նշանավոր քաղաքական անցքերին։

Հիրավի, նա ապրեց շատ ծանր մոմենտներ՝ «Հոկտեմբերի 28-ը» և այլն, չինեց և բարիկադներ, յետ մղելով ռեակցիայի կատաղի գրոհները, բայց պատվով դուրս յեկավ բոլոր դժվարություններից, մինչև վոր ամբողջ Ռուսաստանի կայսրության մեջ հաղթանակեց սև, անթափանց ռեակցիան։

Առաջին հեղափոխության պատմության մեջ առանձին տեղ է գրավում Գուրիայի հեղափոխական գյուղացիությունը։ Չափազանցություն չի լինի, յեթե ասենք, վոր հեղափոխության պատմությունը հազիվ թե հիշի ավելի գիտակից ու կազմակերպված գյուղացիական շարժում, քան այն, վոր տեղի ունեցավ Գուրիայում 1905 թվին։

Ամբողջ Գուրիան բաժանվել էր յերկու բանակի, վոր ներկայացնում էին իրար խիստ հակադիր յերկու աշխարհներ՝ աշխատանքի ու ազատության աշխարհը մի կողմից և շահագործման ու ստրկացման աշխարհը մյուս կողմից։ Աշխատավոր Գուրիան սերտ միացած ու խիստ կարգապահ, կազմված էր ամբողջապես սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպված շարքերից։ Գուրիայի աշխատավորը չէր կարողանում ինքն իրեն պատկերացնել բանվորական կուսակցությունից դուրս։ Գուրիացի գյուղացին բոյկոտ հայտարարեց կալվածատերերին, հոգևորականությանն ու վոստիկանությանն ու կազմակերպեց իր սեփական ազատ դատա-

րանն, ադմինիստրացիան ու դպրոցը: Նա չհափշտակեց կուտակված ժողովրդական հարստությունը, նա չավերեց կալվածատերերի կալվածները, կազմակերպված տիրացավ իր հեղափոխական իրավունքներին, ամեն տեղ պահպանելով որինակելի կարգ ու կանոն:

Շարժումը ղեկավարող Կոմիտեն (կուսակցական) մագնիսական ուժ ուներ: Նրա մի կանչով գյուղացիությունը գործադուլ հայտարարեց, զինվեց ու գնաց կռվի:

Գուրիան այդ ժամանակ միանգամայն կերպարանափոխվել էր, վերածնվել. վերացել էր աղքատությունը, թալանը, գողությունը: Կային՝ անձնուրացություն, քաղաքական բարձր գիտակցություն, հազվագյուտ կարգապահություն ու համերաշխություն իրար մեջ—մի կողմից, ու անհաշտ թշնամանք ու ատելություն դեպի շահագործողները—մյուս կողմից—ահա թե ինչն էր Գուրիայի հեղափոխական գյուղացիության հոգեկան ու քաղաքական պատկերը բնորոշում առաջին հեղափոխության շրջանում:

Բայց ի՞նչպես կարող էր պատահել այս: Ի՞նչպես յեղավ, վոր գյուղացիությունը, վոր շա՜տ հեղափոխությունների մեջ ծայրահեղ ռեակցիոն դեր էր խաղացել, այստեղ՝ Գուրիայում, վո՛չ միայն գնաց բանվոր դասի յետևից, այլ և իր գիտակցությամբ ու կազմակերպվածությամբ վողջ Ռուսաստանում առաջինը յեղավ, վոր կանգնեց նրա հետ մի շարքում, հերոսական կռիվ մղելով բռնակալական ու կալվածատիրական լծի դեմ:

Ի պատիվ Բաթումի բանվորների պետք է ասել, վոր այս ամենը կատարվեց նրանց Բաթումի պրոլետարիատի մեղքի շնորհիվ: Այստեղ, Բաթումի գործարաններում, գուրիացին անցավ հեղափոխական կռվի ու քաղաքական դաստիարակության դպրոցը: Այստեղ նա յուրացրեց միջազգային բանվորական շարժման գաղափարներն ու խորասուզվելով նրանց մեջ, գնաց Գուրիայի գյուղերը «խռովության սերմ ցանելու»:

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Բուքայիսի կազմակերպության մեջ։
2. Հարձակում խտապի վրա։
3. Մենշևիկների ննգությունները ու ֆրակցիոն պայքարի սկիզբը։
4. Տերորիստական գործունեություն Քութայիսի նահանգում։
5. Գրիստավ Մախարաձեն։

Ինձ արգելված էր Թիֆլիս, Բաթում, Բագու քաղաքներում ապրելը։ Թույլատրվում էր միայն Քութայիս, ուր և տեղափոխվեցի 1902 թվի նոյեմբերի վերջերին։

Այդ ժամանակ Քութայիսում կար արդեն անլեգալ կազմակերպություն Պրոկոֆի (Ալյոշա) Ջափարիձեյի ղեկավարության տակ, վորին յես ճանաչում եյի Թիֆլիսից։ Յես անմիջապես խրվեցի աշխատանքի մեջ։

Յեթե հիշողությունս չի դավաճանում ինձ, այդ ժամանակ Քութայիսում գոյություն ուներ բանվորական մի խմբակ միայն—Փիրալովի ծխախոտի գործարանում։

Գործարաններ Քութայիսում, ինչպես հայտնի յե, առհասարակ չկար։ Մեզ համապատասխան մատերիալը միայն մանր արհեստավորներն եյին, վորոնց մեջ ել ծավալեցինք մեր աշխատանքը։ Խմբակների թիվը կամաց-կամաց ավելացավ։ Մենք ջոկում եյինք համեմատաբար ավելի առաջավոր արհեստավորներին ու միացնում նրանց մեր խմբակի մեջ։

Նույնն արինք և գործակատարների մեջ։ Սրանք համեմատաբար շա՛տ-շատ եյին Քութայիսում և մեր պրոպագանդան նրանց մեջ հաջողություն գտավ։ Բայց ամենահուսալի տարրը մեզ համար, իհարկե, մնաց դարձյալ Քութայիսի փոքրաթիվ բանվորությունը։

Յես յեղբ. Ժորժոլաձեների մոտ մտա հաշվապահ։

Այս աշխատանքն ինձ հնարավորություն տվեց հեշտությամբ մտերմանալու բանվորների հետ։ Յերբ առաջավոր գործակատարներից կազմված խմբակն արդեն բավականաչափ հուսալի կերպով նախապատրաստված եր, մենք ձեռնարկեցինք ուժեղ աշխատանքի։ Քութայիսի գործակատարներն աշխատում եյին շա՛տ անփառունակ պայմաններում։ Չափազանց յերկար աշխատանքի որ, ցածր աշխատավարձ և, վոր գլխավորն ե՝ կոպիտ ու այլանդակ վերաբերմունք տերերի կողմից—ահա թե ինչով եյին բնորոշվում նրանց գոյության պայմանները։

Մեր ջանքերը շուտով պսակվեցին հաջողությամբ։ 1903 թվի սեպտեմբերին Քութայիսի գործակատարները գործադուլ հայտարարեցին ու հաղթանակը տարան։ Գործատերերն ստիպված յեղան կատարել նրանց բոլոր պահանջները՝ կրճատել բանվորական որը, ավելացնել աշխատավարձը և հանձն առնել քաղաքավարի վերաբերմունք։

Գործադուլի հաղթական վախճանն արտասովոր կերպով բարձրացրեց մեր կուսակցության վարկը։ Գործակատարներն սկսեցին մեզ վերաբերվել լիակատար հավատով ու խմբակների թիվը նրանց մեջ արագ կերպով աճեց։ Պարապմունքները նույնպես գնում եյին ուժեղացրած տեմպով։

Գործադուլից հետո յես, Նեստոր Կալաձեն ու Գիգա Ջուղելին գնացինք վերջինիս գյուղը՝ Սվիրի (Շորապանի գավ.)։

Այնտեղ մենք մնացինք մի քանի որ միայն։ Բայց այդ մի քանի որվա մեջ Քութայիսում խոշոր դեպքեր

եկրն տեղի ունեցել։ Վերադառնալով այնտեղ, իմացանք, որ Թիֆլիսից մեզ հետ աքսորված ընկերներ՝ Գ. Ձնելիձեն, Գ. Կալանդաձեն, Մաճարիձեն և ուրիշները ձերբակալված են, ընդ վորում հայտնել են նրանց, վոր աքսորելու յեն Սիբիր։ Վոստիկանությունն յեկել է և մեզ մոտ, բայց մեզ չգտնելով, պատվերպահանջ է թողել, վոր վերադառնալներուս պես անմիջապես ներկայանանք վոստիկանատուն։

Լսելով այս բոլորը, յես ու Ն. Կալաձեն վճռեցինք թագնվել ու փախչել արտասահման։ Ընկերներս մի քիչ փող հանգանակեցին։ Մենք ուզում եյինք առաջ անցնել Գուրիա, ծնողներիս մոտ, վոր ապրում եյին գյուղում ու այնտեղից գնալ Բաթում։

Բաթում գնալուս օրը, հայրս մնաս բարև անելով, ասաց ինձ հետևյալ «բարի յերթը».

«Վորդի՛ս, լավ կլիներ, վոր այդ ճանապարհով չգնայիր, վոր ընտրել ես քեզ համար։ Դու կարող եյիր ոգնել ընտանիքիդ։ Բայց մեկ վոր գնացել ես, յեղի՛ր համարձակ ու անսասան ինչպես ժայռ ու մի՛ նահանջիր վոչ մի խոչընդոտի առաջ, թեկուզ պետք լինի դրա համար գլուխդ տալ դահճին կախաղանի վրա, այնուամենայնիվ դու ժպտա վերջին րոպեյիդ»։

Այս խոսքերն ավելի քան լավ բնորոշում են այն ժամանակվա վրացական գյուղացիության վոգին, վորի մեջ հեղափոխականին սպասող ծանր վիճակի յերկյուղը զուգակցում եր հեղափոխական ճանապարհի ճշմարիտ լինելու պարզ գիտակցության հետ ու այն պատրաստակամության, թե՝ յերբ ընտրել ես այդ ուղին, նրա համար պետք է հանձն առնես ամեն ինչ— թե՛ վտանգ, և թե՛ տանջանք։ Այս հանգիստ ու կենտ-

րոնացած գիտակցությունն ուղեկցել է բոլոր,—յեթե կարելի յե այսպես ասել—պրոֆեսիոնալ հեղափոխականներին հեղափոխական պոռթկումների ժամանակ և նրանց համակրող, սակայն վո՛չ ամբողջապես գործի մեջ գրավված, ժողովրդական մասսաներին, վորոնք, ինչպես կտեսնենք իմ այս հիշողություններից, անգնահատելի աջակցություն ցույց տվին մեզ, առանձնապես պարտության ծանր րոպեներին, ռեակցիայի հաղթանակի ու ընդհատակյա աշխատանքի ժամանակ։

Բաթումում իմ ծրագիրներս տապալվեցին։ Փողս չեր բավականանում արտասահման գնալու։ Ընկ. Մ. Գուրեշիձեն արտասահման գնաց Մ. Գորկու ուղարկած փողով, իսկ յես մնացի Վրաստանում։

Իմ Բաթումում յեղած ժամանակ այնտեղ բերին Թիֆլիսից և Քութայիսից Սիբիր ուղարկվող քաղաքական աքսորյալների խմբը։ Ինձ հաջողվեց բանտ սողոսկել նրանց տեսնելու։ Այստեղ յես իմացա, վոր աքսորվողների ցուցակում յես չկամ։

Այսպիսով պարզվեց, վոր Քութայիս վերադառնալս այնքան էլ վտանգավոր չեր։ Յեվ յես վերադարձա այնտեղ ու իմացա, վոր Վոստիկանական դեպարտամենտի կարգադրությամբ յես, իբրև անչափահաս, յերեք տարի պիտի մնամ վոստիկանության բացարձակ հսկողության տակ։

Պետք եր վորևե լեգալ պաշտոն գտնել, անլեգալ աշխատելու համար, ինարկե, հետևելով խստագույն գաղտնապահության։

Շուտով ինձ հաջողվեց այդ։ Յես մտա ծառայության Հողային բանկը։ Այն ժամանակ Իմերեթո-Մինգրելիայի կոմիտեյի մեջ, բացի ինձանից, մտնում ե-

յին՝ Պ. Ջափարիձեն, Ն. Խոմերիկին, Պ. Ճիճինաձեն, Մ. Կիլաձեն և Դ. Քավթարաձեն: Կոմիտեն, այսպես ասած, «անտեսանելի» էր: Բացի կուսակցական աշխատավորների նեղ շրջանից, ոչ ոք չգիտեր որտեղ է նա և ումից է կազմված: Գիտեյին միայն, որ գոյություն ունի Իմերեթո-Մինգրելական կոմիտե, որ ղեկավարում է հեղափոխական անլեգալ կազմակերպություններին և սիստեմատիկաբար բաց թողնում թռուցիկներ:

Այստեղ առաջին անգամ ինձ վիճակվեց հանդիպել հազվագյուտ առանձնահատկություններով մի հեղափոխականի՝ ընկ. Միխա Ցխակայային: Նա գալիս էր բոլոր լուրջ խորհրդակցություններին և առանց նրան ո՛չ մի պատասխանատու քայլ չէր ձեռնարկվում: Նրա մեջ կար վոգևորության ու հեղափոխական էներգիայի անսպառ պաշար: Եվ դրանցով նա կարողանում էր վարակել և իրեն շրջապատողներին:

Այն ամենը, ինչ նա ասում էր ու անում, համակված էր բանվորական գործի հաղթանակի անմիջական ու խոր հավատով: Նա երբեք չէր հուսահատվում: Նա չէր սիրում խոսքն առանց գործի զուգակցության: Եվ ով նրա հետ գործում էր ձեռ-ձեռի տված, դառնում էր նույնպես աշխույժ, կայուն ու գործունյա: Երիտասարդության նա ձգում էր ինչպես մագնիս և հարելով նրան այդ երիտասարդությունն ստանում էր գաղափարական նախապատրաստություն ու նրա գործնական մեծ փորձառությունը:

Ռուս-յապոնական պատերազմն սկսվելուց հետո մեր ընդհատակյա աշխատանքը կենդանացավ ու լայն

ծավալ ստացավ բանվորների, գործակատարների ու աշակերտության մեջ:

Ժամանակ առ ժամանակ մենք թռուցիկներ էինք տարածում պատերազմի դեմ:

1904 թվի փետրվարի սկզբներին կոմիտեյի ղեկավարությամբ կազմակերպվեց աշակերտական ցույց: Ցույցը թեև շուտով ցրվեց ոստիկանության կողմից, բայց այնուամենայնիվ նա ունեցավ ցուցադրական մեծ նշանակություն: Դա աշակերտության առաջին հրապարակական ելույթն էր, քաղաքական հասունության վկայականի իր տեսակի մի հարցաքննություն:

1904 թվի սկզբներին սկսեցին կազմակերպություններ առաջ գալ և ուրիշ տեղերում, ինչպես՝ Խոնիում, Սամտրեդիում և այլն: Խոնիի շրջանում աշխատում էին ընկ. Բուդու Մդիվանին և «Խունխուզը» (Ն. Խոմերիկու ծածկանունը): Ճիաթուրայի կազմակերպիչներն էին Վանո Լոմթաթիձեն և Ն. Ջխիկվաձեն: Մեր պրոպագանդիստները չէին բավականանում, դրա համար էլ երբեմն, հակառակ կոնսպիրացիայի կանոնների, մեր ագիտատորներն ուղարկվում էին պրոպագանդայի գյուղերն ու ավանները:

Քութայիսում ինձ հաջողվեց կազմել մի փոքրիկ, պրիմիտիվ «տպարան» դուրկյար Սերաֆիոն Ջիրաձեյի տանը: Գրաշարն էր երիտասարդ ընկեր Ճկոնիան: Պրոկոֆի Ջափարիձեն և ես փորձեցինք Ճիաթուրայում էլ մի մամուլ հաստատել: Քանդեցինք մամուլը, նրա բոլոր մասերը դարսեցինք խուրջինում ու տվինք Ափր. Մերկվիլաձեյին, հետագայում Շորապանի գավառի հայտնի պարտիզանին: Դժբախտաբար խուրջինը Ռիոն կայարանում պատռվում է, իսկ ինքը Ափր. Մերկվիլա-

ձեն մեծ դժվարությամբ հաղիվ խուսափում է ձերբակալումից։ Մինչդեռ Ճիաթուրայի ընկերները համառ կերպով պահանջում էյին տպարան, մեզ վո՛չ մի կերպ չէր հաջողվում կազմակերպել այն։ Ընդսմին մեր հայեցողությամբ, ինկատի առնելով «տպարան» ձեռք բերելու ու սարքավորելու դժվարությունները, այնքան էլ անհրաժեշտ չէյինք գտնում Ճիաթուրայում տպարան հաստատելը։

Այդ շրջանում կատարված նշանավոր ակտերի թըվին է պատկանում և էտապի վրա կազմակերպված հարձակումն ու ձերբակալված ընկերների ազատումը, վոր կատարվեց 1904 թվի հուլիսի սկզբներին։

Կուսակցական կոմիտեն տեղեկություն ստացավ, վոր Ճիաթուրայում ձերբակալված ընկերներ՝ Ն. Խոմերիկուն, Դ. Միքելաձեյին, Ն. Ջխիկվաձեյին և յերկու ուրիշներին փոխադրում են Քութայիսի բանտը։ Վճռըվեց Քութայիսում հարձակում գործել էտապի վրա և ազատել ընկերներին։

Այս գործի կատարումն իր վրա վերցրեց ընկ. Ալյոշա Ջափարիձեն։ Խոնիից ու Ջիխայիշիից կանչվեցին կուսակցության անդամ մի քանի գյուղացիներ։ Այս ձեռնարկի բոլոր ակտիվ ու պասիվ մասնակիցները հավաքվեցին Քութայիսի կայարանն, սպասելու այն գնացքին, վորով պիտի գար էտապը։ «Թիֆլիսի» փողոցի վրա, փոստի մերձակա նրբանցքի մոտ տեղի ունեցավ հարձակումն էտապի պահակի վրա։ Սկսվեց հրացանաձգություն։ Ն. Խոմերիկին և Դ. Միքելաձեն, ոգտվելով պահակի շփոթությունից ու խրարանցումից, փախան։ Մնացածներին չհաջողվեց փախչել։ Հարձակման տեղում սպանվեց հարձակմանը մասնակ-

ցող առաջավոր գյուղացի Գր. Լեժավան, Ջիխայիշի գյուղից և վիրավորվեց ընկ. Պ. Շավլակաձեն։ Չնայելով վերքին, նա փորձում է փախչել, բայց Խոնիում հասնում են յետևից ու ձերբակալում։ Հենց այնտեղ էլ ձերբակալում են հարձակման մասնակիցներից մի ուրիշին՝ Կվերղելաձեյին։ Քութայիսում ձերբակալեցին ընկերներ՝ Գ. Ջուղելուն, Ջիբղիբաձեյին և Բեքայային,։ Դուլիա Ռեվազիշվիլին կարողացավ թաքնվել։ Ընկ. Լեժավան, վորքան հիշում եմ, սպանվեց ստրաժնիկ Քարքաշաձեյի ձեռքով, իսկ ստրաժնիկ Կապանաձեն վիրավորվեց։

Մենք ահագին զոհեր տվինք, առանձնապես յեթե հաշվի առնենք անձնուրաց ընկեր Գր. Լեժավայի կորուստը։

Կոմիտեն վորոշեց լայնորեն ոգտագործել այս հարձակումը, իբրև ագիտացիոն միջոց։ Թիֆլիսում տպվեց մի կրակոտ թռուցիկ, վոր կազմել էր ընկ. Ս. Քավթարաձեն։ Թռուցիկում տպված էր ընկ. Լեժավայի պատկերը ջախջախված գանգով։ Թռուցիկը ցնցող տպավորություն թողեց. նա մուտք գործեց Վրաստանի ամենահեռավոր անկյունները։

Ընկ. Ալյոշա Ջափարիձեն ազատ մնաց, բայց պարզ էր, վոր Քութայիսում ամեն րոպե նրան սպառնում էր ձերբակալություն։ Մի ամբողջ շաբաթ յես թաքցրի նրան և Խոմերիկուն սարի վրա, Խմալաձեյի տանը։ Այնուհետև Խոնիով ու Սամտրեդիով նա անցավ Թիֆլիս։ Ինչպես հայտնի յե, Պրոկոփի Ջափարիձեն յերկար չմնաց Թիֆլիսում։ Նա անցավ դեպի պրոլետարական Բաքու, այնտեղ ինքն իրեն անվանեց Ալյոշա ու ղեկավարեց Բաքվի պրոլետարիատի շարժումը,

մինչև եսեր—մենշևիկների դավաճան ձեռքով մատնվեց անգլիացիների գնդակահարման, Բաքվի մյուս քսան և հինգ կոմիսարների հետ միասին Անդրկասպյան խուլ անապատում:

Քութայիսից հեռանալուց հետո ինձ այլևս չվիճակվեց տեսնել Ալյոշային, որ իմ մանկության ընկերն էր: Յես նրա հետ նամակագրություն էյի պահպանում միայն և այն էլ մինչև 1913 թվականը: Վերջին անգամ յես նրանից մի բացիկ ստացա իր ֆոտոգրաֆիական պատկերով, որ նկարված էր «Վելիկիյ-Ուստյուգի» իր մի խումբ ընկերների հետ:

Յես հարցրի այդ խմբի մասին ընկ. Կ. Նիկոլայեվային, որ այն ժամանակ աքսորումն էր ընկ. Ջափարիձեյի հետ միասին, և նա պատասխանեց ինձ մի նամակով, որը զետեղում եմ ստորև:*)

Յեզրափակելու համար անհետաքրքիր չէր լինի ծանոթանալ ժանդարմական վարչության մի փաստաթղթի հետ, որի մեջ շատ մանրամասն տեղեկանք է տրված ընկ. Ալյոշայի մասին: Այդ հետաքրքրությունը կրկնապատկվում է և նրանով, որ այդ նշանավոր հեղափոխականի բնութագրի հետ միասին այստեղ մենք գտնում ենք շատ թե քիչ ճշգրիտ փաստեր բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքի մասին Անդրկովկասում: Ահա այդ փաստաթուղթն իր լրիվ բովանդակությամբ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության գործերից, Քութայիսի նահանգի, Ռաճայի գավառի, Շարդոմեթի գյուղից ազնվական Պրոկոֆի Ափրասիոնով Ջափարիձեյի մասին, 35 տարեկան:

Ստացված տեղեկություններից յերևաց, որ Պրոկոֆի Ափրասիոնով Ջափարիձեն հայտնի յե իբրև Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության

---

*) Հարգելի ընկեր Բերինեյշվիլի.

Ի պատասխան ձեր խնդրի ընկ. Ալյոշա Ջափարիձեյի հետ նկարված խմբի վերաբերմամբ կարող եմ հաղորդել հետևյալը.

1. Ալյոշա, նրա կողքին Ալյոշա Անդրեյև—բոլշևիկ, Մոսկվայի բանվոր, փականագործ, ներկայիս աշխատում է Մոսկվայում:

Նրա կողքին՝ Տատյանա Նիկոլայևնա Շեր՝ մենշևիկի կին, որը քաղաքական տեսակետից ոչինչ չի ներկայացնում ինքն իրենից: Դրա կողքին, մորուքով՝ Կովալյովի, յեղել է սոցիալ-դեմոկրատ, բոլշևիկ, թեքվեց դեպի մեզ, ո՞ւր է այժմ և ի՞նչ է արել հեղափոխության համար—չգիտեմ: Նրա շարքում, սպիտակ շապկով՝ Կովալենկո—էս-էր, նույնպես չգիտեմ ո՞ւր է և ի՞նչ է անում: Հետո յես եմ: Կողքիս, սպիտակ շորով՝ Շերն է, մենշևիկ, որը 1917 թվի հեղափոխության ժամանակ մինիստր էր, օբորոնիստ, կռվում էր մեր դեմ: Այժմ աշխատում է Մոսկվայում, հատկապես որտեղ, չգիտեմ: Փափկասուն ինտելիգենտ է: Նրա կողքին—Ալեքսանդրա Պրոկոֆյեվնա, ազգը չեմ հիշում, վարժուհի, եսեր, Բելգորոդից: Թե որտեղ է այժմ, տեղեկություն չունեմ: Ներքևն ակնոցներով ու սպիտակ կուրտկայով— Միշա Ջալկինդն է, Ալյոշայի մոտիկ ընկերը, տոկուն բոլշևիկ, աշխատել է Բաքվում ու Ռոստովում: Մեռավ Մոսկվայում՝ թոքախտից, հեղափոխության ժամանակ: Նրա ընտանիքն ապրում է Լենինգրադում: Նրա կողքին Կորոտելով—բոլշևիկ, բանվոր: Ներկայիս աշխատում է Մոսկվայում:

Անշուշտ ձեզ կզարմացնի խմբի այսպիսի խառնակ կազմը: Ալյոշան պայքարի մեջ անողոք էր նրանց հետ, բայց այստեղ պետք է հաշվի առնել աքսորի պայմանները:

Կոմունիստական բարեվներով՝

ԿԼԱՎԴԻԱ ՆԻԿՈԼԱՑԵՎԱ

բոլշևիկյան ֆրակցիայի անդամ դեռ 1900 թվականից, յերբ Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության կողմից պահնորդական կարգով յենթարկվել է ցուցակագրության, իբրև կասկածելի պրոպագանդի մեջ, վորն հուզմունք է առաջ բերել Անդրկովկասյան յերկաթուղիների գլխավոր արհեստանոցների բանվորների մեջ, վորի համար և Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչն արգելել է նրան Անդրկովկասի սահմաններում ապրելը:

1908 թվի մայիսի 18-ին Բաքվի կայարանում Ջափարիձեն բռնվում է և խուզարկվում, վորի ժամանակ մոտից դուրս են գալիս յերկու տպագրված թռուցիկներ՝ «Բոյկոտիստների լիազորների վորոշումն» ու «Բոլոր բանվորներին» և ուրիշ անլեգալ գրականություններ, վորի ժամանակ հենց այն ժամանակ Բաքվի նահանգական ժանդարմական վարչության մեջ պահնորդական կարգով ցուցակագրվում է, վորը սակայն վերացվում է շուտով, առանց վորևե հետևանքի նրա համար:

Բաքվի պահնորդական բաժնի պետի ստացած գործակալական տեղեկությունների համաձայն, վոր վերաբերում են 1908—1909 թվականներին, Ջափարիձեն հանդիսանում է ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեյի անդամ և կազմակերպության աչքի ընկնող ակտիվ գործիչ, նույնպես և իրենց վնասակար ուղղության համար փակված «Բաքվի պրոլետար», «Բաքվի բանվոր» և «Բաքվի տեղեկատու» թերթերի աշխատակից ու ղեկավար:

Անդրկովկասյան յերկաթուղիների ժանդարմական-վոստիկանական վարչության Բաթումի բաժանմունքի պետի համանման տեղեկությունների համաձայն, վոր

վերաբերում են 1909 թվի հուլիս ամսին, Ջափարիձեն գտնվում եր յերկաթուղային միության կազմի մեջ, ընդ վորում տպագրական ամբողջ աշխատանքը կատարվում եր նրա ձեռքով: Կապ է ունեցել շրջանային կոմիտեյի հետ, վորի կոլեկտիվն առանց նրան վո՛չ մի վորոշում չի կայացրել և նա առհասարակ բանվորների շրջանում վճռական նշանակություն է ունեցել գործի համար:

1909 թվի հուլիսի Թիֆլիսի կայարանում, գնացքի մեջ հայտնաբերվում է մի պայուսակ, վորը բանալիս մեջը գտնվում են՝ մի անձնագիր հիշյալ Ջափարիձեյի անունով և զանազան գրագրություններ նրա կուսակցական գործունեյության վերաբերյալ:

1909 թվի հոկտեմբերին Բաքվի պահնորդական բաժանմունքը հայտնաբերված վերոհիշյալ պայուսակի գործի առթիվ, Ռոմանի գյուղում, Մոսկվա—Կովկասյան ընկերության գործարանում խուզարկում է Ջափարիձեյին, վորը վոչ մի արդյունք չի տալիս, սակայն ինքը՝ Ջափարիձեն հենց այնտեղ ձերբակալվում է և պահնորդական կարգով ցուցակագրվում Բաքվի նահանգական ժանդարմական վարչության մեջ, վորի ժամկետը լրանալուն պես ներկայացվում է Բաքվի քաղաքապետին, աքսորելու Սիբիրի վորևե հեռավոր նահանգ վոստիկանության բացարձակ հսկողության տակ հինգ տարի ժամանակով:

1910 թվի փետրվարին շրջանում գործակալական տեղեկություններ ստացվեցին, վոր նույն փետրվարի 7-ին Թիֆլիսում տեղի ունեցած սոցիալ-դեմոկրատների ժողովում Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամ բոլշևիկ Ջափարիձեյի թեկնածու-

թյունն են գրել ՌՍԴԲ Կուսակցության շրջանային կոմիտեյի անդամության համար:

Վերոհիշյալ դրագրությունների հետևանքով Նորին Կայսերական Մեծության Կովկասի փոխարքայի կարգադրությամբ արգելվեց Ջափարիձեյի Կովկասի սահմաններում ապրելը հինգ տարի ժամանակով: Յերբ հայտնվում է այս կարգադրությունն իրեն, Ջափարիձեն, բնակավայր է ընտրում Ռոստով քաղաքը Դոնի վրա, ուր և ուղարկվում է էտապային կարգով 1910 թվի հունիսի 10-ին:

Ռոստով Դ/վ. գալուն պես նա անմիջապես կապեր է հաստատում սոցիալ-դեմոկրատական տեղական կազմակերպության հետ ու հայտնի տեղ գրավելով նրա մեջ, կուսակցական բոլոր ձեռնարկների ու աշխատանքների վոգևորողն ու կազմակերպողն է հանդիսանում, մշտապես ու շատ ճշտորեն հաճախելով տեղական սոցիալ-դեմոկրատների խմբի բոլոր ժողովները:

Այնուհետև նա անցնում է Նախիջևանի սոցիալ-դեմոկրատական խմբի գլուխն ու յեռանդով աշխատում համալրել այն: Նրան հանձնարարեցին պրոպագանդիստական կենտրոնական դպրոցի կառավարումը, վորի համար նա իսկույն շենք ճարեց ու մի քանի հոգու գրավեց պարապմունքների:

Թողնելով դպրոցի միտքը, գործադիր հանձնաժողովը Ջափարիձեյին հանձնարարեց կազմակերպել արհեստակցական միությունների կենտրոնական բյուրո և արհեստակցական բոլոր միություններին կից սոցիալ-դեմոկրատական բջիջներ, ընդ վորում 1910 թվի նոյեմբերի վերջերին բացառապես իր անձնական ջանքերով Ջափարիձեն կազմակերպեց այդ սոցիալ-դե-

մոկրատական բջիջներն արհեստակցական ընկերություններին կից:

Նրա ղեկավարության տակ կազմակերպությունն ուժեղացավ, ամրացավ և նույն թվի նոյեմբերին ընտրվեց «Ռ.Ս.Դ.Բ. Կուսակցության Դոնի խմբի գործադիր կոմիտե»:

Նույն թվի դեկտեմբերին նա այդ «Գործադիր կոմիտեյի» քննությանը ներկայացրեց իր կազմած տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կազմակերպչական կանոնադրությունը:

1911 թվի հունվարի վերջերին նրա նախաձեռնությամբ կայացավ ներկայացուցչական ժողով, ուր ընտրվեց «Դոնի Կոմիտեն», վորի կազմի մեջ մտավ և ինքը քարտուղարի կոչումով:

Յերբ Ռոստովի Դ/վ. քաղաքապետի կարգադրությամբ փակվեցին մի քանի արհեստակցական ընկերություններ, Ջափարիձեն բողոքագիր կազմեց ադմինիստրացիայի ճնշումների դեմ, նպատակ ունենալով վորքան կարելի յե շատ բանվորների ստորագրություններ հավաքել այդ բողոքագրի տակ ու ներկայացնել Պետական դումայի նախագահին:

Այդ բողոքագրի սևագրությունը, Ջափարիձեյի ձեռքով գրված, 19/III 1911 թվի խուզարկության ժամանակ գտնվեց նրա մոտ «Դոնի կոմիտեյի» անդամ Կոնստանդին Բոգդանովի տանը:

Նույն թվին Ջափարիձեն ձերբակալվեց «Դոնի կոմիտեյի» ժողովի ժամանակ, պահնորդական կարգով յենթարկվեց ցուցակագրության ու վարչական կարգով աքսորվեց Վոլոգդայի նահանգը վոստիկանության

բացարձակ հսկողության տակ, յերեք տարի ժամանակով:

1911 Թվին Բաքվի քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ տեղական սոցիալ-դեմոկրատները մի կոչ բաց թողին, վորով առաջարկում եյին ձայն տալ սոց.-դեմ. բլոկի թեկնածուներին, վորոնց մեջ եր և Պրոկոֆի Ջափարիձեն:

Կուբանի շրջանային ժանդարմական վարչության պետի գործակալական տեղեկությունների համաձայն, վոր վերաբերում են 1911 Թվի հոկտեմբեր ամսին, Պրոկոֆի Ջափարիձեն գտնվում եր Տուապսեյում, ուր սոց.-դեմոկրատական խմբի գլուխն անցած, ապրում եր Գոգուաձեյի անվան անձնագրով:

1912 Թվի հունիսի 16-ին, 17-ին և 18-ին Թիֆլիսում տեղի ունեցան բայլշևիկ սոցիալ-դեմոկրատների մի շարք շատ լուրջ ժողովներ, վորոնց մասնակցում եր ի միջի այլոց և Բաքվից յեկած բայլշևիկների լիդեր Ջափարիձեն:

Շրջանի գործակալական տեղեկությունների համաձայն, վոր վերաբերում են 1912 Թվի ոգոստոս ամսին, Թիֆլիսում սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ ընտրվեց մի մարտական խմբակ, վորն այդ ժամանակ Բաքվի սոցիալ-դեմոկրատների ղեկավարությամբ իրենց նյութական միջոցներն ավելացնելու համար նախապատրաստում եր ինչ-վոր թալան: Այդ խմբակի գլխավոր մասնակիցներից մեկն եր Բաքվի սոցիալ-դեմոկրատ Պրոկոֆի Ջափարիձեն, վոր աքսորված եր Բաքվից, բայց անլեգալ կերպով այդ ժամանակներում ապրում եր Կովկասում:

Նույն տեղեկությունների համաձայն, վոր վերա-

բերում են 1914 Թվի հունիս ամսին, վարչական կարգով ուղարկված աքսորից վերադառնալով, Թիֆլիս է գալիս նա—սոցիալ-դեմոկրատ բայլշևիկը:

Թիֆլիսում տեսնվում է նա ս.-դ. բայլշևիկների լիդեր Սերգեյ Թավդիշվիլու հետ, վորի ասածի համաձայն, հուլիս ամսի կեսերին նա կազմակերպում է «բեկական*) խմբի» ժողով, ուր Ալյոշա Ջափարիձեն տալիս է ինչ-վոր զեկուցում:

Իսկապես այդ ժողովը տեղի ունեցավ 27-ին հուլիսի Ֆունիկուլյորի վրա, Ալյոշա Ջափարիձեյի մասնակցությամբ, վորը հաղորդեց, թե ինքը մտադիր է Թիֆլիս քաղաքում հիմնել բեկական մի հաստատուն կազմակերպություն ու միացնել այն նախ հայկական սոցիալ-դեմոկրատական խմբի և ապա մենշևիկների հետ:

Իսկ հուլիսի 31-ին յերեկոյան Թիֆլիսի առևտրական ծառայողների նոր բացված ակումբում Ալյոշա Ջափարիձեյի մասնակցությամբ տեղի ունեցավ բեկական խմբերի ժողով, վորտեղ զեկուցեց վերջինս (Ջափարիձեն), թե Թիֆլիս է յեկել Ալեքսանդրապոլից իր ծանոթ մի հին ս.-դեմոկրատ, վորը խնդրում է Ջափարիձեյի աջակցությունն Ալեքսանդրապոլում կազմակերպելու բեկական տեխնիկա, վորին սակայն Ջափարիձեն պատասխանել է, թե տեխնիկան կհաստատվի Թիֆլիսում ամբողջ Անդրկովկասին ծառայելու համար:

Բեկական խումբն իր հավանությունը տվեց Ջափարիձեյի այս գործելակերպին ու վորոշ միջոցներ ձեռք առավ նյութական աղբյուրներ գտնելու սեփական տեխնիկա ստեղծելու համար:

---

*) «Բեկական» (Бековская группа) կոչվում եր սոցիալ-դեմոկրատ. բայլշևիկյան հատվածը: Ծ. Թ.

Մի այլ գործակալական աղբյուրից ստացված տեղեկությունների համաձայն, Ալեքսեյ Ջափարիձեն--Բաքվի ս.-դեմոկրատական կազմակերպության հայտնի լիդերը, որի կուսակցական ծածկանունն է «Պակիս», 1914 թվի օգոստոսին անլեգալ կերպով ապրում էր Թիֆլիսում: Այդ ժամանակ նա գաղտնի կապ էր պահպանում Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետ և հաճախ այցելում էր Մոսկովսկի փողոցի № 17 տունը:

Սեպտեմբեր ամսին Թիֆլիսում կազմակերպում է «բեկական խմբի» մի շարք ժողովներ, որի համար հենց սեպտեմբերի 6-ից սահմանվում է նրա վրա արտաքին հետապնդում «Զգույշ» մականունով:

Նույն թվի հոկտեմբերի 31-ին հեռագիր ստացվեց Բաքվի նահանգական ժանդարմական վարչության պետից, որի մեջ հիշված էր, թե՝ նոյեմբերի սկզբներին ռուս սոցիալ-դեմոկրատ բայլշևիկները մտադիր են համագումար կազմել Պետրոգրադում և Լիֆլյանդիայում, ընդ որում Թիֆլիսի և Բաքվի կողմից պատգամավոր է ընտրված Պրոկոֆի Ջափարիձեն: Ի նկատի ունենալով վերոգրյալը, նրա վերաբերմամբ հետապնդումը շարունակվեց, սակայն նրա Թիֆլիսից հեռանալու փաստը չհաստատվեց:

Նոյեմբեր ամսին Պետական դումայի սոցիալ-դեմոկրատ պատգամավորների Պետրոգրադում բանտարկվելուց հետո, նա այդ առթիվ արտահայտեց իր ցավակցությունը:

1915 թվի փետրվար ամսին Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կողմից նրա մոտ է գալիս մի բայլշևիկ-ինտելիգենտ:

Ապրիլի 9-ին նա ղեկավարում է բայլշևիկների ժողովը, որտեղ քննվում էր մայիսի 1-ի տոնակատարության և այդ առթիվ թռուցիկ բաց թողնելու խնդիրը, ընդ որում ընտրվում է այն հանձնաժողովի անդամ, վոր կազմակերպվում է տոնակատարության և թռուցիկների հաջողությանը նպաստելու համար: Նույն ժողովին Ջափարիձեն զեկուցում է Թիֆլիսում լեգալ թերթ հիմնելու մասին:

Նույն թվի մայիսի 4-ին Թիֆլիսում յենթարկվում է խուզարկության, ձերբակալվում և ցուցակագրվում գինվորական դրություն հայտարարված վայրերի համար հրատարակված կանոնների 123-րդ հոդվածի կարգով:

Նույն թվին նա ընտրվում է քարտուղար ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերության, որի պրեզիդիումը, մեր ունեցած տեղեկությունների համաձայն, կազմված է բացառապես ս.-դեմոկրատ գործիչներից:

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ԹԻՖԼԻՍԻ, ԹԵԼԱՎԻ ՑԵՎ ՍՂՆԱԽԻ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

ՌՈՏՄԻՍՏՐ՝ (ստորագրություն)

(ԱՐԽ. Ֆ. № 36, Գ. № 3152, ԹԵՐԹ 35)

№ 376

12 Մայիսի 1915 թ.
Ի. Ք. Թիֆլիս

1904 թվի յերկրորդ կիսամյակում հեղափոխական աշխատանքը գյուղերում ու ավաններում չափազանց ուժեղացավ։ Քութայիսի վողջ նահանգը լցվեց անլեգալ կազմակերպություններով։ Այդ անլեգալ աշխատանքները ղեկավարելու համար մեզ մոտ յեկավ ընկ. Ստալինը։ Կոմիտեյի կազմը վերանորոգվեց։ Հին կազմից յես մնացի միայն, մնացածը նոր անդամներ ընտրվեցին՝ ընկ. Սոսո Ջուղաշվիլի, ընկ. Ս. Քավթարաձե, ընկ. Ն. Կարցիվաձե և միութենական կոմիտեյի անդամ ընկ. Սաշա Ծուլուկիձե։ Քութայիս վերադառնալով ընկ. Միշա Ոկուջավան նույնպես կոմիտեյի մշտական անդամ դարձավ։ Նոր կոմիտեն վորոշեց ուժեղացնել կոնսպիրացիան։ Հիշում եմ թեև փոքր, բայց այն ժամանակվա համար շատ բնորոշ մի փաստ։ Մի անգամ յերեկոյան, չգիտեմ ինչպես, մենք բոլորս հավաքված եյինք բուլվարում։ Ներկա յեր կոմիտեյի գրեթե վողջ կազմը։ Այդ րոպեյին վոչնչով չեյինք կարող պարապել, իհարկե, ուստի վորոշեցինք բոլորիս համար նոր ծածկանուններ հնարել։ Իմ «Բարոն» ծածկանունս արդեն շատ եր ժողովրդականացած և կորցրել եր իր կոնսպիրատիվ նշանակությունը, դրա համար էլ յես ինձ անվանեցի «Լեո», Սերյոժա Քավթարաձեն՝ «Ցողո», Քարցիվաձեն՝ «Ցուսկի», Սոսո Ջուղաշվիլին՝ «Կոբա»։ Այս ծածկանուններից միայն Ստալինի «Կոբա»-ն մնաց յերկար ժամանակ, մնացածները շուտով մոռացվեցին։

Միջկուսակցական հերձվածի հովերն արդեն մեզ եյին հասնում, բայց կազմակերպության մեջ դեռ դիսկուսիաներ չեյին սկսվել։ Պետք ե նկատել, վոր կոմիտեյի վողջ կազմը հենց սկզբի օրերից բայլշևիկյան եր։

Կարծեմ 1904 թվի աշնան սկզբներին եր։ Արտասահմանից Քութայիս յեկավ ընկ. Զեմլյաչկան (վոր նա

իսկապես Զեմլյաչկան ե, յես հետո միայն իմացա)։ Իմերեթո-Մինգրելյան կոմիտեն հավաքվեց ընկ. Սաշա Ծուլուկիձեյի բնակարանում։ Նա տեղեկացրեց մեզ մեծամասնության բյուրո-կոմիտե կազմակերպվելու մասին, զեկուցեց հերձվածի մասին ու ծանոթացրեց մեզ կոնֆերենցիայի վորոշումների հետ։

Ինչպես ինձ հաղորդեց հետո ընկ. Կոլյա Քարցիվաձեն, ընկ. Զեմլաչկան շատ գոհ եր մնացել կոմիտեյի անձնակազմից։

Այդ ժամանակներում (թե գուցե մի փոքր ավելի վաղ) Քութայիս յեկավ ընկ. Կամենևը, վոր նույնպես զեկուցում տվեց կոմիտեյի և մյուս պատասխանատու ընկերների, գլխավորապես պրոպագանդիստների, մասնակցությամբ ընկ. Իլյա Մաճավարիանու տանը կազմված ժողովում։

Սկսվում եր 1905 թվականը։

Հունվարի 9-ին Պետերբուրգում տեղի ունեցավ բանվորների խաղաղ ցույցի գնդակահարումը։ Քաղաքական գործադուլները տարածվեցին վողջ Ռուսաստանում։ Մանջուրիայի դաշտերում ցարական զորքերը կրում եյին պարտություն պարտության յետևից։ Ցուսիմայի մոտ յապոնացիք ջախջախեցին ռուսակ. նավատորմը։ Ոդը հղփացած եր հեղափոխական տրամադրությամբ։ Քաղաքների անկայուն, մանր բուրժուազիան ու ինտելիգենցիան միացած գյուղացիության հետ, արձագանք տվին հեղափոխության կանչին։ Իշխանության ներկայացուցիչները գլուխները կորցրին։ Նրանց նախկին դաժանությունների կիրառումն այլևս անհնարին եր դարձել։ Հեղափոխականորեն տրամադրված տարրերի համարձակ գրոհը դրանից ավելի

ևս բորբոքվում էր միայն։ Միահեծան իշխանությունը մեկուսացվում էր կատարելապես։ Նրա կողմն էին մնացել միայն խոշոր բուրժուական ու կալվածատերերի դասակարգը, իսկ նրա դեմ էին բոլորը՝ «բոլոր ժողովուրդն», ինչպես ասում էին այն ժամանակները։ Քութայիսի նահանգի բոլոր անկյուններից պահանջներ էին առաջվում պրոպագանդիստներ («քարոզիչներ») ուղարկելու և մտցնելու աթիսթավլիների ու ասխոթավլիների (տասնապետների և հարյուրապետների) ընտրովի սիստեմը։

Քութայիսի ամբողջ նահանգը բաժանված էր շրջանների՝ Ճիաթուրա, Բաղդադի, Խոնի, Սամտրեդիա, Ղվիրիլա, Խարագոուլի, Մաճա, Լեչխումի, Մինգրելիայի, Գուրիայի և Բաթումի։ Վերջին երկու շրջաններում (Գուրիայի և Բաթումի) կային առանձին կոմիտեներ։ Ղեկավարությունն այստեղ հանձնված էր Բաթումի կոմիտեյին։ Ճիաթուրայում ձգտում էր նկատվում նույնպես իր առանձին սեփական կոմիտեն ունենալու, և ունեցան, բայց միայն ու մշտական հարաբերություն չունեցավ Քութայիսի կոմիտեյի հետ։

Մոտավորապես 1905 թվի օգոստոսի վերջերին տեղի ունեցավ Քութայիսի նահանգի կուսակցական կազմակերպությունների համագումարը։ Համագումարը կայացավ հանգուցյալ ընկեր Սաշա Ծուլուկիձեյի տանը, Քութայիսում, Գեղության փողոցի վրա։ Բայց համագումարի հենց սկզբին մենք նկատեցինք, որ մեզ հետևում են ու քաղաքի այդ մասը լիքն է շպիկներով (ըլտես)։ Նիստերը փոխադրեցինք Ձիմիստարո գյուղը, Քութայիսի մոտ, լեռան վրա։ Ժողովներն այստեղ տեղի էին ունենում Ծկոնիայի տանը։

Կոնֆերենցիա էին յեկել՝ Գուրիայի, Մինգրելիայի, Ռաճա-Լեչխումիայի, Քութայիսի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները։ Բացի ինձանից, ներկա էին՝ ընկ. ընկ. Բուդու Մդիվանին, Ռ. Լորթքիփանիձեն, Ջերեղե Տրապայիձեն, Ս. Քավթարաձեն, Ռոստոմ Դոլիձեն, Գ. Կուճայիձեն, բանվոր Ցուլոն Քելբաքիանին, Լ. Մասխարաշվիլին, Միտրո Մգելաձեն, Անիտա Սուլաքվելիձեն, Ցերկաթյան (Բաքրաձեն), Կոլյա Քարցիվաձեն, Ի. Ցոբիձեն և ուրիշները։

Օրակարգի մեջ կային հետևյալ հարցերը՝
1) Զեկուցումներ տեղերից. 2) զեկուցումներ ընթացիկ մոմենտի մասին և կազմակերպչական խնդիրներ։

Համագումարում վորոշվեց՝ վո՛չ մի կապեկ կառավարությանը և վո՛չ էլ մի զինվոր նրան։ Նախապատրաստումն զինված ապստամբության։

Գիշերվա նիստերից մեկին յեկավ ընկ. Կոբան (Ստալին)։ Նա զեկուցում տվեց ընթացիկ մոմենտի մասին ու նույն գիշերն ևեթ վերադարձավ Քութայիս։

Համագումարը գլխավորում էր ու մտքերի փոխանակությունը ղեկավարում ընկ. Միխա Ցխակայան։

Համագումարի վերջին հանձնարարվեց ընկ. Ցոբիձեյին մերձակա անտառում հավաքել տեղական գյուղացիներին։ Այդ ժողովում ընկ. Ջեր. Տրապայիձեն ազդեցիկ ճառ արտասանեց։

Կոմիտեյին կից գոյություն ուներ պրոպագանդիստների առանձին կազմակերպություն, վորի անդամները բաժանված էին տարբեր շրջանների վրա,

այսպես՝ Ճիաթուրայի շրջանում աշխատում էին Մտ. Անծկիրվելին, Կ. Ցինցաձեն, Ավգուստ Փիլիան, Ն. Բրեգվաձեն (կոնդուկտոր), Գամեզարդաշվիլին (Մեպուրնե), Կարպե Մոդեբաձեն, Դ. Լորթքիփանիձեն և ուրիշները։ Խոնիի շրջանում աշխատում էին՝ Բ. Մդիվանին, Խունխուդը, տեղական ընկերներից՝ Պ. Կիկալեյշվիլին, Շավլոկաձեն, Կ. Մելաձեն։ Մեծ միտինգների ժամանակ այստեղ էին կանչում Քութայիսից հաճախ և Քարցիվաձեյին և Ս. Քավթարաձեյին։ Սամտրեդի շրջանում՝ Ռ. Կալաձեն և Գ. Թաղայշվիլին։ Զվիրիլում՝ Գ. Ելիավան, Խարագաուլիում՝ Սամուել Բուաչիձեն, Ռաճա-Լեչխումում՝ Արչիլ Դոլիձեն (Ռոստոմը), Շամշե Լեժավան, Դ. Դաքեշքելիանին, Շ. Գելովանին (վոր սպանվեց կնյազների ձեռքով Գարդափխաձեյում), Ռուբեն Ղավիանին (այն ժամանակ բոլշևիկ էր), Բաղդադի շրջանում՝ Ջ. Տրապայիձեն, Մ. Բիբինեյշվիլին, Անդրո Բեբուրեյշվիլին, իսկ կազմակերպիչն էր ընկ. Բաքրաձեն («Ցերկաթյան»), վորն հետագայում ակտիվ մասնակցություն ունեցավ պարսկական հեղափոխության մեջ, ուր և բարբարոս տանջանքների յենթարկվելուց հետո մեռավ հերոսի մահով։

Պրոպագանդիստների կոմիտեյի մեջ էին մտնում և զանազան շրջաններում աշխատում՝ Պավլե Սաղվաբելիձեն (վորը կոչվում էր «Պատարա Պավլե» – փոքրիկ Պավլե) (ներկայիս կոմմունիստ), Պավլե Սաղվարելիձեն («Դիդի Պավլե»-մեծ Պավլե), Կ. Կիկնաձեն, Բեսո Կվիրկելիան, Գր. Կուճայիձեն, Գ. Կիկոձեն, Մ. Մգելաձեն, Իլիա Մաճավարիանին, Վասո Կանդելակին, Լադո Եմուխվարին, Իցկա Ուժինաշվիլին, Սաշա Կանդելակին և ուրիշները։

Նույն թվի մարտին, թե ապրիլին բժիշկ Ի. Գամարթելու բնակարանում տեղի ունեցավ ամբողջ նահանգի պրոպագանդիստների համագումարը։ Որակարգի այլ խնդիրների շարքում կար և կազմակերպչական հարց՝ գյուղերում մտցնել աթխաթավլի և ասխթավլի սիստեմը, կազմակերպել խմբեր, այն հարցը, թե գյուղերում ո՞ւմ համարել կազմակերպության անդամ, գալայի *) հարցն և դրամի խնդիրն հօգուտ հոգեվորականության։ **)

Այդ միջոցին այսպիսի մի կուրյոզ պատահեց. Թիֆլիսից ինձ մոտ յեկավ մի ընկեր ու միանգամայն գաղտնի կերպով խնդրեց ինձ, վոր իրեն տանեմ ընկ. Բարոնի մոտ, ըստ վորում ինքը լուրջ հանձնարարականներ ունի վերջինիս անունով։

Հենց նույն ժամանակներն էր, վոր մի ցավալի թյուրիմացություն պատահեց Օդեսայի մեր ընկերներին։ Օդեսայի մեր կազմակերպության մանդատներով գալիս են ինձ մոտ յերկու վրացի ուսանողներ։ Ցեստաք կերպով ընդունեցի նրանց ու մեկին (Կ. Սուլաքվելիձեյին) ուղարկեցի Սաչխերի աշխատելու, իսկ մյուսին (Գր. Լորթքիփանիձեյին) թողի Քութայիսում։ Շուտով պարզվեց, վոր դրանք յերկուսն էլ մենշևիկներ են և նպատակ են դրել քայքայել բոլշևիկյան կազմակերպությունը։ Նրանք «ընդհատակյա» աշխատանք էին տանում մեր դեմ, հենց մեր անլեգալ կազմակերպության մեջ։ Շատ շուտով նրանց հաջողվեց իրենց կողմը գրավել Քութայիսի գործակատարների մանր բուրժուական մասսան (այժմ նրանք գրեթե բոլորն էլ ռեվոլտրականներ են)։

---

*) Գալա—հողային հարկ, բահրա հօգուտ կալվածատիրոջ։

**) Տասը հօգուտ հոգեվորականության։

Մեր կազմակերպության № 1 խմբակը կազմված էր գլխավորապես այնպիսի գործակատարներից, վորոնք շատ թե քիչ բարձր պաշտոններ ունեյին: Հենց այստեղ էլ իր աշխատանքների համար առանձնապես նպաստավոր հող գտավ Գր. Լորթքիփանիձեն:

Ցերբ միջկուսակցական տարաձայնությունների տապը մի փոքր հովացավ, Գր. Լորթքիփանիձեն ծիծաղելով պատմում էր այդ գործակատարներից ստացած իր առաջին տպավորությունների մասին:

«Ժողով եյին գալիս բոլորն էլ լավ հագնված մարդիկ, վոսկե պենսնեներով ու վոսկե ժամացույցներով: Նրանք գանգատվում եյին, թե Բարոնն ինքն է վճռում բոլոր հարցերն ու իրենց վոչինչ չի հարցնում»:

Ցես ապրում եյի Մծվանեկվավիլիում*), պառավ Ծիրաքաձեյի տանը: Ինձ հետ ապրում էր նաև ընկ. Գ. Լորթքիփանիձեն: Բայց շուտով նրան ձերբակալեցին Մուխաղրուա գյուղում ու բանտարկեցին Քութայիսի բանտում:

Գյուղ գնացող պրոպագանդիստները գյուղից վերադառնալիս սովորաբար ամենից առաջ գալիս եյին ինձ մոտ, ինձ մոտ փոխում շորերն ու ապա գնում քաղաք:

Հարեվանուհիս մի քանի անգամ հարցնում է տանտիրուհուս, թե քանի՞ մարդ են ապրում նրա քրեհով տված տանը: Տանտիրուհիս պատասխանում է. «Քանի հոգի յեն ապրում, ինքս էլ չգիտեմ: Ներս են մտնում հինգ հոգի, դուրս են գալիս տասը: Ներս են մտնում յեվրոպական շորերով, դուրս են գալիս չերքեզկեներով: Իսկ մշտապես ապրում են այնտեղ յերկու հոգի»:

*) Քութայիսի շրջապատը գետի Գորի:

Իհարկե, կյանքի այսպիսի յեղանակն իմ բնակարանում շուտով մարդկանց ուշադրությունը գրավեց իր վրա և Քութայիսի հայտնի շպիկ Ջինորիան հաճախ սկսեց յերևալ մեր տան մոտերքը: Ցես փոխեցի բնակարանս, և փոխեցի գիտմամբ գիշերով ու միանգամայն հավատացած եյի, վոր բնակարանս փոխելով յես Ջինորիային կպրկեմ ամեն առավոտ ինձ պատահելու բավականությունից: Սակայն վորքան մեծ յեղավ զարմանքս, յերբ հենց մյուս առավոտ նոր բնակարանիցս դուրս գալիս դեմ առ դեմ հանդիպեցի նրան նոր բնակարանիս հենց դռանը:

Շուտով սակայն Ջինորիան մեջտեղից «վերացվեց»: Ամբողջ նահանգում սկսվեցին հաճախակի տերորիստական ակտեր տեղի ունենալ չարի ու սահման կորցրած վոստիկանների, լրբացած լրտեսների, պրովոկատորների ու յերես առած կալվածատերերի դեմ:

Առհասարակ ամբողջ Կովկասում առաջին հեղափոխության ժամանակ տերորիստական գործունեյությունը հսկայական չափերի հասավ:

1904-5 թվականներին Կովկասի զանազան անկյուններից գրեթե ամեն որ քաղաքական հողի վրա հարձակումներ ու սպանություններ եյին կատարվում հին ռեժիմի ներկայացուցիչների վրա:

Մասսաների ատելությունը նրանց դեմ ծայր աստիճանի յեր հասել: Կռվի ծարավը, վոր տարիներով աճել էր արյունալի ճնշումների հետեվանքով, անցավ բոլոր սահմաններն ու արգելքները, վոր ուզում եյին դնել կուսակցության ծրագրերը: Տերորիստական ակտերից շատերը կրում եյին տարերային բնույթ, հանդիսանալով ինչպես ժողովրդական դատ, բայց քիչ չեյին և կազմակերպված ու հեղափոխական կուսակցությունների կողմից թույլատրված ակտերը:

Պրովոկատորները, լրտեսները ու ժանդարմերիայի առանձնապես յեռանդուն ներկայացուցիչներն ամեն րոպե վտանգ եյին սպառնում անլեգալ հեղափոխական կազմակերպությունների գոյությանը։ Համեմատաբար փոքրիկ քաղաքների կենցաղային պայմաններում, առանց պրոլետարիատի, ինչպիսիք են Քութայիսն ու Բաթումը, էլ չեմ ասում ավելի փոքր կենտրոնների, մեշչանական փոքր ավանների ու գյուղական միջավայրի մասին, ուր բոլորը գիտեն բոլորին ու ամենքը կամա թե ակամա հետեվում են ամենքին, լրտեսների, պրովոկատորների ու ժանդարմների ներկայությունը կարող է միանգամայն կործանարար հետեվանքներ ունենալ, կարող եր արմատից վոչնչացնել հեղափոխական բոլոր ուժերը։ Տերորի գնահատականը Ռուսաստանի ու Արեվմտյան Յեվրոպայի պրոլետարական կենտրոններում չի կարելի համադրել տերորի խաղացած դերին հեղափոխության առաջին շրջանում ռուսական զորքերով գրավված ու ռուս չինովնիկության ճանկերում խճճված Կովկասում։ Ահա թե ինչու Վրաստանի սոցիալ-դեմոկրատիան, ժխտելով հանդերձ տերրորն իբրեվ քաղաքական կռվի սիստեմ, հաճախ կիրառում եր այն իբրեվ պաշտպանողական միջոց։

Ահա տերրորիստական ակտերի խրոնիկան, վոր քաղվածորեն առաջ եմ բերում Կովկասի փոխարքայի կենտրոնական իշխանություններին տված զեկուցումից։

«1904 թվի հունվարի 23-ին Ռոտշիլդի գործարանի բակում, Բաթում քաղաքում, ատրճանակի հարվածով վիրավորվեց գործարանի նյութերի պահեստի կառավարիչ Յոսիֆ Վոյնիլովիչ Նյանկովսկին, վորը դրանից մի փոքր առաջ անոնիմ նամակ եր ստացել, ուր պա-

հանջում և սպառնում եյին, վոր թողնի ծառայությունը։ Հանցավորները չեն հայտնաբերված։

«Հունվարի 19-ին Քութայիսի գավառի Սալխինո գյուղում խմիչքների վերստուգիչ Նիկոլայ Գորոդենսկին և ակցիզային վերահսկիչ Վիշինսկին Բեսարիոն Լորթքիփանիձեյի դուքանում հարձակման յենթարկվեցին Լորթքիփանիձեյի կողմից, իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու պատճառով։ Վիրավորված Գորոդենսկին մեռավ»։

«Մայիսի 10-ին սպանվել է դարանից Ոզուրգեթի գավառի Քվիանի գյուղի բնակիչ Թեվդորե Արոշիձեն, վորը կասկածվում եր քաղաքական հանցավորների մասին վոստիկանության տեղեկություններ տալու մեջ»։

«Մայիսի 19-ին Նիգոիթի գյուղում ատրճանակով մեջքից վիրավորում է «Նիգոիթի» կայարանի կայարանապետի ոգնական Դավիթ Ջեգելաշվիլին։ Մահափորձ կատարողը թագնվում է»։

«Մայիսի 19-ին սպանվում է Ոզուրգեթի գավառի գյուղացի Միխեյիլ Ժորժիկաշվիլին, քաղաքական քննության ժամանակ իշխանությանը տված տեղեկությունների համար։ Հանցավորները չեն հայտնաբերված»։

«Հունիսի 5-ին Ոզուրգեթի գավառի Լանչխութի գյուղում ատրճանակի հարվածով սպանվում է Լանչխութի շինական հասարակության տանուտեր Իրակլի Մենաղարիշվիլին, քաղաքական բնույթ կրող հանցանքներ հայտնաբերելու խնդրում իշխանությանը ցույց տըված իր յեռանդուն աջակցության համար։ Հանցավորները թագնվեցին»։

«Հունիսի 8-ին սպանված է Ոզուրգեթի գավառի գյուղացի Մերաբ Որագվելիձեն, վոր տեղեկություններ

եր տալիս վոստիկանության քաղաքական հանցավորների մասին: Հանցավորները չեն հայտնաբերված»:

«Հունիսի 22-ին Ոզուրգեթի գավառի Լանչխութի ավանում դարանից սպանվում է Ակեթի գյուղական վարչության գրագիր Միխեյիլ Լոմաձեն: Հանցավորները չեն հայտնաբերված»:

«Հունիսի 25-ին ատրճանակի հարվածով սպանվում է Նոսիրի գյուղական համայնքի գրագիր Գիորգի Քարթվելիշվիլին, իբրև հակապետական պրոպագանդին արգելք հանդիսացող: Հանցավորները չեն հայտնաբերված»:

«Հունիսի 26-ին Ոզուրգեթի գավառի Ջիմիթի գյուղական համայնքի տանուտեր Պետրե Կիլաձեյի վրա դարանից յերեք անգամ կրակում են բերդանկա հրացանից: Կիլաձեն արգելք եր հանդիսանում հակապետական պրոպագանդին»:

«Հուլիսի 6-ին Ոզուրգեթի գավառի Վանի գյուղում ատրճանակի հարվածով սպանվում է նույն գյուղի բնակիչ կնյազ Միխեյիլ Շալիկաշվիլին, վոր թռուցիկների մեջ կոչվում եր «լրտես»: Հանցավորները չեն հայտնաբերված»:

«Հուլիսի 6-ին Ոզուրգեթի գավառի Բվեմո-Սուրեբի գյուղում սպանվում է Ոզուրգեթի գավառի յեկեղեցիների գործակալ քահանա Նիկոլոզ Ռամիշվիլին—բացարձակ հակառակորդ սոցիալ-դեմոկրատական շարժման, վոր յեկեղեցում քարոզում եր այդ մասին և 1904 թվի ամառվա ընթացքում տվել եր վոստիկանության կարեվոր մի շարք ցուցումներ, այն ժամանակ Քութայիսի նահանգական ժանդարմական վարչության մեջ քննվող «հակակառավարչական շարժումը Ոզուրգեթի գավառում» գործին վերաբերյալ»:

«Հուլիսի 18-ին Ոզուրգեթի գավառի Բասիլեթ գյուղում, ուր հավաքված եր հասարակական ժողով, ժողովի վերջին, յերբ հեռանում են գյուղացիների մեծամասնությունն ու գյուղական տանուտեր Իվանե Խաբուրիան, հրապարակում հայտնվում են յերկու անհայտ մարդիկ, վոր յերկու անգամ կրակում են ոդի մեջ ու կանչելով հրապարակում գտնվող գյուղացիներին—«ցրվեցե՛ք, թե չե կսպանենք», հարձակվում են տանուտերի ոգնական Թավարթքիլաձեյի ու գրագիր Արոբելիձեյի վրա, վորոնք փախչում մտնում են գրասենյակի շենքն ու թաքնվում այնտեղ: Հարձակվողները մի քանի անգամ կրակում են պատուհանից, ըսպանում Թավարթքիլաձեյին ու վիրավորում Արոբելիձեյին, վորից հետո անհետանում են, առանց ճանաչվելու վորևե մեկից: Սպանված Թավարթքիլաձեն յեռանդուն գործակալ եր բնակչության մեջ առաջ յեկած հակակառավարչական շարժման գործը պարզելու խընդրում»:

«Ոգոստոսի 5-ին տեղի ունեցավ հարձակում Ոզուրգեթի գավառի Գուրիանթի գյուղական համայնքի տանուտեր Նիկոլայ Բրեգվաձեյի վրա, վորին յենթարկեցին խիստ ծեծի: Բրեգվաձեն գործում եր հակակառավարչական շարժման առաջնորդների դեմ»:

«Սեպտեմբերի 29-ին Ոզուրգեթի գավառի Ասկանա գյուղում դարանից մի քանի անգամ կրակում են ազնըվական Դավիթ Շեվարդնաձեյի վրա: Շեվարդնաձեն բացատրում է, վոր իրեն կասկածում են հայտնի պրոպագանդիստ Թ. Մախարաձեյի սպանության մեջ»:

«Հոկտեմբերի 5-ին Ոզուգեթի գավառի Խոջավիա գյուղում փախստական հանցավորների ձեռքով սպանվում է քահանայի թոռն Պրոկոպե Ուշվերիձեն, վոր

կասկածվելիս և յեղել քաղաքական լրտեսության մեջ»։

«Հոկտեմբերի 12-ին Բաթում քաղաքում ատրճանակի հարվածով վիրավորվում և մեջքից Բաթում քաղաքի 5-րդ քաղաքամասի պրիստավ Ցիլիմոնովը։ Հանցավորները չեն հայտնաբերվում»։

«Հոկտեմբերի 15-ին Օզուրգեթի գավառի Միքել Գաբրիելի գյուղի մոտ, հրացանի հարվածով սպանվում է քաղաքական լրտեսության մեջ կասկածվող գյուղացի Սոկիան»։

«Հոկտեմբերի 20-ին Զոխատաուրի ավանում բերդանկա հրացանով համազարկ են տալիս նույն ավանական Դավիթ Շեվարդնաձեյի վրա, վորի դեմ մահափորձ եյին կատարել 29 IX»։

«Հոկտեմբերի 28-ին Օզուրգեթի գավառի Ոցխանի գյուղում սպանվում՝ է լրտեսության մեջ կասկածվող տիրացու Գերասիմ Լոմաձեն, հունիսի 22-ին սպանված Միխեյիլ Լոմաձեյի հարազատ յեղբայրը։ Հանցագործները չեն հայտնաբերված»։

«Նոյեմբերի 8-ին Քութայիս քաղաքում ատրճանակի հարվածով սպանվում է վոստիկանության գործակալական տեղեկություններ տվող Դիմիտրե Ջինորիձեն։ Հանցագործները չեն հայտնաբերված»։

«Նոյեմբերի 22-ին Օզուրգեթի գավառի Սուրեբի համայնքի տանուտեր Միխեյիլ Տրապայիձեյի վրա մահափորձ է կատարվում գարանից։ Հանցագործները չեն հայտնաբերված»։

«Դեկտեմբերի 6-ին տեղի յե ունենում հարձակում ժանդարմական ունտերաֆիցեր Բուտովիչի վրա (Օզուրգեթի գավ. Նիգոիտի գ.), վորն աջակցում եր տեղական վոստիկանության հակակառավարչական շարժումը բանալու խնդրում»։

«Դեկտեմբերի 17-ին Օզուրգեթի գավառի Լանչխութի գյուղում ատրճանակի հարվածով մեջքից վիրավորվում է վոստիկանական պահակի ստրաժնիկ Բարովսկին, վորը դեռևս մի փոքր առաջ Գվարգուլի համայնքում հայտաբերել եր մի մեծ գաղտնի հավաքույթ։ Հանցագործները չեն հայտնաբերված»։

«Դեկտեմբերի 17-ին Սաջավախո գյուղում ատրճանակի հարվածով սպանվում է իր տան մեջ Սամտրեդի հաշտարար մասի քարտուղարի ոգնական Լեոնտի Արգեշվիլին, յերկու գուրիացիների ձեռքով, վորոնք պահանջելիս են յեղել նրանից փամփուշտներ։ Հանցավորները չեն հայտնաբերված»։

«1905 թվի հունվարի 16-ին Բաթում քաղաքում հենց փողոցի մեջ, հրացանի հարվածով սպանվում է Բաթումի շրջակայքի վոստիկանության կառավարիչ ավագ ուրյադնիկ Կնյազ Գուրիելին, վրեժ լուծելու դիտավորությամբ, նրա անխոնջ պաշտոնական գործունեության համար։ Հանցավորները չեն հայտնաբերված»։

«Հունվարի 20-ի գիշերը գարանից հարձակվում են գործում Զոխատաուրի գավառամասի պրիստավ Կոստավայի և իրեն ուղեկցող ստրաժնիկ Կովալենկոյի վրա, երբ գավառամասը շրջագայելիս, յերկուսն են սպանվում են, Հանցագործները չեն հայտնաբերված»։

«Հունվարի 20-ին և 24-ին Քութայիս քաղաքի փողոցներում տեղի ունեցավ հակակառավարչական ցույց։ Ամբոխը կարմիր դրոշակներ պարզած մարսելյոզ յերգելով, շրջում եր քաղաքում ու պահանջում դադարեցնել պարապմունքները։ Քաղաքում հայտնվեցին մի քանի տասնյակ պինված գուրիացի պրոպագանդիստներ, վորոնք շրջում եյին խանութները, դեղա-

տները, ակումբները, ռեստորանները, հյուրանոցները, դպրոցական հիմնարկությունները ու պահանջում ամեն տեղ դադարեցնել պարապմունքները։ Տնային ծառաները թողին իրենց տեղերը, կառապանները դուրս չեկան կառակայան (բիրժա), խանութների գործակատարները թողին իրենց պարապմունքներն ու միացան ամբոխին։ Գիմնազիստները, ռեալիստներն ու մյուս դպրոցական հաստատությունների աշակերտությունը նույնպես մարսելյոզ յերգելով շրջում էր փողոցներում։

Հունվարի 27-ին, Քութայիսի Հոգևոր դպրոցի խառնակություններից հետո, որի ժամանակ գոռում էին «կորչի Նիկոլայ II-ը», այդ դպրոցը փակվեց։ Նույն միջոցին փակվեց նաև Քութայիսի գյուղատնտեսական դպրոցը։ Մասնավոր մարդկանց ագիտատորների կողմից ուղարկվում էին զանազան գումարների պահանջներ, «կոմիտեյի» կարիքները հոգալու համար»։

«Վոստիկանությունը գիշերները թաքնվում էր, իսկ փողոցներում լսվում էին բազմաթիվ կրակոցներ, հայտնի չէ ո՞ւմ ձեռքով կատարվող»։

«Հունվարի 22-ի գիշերը Բաթում քաղաքում տեղի յե ունենում հարձակում ժանդարմական ունտեր-օֆիցեր Բորդակովի վրա, բացառապես շենքը խլելու դիտավորությամբ։ Բորդակովն ստանում է կրծքին յերկու բերութի վերք, իսկ հանցագործները չեն հայտնաբերվում»։

«Հունվարի 23-ին Ոզուրգեթ քաղաքում, փողոցով անցնելիս, կրակում են վոստիկանական պրիստավի օգնական Կվաչաձեի վրա և վիրավորում ձախ ձեռքից։ Հանցավորները չեն հայտնաբերված»։

«Հունվարի 24-ին վեց զինված չարագործներ հարձակվում են Ձոխատաուրի (Ոզուրգեթի գավ.) փոստի

բաժանմունքի վրա, վորտեղից հափշտակում են 1516 ռուբլի փող ու մի ատրճանակ։ Հանցագործները չեն հայտնաբերված»։

«Հունվարի 26-ին, Բաթում-քաղաքում, փողոցի մեջ, յերեք չարագործներ ատրճանակների հարվածներով սպանում են ավագ վոստիկան Կոնդարևիչին։ Հանցավորները չեն հայտնաբերված»։

«Հունվարի 27-ին Բաթումի արական գիմնազիայի աշակերտներն անկարգություն առաջ բերին դպրոցում, սկսեցին աղաղակել, կոտրատել պատուհանները ու մի քանի անգամ կրակել։ Իսկ հինգերորդ դասարանի աշակերտներից մինը՝ Զաքարիաձեն հանդիսադահլիճի պատից ցած է բերում թագավոր-կայսեր պատկերն ու պատառոտում»։

«Հունվարի 28-ին Անդրկովկասյան յերկաթուղու Ջումաթի կայարանում յերեք չարագործներ բերդանկաներից կրակ բաց արին վոստիկանական ուրյադնիկ Սամորուկովի վրա, մի քանի տեղից վիրավորեցին, խլեցին թուրը, ատրճանակն ու բերդանի հրացանը։ Հանցավորները չեն հայտնաբերված»։

«Հունվարի 29-ին Ոզուրգեթ գնացող վոստիկանական ստրաժնիկներ Միխեյիլ Սոսելիայի և Թեոֆիլե Զազանավայի վրա սկսեցին կրակ բաց անել բերդանկաներից հինգ գուրիացիներ։ Ստրաժնիկները դարձրին ձիերի գլուխն ու փախան։ Հանցագործները չեն հայտնաբերված»։

«Հունվարի 29-ին Ջումաթի (Ոզուրգեթի գավ.) կառավարչական տանուտեր Նաճղեբիան Նադոմարի և Ամաղլեբա գյուղերի միջև յենթարկվում է յերեք զինված չարագործների հարձակման, վորոնք մի քանի անգամ կրակում են նրա վրա ատրճանակներից։ Սակայն,

Նաճղեբյան իր մոտ ունենալով բերդան հրացան, մըտնում է մի ծառի հետև ու ինքն էլ իր կողմից սկսում կրակել նրանց վրա. իր ասելով, հաջողվում է նրան վիրավորել իր վրա հարձակվողներից մի քանիսին։ Այնուհետև շարունակելով ճանապարհը, Նաճղեբյան շուտով հանդիպում է չարագործների մի չորրորդ խմբի, վոր բաղկացած է լինում տասը հոգուց,—բոլորն էլ զինված բերդաններով։ Այդ չարագործներն անսպասելի կերպով մոտենում են Նաճղեբյային, մահվան սպառնալիքով կանգնեցնում նրան, ցած քաշում ձիուց ու վերցնում նրանից բերդան հրացանը, թուրը, 53 ռուբլի փող և Ոզուրգեթ գավառապետի մի ծրար, վոր ուղղված է լինում Զոխատաուրի գավառամասի պրիստավին։ Հանցագործները չեն հայտնաբերված»։

«Հունվարի 30-ին, Ոզուրգեթում, երբ ցերեկով, իր տան մոտ բերդանի մի հարվածով սպանվում է կերկու-գուրիացի չարագործների ձեռքով, հաշտարար միջնորդ կնյազ Տիմոթե Նակաշիձեն։ Հանցագործները չեն հայտնաբերված»։

«Փետրվարի 1-ին Սուխումի շրջանի Գուդաութ գյուղի մոտ ատրճանակի հարվածով սպանվում է վոստիկանական ստրաժնիկ Ալեքսանդր Տրիստենիցկին, վորից հափշտակվում են բերդանկա հրացանն ու պատրոնդաշը։ Հանցագործները չեն հայտաբերված»։

«Փետրվարի 3-ին Փոթի քաղաքում տեղացի բանվորների ամբոխը հարձակվում է Խոպյորսկի պոլկի երկու կազակների՝ Տկաչենկոյի ու Շչուկինի վրա, վորոնք ձիերի համար կեր են տանելիս յեղել կես հարյուրյակի շենքը։ Անցքի վայրն առանց թամբի ձիերով ժամանած 20 կազակների վրա կրակում են ատրճանակներով Խարիբի մերձակա մկիտանից։ Կազակները մըտ-

բակի ու թրերի հարվածներով ցրում են ամբոխը։ Սակայն կազակներին աջակցություն ցույց տվող նահանգական ժանդարմական վարչության ունտեր-օֆիցեր Բորիսենկոն յենթարկվում է բանվորների խիստ ծեծին։ Հանցագործները չեն հայտնաբերվում»։

«Փետրվարի 4-ի գիշերը Ոզուրգեթի վոստիկանի տան վրա համազարկեր են տալիս բերդաններից։ Չարագործները չեն հայտնաբերված»։

«Փետրվարի 6-ին Սիլաուրի (Ոզուրգեթի գավ.) վոստիկանական ստրաժնիկների պահականոցի վրա հարձակում է գործում զինված չարագործների ամբոխը, վորն սպանում է ստրաժնիկներ՝ Սիս Նակաշիձեյին և Մոսե Ջաձավային ու խլում Նակաշիձեյի ու Կակաչիայի բերդանները։ Չարագործները չեն հայտնաբերված»։

«Փետրվարի 10-ին Փոթի քաղաքում ատրճանակից կրակում են ժանդարմական ունտեր-օֆիցեր Մոնոբովսկու վրա, վորին վիրավորում են ձեռքից։ Հանցավորները չեն հայտնաբերված»։

«Փետրվարի 12-ին Բաթումի շրջանի Խոլոդնայա ավանի մոտ ատրճանակի հարվածներով վիրավորվում են Արդահանյան պահեստի 260-րդ հետևակ գնդի վերակա (ֆելդֆեբել) Նիկոլայ Կրուտկոն ու շարքային զինվոր Կորրովսկին։ Հանցագործները չեն հայտնաբերվում»։

«Փետրվարի 13-ին սպանվում է Սամտրեդի հասարակության տանուտերի օգնական Մաթվեյ Խուճուան, նրա համար, վոր գյուղացիներից կառավարչական տանուների պահպանության համար փող է պահանջել։ Հանցավորները չեն հայտնաբերված»։

«Փետրվարի 22-ին Քութայիսի գավառի Սամտրեդի գյուղի շուկայում ատրճանակի հարվածով սպան-

վում է Սամտրեդի պրիստավ Ձիքվիլաձեն։ Հանցագործները չեն հայտնաբերված»։

«Փետրվարի 25-ին Սուխում քաղաքում փողոցով անցնող Սուխումի շրջանի պետ պոլկովնիկ Պրոգուլբիցկու վրա անհայտ չարագործները տաս անգամից ավել կրակում են ատրճանակներից, սակայն չեն կարողանում վնասել Պրոգուլբիցկուն։ Հանցագործները չեն հայտնաբերված»։

«Մարտի 14-ին Փոթի քաղաքում չարագործների ձեռքով սպանվում է ժանդարմական ունտեր-օֆիցեր Ավսյուկեվիչը։ Ձերբակալվածները հանձնվում են զինվորական դատարանին»։

«Մարտի 21-ին Անդրկովկասյան յերկաթուղիների Ղվիրիլի կայարանի կայարանապետի օգնական Բլոկը «Կոմիտեյի» վորոշման համաձայն սպանվում է վագոնները մաքրող Պայլիչաձեյի ձեռքով»։

«Հուլիսի 18-ին Կոպիտնարի կայարանում ատրճանակի հարվածով վիրավորվում է ազդրից ու ձախ ձեռքից ճանապարհների վարպետ Լակովիչը։ Հանցավորները չեն հայտնաբերված»։

«Հուլիսի 20-ին Բաթումի շրջանի Խոլոդնայա ավանում հրացանի հարվածով մահացու վիրավորվում է նույն ավանի տանուտեր Սիմոն Կեխտեվը, հանցագործները չեն հայտնաբերված»։

«Օգոստոսի 26-ին Շորապանի գավառի Մարելիսի գյուղում սպանվում է Բեժանթուբանի մինիստրական դպրոցի ուսուցիչ Իվանե Մագրաձեն, վորը նպատակ ուներ ձերբակալել տալու այն հինգ չարագործներին, վոր Սուրամի քաղաքամասում կողոպտել էյին Անդրկովկասյան յերկաթուղիների վերահսկիչ Ղիփիանուն։ Այդ

գործի առթիվ յերկու մեղադրյալները փախչում են։ Հանցագործները չեն հայտնաբերվում»։

«Սեպտեմբերի 12-ին Բաթում քաղաքում ատրճանակի հարվածով սպանվում է Անդրկովկասյան յերկաթուղիների Բաթումի շրջանամասի պետի պաշտոնակատար ճարտարապետը։ Սպանության պատճառն է այն թյուրիմացությունը, վոր առաջացել է նրա և բանվորների միջև, շնորհիվ այն բանի, վոր նա (ճարտարապետը) չի կատարել բանվորների պահանջը նրանց վարձը ավելացնելու վերաբերմամբ։ Հանցավորները չեն հայտնաբերված»։

«Սեպտեմբերի 28-ին Գագրի գյուղաքաղաքում սպանվում է Գագրիի ոդերևութաբանական կայանի պետ Շերեմետևսկին։ Գործը քննվում է Թիֆլիսի դատաստանական պալատում։ Մեղադրյալների մի մասը դատապարտված է զանազան պատիժների»։

«Հոկտեմբերի 4-ին Անդրկովկասյան յերկաթուղիների Ճիաթուրա կայարանի պլատֆորմի վրա յերեք գնդակով սպանվում է նույն կայարանի ժանդարմական ունտեր-օֆիցեր Դերեվյանկինը։ Յերկու հանձակվողներից մինը՝ Վալերիան Կախիանին սպանվում է, իսկ մյուսն անհետանում»։

«Հոկտեմբերի 16-ին Բաթում քաղաքում ատրճանակի հարվածով սպանվում է Քութայիսի նահանգական ժանդարմական վարչության ունտեր-օֆիցեր Բորովկին։ Չարագործները չեն հայտնաբերվում»։

«Հոկտեմբերի 18-ին Բաթում քաղաքում հենց փողոցի մեջ բերդան հրացանի հարվածով սպանվում է վոստիկան Պավլե Գոգելիան։ Հարձակում գործող հինգ չարագործներից մինը՝ Մելիտոն Ղլոնտին սպանվում է, իսկ մնացածները փախչում են»։

«Հոկտեմբերի 19-ին Պորուլեթի կայարանում ատրճանակի հարվածով սպանվում է այդ կայարանի կայարանապետ Լեվաշովը: Հանցավորները չեն հայտնաբերվում»:

«Հոկտեմբերի 27-ին Բաթում քաղաքում ատրճանակի հարվածով սպանվում է քաղաքամասի վերահսկիչ Ծմելինը: Հանցավորները չեն հայտնաբերված»:

«Նոյեմբերի 2-ին Քութայիսում ատրճանակի հարվածով սպանվում է Քութայիս կայարանի կայարանապետի օգնական Կուզնեցովը: Հանցավորները չեն հայտնաբերվում»:

«Նոյեմբերի 8-ին Անդրկովկասյան յերկաթուղիների Ճիաթուրա կայարանի մոտ ատրճանակի մի քանի հարվածներով սպանվում է Բեսարաբական գնդի վեցերորդ վաշտի վաշտապետ կապիտան Տարասովը: Ձերբակալված չարագործն իբրև մեղադր. յենթարկվելով քննիչի հարցաքննությանն, ինքն իրեն անվանեց Քութայիսի նահանգի Օզուրգեթի գավ. Սաջեվախո գյուղացի Դիմիտրի Ցիլիպոով Ջիգողիձե և բացատրեց, վոր սպանությունն ինքը կատարել է սոցիալ-հեղափոխականների կոմիտեյի վորոշման համաձայն: Տարասովի սպանության պատճառ է հանդիսացել, Ջիգողիձեյի ասելով, Բեսարաբական գնդի վեցերորդ վաշտի զինվորների գանգատը վաշտապետ Տարասովի իրենց հետ խիստ վարվելու դեմ: Ընդ ամին զինվորները Տարասովի այդ սպանության փոխարեն իբրև վարձատրություն խոստացել են անցնել սոցիալիստ-հեղափոխականների կողմը: Գործը հանձնված է զինվորական դատարանին»:

«Նոյեմբերի 9-ին № 6 մարդատար գնացքում Լանչխութի կայարանում ատրճանակի յերկու հարվածով,

վիրավորվում է Բաթումի քաղաքապետի օգնական Սկվարցովը: Հանցավորները չեն հայտնաբերված»:

«Դեկտեմբերի 30-ին հեղափոխականները զինված հարձակում են գործում՝ Ղվիրիլի ավանում 77-րդ Տենգինսկի գնդի 12-րդ վաշտի վրա և Բելոգորի ավանի մոտ նույն գնդի 11-րդ վաշտի վրա: Նույն դեկտեմբերի 30-ին հարձակում են կատարում Ղվիրիլի պետական գանձարանի վրա, հետևյալ հանգամանքներում: Մինչև դեկտեմբերի 30-ը գանձարանը պահպանում էր Տենգինսկի գնդի 12-րդ վաշտը, վորը կանգնած էր Ղվիրիլի ավանում: Այդ որը հեղափոխականների ջոկատը հարձակում է գործում հիշյալ վաշտի վրա, խլում զինվորներից զենքերն ու գերի վերցնում նրանց, վորից հետո գանձարանը մնում է միայն յերդվյալների ու ծառաների պաշտպանությանը: Կես որից հետո, ժամի մոտ 4-ին հեղափոխականների զինված ջոկատը գալիս է գանձարան ու ցրվելով գանձարանի պահակին, պահանջում է, վոր ներկայանա գանձապահ Սամբիկինը: Յերբ գալիս է վերջինս, հեղափոխականներից մինը՝ Ալեքսանդր Ստեփանովը պահանջում է, վոր Սամբիկինը գանձարանը հանձնի հեղափոխականների կողմից ընտրված նոր գանձապահին, ընդ վորում մինչև վերջինիս գալը թույլ են տալիս Սամբիկինին գնալ տուն: Նույն որը յերեկոյան ժամի 9-ին յերկու զինված հեղափոխականներ գալիս են Սամբիկինի մոտ ու դարձյալ պահանջում, վոր դնա գանձարան: Հնարավորություն չունենալով հակառակելու, Սամբիկինը հիշյալ յերկու անձանց ուղեկցությամբ գնում է գանձարան, վորտեղ գտնում են տասնեհինգ զինված հեղափոխականների, վորոնք պահանջում են բանալ գանձարանի պահեստն ու հանձնել փողերը: Զիջելով ուժին, Սամբիկինը բաց է ա-

նում պահեստը, ուր նրա չտեսվելից ներս են մտնում հինգ հոգի՝ հիշյալ Ալեքսանդր Ստեփանովը, Իլյա Սաղվարելիձեն, Նոյ Ջնեյլիձեն և յերկու անհայտ անձինք, համրում են թղթադրամն ու մյուս փողը, որ դուրս է գալիս 201639 ռուբլի 56 կոպեկ, դարսում յերկու պնտակյան արկղների մեջ ու տանում: Բացի փողից հեղափոխականները խլում են 17 անձնագրի գրքույկներ, կնիքներ և այլն, բայց տոկոսաբեր թղթերին ու դրամանիշներին ձեռ չեն տալիս»:

«Փողերը վերցնելու մասին հեղափոխականներից յերկուսը պահեստի գրքում համապատասխան ստացագիր են գրում»:

«Այն ժամանակվա Նովկասի կյանքն ահա այսպիսի պատկեր էր ներկայացնում բարձրաստիճան զեկուցողի պատկերացումով:

Ադմինիստրացիան միանգամայն անճարացած էր: Ամեն մի վոստիկանական ծառայող, ամեն մի պաշտոնյա մտածում էր միայն իր փրկության մասին: Մինչև իսկ նրանցից ամենաանվախը՝ պրիստավ Լ. Մախարաձեն թռավ Ռաճա-Լեչխումից, որտեղ նա շարժման ըսկզբին կռվում էր մեր դեմ, ու Կ. Դաթեշիձեյի միջոցով բանակցություններ սկսեց Կոմիտեյի հետ զինադադարի մասին: Նա հայտնեց Կոմիտեյին, որ պատրաստ է կատարել Կոմիտեյի բոլոր հանձնարարությունները, յեթե միայն Կոմիտեն «ամնիստիա» կտա իրան (կների):

Կոմիտեն խորհրդակցություն ունեցավ պրիստավական աղերսի մասին և հայտնեց աղերսարկու Լ. Մախարաձեյին հետևյալը՝

Կազմակերպության անդամները ձեռ չեն տալ նրան, յեթե նա կհաղորդի՝

I. Ինչ տեղեկություններ ունի վոստիկանությունը մեր ընկերների մասին:

II. Յեթե նա սիստեմատիկաբար տեղեկություններ կտա կառավարության գործողությունների մասին:

III. Յեթե կհանձնի Կոմիտեյի տնօրինությանը լրտեսների ցուցակը:

Պրիստավը կարծես թե համաձայնեց իրեն առաջադրված պահանջներին և ուղարկեց մի քանի անոնիմ ամբաստանություններ: Դրանցից մեկի մեջ մեզ ցույց էր տրված, որ Ջինորիայի սպանությունը կատարվել է գիմնազիայից արտաքսված Սերյոժա Քավթարաձեյի և բանկի ծառայող «Բարոն»-ի ձեռքով:

Դրանով էլ վերջացան մեր ու Մախարաձեյի միջև սկսված կեղծ- դաշնակցային փոխհարաբերությունները: Նա մնաց մեր վոխերիմ թշնամին: Հիշում եմ, մի անգամ վազելով յեկավ ինձ մոտ իմ տերորիստ ընկերներիցս մեկը, որ մի ամբողջ շաբաթ հետևել էր Մախարաձեյին ու հայտնեց թե՝

«Պրիստավ Մախարաձեն աղջկա հետ զբոսնում է բուլվարում: Յեթե դուք թույլ չտաք ինձ հենց այժմ սպանել նրան, յես չեմ հավատում, թե այլևս այսպիսի հաջող մոմենտ պատահի»:

Կոմիտեյի անունից յես կատեգորիկ կերպով արգելեցի նրան կրակել Մախարաձեյի վրա, այնպիսի պայմաններում, յերբ կարող էր տուժել և նրա անմեղ աղջիկն ու կողմնակի մարդիկ: Սակայն ռեակցիայի տարիներում ինքը Մախարաձեն, իհարկե, չէր խնայում վոչ-վոքի ու ջախջախելով Շորապանի գավառի միանգամայն անմեղ բնակչությանը, հանգիստ չէր թողնում նույնիսկ յերեխաներին ու կանանց:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Ընկ. Գիորգի Թելիայի ազատվելը:
2. Քութայիսի նահանգական կոնֆերենցիան:
3. Դիսկուսիայի բորբոքումը բայլշևիկների ու մենշևիկների միջև:
4. Ընկ. Ս. Ծուլուկիձեն:
5. Պրովոկատոր զինվորը:
6. Ընկ. Կամոն:

Բանտում ձերբակալված ընկերների հետ յես եյի կապ պահպանում: Գործն այնքան հիմնավոր էր դըրված, որ մենք կարողանում էինք գրեթե ամեն ինչ տալ մեր բանտարկված ընկերներին: Այդ բանը մենք կատարում էինք բանտի վերակացուներից մեկի կամ բուժակի միջոցով: Բուժակի այդ ծառայությունը, ինարկե, վարձատրվում էր մեր կողմից: Նա տանում էր բանտարկյալներին՝ նամակներ, գրականություն, կեղծ անձնագրեր, փող և առհասարակ ինչ որ պահանջվում էր, իսկ բանտից բերում էր նամակներ:

Մեր ընկերներից մեկը, տաղանդավոր բանվոր Գ. Թելիան, մի անգամ մեզ հաղորդեց, որ շատ հեշտ կերպով իրեն կարելի յե ազատել այսպես կոչված «փոքր» բանտից: Գիշերը յես ու Ս. Քավթարաձեն մի ուրիշ ընկերոջ հետ քայլերս ուղղեցինք դեպի բանտի դուռը: Դռնապանը մեռելի պես քնած էր: Մենք անցանք նրա վրայով (լոք տվինք) ու մի վայրկյան հետո սեղմեցինք ընկ. Թելիայի ձեռը: Նա հենց նոր էր սավանների միջոցով իջել իր խցից, որ գտնվում էր վերին հարկում: Մի յերկու րոպեից մեր ընկերն արդեն ազատ էր, իսկ դռնապանը դեռ խորը քնած էր:

1905 թվի ամառը Քութայիսում, Գվետաձեյի լեռան վրայի տանը տեղի ունեցավ կուսակցական համագումար: Որակարգի խնդիրներում կային յերկու հիմնական հարցեր՝ 1) մեր վերաբերմունքը գեմսկի

կամպանիային և 2) կուլտուրական ավտոնոմիայի մասին։

Կազմակերպության հիմնվելու օրից յես ընտրվել եյի գանձապահ ու անողոք խստությամբ անց եյի կացնում Կոմիտեյի դիրեկտիվը՝ ծախսերն ըստ կարելվույն խնայողությամբ կատարելու մասին։ Այս հողի վրա յերբեմն յես շատ տարօրինակ խոսակցություններ եյի ունենում ընկերներիս հետ, վորոնք զարմանում եյին իմ մանրակրկիտության վրա, յերբ սկսում եյի մինչեվ վերջին կոպեկը մանրամասնորեն հաշվել յերկաթուղու տոմսի արժեքը։

Համեմատաբար ավելի հիվանդոտ բծախնդրությամբ եր վերաբերվում կուսակցական փողերի խնայողությանը մեր լավագույն ընկերներից Սաշա Ծուլուկիձեն, վորի հիշատակը բնավ չի ջնջվելու մեր սրտերից։

Հիշում եմ. Սաշան ծանր հիվանդ, նոր եր վերադարձել Ճիաթուրայի դիսկուսիայից։ Յես գնացի նրան տեսնելու։ Ինձ տեսնելուն պես նա իսկույն առաջարկեց ինձ հաշիվ տեսնել ու անմիջապես վերադարձրեց ճանապարհածախսից ավելացած 1 ռուբլի 35 կոպեկը։

Սաշան կուսակցության մարմնացած խիղճն եր։ Բյուրեղի պես մաքուր և՛ քչի և՛ շատի մեջ, նա ինքն իրեն ամբողջապես նվիրաբերեց կուսակցությանը, նրա աշխատանքներին, նրա հաղթանակի նախապատրաստությանը։

Ֆրակցիոն վիճաբանությունները բորբոքված եյին խիստ։ Ընկ. Կոբան (Ստալինն) ու Սաշան մեր ծանր հրետանին եյին։ Մենշեվիկները զինակոչ արին իրենց բոլոր ուժերն ու Ճիաթուրայում Ն. Խոմերիկու ղեկավարությամբ հարձակման անցան։ Սաշան անմիջապես

ուղեվորվեց այնտեղ։ Վիճաբանությունները շարունակվում եյին անընդհատ օր ու գիշեր ու տեվեցին մի քանի օր։ Սաշան, վորի թոքերի հիվանդությունն արդեն ծանր բնույթ եր ստացել, ստիպված եր շնչել Ճիաթուրայի դարչնի օդը։ Սակայն Ճիաթուրայի օդից ել ծանր ու անտանելի յեր Խունխուղի վարմունքը, վոր թույլ եր տալիս իրեն ամեն տեսակ և՛ թույլատրելի, և՛ անթույլատրելի միջոցներ, և՛ դեմագոգիա, և՛ անձնական վիրավորանքներ։

Սաշան վերադարձավ Քութայիս միանգամայն հիվանդ ու ջարդված։ Նա դեռ չեր կարողացել գեթ մի փոքր կազդուրվել, յերբ լուր ստացվեց Խոնիի ընկերներից, թե այնտեղ ել ժողովներ են նշանակված, ուր սպասվում են տաք վիճաբանություններ, ուստի առանձնապես ցանկալի յե Սաշայի ներկայությունը։ Դա նրա վերջին յելույթն եր։ Խոնիի վիճաբանություններից հետո նա վերջնականապես անկողին ընկավ ու այլեվս վեր չկացավ։

Վրաստանի աշխատավորությունը ընկեր Սաշային՝ թե մասնակցողների բազմությամբ, թե թաղման բարձր տրամադրությամբ մի չտեսնված թաղում կազմակերպեց։

Բազմաթիվ պսակների մեջ կորած դագաղին Քութայիսից մինչև Խոնի ուղեկցում եր հեղափոխականորեն տրամադրված բազմահազար ամբոխը։

իմ հանձնարարությամբ մի վրացի ուսանող Վիեննայում հինգ հազար բացիկներ պատվիրեց ընկ. Ս. Ծուլուկիձեյի պատկերով։ Այդ պատկերներն արագ տարածվեցին վողջ Վրաստանում ու մուտք գործեցին ամենախուլ անկյուններն անգամ։

Քութայիսի նահանգական կոմիտեն, վոր ղեկավա-

րում եր այդքան մեծ ու պատասխանատու աշխատանք, կարիք եր զգում անլեգալ գրականության մի մեծ պահեստի:

Այդպիսի մի պահեստ յես շինեցի Կոլոշաշվիլու Լեմոնադի գործարանում: Վորքան ել տարորինակ ե այն ժամանակների համար, այնուամենայնիվ վոստիկանությունը չկարողացավ հայտաբերել այդ պահեստը: Գործարանում իբրև լիմոնադ ծախողներ աշխատում եյին մեր ընկերներից յերկուսը՝ Ցեր. Լոմթաթիձեն և Գ. Ժվանիան, վորոնք և կառավարում եյին պահեստը: Ծայրագույն գաղտնապահության համար, նրանց արգելված եր մասնակցել կուսակցական վորևե այլ աշխատանքի: Կազմակերպության կողմից պահեստի հետ կապ պահպանում եյի միայն յես:

Պահեստին խստապես արգելված եր ինչ գրականություն ել լինի չտալ բնավ ձեռքե-ձեռք: Արտասահմանյան կուսակցական անլեգալ գրականությունը յես ըստանում եյի վաճառատների ու հիմնարկությունների հասցեյով: Այդ անլեգալ գրականությունն արտասահմանում փաթաթում եյին հաստ, կլոր կարտոնի մեջ: Աչք խաբելու համար նրանց մեջ լինում եյին յերբեմն նկարներ կամ գեղարվեստական վորևե հրատարակություն: Այդ կերպ մենք ստանում եյինք լրագրեր և մինչև անգամ գրքեր: Արտասահմանից ստացված գրականությունն յես անմիջապես տանում եյի պահեստ: Այնտեղ ջոկջոկվում եր, դասավորվում ու մասնատրվում առանձին շրջանների վրա: Այնուհետև յես տանում եյի ինձ մոտ և միայն այստեղից արդեն տրվում եր առանձին պրոպագանդիստների ու ագիտատորների ձեռը, շրջաններում

տարածելու համար: Մենք ունեյինք և տրանսպորտի հատուկ մասնագետ—դա ընկեր Ցե. Գոլդեճկորին եր:

Վորպեսզի հաճախ պահեստ գնալ-գալով ուշադրություն չգրավենք, յես ինձ մոտ բնակարանումս պահում եյի վորոշ քանակությամբ լրագրեր, թերթեր ու գրքեր ինչպես Կոմիտեյի անդամների, այնպես ել պրոպագանդիստների համար: Ինձ մոտ եյին պահվում նաև նամակներն ու փաստաթղթերը: Վորպեսզի ինձ մոտ— բնակարանումս կարողանամ թաքցնել այս բոլորը, յես հարմարեցրել եյի մի շատ գեղեցիկ ընկուզենուց շինած կլոր սեղանի մեջ: Նա լիքը լցված եր գրականությամբ, բայց գաղտնի անցքերն այնպես հմուտ կերպով ծածկված եյին, վոր հաճախ ինձ մոտ յեկող ժանդարմների վոհմակը վոչ մի անգամ չկարողացավ հայտաբերել նրա գաղտնիքը:

Վերևում մենք ասացինք, վոր պահեստում աշխատող ընկերներին խստապես պատվիրված եր՝ վոչ-վոքի գրականություն չտալ անմիջապես պահեստից: Սակայն դեպք յեղավ, վոր նրանք չպահեցին այդ պայմանը: Նրանց մոտ ե գալիս գորեցի հայերից ինչ-վոր մի զինվոր ու պարբերաբար վերցնում գրականություն: Հետագայում յես ծանոթացա նրա հետ: Նա իրեն անվանում եր Կալանդաձե, բայց իսկական անունը մինչև վերջն ել անհայտ մնաց:

Թեպետ և զինվորը գլխի չեր ընկել, վոր անլեգալ գրականության պահեստի յե հանդիպել, բայց յերբ լսեցի յես նրա պահեստ հաճախելու մասին, խիստ վրդովվեցի ու զայրացա ընկերներիս թեթևամտության վրա ու վճռեցի մի կերպ ուղղել սխալը: Հենց այդ որերն ել յես ծանոթացա զինվորի հետ: Ծանոթանալով յես հայտնեցի նրան, վոր այն գրականությունը, վոր

նա սատանայից է յեղել ընկերներից մինչև ինձ հետ ծանոթանալը, հատկապես յես էյի ուղարկում։ Վորպեսզի նրա ուշադրությունը հեռացնեմ պահեստից, հենց այդտեղ էլ հանեցի գրպանիցս անլեգալ թարմ գրականություն ու տվի իրան։ Գրեթե յերկու շաբաթ շարունակ պարբերաբար յես հանդիպում էյի նրան ու զրուցում քաղաքական խնդիրների շուրջը։ Իհարկե, յես չգիտեյի ում հետ գործ ունեմ։ Սակայն ուրիշ յելք չկար։ Կամ նա պրովոկատոր էր, վորի ուշադրությունը իմ զրույցներս կհեռացնեյին պահեստից, կամ նա կարող էր դառնալ մեզնից, այն ժամանակ պետք էր անդադար ու յեռանդով աշխատել նրա մտավոր զարգացման վրա։ Նա շատ էր շտապեցնում ինձ խմբեր կազմակերպել զինվորների մեջ ու հարձակում գործել զինապահեստի վրա զենք ձեռք բերելու համար։ («Հետագայում մենք հիրավի այդպիսի մի ձեռնարկություն կազմակերպեցինք, թեև ապարդյուն, մի այլ զինվորի աջակցությամբ, վոր յերևի նույնպես մի պրովոկատոր էր)։ Նրա փորձերը մեզ վտանգավոր ավանտյուրայի մեջ գցելու, իմ մեջ կասկած ծնեցրին։ Ցես սկըսեցի խուսափել նրան հանդիպելուց։ Մի հրաշալի օր էլ նա մի ընկերոջ միջոցով պահանջում է, վոր անպայման յես տեսնեմ իրան ու տանեմ գրականություն։ Ընդ սմին նա սպառնում է ինձ մեծ անախորժություններ պատճառել, յեթե չկատարեմ նրա պահանջը։ Ցես վճռեցի գնալ, բայց առանց գրականության։ Ցես իջա պայմանավորված տեղը։ Դա Կոկոչաշվիլու լիմոնադի գործարանն էր։ Սեղանի մոտ նստած լիմոնադ էր խըմում յեվրոպական տարազով մի մարդ։ Նա արդեն պատվիրել էր յերկու շիշ։ Ինձ տեսնելուն պես նա պահանջեց յերրորդ շիշը։

Ըստ յերեվույթին նա անհամբեր էր համարում անգործ նստելը, սակայն Լիմոնադային կոնսպիրացիան չօգնեց նրան։ Հանձին նրա յես իսկույն ճանաչեցի շորերը փոխած ժանդարմական հայտնի հեծյալ վախմիստրը Նոսկովին։ Աչքի կուրացնելու համար յես էլ պահանջեցի մի շիշ զելտերյան ջուր, կանգնած քաշեցի գլխիս միանգամից ու դուրս փախա ածխահատից բռնըվածի պես։ Լիմոնադի բուդկայից վո՛չ հեռու, լապտերի սյունի տակ յես տեսա թաք կացած զինվորին։ Ցես ուղղվեցի դեպի հակառակ կողմը։ Տեսնեմ հենց դեմից գալիս է ժանդարմների մի վաշտ։ Ցես իսկույն ծռվեցի մյուս փողոցն, այնպես վոր ժանդարմները չկարողացան ինձ նկատել անգամ։ Այդպիսով յես ազատվեցի թակարդից։ Ազատվեց և պահեստը, ըստ վորում իմ ջանքերս, խոսակցությամբ ու ձեռքե-ձեռք գրականություն տալով պահեստի հետքը կորցնել, —ինչպես յերեվում էր, հաջող հետեվանքի էյին հասել։

1906 թվին, յերբ յես բանտարկված էյի ու յերես առ յերես կանգնեցրին ինձ այն զինվորի հետ, յես կտրականապես ժխտեցի նրա բոլոր մեղադրանքներն, ընդսմին առարկելով, վոր, յեթե նույնիսկ ճիշտ լինեն այդ զինվորի ցուցումներն իմ վերաբերմամբ, հոկտեմբերի 17-ի հրովարտակի համաձայն յես յենթակա չեմ ձերբակալման, ըստ վորում այդպիսի արարքները հրովարտակով ներված են արդեն։

Միակ ընկերը, վորին իբրև բացառություն հայտնի էր մեր գաղտնի պահեստի տեղը —դա ընկեր Կամոն էր, վոր այդ ժամանակ աշխատում էր Կովկասյան Միացյալ Կոմիտեյում գրականության տեղափոխությամբ։

Անհրաժեշտ է մանրամասնորեն կանգ առնել այս հազվագյուտ հեղափոխականի մասին։

Ընկեր Կամոն — նույնը և Սիմեոն Արշակով Տեր-Պետրոսյանց, ծնվել է 1882 թվին։ Ծագումով նա հոգեվոր ընտանիքից էր, կրթություն ստացել էր Գորու քաղաքային դպրոցում ու շատ վաղ հարել հեղափոխական շարժմանը։ Առաջին անգամ ձերբակալվել է 1903 թվին, Բաթումում, թռուցիկներ պահելու համար։

Ընկեր Կամոյի գործունեությունն այսպես է բնորոշված ժանդարմական պաշտոնական ժողովածուի մեջ.

«1903 թվին Քութայիսի նահանգական ժանդարմական վարչության կողմից յենթարկվում է հարցաքննության իբրև մեղադրյալ թռուցիկներ պահելու գործում, որի առթիվ բանտարկված է յեղել Բաթումի բանտում և որտեղից փախչելով 1904 թվին, մուծվել է Ոստիկանական Դեպարտամենտի 1905 թ. նոյեմբերի 1-ի թվակիր ընդ № 1000 հետապնդման շրջաբերականի մեջ։ 1907 թվի սեպտեմբերին Պետրոսյանցը ավստրիհպատակ Դիմիտրի Միրսկու անվան անձնագրով Թիֆլիսից գնում է Բեռլին։ Պետրոսյանցը, որ մասնակցել է տասնումեկ տպարանների կազմակերպմանը, ռումբերի մի քանի լաբորատորիաներ հիմնելու ու զենքերի մասսայական տեղափոխության մեջ, հանդիսանում է ակտիվ հեղափոխական-տեռորիստ։ Պետրոսյանի աջ ձեռի թաթը լցված էր պայթած հրապատճի (капсюль) կըտորտանքով, յերբ Թիֆլիսում ռումբ էր պատրաստելիս յեղել։ Բացի այդ վնասված էր նրա և աջ աչքը։

Այնուհետև Պետրոսյանցը մասնակից է յեղել մի ամբողջ շարք մանր ու խոշոր էքսպրոպրիացիաների, ի թիվս որոց 1907 թվի հունիսին Թիֆլիսում շատ մեծ դեր է խաղացել յերկու հարյուր հիսուն հազար ռուբլու

էքսպրոպրիացիայի ժամանակ ու այնուհետև մասնակցել է այդ հափշտակված փողերով զենքի գնում կազմակերպող հանձնաժողովին։ Նույն թվի հուլիս և օգոստոս ամիսներին նա ապրում էր Լենինի (Ուլյանովի) մոտ Ֆինլանդիայում, իսկ սեպտեմբերին Լյեժում հանդիպում է իր մոտիկ աշխատակից Վոլոխին, որը հետո նրա համար կազմակերպեց զենքեր գնելու գործը, որ ուղարկվելու էին Ռուսաստան։

Նոյեմբերին Պետրոսյանը ձերբակալվում է Բեռլինում, ընդ որում խուզարկության ժամանակ նրա մոտ հայտնաբերվում են մեծ քանակությամբ պայթուցիկ նյութեր։ Այս գործով Պետրոսյանը բանտարկված մնաց Բեռլինում մինչև 1909 թվի վերջը։

Պետրոսյանի հատկանիշները՝ միջին հասակ, մազերը թուխ գույնի, կարճ խուզած, փոքրիկ, խուզած բեղեր, լայն, դուրս ցցված այտոսկրներ, մեծ քիթ, խոշոր ու թուխ աչքեր, աջը՝ սպիտակ բիբով, հագընվում է լավ։

Ընկեր Կամոն 1907 թվին Յերևանյան հրապարակում կատարված հռչակավոր էքսպրոպրիացիայի կազմակերպողն էր, յերբ հափշտակվեց 250.000 ռուբլի։

Յերևանյան հրապարակի այդ էքսպրոպրիացիան կատարվեց հետևյալ հանգամանքներում. 1907 թվի հունիսի 23-ին պետական բանկի գանձապահ Կուրդյումովն ու հաշվապահ Գոլովնյան առավոտյան ժամի 10-ին փոստից ստանալով յերկու հարյուր հիսուն հազար ռուբլի, հինգ կազակների ու յերկու պահակների հետ յերկու կառքով վերադառնում էին բանկ։ Յերբ կառքը անցնում էր առևտրական բանկի և Ռոտինովի ու Գաբրիելովի վաճառատների մոտով, հանկարծ, ձախ կողմից միանգա-

մայն անսպասելի կերպով ռումբեր են նետում առաջին կառքի վրա։ Ռումբերը պայթում են։

Ամբողջ հրապարակը կորչում է ծխի մեջ։ Մի րոպե չանցած աջից Ռոսինովի վաճառատան մոտ լսվում է յերկու պայթյուն, հետո դարձյալ յերկու պայթյուն։

Հրապարակի վրա սկսվում է մի աննկարագրելի խուճապ։ Բարեբախտաբար հրապարակում մարդ քիչ կար։ Ինչպես պարզվում է քննության ժամանակ, դեռ առավոտվանից ինչ-վոր մի անձնավորություն սպայի համազգեստով շրջելիս է յեղել հրապարակում ու համոզում հասարակության ցրվել։ Իրարանցման միջոցին չարագործներին հաջողվում է խլել փողերն ու անհետանալ։ Շուտով հրապարակին յեկան զորքերը, շղթայեցին ամբողջ շրջապատը, բայց հանցագործներին չկարողացան հայտնաբերել։

Հափշտակված փողերից հարյուր հազարից ավելին հինգ հարյուրանոց թղթադրամներ եյին Ա. Մ. սերիայի և համարակալված 62901-ից մինչև 63000 և 63701-ից մինչև 63800 համարներով։ Այդ համարներն ու սերիաներն անմիջապես հաղորդվեցին ամեն տեղ թե Ռուսաստանում և թե արտասահմանում։

1908 թվի հունվարին Մյունխենում բռնվում է մի ինչ-վոր Սառա Ռավիչ*), վոր աշխատելիս է լինում մանրացնել Ա. Մ. սերիայի և № 63791 մի հինգհարյուրանոց։

Մի շաբաթ չանցած Մյունխենում բռնվեցին Պարիզից յեկած ուսանողներ Տիգրան Բաղդասարյանցն ու

*) Խոշոր կուսակցական գործիչ, վորը Հոկտեմբերյան հեղափոխությունից մի քանի տարի առաջ ապրում եր Ժնևում, իբրև վտարանդի։

Միհրան Խոջամիրյանը, վորոնց մոտ գտնվեցին 17 հատ թղթադրամներ նույն սերիայի և 63771 ու 63784-63790 համարների։ Միաժամանակ Պարիզում բռնվեց Մեյեր Վոլոխը, վորի մոտ գտան 12 թղթադրամ։

Ս. Ռավիչը, Բաղդասարյանցը, Խոջամիրյանցն ու Վոլոխը յենթարկվեցին հարցաքննության իբրև մեղադրյալներ, բայց արտասահմանյան ոստիկանությունների կողմից չհանձնվեցին ռուսաց կառավարությանը։

1907 թվի նոյեմբերի 9-ին ընկ. Կամոն ձերբակալվում է Բեռլինում Դիմիտրի Միրսկու անձնագրով։ Յերբ պարզվում է, վոր Միրսկու անվան տակ ծածկվել է հայտնի տեռորիստ բոլշեվիկ Կամո-Տեր-Պետրոսյանը, ռուսաց կառավարությունը պահանջում է Գերմանիայից հանցավորին հանձնել իրեն։

Ահա այդ րոպեյից սկսվում են ամենավողբերգական օրերն ընկ. Կամոյի կյանքում։ Այլևս ուրիշ հնար չըլինելով ազատվելու ռուսաց կառավարության հանձնվելուց ու աշխատելով գոնե մի առ ժամանակ հետաձգել այդ դաժան որը, ընկեր Կամոն խելագար է ձևանում։

ԻՆՉՊԵՍ ԽԵԼԱԳԱՐ ՁԵՎԱՑԱՎ ԸՆԿ. ԿԱՄՈՆ *)

1907 թվի օգոստոսին ապահովագրական ընկերության գործակալ Միրսկու անձնագրով ընկ. Կամոն յեկավ Բեռլին ու բնակվեց Նյեղասսերշտրասսում։ Սեպտեմբերի 11-ին նա ձերբակալվեց գերմանական վոստիկանության կողմից։ Իր ձերբակալության պատճառն ընկ. Կամոն համարում եր պրովոկատոր Ժիտոմիրս-

*) Ստացված է Գերմանիայից ընկ. Կամոյի քրոջ միջոցով, նրա մահվանից հետո։

կուն, թեև կարելի յե յենթադրել, վոր ինչպես խու-
զարկության, նույնպես և ձերբակալման առիթ կարող եր ծառայած լինել ընկերոջ մեկի անզգուշությունը, վորի մոտ գտել եյին ընկ. Կամոյի հասցեն:

Խուզարկությունից ու պայուսակով լիքը պայթուցիկ նյութեր ու մի հանելուկային կազմության ու նըպատակի ծառայող մեքենա հայտաբերելուց հետո նըրան տանում են հետախուզական բաժինը:

Գերմաներեն նա չեր խոսում, միաժամանակ ձեվանում ե, թե լավ չի հասկանում և ռուսերեն, վորի շընորհիվ հարցաքննությունը շատ դժվարանում ե:

Գերմանական ս. դ. կուսակցության անդամների միջնորդությամբ բանտարկյալի հետ տեսակցելու թույլ տվին յերդվյալ հավատարմատար Օսկար Կոնին:

Շատ նշանակալից ե, վոր առաջին իսկ տեսակցությունից այդ յերկու մարդիկ, վոր զրկված եյին բառերով բացատրվելու հնարավորությունից, հրաշալի տպավորություն թողին մեկ-մեկու վրա: Ընկ. Կամոն զգաց լիակատար վստահություն դեպի Կոնը, իսկ Կոնը տեսավ իր առաջ մի արտասովոր, օրիգինալ ու գրավիչ անձնավորություն, վորի բախտի անորոշության մեջ նա յեռանդուն մասնակցություն ու հետաքրքրություն ցույց տվեց:

Շարժումների ու միմիկայի ոգնությամբ նրանք բավական լավ հասկանում եյին իրար, այնքան լավ, վոր գրեթե կարիք չեր լինում դիմել թարգմանի՝ յերդվյալ հավատարմատար Կլեվմենսկու աջակցությանը, վորը լավ գիտեր ռուսերեն, վորի միջնորդությունից սակայն, զգուշության համար, ըստ կարելվույն պետք եր խուսափել:

Հանելուկային մեքենան, վոր գտել եյին ընկ. Կամոյի մոտ, պարզեցին վոր իբր «դժոխային մեքենա» յե, վոր ֆրանսիական բանակի զինվորական դատավորներից մեկն եր, և ընկեր Կամոյին սկսեցին մեղադրել իբրև տերրորիստ-անարխիստի:

Գործը լուրջ ընթացք եր ստանում: Նա անցյալում յերկու անգամ փախել եր ու մահվան յերկու դատավճիռ կար նրա դեմ և այժմ յերկյուղ եր ծագում, վոր թերևս հանձնեն նրան ռուսաց կառավարության:

Դատից յերկու-յերեք շաբաթ առաջ, վոր տեղի ունեցավ նոյեմբերին, ընկ. Կամոն սկսեց կատաղի խելագար ձևանալ:

Ինչպես հայտնի յե, բոլոր հնարավոր ձևացումներից (սիմուլյացիա) հոգեկան հիվանդության ձևացումըն ամենադժվարինն ե: Հոգեկան հիվանդությունների բազմաթիվ ձևեր կան ու այդ ձևերից ամեն մինն իր հատուկ սիմպտոմներն ունի՝ հայտանիշներն ու այդ հայտանիշների հատուկ զուգադիպությունը:

Սակայն, այնուամենայնիվ սիմուլյանտները (ձևացողները) մեծ մասամբ կատաղի խելագար են ձևանում, վորն ուժերի ահագին լարումն ե պահանջում: Յեվ ահա այդ պատճառով էլ նրանք շուտով կատարելապես ուժասպառ են լինում ու ակամայից հարկադրվում թողնել իրենց ձևացումը:

Դատաստանական բժշկության պատմության մեջ հայտնի յեն դեպքեր, յերբ այս գործին կպել են բժըշկական հատուկ պատրաստությամբ մասնագետ մարդիկ, սակայն չնայելով դրան, այնուամենայնիվ չեն կարողացել դուրս հանել իրենց հանձն առած գործը: Սա, բացի բնական ուժերի սպառումից, բացատրվում ե նաև նրանով, վոր հոգեկան հիվանդների համար գոյություն ունեցող հիմնարկներում տիրող շրջապատը

սարսափելի ճնշող ազդեցություն է ունենում մարդու ներվային սիստեմի վրա։

Սիմուլյանտը հարկադրված է որ ու գիշեր անընդհատ հետեվել ինքն իրեն ու կատարել վորոշ ծրագիր։ Վերջիվերջո նա կորցնում է ինքնազսպումն, ինքն իրեն վրա հսկելու կարողությունն ու սովորաբար այս ամենը վերջանում է նրանով, վոր սիմուլյանտը կամ իսկապես խելագարվում է, կամ ինքնակամ հրաժարվում իր ուժերից վեր խաղից։ Ամենահամառ ու հաստատակամ սիմուլյանտներին անգամ սովորաբար չի հաջողվում յերկու ամսից ավել բժիշկների աչքը կապել։

Այս բոլորից հետո պարզ է, վոր յեթե մեկն ավելի թույլ ուժերով ընկներ ընկ. Կամոյի դրությունը, թերևս նրա վիճակը վորոշվեր մի յերկու ժամից, կամ ամենալավ դեպքում հոգեկան հիվանդանոց ընկնելուց մի յերկու որվանից հետո։ Մինչդեռ ընկ. Կամոն իր տեսակի հրաշք գործեց իր նմանը չտեսնված սիմուլյացիայով։ Յեվ այս զարմանալի փաստը կարող եր տեղի ունենալ միայն այն բացառիկ տվյալների շնորհիվ, վորոնց տիրապետում եր ընկ. Կամոն։ Նա քարի պես ամուր կազմվածք ուներ ու ֆիզիկական ուժի ահագին պաշար։ Նրա ներվային սիստեմն աչքի յեր ընկնում իր բացառիկ պնդությամբ ու դիմացկունությամբ։ Իսկ վոր գլխավորն է, այս բոլորի հետ յերկաթի կամք ուներ և անսահման ու անհաշտ ատելություն դեպի իր քաղաքական հակառակորդները, — մի ատելություն, վոր ներշնչում եր նրան հերոսական վճռականություն կատարելու, և՛ հնարավորը, և՛ անհնարինը համբերել ու անմռունչ տանել ինչ տեսակ էլ տանջանք լինի, միայն թե

թույլ չտալ, վոր իր հակառակորդները հաղթող հանդիսանան։

Իր «հիվանդության» հենց առաջին որը, յերբ ըսկըսեց «կատաղել», աղմկել, պատառոտել իր հագի հանդերձը, հատակին նետել կերակրով լի ամանները ու ծեծել վերակացուներին, — նրան տեղափոխեցին նըկուղի խցերից մեկը, ուր ջերմության աստիճանը զերոյից ցածր եր ու նրան մորից մերկ պահեցին այդտեղ ինը որ ու գիշեր։ Վորպեսզի չմրսի ու հիվանդանա, նա ստիպված եր ինն որ շարունակ գրեթե անընդհատ շարժման մեջ լինել՝ վազվզել ու թռչկոտել։ Ինն որից հետո նրան յետ բերին ու շուտով թույլ տվին նրա մոտ գալու Կոնին, վորին նա շատ ճարպիկորեն ու աննկատելի կերպով հասկացրեց, վոր ինքը միանգամայն առողջ է։

Դատի ժամանակ, վոր տեղի ունեցավ 1907 թվի նոյեմբերին, ընկ. Կամոն պահեց իրեն ինչպես կատաղի խելագար և դատարանը վորոշեց փոխադրել նրան բանտային հիվանդանոցի հոգեկան հիվանդների բաժինը փորձի յենթարկելու համար, միաժամանակ բավարարեց Ոսկար Կոնի միջնորդությունը, վորով նա խնդրում եր իրեն խնամակալ նշանակել հոգեպես հիվանդ բանտարկյալի վրա։

Վեց ամիս ընկ. Կամոյին փորձի էին յենթարկում։ Չորս ամիս շարունակ նա չմտավ անկողին, չպառկեց, այլ շարունակ, որ ու գիշեր անցկացրեց վոտի վրա, ու միայն հանգստանալու համար կանգնում եր յերբեմն յերեսն անկյունին դարձրած ու հերթով մեկ մի վոտը բարձրացնում, մեկ մյուսը։

Սրանից հետո նա հրաժարվեց սննդից, սակայն նըրան սկսեցին զոռով կերակրել զոնդի (ձողի) միջոցով

ու այդ ժամանակ ծնոտները զոռով բանալիս փշրեցին նրա մի քանի ատամները:

Ընկ. Կամոն հետագայում ասում եր, վոր այդ «կաթնային ռեժիմը» (նրան կաթով եյին կերակրում) նրա համար չա՛տ ոգտակար եր:

Կարծեցյալ անմտություն արտահայտելու համար նրա հնարագիտությունը վերջ ու սահման չուներ: Այսպես մի անգամ նա պոկում եր իր մազերի կեսն ու փնջերով համաչափ դասավորում վերմակի վրա: Յերբ բժիշկն ու վերակացուն տեսան այս պատկերը, նրանք ափ ի բերան մնացին ու սարսափած կանչեցին՝ «շրեկլիխ» (սարսափելի յե); Մի անգամ ել նա կախվեց և կախվեց իսկապես, հաշվի առնելով ադմինիստրացիայի աչալրջությունը: Յեվ նա չսխալվեց իր հաշվի մեջ, նրան իր ժամանակին հանեցին ողակից: Մի ուրիշ անգամ նա իրեն համար բերված սուպի մեջ ինչ-վոր մի փոքրիկ վոսկր գտավ: Այդ վոսկրը նա սրեց ու գիշերով կտրեց ձախ ձեռքի արյունատար անոթները: Յերբ վրա հասած բժիշկները դադարեցրին արյունհոսությունից ու չափազանց արյունհոսությունից արդեն գրեթե մեռնող հիվանդին ուշքի բերին, նա տեսավ, վոր արյունի մեջ կորել եր վոչ միայն անկողինն ու մահճակալը, այլև սենյակի վողջ հատակը:

Անշուշտ բժիշկները յերկար ժամանակ յենթադրում եյին, թե գործ ունեն սիմուլյանտի հետ: Այդ մասին վկայում ե փորձի այն ահագին ժամանակամիջոցը, վոր տևեց վեց ամիս չարունակ, յերբ փորձի յենթարկվողը համբերությամբ տանելով ուրիշների ու իր պատճառած սոսկալի տանջանքները, հակառակ յեզրակացության բերեց բոլոր բժիշկներին.

Վերջիվերջո բժիշկները նրան հիվանդ ճանաչեցին

և 1908 թվի մայիսին փոխադրեցին հիվանդանոց, ուր նա մնաց մինչև 1909 թվի մարտ ամիսը:

Այդ հիմնարկում անցկացրած որերից շատ ծանր հիշողություններ ուներ ընկ. Կամոն: Այդ ժամանակվա նրա կյանքի միակ լուսավոր վայրկյանները Կոնի այցելություններն եյին, վոր տեղի եյին ունենում շաբաթը մեկ կամ յերկու անգամ: Սակայն իր սովորական հեգնանքն ու աշխույժ տրամադրությունն այդտեղ ել չկորցրեց ընկ. Կամոն:

Փոխադրվելով «Բուխ», նա տեղավորվեց մի սենյակում, ուր կային ինն հոգի կատաղի խելագարներ: Պետք ե յենթադրել, վոր հիվանդների վերահսկողությունն այդտեղ շատ ել լավ դրության չեր, ըստ վորում նրանք հաճախ խեղդոտում, ծեծկվում, ճանկռոտում-կծոտում եյին իրար: Այսքան հաճելի, բայց վոչ անվտանգ ընկերության մեջ նա նստեց մի քանի որ միայն, վորից հետո նրան տեղափոխեցին անհամեմատ ավելի հանգիստ մի բաժանմունք: Սակայն յերկարատև մնալն այս բաժանմունքում, մի խումբ մարդկանց մեջ, վոր կորցրել են առողջ միտքը, յերբեմն խղճալի, մերթ ծիծաղելի, հաճախ սոսկալի ու միշտ պատրաստ թույլ տալու ինքն իրենց վորևե անսպասելի ու միանգամայն անախորժ վարմունք,— այո՛, այսպիսի մարդկանց մեջ ապրելը չափազանց ծանր փորձանք եր: Փախչելու վո՛չ մի հնարավորություն չկար: Ընկ. Կամոն վորքան ել մտածում եր ու միտք անում, վորքան ել Կոնը տքնում եր ու աշխատում ոգնել նրան փախուստը կազմակերպելու, վերջիվերջո յերկուսն ել համոզվում եյին, վոր վոչինչ չի կարելի անել այդտեղ: Այն ժամանակ Կոնն սկսեց աշխատել, վորպեսզի թույլտվություն բա-

տանել նրան տեղափոխելու մի ուրիշ հիվանդանոց, վորտեղից հեշտ լիներ փախչելը։ Սակայն նրա միջնորդությունը մերժեցին։

«Բուխ»-ում յեղած միջոցին ընկ. Կամոն չարաճճի ուշի-ուշով դիտում ու ուսումնասիրում է իրեն շրջապատող հիվանդներին։ Ի միջի այլոց, նրանց մեջ կար մի բժիշկ-մորֆինիստ, վորին տեղավորել եյին այստեղ իր հարազատ ծնողները, նրա համար, վոր նա մորֆինի վրա վատնել եր ինչպես իր սեփական, այնպես էլ ձեռն ընկած ուրիշի փողերը։ Այդ բժիշկը զրուցելով համեմատաբար թեթև հիվանդների հետ, պատմում եր նրանց հոգեկան հիվանդությունների զանազան ձեվերի, այդ հիվանդությունների բնորոշ սիմպտոմների ու նրանց առանձնահատկությունների մասին։ Ընկ. Կամոն ուշի-ուշով լսում է այս ամենն ու աշխատում յուրացնել բոլորը։

1909 թվի մարտին «Բուխ»-ի վարչությունը հայտնում է, վոր հոգեկան հիվանդ տերորիստ-անարխիստ Պետրոսյանի առողջական դրությունը միանգամայն գոհացուցիչ է, նա բոլորովին հանգիստ է, կատարելապես գիտակից ու մինչեվ իսկ կարողանում է ձեռքի աշխատանքներ կատարել ու աշխատել այգում։ Սրանից հետո ընկ. Կամոյին նորից տեղափոխեցին Այլա-Մաուբեստի բանտի հարցաքննական բաժանմունքը։ Այստեղ նա նորից հիվանդացավ, բայց այս անգամ արդեն վո՛չ տեղայնագործական յեղանակով, այլ գիտության բոլոր կանոնների համապատասխան ու ապրիլի 16-ին նորից փոխադրվեց «Բուխ»։

Ընկ. Կամոն այս անգամ ընդօրինակում եր մի հիվանդի, վոր տանջվում եր խրոնիկական սպիտողով ու կաշվի զգացողության քայքայումով։ Դեմքի արտահայտությունը, քայլվածքը, շարժումները, պատասցանքը—բոլոր բնութագծերն այդ հիվանդի չափազանց ճշտորեն ու հարազատ արտահայտում եր նա։

Բժիշկները չափազանց հետաքրքրվեցին այս յերեվույթով և վորպեսզի մերկացնեն ճարպիկ սիմուլյանտին, բարբարոս փորձերի ու տանջանքների յենթարկեցին նրան. քորոցով ծակում եյին յեղունկբերանները, կաս-կարմիր շիկացած յերկաթով այրում եյին մարմինը։ Շատ տարիներ անցած ընկ. Կամոյի ձախ ազդրի վրա դեռ մնում եր այդ այրվածքի խոր սպին։ Այս բոլոր տանջանքներն ընկ. Կամոն տարավ հերոսական համբերությամբ, ինչպես ասում են՝ առանց աչքը թարթելու։ «Սարսափելի յե, յերբ հիշում եմ զազրված մսի զարշելի ճենճերահոտը»—տարիներ անցած պատմում եր ընկ. Կամոն։ Ցեվ վորովհետեվ բժիշկներն ու պրոֆեսորները վո՛չ գիտական գրականության և վո՛չ էլ գործնականի մեջ եյին տեսել նման յերեվույթ, վոր մարդ նորմալ զգացողություն ունենա ու կարողանա այդպիսի համբերությամբ տանել տաժանելի տանջանքները, կամա-ակամա ստիպված եյին յեզրակացնել, վոր ընկ. Կամոն իսկապես հիվանդ է և հատկապես այն հիվանդությամբ, վորն ընդօրինակում եր ինքը։

Միջին դարերում կախարդության, չար ու բարի վոգիների հավատի դարում, կրակով փորձում եյին, կամ ուղղակի շիկացած յերկաթով տանջանքի յենթարկում նրանց, վորոնց տիրապետող յեկեղեցին կասկածում եր անհավատության, հերձվածի կամ այլ կրոնի հարելու մեջ։

Կրակի միջոցով այդպիսի փորձության յենթարկեցին ընկ. Կամոյին բուրժուական բժշկականության

ներկայացուցիչները, որոնց «կայսերական կուլտուրական Գերմանիայի» կառավարությունն, ի հարկե, ո՛չ առանց կայսերական Ռուսաստանի մասնակցության—հանձնարարել էր հետախուզել՝ ո՞վ է Կամոն. հեղափոխակա՞ն, որ ձևանում է հոգեկան հիվանդ, որպեսզի խաբի իր բանտապետներին ու վաղ թե ուշ փախչի կալանքից, թե՞ իսկապես հիվանդ մարդ է: Այն փորձումները, որոնց ենթարկվել է ընկ. Կամոն, մենք իմացանք ո՛չ այնքան նրա պատմածներից, որքան հենց իրենց բժիշկների արձանագրություններից, որոնց ձեռքն էր հանձնված այնքան երկար ժամանակ փորձի ենթարկվողը:

Այդ ծանր ժամանակների մասին մնացել են ո՛չ միայն ընկ. Կամոյի ու Կոնի հիշողություններն ու պատմածներն, այլ և մի շարք փաստաթղթեր, ինչպես «տառապանքի թերթեր», որ կազմվել են այդ հիվանդանոցներում, ուր ընկ. Կամոն եղել է ու ենթարկվել փորձերի:

Առաջ ենք բերում այստեղ առանձին հատվածներ այդ «թերթերից», որոնք հրաշալի կերպով բնորոշում են այն մթնոլորտը, որի մեջ ընկ. Կամոն ստիպված էր պայքարել իր կյանքը փրկելու համար:

«7-ին փետրվարի 1908 թ.—աղմկում է, կանգնած է անկյունում, չի պատասխանում»:

«10-ին փետրվարի—հանվել է, չի պատասխանում ո՛չ մի հարցի»:

«13-ին փետրվարի—հեվում է, տնքում, հրաժարվեց կերակուր ընդունելուց»:

«4-ին հունիսի—շրջում է, երգեր երգելով»:

«19-ին հունիսի—գանգատվում է գլխի ցավից ու ասում՝ ավելի լավ է մեռած լինել, չապրել»:

«23-ին հունիսի-պոկեց իր բեղերի մի մասը, կամենալով ընկերներին ուղարկել իբրև հիշատակ, հաճախ լալիս է, հայհոյում Բերլինի վոստիկանությանն և՛ ռուսերեն, և՛ գերմաներեն, ասում է, որ իրան տանջում են իսպանական ինկվիզիտորները»:

29-ին հունիսի—փոխադրվում է «Բուխ»: Կլինիկայի գլխավոր տեսուչն հետևյալ բժշկական նշումներն է արել:

Հարց.— Ազգանունդ ի՞նչ է:

Պատ.—Սիմյոն Արշակովիչ Տեր-Պետրոսով: «Տեր» ցուցադրում է նրա հոգևոր ծագումից լինելը:

Հարց.— Ի՞նչ դավանանքի յեք:

Պատ.—Յես հայ եմ, մեր կրոնը շատ քիչ է տարբերվում ուղղափառությունից:

Հարց.—Ձեր ընտանիքում յեղե՞լ են հոգեկան հիվանդության դեպքեր:

Պատ.—Յերբ դեռ մանուկ եյի, յես թունդ ազգասեր եյի: Մորաքույրներիցս մեկը շատ ջղային էր:

Հարց.—Ձեր մանկության միջոցին ինչո՞վ եք հիվանդացել:

Պատ.—Մանկությանս միջոցին յես ախորժակով քացախ եյի խմում ու խիստ հաղում եյի:

Հարց.—Սիբիրիայի ո՞ր գետն է, որ հոսում է դեպի հյուսիս:

Պատ.—Ամուր, Տոբոլսկ... յես մոռացել եմ բոլորը. առաջ աչքերս փակ կարող եյի ցույց տալ բոլորը քարտեզի վրա:

Հարց.—Քանի՞ նահանգ կա Ռուսաստանում:

Պատասխան չկա:

Հարց.—Թվեցեք Վոլգայի վրայի քաղաքները:

Պատ.—Հաշտարխան:

Հարց.—Ո՞րքան բնակչություն ունի Ռուսաստանը։

Պատ.— Երկու միլիոն (ծիծաղում է)։ Ես խաբում եմ. յերկու հարյուր միլիոն։

Հարց.—Ի՞նչ գիտեք դուք Եկատերինայի մասին։

Պատ.—Այդ հրեշի մասին յես չեմ կամենում խոսել։

Հարց.—Ձեզ ի՞նչ է հայտնի Պետրոս մեծ Թագավորի մասին։

Պատ.—Նա ռուսաց Թագավոր եր։

Հարց.—Առաջ գնո՞ւմ եյիք դուք յեկեղեցի։

ՊԱՏ.—Ո՛չ, յես իմ աստվածս ունեմ, յես չեմ ընդունում վոստիկանական աստծուն։ Ես հավատում եմ իսկական աստծուն։ Իմ կրոնս է հանդիսանում՝ սոցիալիստական պետությունը։ Ես հավատում եմ Կարլ Մարքսին, Ենգելսին ու Լասսալին»։

«Արմենդիրեկցիոնը (գերմաներեն այդպես եր կոչվում հիվանդանոցներին ու անկելանոցներին վերահսկող հաստատությունը) գերմանական վոստիկանության ճնշման տակ, սկսեց պնդել, թե՝ ընկ. Կամոյին պետք է հանձնել ռուսաց կառավարության։ «Արմենդիրեկցիոնն» իր պահանջը հիմնում եր այն բանի վրա, թե՝ ոտարահպատակ ինվալիդի պահպանության ծախքերը պարտավոր չե գերմանական ազգաբնակչությունն հոգալու։

Չնայած Ոսկար Կոնի ձեռք առած բոլոր միջոցներին՝ ազդել իշխանություն ունեցողների վրա, ընկեր Կամոյին այնուամենայնիվ 1909 թվի հոկտեմբերի 4-ին գերմանական սահմանի վրա հանձնեցին ռուսական ժանդարմներին, իսկ ժանդարմները փոխադրեցին նր-

րան Թիֆլիս, ուր տեղի պիտի ունենար զինվորական դատը, և մինչև այդ դատը բանտարկեցին նրան Մետեխի բերդում։

Վորպեսզի ընկեր Կամոյին ազատե ռուս կառավարության հալածանք ու դաժան դատից, Կոնը «Ֆորվերտս» Թերթում մի հոդված գրեց, վորն իսկույն բերնե բերան խլեցին գերմանական լիբերալ մամուլի բոլոր Թերթերը։ «Երվեն», «Յումանիտեյում» մի կրակոտ հոդվածով հարձակվեց գերմանական կառավարության վրա, թե՝ նախապես գիտենալով հանդերձ, հիվանդ մարդուն իբրև քաղաքական հանցավոր, հանձնել է բարբարոս Ռուսաստանին։

Մի խոսքով բարձրացած աղմուկը չա՛տ մեծ եր։ Այդպիսի հանգամանքներում սուս ու փուս խեղդել մի վտանգավոր հեղափոխականի, վորքան և ցանկալի լինեին, արդեն անհարմար եր։ Հարկադրվեցին այս գործով հետաքրքրվել և «աշխարհի ուժեղները»։ Ի հարկե վո՛չ «հոգեկան հիվանդ» հանցավորին ցավակցելուց, այլ Արեվմուտքում քաղաքական խոշոր «սկանդալից» խուսափելու համար։ Այդ յերկյուղն հետեվյալ կերպ է արտահայտված ներքին գործերի նախարար Պ. Ստոլիպինի նամակի մեջ, վոր ուղղված է Կովկասի փոխարքա գրաֆ Ի. Ի. Վարանցով—Դաշկովին.

Գաղտնի

Ներքին գործերի նախարար — Նորին Պայծառափայլություն Գրաֆ Ի. Ի Վարանցով-Դաշկովին

Վողորմած Տեր Գրաֆ Իլարիոն Իվանովիչ

Արտաքին գործերի Նախարարությունն իր սույն թվի ապրիլի 27-ի № 42 նամակով հաղորդում է ինձ,

վոր վերջին որերս գերմանական դեմոկրատական մամուլն առանձին յեռանդով քննության առարկա յե դարձրել ռուսահպատակ Արշակովի (նույն և Միրսկի յեվ Տեր-Պետրոսով) վիճակը, վոր Թիֆլիս քաղաքում դատի յե յենթարկվում 1907 թ. պետական դրամական տրանսպորտի վրա ավազակային հարձակում գործելու համար:

Ընդ սմին, «Ֆորվերտս», «Ֆրանկֆուրտեր Ցեյտունգ» արմատական թերթերը խիստ հարձակվում են գործում գերմանական վոստիկանության վրա, վորը Արշակով-Միրսկուն Բեռլինի քաղաքային հոգեվոր հիվանդների հիվանդանոցից դուրս գալուց հետո աքսորել է Ռուսաստան, ուր նա խսկույն ձերբակալվել է ռուսական իշխանության կողմից: Մամուլի հարձակումները գերմանական կառավարության վրա անշուշտ առավել ևս կսաստկանան, յեթե Միրսկին դատապարտվի մահապատժի, և ներքին գործերի նախարարությունը յերկյուղ է կրում, վոր այդ բանը կարող է աննպաստ ազդեցություն ունենալ ռուսական շահերի վրա, անարխիստներին յերկրից աքսորելու խնդրում:

Ոգտվում եմ հանգամանքից արտահայտելու Ձերդ պայծառափայլությանը իմ խորին հարգանաց հավաստիքն ու լիակատար անձնվիրությունս:

Պ. ՍՏԱԼԻՊԻՆ

«7» մայիսի 1910 թ.
№ 91104

Կոնի հատուկ հոգացողությամբ Թիֆլիս եյին ուղարկված ընկ. Կամոյի խրոնիկական հիվանդության վկայականները Բեռլինի լուսատուների ստորագրու-

թյամբ: Զինվորական դատարանի բժիշկ-եքսպերտները հարկադրված եյին հաշվի առնել Արեվմուտքի այս անունները, ինչպես Ստալիպինը հաշվի առավ լիբերալ մամուլի կարծիքը:

Զինվորական դատարանը ընկ. Կամոյին ճանաչեց անբուժելի հիվանդ ու նստացրեց Մետեխի բերդի հոգեկան հիվանդների բաժնում, վորտեղից, ինչպես հայտնի յե, 1911 թվին նա փախավ:

Այս շրջանի «տառապանքի թերթերը» տալիս են հետեվյալ հետաքրքիր պատկերը՝

«1910 թվի դեկտեմբ. 21-ին փորձվողին Մետեխի բանտից պահակների հսկողությամբ, վոտները շղթայած, վոտքի շղթաներով ու առանձին գոտիով անցկացրած ուսով, բերին բաժանմունք, ընդ վորում նրա ձեռին նստած եր մի սիրենոս (թռչնակ), վորին նա Պետկա յե կանչում և վորից վոչ մի կերպ չի ուզում բաժանվել:

Փորձվողը միջին հասակի յե, բավարար սննդված, դեմքի արտահայտությունն անմիտ ու անզգա, հարցերին տված պատասխանները ցրված ու անկապ, բացակայում է տեղն ու շինության նպատակը վորոշելու ընդունակությունը: Փորձվողին հատկացված է առանձին սենյակ, սիրենոսը խլված է նրանից»:

«22-ին դեկտեմբերի.—Փորձվողը հանդիստ է, խաղաղ, անզգա, արտաքին հետազննին դիտողությունը ցույց տվեց հետեվյալը՝ գանգի ձախ կողմում, ականջի խխունջից բարձր, գանգի լայնքի վրա ունի 2½ սանտիմետր յերկարությամբ մի շարժական սպի, իսկ գանգի մեջտեղը նույնպես մի սպի 3 սանտիմետր յերկարությամբ, շարժական ու առանց ցավերի: Ծոծրակի

վոսկրի վրա ունի հիվանդոտ մի կետ: Մոծրակի վոսկրի ներքին մասում 1 սանտ. յերկարությամբ մի սպի: Ճակատի աջ կողմը նույնպես մի սպի 2 սանտ. յերկարությամբ: Թեվերի ներսի կողմից մի քանի սպիներ, աջ ձեռքի վրա, դաստակից մի փոքր վեր հանդուցած և մի սպի: Ձախ ձեռքի վրա մի կարմրադույն սպի: Վերոգրյալ սպիների ծագման մասին, վոչինչ հայտնի չէ»:

«Հասակը 168 սանտիմետր (2 արշ. 5 վերշ.):

«Աջ աչքի յեղջերամաշկի ներքին ծայրին կա մի փոքրիկ սպի, ծիածանամաշկի վրա—ճեղքվածք, աչքի վիսպը խավար է ու խորշոմած: Աջ աչքով կարողանում է միայն լույսը ջոկել խավարից: Ձախ աչքի տեսողությունը պահպանված է, բիբի գործունեությունը աշխույժ է, տեսողության գործարանի հարմարումը նորմալ է:

«Անոթային համակարգության ու սրտի կողմից նկատվում է անոթների պատերի գալարումն ու կարծրացումն, վոր մակերեսային է և յենթարկվում է շոշափման: Սրտի հնչյունները մաքուր են, անաղմուկ, մի փոքր խլացած: Պուլսը արագացած է—մի րոպեյում 86-90 զարկ:

Ներվային համակարգություն.—Մկանների մեքենայական գրգռման սուր բարձրացում, դերմոգրաֆիզմի նշաններ, կաշվի զգայնության խիստ անկումն, այն աստիճանի, վոր տեղ-տեղ կորցրել է միանգամայն ցավ զգալու ընդունակությունը: Կաշվի և ջլային ռեֆլեքսների ուժեղացումն: Լեզվի և ձեռքերի դող: Ելեկտրոմկանային գրգռումը ուժեղ Փարադիկական հոսանքի հանդեպ թուլացած է: Մկանների ուժեղ կծկման

ժամանակ հիվանդը վոչ մի ցավ չի զգում և առհասարակ միանգամայն անտարբեր է իր վրա կատարվող փորձերին:

«24-ին դեկտեմբերի.—Փորձվողն ամբողջ օրը թափառում է խցում յերգելով, շվշվացնելով, զբաղվում է գիլզուց պապիրոսներ լցնելով, բացարձակապես վոչնչով չի հետաքրքրվում, ի միջի այլոց դիմեց օրդինատորին ու խնդրեց մի գիրք տալ իրեն, վոր գրված լինի պատերազմի մասին: Ձնայելով վոր գիրքը տրվեց, բայց բոլորովին չի կարդում: Պատմում է, վոր ինքը Թիֆլիսի շրջակայքում չորս միլիոն ունի, վոր թաղված է լեռներում, բայց չի կամենում վոչ-վոքի ցույց տալ տեղն այդ փողերի:

Ցերեկոներն յերկար չի քնում, վնթփնթում է. անհանգիստ կողքից-կողք է դառնում, ի միջի այլոց դժգոհում է, վոր իրենից խլել են սիրենոս Գետկային, խնդրում է վերադարձնել, վորպեսզի հետը խոսի մի և շատ կարեվոր գործի մասին»:

«Հունվարի 5.ին—Փորձվողն առավոտյան այցի ժամանակ հայտնեց բժշկին, թե իր խցից ներս են նայում ինչ-վոր յերիտասարդներ, տղամարդիկ ու կանայք, դադար չեն տալիս իրեն, խանգարելով գիշերվա հանգիստը և խնդրում է բժիշկներին միջոցներ ձեռք առնել, հակառակ դեպքում ինքն անձամբ հաշիվ կտեսնի նրանց հետ: Ցերեկը թափառում է խցում, շվշվացնում, տրամադրությունն ուրախ է, շատ ծխում է, միանգամայն անտարբեր է դեպ այն դրությունը, վոր ինքը գտնվում է հոգեկան հիվանդների հիվանդանոցում, վոր շղթավորներին շղթա յե խփած, դեռ ընդհակառակը, շղթավորները նրան զբաղեցնում են ու նա զրնգացնելով նվագակ-

ցում է ինքն իրեն, երբ երգում է։ Կերակուր ընդունեց։ Ամբողջ գիշերը չքնեց»։

«Հունիս 9-ին.— Փորձվողի տրամադրությունը բարձր է, աշխուժ է, երգում է, շվացնում ու հայտնում, թե՝ ինքը բարձր է երգում ու այդ երգեցողությամբ կանչում է իր թռչնիկներին, որոնց նա շա՜տ է սիրում և որոնք իրան շա՜տ լավ են հասկանում։ Մի փոքր լռում է, ապա նորից սկսում երգել, սենյակում ետ ու առաջ գնալ ու գալ։ Իսկ երեկոյան մտնում է անկողին, բայց ողջ գիշերը չի քնում, ըստ որում, ինչպես փորձվողն ինքն է ասում, զբաղված է մարտական ջոկատի նախահաշվով, այն ջոկատի, որը ինքը կազմակերպել ու դասավորել է Թիֆլիսի շրջակա անտառներում։ Գիրք ու լրագիր երբեք չի կարդում և առհասարակ ոչնչով չի հետաքրքրվում»։

«Հունիս 13-ին.—Տրամադրությունն ընկճված է, տեսքը վհատ, ժամանակ առ ժամանակ լացակումած դրության մեջ է ընկնում, ախ է քաշում, հոգոց հանում։ Հաճախ խոսք է բաց անում մահվան մասին։ «Իմ ջոկատներս ոչնչացված են այն անպիտանների ձեռքով, որ պահում են ինձ այստեղ։ Չարժե այլևս ապրել։ «Ես հարյուր տարուց ավել պիտի ապրեյի, բայց այժմ պատրաստ եմ մեռնելու»։

21/I.— Տրամադրությունը փոփոխական է. մերթ ուրախ, մերթ տխուր, ամբողջ օրն անց է կացնում խցում, երգում է, շվացնում, ինքն իրեն խոսում, գիրք չի ցնում, հացի փափուկ միջուկից ինչ-որ կենդանիներ է կաղապարում, երեկոյան վաղ պառկում է, բայց երկար ժամանակ չի քնում, փնթփնթում է ու ծխում»։

«Մարտի 2-ին.—Փորձվողն հանգիստ է, ուզում է չարունակ զրուցել, ասում է բժշկին, թե՝ մտադիր է տաս ուժանոց ավտոմոբիլով Սիբրի վրայով գալ Ամերիկա, որ Սիբիրի ու Ամերիկայի միջև մի գետ է հոսում, որ ծածկված է սառույցով։ Ընդ սմին զարմանք հայտնեց այն առթիվ, թե ի՞նչպես են իմացել իր անունը, որ այնքան բարձր արտասանեցին, որ ինքը լսեց խցի պատից. «Պարզ լսեցի կանացի ձայն, որ իմ անունս էր արտասանում»։

«Օգոստ. 15-ին—Փորձվողը (Հերթապահ վերակացու Գրիգորևի ասածի համաձայն) ժամի 4-ին ճաշից հետո, թեյի ժամանակ թույլտվություն խնդրեց արտաքնոց գնալու։ Հերթապահ ծառայող Ժդանովը բաց թողեց նրան խցից և ուղեկցելով մինչև արտաքնոց, ինքը վերադարձավ մի ուրիշ անհանգիստ հիվանդի խուց (Միրզոյանցի), որն այդ ժամանակ դուռն էր թակում։ Իսկ երբ Տեր-Պետրոսյանի համար թեյ տարան իր խուցը, նրան ո՛չ այնտեղ գտան, ո՛չ էլ արտաքնոցում։ Այդ ժամանակամիջոցում նա անհետացել էր բաժանմունքից»։

—

Մի անգամ ընկ. Կամոն, բեռնավորված անլեգալ գրականությամբ, յեկավ Քութայիս Գիգո Ծուլուկիձեյի*) տունը։ Նա ոչինչ չգիտեր անլեգալ գրականության պահեստի մասին ու յեկավ այնտեղ շատ օրիգինալ կերպով ծպտված կինտոյի հագուստով, ու ձեռին մի մեծ զամբյուղ, որի տակ գրականությունն էր

*) Հայրը մեր ընկեր Սաշա Ծուլուկիձեյի. որը Միացյալ Կոմիտեյի անդամ էր և գործուղված լինելով Քութայիս, ապրում էր իր հոր տանը։

դարսած, ինչ յերեսին ձվեր ու հնդուհավ։ Յերբ բակում հարցնում են, թե ի՞նչ է ուզում, նա պատասխանում՝ կնյազ Սաշայի համար «հնդուհավ եմ բերել ընծա»։

Կուսակցական հանձնարարություններով վորևէ տեղ ճանապարհվելիս նա ամեն անգամ փոխում եր հագուստն ու հայտնվում մերթ կինտոյի տարազով մեծ տաշտը գլխին (տակը դրականություն, վրան կեռաս), մերթ ուսանողի համազգեստով, չքեղ պայուսակը ձեռին։

Իր կյանքի վերջին օրերին նա ինձ հետ միասին ծառայում եր Վրաստանի Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատում, ուր նա վարում եր մաքսատան կառավարչի պաշտոն։

Մենք նպատակ դրինք արմատախիլ անել մաքսատան մեջ տեղի ունեցող զեղծումները։ Ընկ. Կամոն իրեն հատուկ յեռանդով ու վճռականությամբ նվիրվեց այդ գործին։ Յեվ, հիրավի, շուտով նրան հաջողվեց լիակատար կարգ ու կանոն հաստատել մաքսատան վարչության մեջ։

Այն ճակատագրական օրը նրա համար ընկ. Կամոն յերկար նստեց ինձ հետ իր առանձնասենյակում։ Մենք հիշեցինք անցյալը։ Տնտեսական ֆրոնտի աշխատանքը չեր գոհացնում նրան։ Նա ստեղծված եր հեղափոխական փոթորիկների համար։ Նա ուզում եր մասնակցել հեղափոխության նախապատրաստության «արևելյան կամ արևմտյան» վորևէ պետության մեջ։

«Այդ գործի համար եմ պահում յես ինձ,— ասում եր նա,— թեև իրավացիորեն յես դեռ հարյուր տարի յել պիտի ապրեմ ու պայքարեմ։ Ախր յես պահպանում

եմ ինձ. գինի չեմ խմում, անգամ գիշերներ չեմ անցկացնում։ Յես կատարելապես պահպանել եմ իմ ուժերս, իմ առողջությունս։ Ել ինչո՞ւ պիտի յես շա՛տ յերկար չապրե՞մ»։

Ո՞ւմ մտքից կանցներ, թե այդ մարդը, հեղափոխության խիզախ հերոսը, վոր դիմացել եր անհավատալի հալածանքների ու տանջանքների և այնուամենայնիվ պահպանել իր ուժերն ու առողջությունը, ինչ-վոր ճակատագրական պատահմունքի շնորհիվ մի քանի ժամ հետո պիտի ջախջախվի ավտոմոբիլի տակ Վերայի զառիվայրում։

Դա պատահեց 1922 թվի հուլիսի 14-ին։

Կամոն գնում եր վելոսիպեդով։ Հեռվից լսվում է մոտեցող ավտոմոբիլի ազդականչը, բայց, ինչպես հայտնի յե վերևում առաջ բերած «տառապանքի թերթերից», ընկ. Կամոն մի աչքով վատ եր տեսնում։ Այս հանգամանքը ճակատագրական դեր խաղաց։ Նա մի անհավատալի պտույտ գործեց ու խորտակվեց ամենաանմիտ մահով։

Ընկեր Կամոյի մասին շա՛տ են գրել ու դեռ շա՛տ պիտի գրեն։ Նա իրենից ներկայացնում եր մի հազվագյուտ օրինակ անսահման համարձակության ու հնարագիտության միացման։

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Գաղտնի տպարան Քութայիսում։

2. Կեղծ անձնագրերի կազմակերպություն։

3. Հանրապետություն 1905 թվին։

4. Ռինակցիայի աղջամուղջը։

5. Իմ ձերբակալությունս ու ազատությունս։

6. Բոլշևիկների ու մենշևիկների միացյալ համագումարը։

Ավելորդ չի լինի ավելի մանրամասն նկարագրել 1904–1906 թվին Քութայիսում գոյություն ունեցող գաղտնի տպարանի գործունեությունը: Հեղափոխության առաջին շրջանում նա շատ կարևոր դեր ե խաղացել Արևմտյան Վրաստանի հեղափոխական շարժման մեջ: Տպարանը կազմակերպված եր չափազանց գաղտնի կերպով: Նա տեղավորված եր քաղաքի ծայրամասում, Ստարոլազերնի փողոցի վրա, հողաչափ Վասո Գոգիլաձեյի տանը (վորն այն ժամանակ բոլշևիկ եր, իսկ ներկայիս պատասխանատու աշխատավոր ե Վրաստանի Հողժողկոմատում):

Տպարանի տեղը հայտնի յեր միայն 3–4 ընկերների: Դրանով ել բացատրվում ե այն հանգամանքը, վոր նա այդքան յերկար պահպանեց իր գոյությունը, վոր այնքան հաջողակեց ե մեր անլեգալ գործունեության շրջանում: Տպարանը կառավարում եյի յես ու նրա աշխատավորների հետ անմիջական կապ ունեյի միմիայն յես: Յես եյի կատարում վերջին սրբագրությունն ու յես ել փոխադրում պատրաստի գրականությունը՝ թերթիկներն ու բրոշյուրները գաղտնի պահեստը: Հիրավի, բացի ինձանից գաղտնի պահեստի տեղը գիտեր նաև մեր տպարանի գրաշարներից մեկը՝ ընկ. Վալիկո Լեժավան, բայց գաղտնապահության նկատառումով, նա շատ հազվադյուտ դեպքերումն եր միայն նյութեր տանում այնտեղ:

Վորովհետև գրականությունը վո՛չ մի կերպ չեր կարելի փոխադրել կառքով կամ մշակի միջոցով, ուստի հաճախ յես ստիպված եյի 2–3 վերստ տարածությունը մի քանի անգամ գնալ–գալ, ընդ վորում գրականությունը միշտ թաքցրած հագուստիս տակ։ Վողջ մարմինս յես պինդ փաթաթում եյի գրքույկներով ու թերթերով, վորից, ինհարկե, չափազանց շոգ եր լինում ինձ համար, բայց գործն այնքան կարևոր ու մեծ եր, վոր մեզանից վոչ վոքի մտքովն անգամ չեր անցկենում գանգատվել անհարմարություններից ու տանջանքներից։ Ընդհակառակն, մեզանից յուրաքանչյուրն աշխատում եր վորքան կարելի յե շատ պարտականություններ հանձն առնել։ Վորքան շատ եյինք աշխատում մենք, այնքան մեծ բավականություն և ուրախություն եր պատճառում մեզ այդ։ Յեվ մի՞թե մարդկային կյանքում կարող է լինել ավելի մեծ յերջանկություն, քան տեսնել իր աշխատանքի անմիջական արդյունքը, վորն այդպիսով իր պատմական արդարացումն է գտնում։

Այստեղ յես կբերեմ հենց իրա Վասո Գոգիլաձեյի պատմածը, թե ինչպես առաջ յեկավ մեր գաղտնի տպարանը։

1903 թվին,–պատմում է ընկ. Գոգիլաձեն,-յես վերադարձա Ժնեվից։ Այդ միջոցին ընկ. Միխա Ցխակայան հենց նոր եր վերադարձել Հարավային Ռուսաստանից ու ժամանակավորապես ապրում եր Քութայիսում։

Մի անգամ ընկ. Միխան ասաց, վոր հնարավոր է մի գաղտնի տպարան կազմել ու տեղավորել այն քաղաքի ծայրամասերում վորևէ տեղ։

Յեվ, վորովհետև յես հենց քաղաքի ծայրամասու-

մըն էլ ապրում եյի և ընդ սմին սեփական տանս մեջ, միանգամայն բնական է, վոր հատկապես յես պիտի ընդառաջ գնայի ընկ. Միխա Ցխակայայի առաջարկին։ Սակայն այդ ժամանակ մեզ չհաջողվեց իմ տունս ոգտագործել գաղտնի տպարանի համար։ Դրան արգելք հանդիսացավ այն հանգամանքը, վոր ժանդարմները Կիյեվում անլեգալ գրականություն եյին բռնել, վոր ուղարկված եր արտասահմանից իմ կնոջ հասցեյով։ Ժանդարմները չեյին մոռացել և ինձ. ընկ. Միխա Ցխակայայի հետ ունեցածս խոսակցությունից մի շաբաթ առաջ եր միայն, վոր ինձ մոտ շնորհ եյին բերել դատախազն ու պրիստավը։ Այդպիսով այն միջոցին, յերբ ընկ. Միխան իր առաջարկն արեց ու յես էլ իմ կողմից արձագանքեցի նրան, իմ տունս ու յես արդեն կասկածի տակ եյինք։

Անցավ մի տարի, վոստիկանությունը մեզ մոռացավ։ Ընկ. Բարոնը նորից առաջարկեց տպարանը փոխադրել քաղաքի ծայրամասերից մինն ու նորից խոսք բացվեց իմ տանս մասին։ Յես համաձայնեցի։ Սկսվեցին գաղտնի նախապատրաստություններ։ Ամենից մեծ զգուշություն պետք եր ձեռք առնել պառավ մորս վերաբերմամբ։ Նա կարող եր միանգամայն ակամայից մատնել մեզ–կամ վախենալով մեր գործունեյությունից, կամ չափազանց հոգատար լինելուց դեպի մեզ։

Վորոշվեց մորս վոչինչ չասել ընդհատակյա տպարանի մասին։ Յես նրան ասացի միայն, վոր ներքին՝ քրենկուղային հարկի սենյակներից մեկն ուզում եմ քրեհով տալ։ Հայտարարություն գրեցի սենյակս քրեհով տալու մասին ու հանձնեցի այն Մեսխեթի փողոցի մի ծանոթ մկիտանչու։ Հետևյալ որը մկիտան է գալիս

Բաքոնի ուղարկած ընկ. Վալիկո Լեժավան ու սկսում հարց ու փորձ անել քրեհով տրվող սենյակի մասին: Մկիտանչին մանրամասն պատմում է նրան ու ցույց տալիս, թե ինչպիսի ճանապարհով պետք է գալ մեր տունը:

Ընկ. Վալիկոն ամսական չորս ռուբլով քրեհեց մեր սենյակը, ինքն իրեն անվանելով Անդրիա Նեմսաձեն ու անմիջապես անցավ գործի: Սակայն շուտով յես համոզվեցի, վոր տաքարյուն Վալիկոյին պետք է չափազանց խիստ կերպով հսկել: Շատ հաճախ նա դուրս եր գալիս տպարանից ամբողջապես կորած տպարանական ներկի ու արճիճի փոշու մեջ: Յես կտրականապես պահանջ դրի, վորպեսզի Վալիկոն, աշխատանքը վերջացնելուց հետո, կանոնավոր լվացվի, մանավանդ քաղաք գնալուց առաջ: Այս կարգադրության իրագործման վրա հսկողությունը հանձնվեց կնոջս, վորը պետք է ասած հաջող կերպով կատարեց այդ հանձնարարությունը:

Աշխատանքի առաջին ամսին տպարանն իմ սենյակում եր գտնվում: Անհրաժեշտ եր շուտով տեղափոխել այն ավելի ծածուկ տեղ: Մենք յեռանդով կպանք գործի: Սենյակի արեւմտյան պատի մեջ հատուկ շինված գանջինա*) կար, վորպեսզի կարեւոր դեպքում օգտագործենք վորպես գաղտնի դուռ: Պատի հետեվը խուլ միջանցքն եր, հինգ արշին յերկարությամբ ու արշին ու կես լայնությամբ: Քանդեցինք գանջինայի յետեւի պատը, վոր կես աղյուսի հաստություն ուներ, ինչ վոր մի հյուսնի պատվիրեցինք մի պինդ փայտի շրջանակ ու ամրացրինք այն կողնու սյունին: Շրջանակը ծածկեցինք աղյուսով ու ցեմենտով, նրա վրա ամրացրինք յերկու զսպանակավոր փակիչներ և յերկու պողպատի սողնակներ, այնպես վոր դուռը քիպ փակվում եր ու գանջինայի մեջ յերեվում միայն սպիտակացրած պատը: Իսկ ի՞նչպես եր բացվում դուռը: Դրա համար սողնակներին կապած եր անգլիական լար, վորն անց եր կացրած փոքրիկ ճախարակների վրա, իսկ լարի ծայրերը թաքցրած եյին միջանցքի մյուս պատի վրա մի հոլի մեջ: Տնից դուրս գնալիս Վալիկոն վրա յեր քաշում գաղտնի դուռն, իսկ վորպեսզի բանար այն, նա պիտի մտներ նկուղը, մթության մեջ գտներ հոլը (խիստ արգելված եր նրան լուցկի գործածել ու դրան էլ նա շուտով ընտելացավ), այնտեղից հաներ լարի ծայրն ու պինդ քաշեր դեպի իրեն, այն ժամանակ միայն դուռը կբացվեր:

Պետք է ասած, վոր այդ չափազանց նեղ ու տոթ վորջում աշխատելը շատ դժվար եր: Դա իսկական տաժանակիր աշխատանք եր:

Մինչդեռ շարժումն օր-ավուր աճում եր ու տպարանից պահանջում ուժեղ արտադրանք: Հասարակ ձեռքի մեքենան չեր կարող հասցնել այդ արտադրանքը, նույնիսկ յեթե քսանչորս ժամյա բանվորական օր աշխատեր: Վորոշվեց «ամերիկանկա» դնել, վոր պետք եր բերել Թիֆլիսից: Սակայն դա շա՛տ դժվար ու վտանգավոր գործ եր: Ճիշտ այդպիսի գործերի համար կարծես դիտմամբ ստեղծված եր ընկ. Կամոն: Մի հրաշալի օր, իրեն հատուկ հնարագիտությամբ, Կամոն բերեց մեզ «ամերիկանկան», ճարպիկորեն խուսափելով իրեն

*) Պատրհան, պատի մեջ ներս ընկած պահարան։

ամեն քայլափոխում հետևող ժանդարմների ձերբակալությունից:

Բայց «ամերիկանկայի» համար հարկավոր էր և համապատասխան շենք:

Վորոշեցինք տանը կից շինել մի խոհանոց, տակն ընդարձակ նկուղ, միջանցքի կողմից քանդել պատն ու այդպիսով լայնացնել «մեքենայական մասը»:

Այդ գաղտնի սարքավորումն հանձն առավ կատարելու ընկ. Գոգիլաձեն և պետք է ասած, այնպես հաջող կերպով տարավ նա ամբողջ գործը, վոր խոհանոցը շինող վարպետները մի վայրկյան անգամ չկասկածեցին, թե ինչո՞ւ համար է շինվում այս ամենը:

Շենքի բոլոր գաղտնի մասերի կառուցվածքը կատարել էյին բացառապես Վասոն ու Վալիկոն, վորը, իհարկե, նրանցից խլել էր շատ մեծ յեռանդ ու աշխատանք: Շենքի մեջ ոդափոխության համար շինված էր և ոդանցք: Վալիկոն այդ ոդանցքը ոջախ էր դարձրել ու այնտեղ այրում էր ավելորդ թղթերը:

Յերբ ամեն ինչ վերջացած էր, մի շատ էյական հարց ծագեց, թե՝ տունը խուզարկելիս կարո՞ղ են ժանդարմները գտնել տպարանը: Տեսականորեն պատասխանելն այս հարցին, իհարկե, ավելի հեշտ էր ,քան գործնականորեն: Սովորաբար հաճախ վոչ վոքից չընկատված մի դատարկ բան վտանգի րոպեյին հրապարակ է հանում ամեն ինչ:

Տպարանի գոյության մասին գիտեյին Գոգիլաձեի ամուսինները, Վալիկոն, Միխան, Կամոն ու յես: «Յերբե՛ք չեմ մոռանա»,-շարունակում է ընկ. Գոգիլաձեն,-Վալիկոյի հրճվանքից փայլող դեմքը, յերբ նա

տեսավ, վոր ընկ. Կամոն չի կարողանում գտնել հետքերը, թե՝ վո՞րտեղից պետք է մտնել տպարան: Մենք Վալիկոյի սենյակումն էինք ու սպասեցինք ընկ. Կամոյին. «Ապա՛, ընկ. Կամո, գտի՛ր մեր տպարանը, նա հենց այստեղ է շինած»: Բայց նրա բոլոր վորոնումներն ապարդյուն անցան: Վալիկոն անչափ ուրախ էր այս բանին ու շարունակ կրկնում էր.

«Ե՛հ, դու վոր չես գտնում մեր տպարանը, ժանդարմները խոմ իսկի չեն կարող գտնել այն»:

Պետք է ասեմ ,վոր այս գաղտնիքն իմ հնարածն էր (և միակը կյանքումս):

«Վալիկոն անխոնջ աշխատավոր էր: Գիշերները յես ու կինս փոխարինում էինք նրան, վորպեսզի հնարավորություն տանք նրան հանգստանալու: Գիշերային աշխատանքի ժամանակ, վորը շատ անգամ տևում էր մինչև առավոտ, մեզանից մեկը պահակ էր կանգնում ու հետևում փողոցի անց ու դարձին, ըստ վորում գիշերային լռության մեջ «ամերիկանկայի» աղմուկն ավելի յեր լսելի, քան ցերեկը: Յերբ մեր տանն էր մոտենում վորևէ կառք, պայմանական ազդանշանի համաձայն, ամերիկանկան դադարում էր աշխատելուց:

«Շա՛տ մանր-մունր բաներ են միտս գալիս, վորոնք չնայելով իրենց աննշան լինելուն, շատ հեշտությամբ կարող էին տպարանի կորստյան պատճառ դառնալ, յեթե ժամանակին չնախատեսեյի այդ ամենը: Այսպես, օրինակ, Վալիկոյի սենյակի դուռն ինչպես ներսից, այնպես էլ դրսից փակվում էր սողնակներով: Սա, իհարկե, անհարմար բան էր: Ախր յեթե նրա դուռը փակած է ներսից, ամեն մարդ էլ կենթադրեր, վոր

ուրեմն Վալիկոն ներսն է: Իսկ եթե թակելիս դուռն ու-
նա չլսեր, անշուշտ դրանով կասկած պիտի հարուցա-
ներ: Դրա համար էլ մենք մի անգլիական կողպանք
ճարեցինք ու բանալիքը պողպատե շղթայով կախեցինք
Վալիկոյի շալվարից, որպեսզի դուռը փակելիս հան-
կարծ չմոռանա ու բանալիքը թողնի վրան»:

Վալիկոյին հանձնարարված էր թռուցիկների ձեռա-
գիր-բնագիրն ու տպված գրականությունից մի-մի օ-
րինակ առանձին պահել ապագա «Հեղափոխական թան-
գարանի» համար: Վալիկոն բարեխղճորեն կատարել էր
այս հանձնարարությունը, բայց դժբախտաբար այդ
բոլոր նյութերն, ուրիշ շատ բաների հետ, անհետ կո-
րան հեղափոխության ժամանակ:

1905 թվի հեղափոխության օրերին Վալիկոն, իր
հեղափոխական վառ տեմպերամենտով, չկարողացավ
համբերել ու բավականանալ աննկատելի «փոքրիկ»
աշխատանքով, որն ինքնըստինքյան թեկուզ և ուներ
շա՛տ մեծ նշանակություն: Տպագրական տառերի ու
«ամերիկանկայի» փոխարեն նա որոշեց զենք վերցնել:
Նա պահանջ դրեց «փոխարինել» իրեն: Նրա տեղ ես
ժամանակավորապես տպարան ուղարկեցի «փոքրիկ
Դաթիկոյին» (Փեշտմալճյանցին): Հետագայում երկու-
թե երեք ամիս շարունակ տպարանում աշխատում էր
ընկ. Ենուքիձեն, որը, ինչպես ընկ. Վ. Գոգլիձեն
էր պատմում, մի անգամ այնպես պինդ էր քնել, որ
քիչ էր մնացել տպարանի հետ միասին այրվեր լամ-
պից առաջ եկած հրդեհից:

Մեր տպարանում երկար ժամանակ պահվում էին
Ղվիրիլի գանձարանից բռնագրաված փողերը: Վերջ-

իվերջո մենք այդ փողերը փոխադրեցինք արտա-
սահման զենք ձեռք բերելու համար:

Սկսեցին հեռանալ տպարանից: Ընկերներից շա-
տերն իմացել էին արդեն նրա գոյության մասին:
Տպարանը թողնել իր հին տեղում այլևս վտանգավոր
էր թե՛ գործի, և թե՛ հենց մեզ ու ընկ. Գոգլիձեյի
ընտանիքի համար:

Այդ միջոցին ես նստած էի Քութայիսի բանտում
և այդ գործը հանձնարարեցին գլուխ բերել ընկ. Վանո
Լոմթաթիձեյին: Չգիտեմ ինչպես և ում օգնությամբ
հաջողվել էր նրան կատարել այդ հանձնարարությունը,
բայց երբ ազատվեցի բանտից ու եկա տուն, տպա-
րանը գտա իմ սենյակում յուղներկով աշխատելիս:
Դա, իհարկե, գաղտնապահության տարրական կանոն-
ների խախտումն էր, սակայն, ըստ երևույթին, ի-
նկատի առնելով 1906 թվին տիրապետող դաժան ռեակ-
ցիան, ընկերներս ուրիշ ելք չէին գտել: Նրանք ուղ-
ղակի հնար չէին ունեցել սենյակ ճարելու: Երևի ըն-
կերներս մտածել են այսպես, թե՝ քանի որ ես բան-
տարկված եմ, էլ ի՞նչ կարիք ունեն ժանդարմներն իմ
բնակարանս գալու ու խուզարկություն կատարելու:

Քութայիսում շատ հրաշալի էր դրված ընկերնե-
րին անձնագրեր հայթայթելու գործը: Այդ գործը
նույնպես ես էի կառավարում ու անձնագրեր էի մա-
տակարարում ո՛չ միայն Քութայիսի նահանգի կազ-
մակերպություններին, այլ և ամբողջ Անդրկովկասին,
որոշ դեպքերում նույնիսկ Ռուսաստանի կազմակեր-
պություններին, մեր կուսակցության Կենտրոնական
Կոմիտեի միջոցով:

Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակ-

ցիայի գրեթե բոլոր անդամներն համ ամենայն դեպս ունեյին մեր անձնագրերից մի-մի օրինակ: Յերեվակայեցե՛ք, վոր նույն իսկ Թանտանկայում տեղի ունեցած ես-երական եքսպրոպրիացիայի մասնակցողների մոտից դուրս յեկան Քութայիսի անձնագրեր:

Աքսորվող քաղաքականների մասին խոսելն էլ ավելորդ ե: Ամեն ետապից առաջ ընկերների համար մենք բանտ եյինք ուղարկում պատրաստի անձնագրեր: Ավելի հուսալի ու հաստատուն եյին համարվում այն անձնագրերը, վոր տրվում եյին Քութայիսի գավառական վարչությունից: Ինքնին հարց ե ծագում, թե ինչո՞ւմն եր գաղտնիքը մեր անձնագրերի, ինչո՞ւ նրանք յերբեք չեյին «տապալվում»:

Խնդիրը նրանումն ե, վոր այդ անձնագրերը չեր կարելի կեղծ անվանել, բառի իսկական մտքով: Կեղծ անձնագիրը պետքական եր միայն ցուցակագրվելիս: Նա կարող եր բավարարել դռնապանին, տանտիրոջը կամ հյուրանոց պահողին, բայց բնավ չեր կարող բավարարել ժանդարմական վարչության, վորի հենց առաջին հարցումից կբացվեր դրանց անվավերությունը: Մեր տված անձնագրերի վողջ գաղտնիքը կայանում եր նրանում, վոր նրանք իսկական անձնագրերի պատճեններ եյին: Մեր գաղտնիքը բացվեց չորս թե հինգ տարի հետո միայն և այն էլ պրովոկատորի շնորհիվ:

1904 թվի սկզբներին ընկ. Ալյոշա Ջափարիձեն ինձ ծանոթացրեց մի շատ յերիտասարդ ռաճեցու*) — Ալփես Մուսերիձեյի հետ: Մուսերիձեն ծառայում եր Քութայիսի գավառական վարչության մեջ ռեգիս-

*) Ռաճայի գավառը Արեվմտյան Վրաստանի լեռնային շըրջանում ե:

— «Լավ տղա յե, պետք ե նրան մոտեցնել մեզ: Ով գիտե, մի օր կարող ե պետք գալ: Չե՞ վոր ծառայում ե նրանց մոտ»:

Ասաց ինձ մի օր ընկ. Ալյոշան:

Յեվ իսկապես յես շատ մտերմացա նրա հետ. տալիս եյի թերթեր ու գրքույկներ ու հաճախ զրուցում հետը քաղաքականության մասին:

Հենց այդ տարին նրան զինվոր եյին կանչում, բայց քանի վոր նա մեզ պետք եր, յես միջոցներ ձեռք առա, վորպեսզի նա ազատվի զինվորական ծառայությունից: Յեվ «պրոտեկցիայի» միջոցով հաջողվեց ինձ այդ բանը:

Բացի այս մեր գործի շահը պահանջում եր, վորպեսզի նրա պաշտոնը բարձրացնեյին: Ինձ այդ էլ հաջողվեց իրագործել:

Այս բոլորից հետո յես ձեռնարկեցի մեր անձնագրերի բյուրոյի կազմակերպման: Նախ ձեռք բերի դիմուշի ձևվեր, վորոնք գանձարան ներկայացնելիս տալիս եյին անձնագրի բլանկներ: Այնուհետև շատ հմտորեն գրեցի կեղծ դիմում ու ստացա բավական քանակությամբ բլանկներ: Նույն յեղանակով յես հետագայում էլ մի քանի անգամ ստացա բլանկներ:

Բլանկների պաշար հավաքելուց հետո յես առաջարկեցի ընկ. Մուսերիձեյին, վոր բերի ինձ համար ամբողջ տարին դուրս տված անձնագրերի ցանկը, և այնտեղից արտագրեցի ինձ կարևոր բոլոր տեղեկությունները՝ ո՞ւմ և յերբ ե տրված անձնագիրը, ի՞նչ համարով, վո՞րտեղացի յե անձնագրի տերը, ինչո՞վ ե պարապում, հասակը, դրությունը զինվորական ծա-

ռայության տեսակետից և այլն: Ինձ մոտ պահեցի գավառապետի ու գործավարի իսկական ստորագրությունների մի-մի օրինակ: Մուսերիձեն իմ առաջարկությամբ գողացավ մի հատ էլ պահեստի իսկական կնիքներից: Այսպիսով գործը հրաշալի կերպով գլուխ յեկավ: Երբ կարիք էր լինում ընկերներից մեկին անձնագիր տալ, յես ջոկում էի համապատասխան հասակավոր մարդու ազգանունն ու ձեռագիրս փոխելով, լրացնում էի անձնագրի բլանկն իսկական տեղեկություններով: Ընդ վորում կամ ինքս էի փոխում ձեռագիրս կամ ուրիշին էի գրել տալիս:

Գավառապետի ու քարտուղարի ստորագրություններն այնպես վարպետորեն ընդօրինակում էի, վոր հավանորեն հենց իրանք էլ դժվարանային ջոկել կեղծն իսկականից:

Մինչև օրս էլ մտքիցս չի ընկել գավառապետ Վարդեն Ֆելրաքիանու ստորագրությունը:

Երբ վերջանում էր ձեռի տակ յեղած անձնագրերի ցուցակը, մենք վերցնում էինք նոր պատճեններ, իսկ յերբ շտապ էր պետք անձնագիրը, ստիպված էինք լինում արդեն մի անգամ տրված անձնագրերի պատճենները տալ, այնպես վոր շատ անգամ յերկու-յերեք օրինակ նույն անունը կրող անձնագրեր էինք բաց թողնում:

Երբ վոստիկանության մեջ կասկած էր ծագում զանազան քաղաքներում ապրող մեր ընկերների անձնավորության մասին, իսկույն հարցում էին ուղարկում գավառական այն վարչության, վորտեղից տրված էր անձնագիրը: Հարցում էին տալիս միշտ զա-

նազան կերպ, օրինակ՝ 1) Ո՞ւմ է տրված 1904 թվին № 100 անձնագիրը, 2) Ալեքսանդր Գիորգևիչ Լորթկիպանիձեյին յե՞րբ և ի՞նչ համարով է տրված անձնագիր:

Նման հարցումներ անընդհատ թափվում էին Քութայիսի գավառական վարչության հասցեյին, բայց մենք միանգամայն վստահ էինք, վոր պատասխանը կլինի փաստացի ուղիղ և ընկերներին կազատեն, յեթե բացի անձնավորություն պարզելուց, չկան ուրիշ շատ թե քիչ լուրջ կասկածանքներ:

Պատահում էին կուրյոզներ: Օրինակ Պետրոգրադում ապրող ընկերներից մեկի անձնագրի իսկական տերը դուրս յեկավ, վոր Ջիխայիշցի ինչ-վոր մի քահանա յե:

Այդ ժամանակներում քիչ կային այնպիսի ընկերներ, վոր անլեգալ ապրեյին ու չօգտվեյին իմ անձնագրերով:

Շատ անգամ էլ կազմակերպությունները վերցնում էին ստորագրված ու կնիք խփված անձնագրի գըրքույկներն ու հետո իրանք արդեն լրացնում էին մնացածը: Սակայն այդպիսի անձնագրերի վերաբերմամբ յերբ հարցում էր լինում, փորձանքն անխուսափելի յեր:

Հիշում եմ այսպիսի մի դեպք. Բաքվից գալիս է հատկապես ուղարկված մի ընկեր ու հաղորդում ինձ, վոր այնտեղ փորձանք է պատահել, վորի հետևանքով ձերբակալված են մի շարք ընկերներ (բանտարկյալների թվումն էր և «մեծ Պավելը» (Սաղվարելիձեն), վոր այն ժամանակ բոլշևիկ էր և ակտիվ աշխատավոր:

Ձերբակալված ընկերների մոտ մեր անձնագրերն եյին, վոր լրացրել եր Խոնիի կազմակերպությունը և իհարկե բոլոր ազգ-անուններն ու տեղեկությունները հնարովի եյին և վոչ իսկական («Թուշեիկ» ազգեր):

Բաքվից յեկած ընկերը խնդրում է ինձ մի կերպ ազատել ընկերներին: Յես խիստ վրդովվեցի Խոնիի կազմակերպության դեմ, բայց բանը բանից անց եր կացել արդեն: Պետք եր ընկերներին ոգնել: Յես իսկույն կանչեցի Մուսերիձեյին, պատմեցի Բաքվի փորձանքի մասին, պատասխանատու ընկերների ձերբակալության ու նրանց կեղծ անձնագրերի մասին և խնդրեցի, վոր նա Բաքվից ստացվող բոլոր ծրարները դեռ չբացված ու չցուցակագրված բերի ինձ: Ճիշտն ասած, յես հույս չունեյի, թե նա կհամաձայնի այս բանին: Սակայն այնուամենայնիվ նա համաձայնեց ու այդ որվանից Բաքվից ստացած ամբողջ փոստը բերում եր ինձ: Յես շատ զգուշությամբ բաց եյի անում պետական ծրարները, ինձ մոտ եյի թողնում այն, ինչ վերաբերում եր մեր ընկերներին ու մնացածը դարձյալ խնամքով ծրարած ուղարկում եյի հետ:

Մի քանի որից հետո ստացվեց Բաքվից հարցումն անձնագրերի մասին: Յես արդեն գիտեյի ինչ տվյալներ են մտցրած անձնագրերի մեջ ու ինչ ցուցումներ են տվել մեր ընկերները: Համապատասխան հարցումին պատրաստեցի նրա պատասխանը, ծրարի գլխին մակագրեցի «գաղտնի», խփեցի կնիքն ու ծրարն ուղարկեցի Բաքվի ժանդարմական վարչության անունով:

Այսպիսով հաջողվեց ազատել ընկերներին:

Մի անգամ ընկ. Կամոն չափազանց գաղտնի մի գործով պետք է գնար Պետերբուրգ: Հարկավոր եր

անձնագիր պատրաստել վորևէ ականավոր մարդու անունով: Յես պատրաստեցի նրա համար Սենակի գավառական ազնվականության պարագլուխ կնյազ Կոկի Դադիանու անձնագրի պատճենը, ի դեպ ասած հենց իր Դադիանու գիտությամբ ու համաձայնությամբ: Ընկեր Կամոն ճանապարհ ընկավ Պիտեր առաջին կարգի վագոնով, չերքեզկով, միլիցիայի յենթասպայի ուսադիրներով: Նա գնաց ինչ-վոր մի ռեակցիոն գեներալի հետ մի կուպեյում նստած և հանգիստ ու ապահով կերպով Պետերբուրգից բերեց մեզ կարևոր զենքերը:

Մեր անձնագրային բյուրոյի գաղտնիքը բացվեց 1907 թվի աշնանը միայն: Սակայն այնուամենայնիվ մեր ընկերներից շատերը զանազան քաղաքներում շարունակում եյին ապրել մեր անձնագրերով: Կարծեմ 1910 թվին եր, Պետերբուրգում մի գիշերվա մեջ ձերբակալվեցին10–12 հոգի մեր անձնագրերով:Նրանց մեջ եր Ղվիրիլիի պրոցեսներին մասնակցողներից մեկը՝ ընկ. Նոյ Չխեյիձեն:Նա յերկար դիմադրում է, չի հայտնում իր ազգ-անունն և արդեն պատրաստվում են աքսորել Սիբիր իբրև Թափառաշրջիկի: Այդ մասին յես լսեցի ընկ. Եվգ. Գեգեճկորիից, վորը խնդրեց ինձ մի կերպ «սարքել», այնպես վոր կարելի լինի թեթևացնել ընկ. Չխեյիձեյի դրությունը: Այն ժամանակ յես կազմեցի ընկերոջ ազատման մանրամասն ծրագիրը:

Լանչխութի ավանում յես դտա մեր ընկերներից մեկի՝ Մենաղարիշվիլու հորը: Նրա վորդին ապրում եր Ռուսաստանի ինչ-վոր մի տեղում: Յեվ Մենաղարիշվիլին համաձայնեց Չխեյիձեյին ընդունել իր վորդու տեղ, յեթե միայն նրա ետապով բերեն:

Ն. Չխեյիձեն բանտում ստացավ ամենամանրա-

մասն տեղեկություններ իր «հոր» Մենաղարիշվիլու մասին:

Մյուս կողմից ընկ. Ջխեյիձեյի մասին մանրամասն տեղեկություններ ու լուսանկարն ստացավ Մենաղարիշվիլին: Երբ ամեն ինչ պատրաստ էր, Ջխեյիձեն «խոստովանեց», վոր ինքը Մենաղարիշվիլին է:

Պետերբուրգից հարցում է ստացվում Լանչխութում Ջխեյիձեյի լուսանկարի հետ միասին, կանչում են Մենաղարիշվիլուն, ցույց տալիս լուսանկարը, և նա «ճանաչում է» վորդուն: Սրանից հետո Ջխեյիձեյին ուղարկում են Վրաստան:

«Հայրը» դիմավորում է նրան Բաթումում: Մենք դիտավորյալ չուղեցինք, վոր ընկեր Ջխեյիձեյին ետապով տանեն Լանչխութ, ուր ամբողջ գործը կարող էր փչանալ: «Հորը» հաջողվում է «վորդու» հետ տեսակցություն ունենալ Բաթումի բանտում, սակայն Բաթումում ազատել նրան չհաջողվեց: Նրան տարան Ոզուրգեթ: «Հայրը» գնում է «վորդու» յետևից: Վերջապես Ջխեյիձեյին ազատում են Ոզուրգեթում: Ի պատիվ Գուրիայի գյուղացի ծերուկ Մենաղարիշվիլու պետք է ասած, վոր նա արտիստականորեն տարավ կորած վորդու հետ տեսակցության պատկերը թե՛ Բաթումում և թե՛ Ոզուրգեթում: Ոզուրգեթում նա իր դերը խաղաց առանձնապես ճարպիկորեն, կարեկցություն առաջ բերելով բոլորի ու ամեն մեկի մեջ: Վո՛չ վոքի մտքով անգամ չէր անցկենում կասկածել, վոր իր առաջ կանգնած է մի դժբախտ հայր, վոր յերկար տարիներ վորդուն կորցնելուց հետո այժմ նորից գտել էր:

—«Եթե ձերբակալված դուք տանեք նրան Լանչ-
խութ, դժբախտ պառավ մայրը կխելագարվի խուլյն»
հավատացնում էր նա ամենին, սկսած պահակներից
մինչև գավառապետը:
Վերջիվերջո նա իր ասածն արեց. Ջխեյիձեյին ա-
զատեցին ու հանձնեցին իր «հորը»:
Թե վորքա՛ն ուժեղ էր կոմիտեյի ազդեցությունը
1904–5 թվականներին գյուղացիական մասսաների վրա
(բանվորների մասին խոսք էլ չի կարող լինել), ի՛նչ-
պիսի հեղինակություն էր վայելում նրանց շրջանում,—
պարզ կերևա հետևյալ փաստերից.
1905 թվին, յերբ միապետության դեմ ատելու-
թյունը հասել էր իր զենիթին, գյուղացիք թույլ չեյին
տալիս քահանաներին ժամասացության ժամանակ
հիշել թագավորի ու իր ընտանիքի անունն և նրանց
պահանջով շատ գյուղերում քահանաներն աղոթում ե-
յին Իմերեթո—Մինգրելիայի Կոմիտեյի առողջության
համար:
Մի անգամ հանդուցյալ Լեվան Դադեշքելիանին ինձ
ասաց.
—«Գիտե՛ս, սվանները կոմիտեն պատկերացնում են
իբրև մի բարձրահասակ, յերկա՛ր, սպիտակ մորուսով
ծերունի, վորը նրանց կարծիքով ապրում է մի բարձր
ամրոցում ու միանգամայն անտեսանելի յե հասարակ
մահկանացուների համար: Եթե նրանք իմանան, վոր
դու, յերիտասարդ ու կարճահասակ մի մարդ, ներկա-
յացնում ես կոմիտեն, նրանք միանգամայն կկորցնեն
իրենց հավատը դեպի կոմիտեն»:
Ահա մի ուրիշ որինակ. 1904 թվի վերջերին յեղ-
բայրս գյուղական մի բանվոր, ասում է Նիկ. Բար-

ցիվաձեյին, թե՝ չա՞տ կուզենար տեսնել, թե ի՞նչ տեսակ ե եդ կոմիտեն: Նիկ. Ծարցխվաձեն մատնացույց արեց ինձ՝ «կոմիտեն ուզում ես տեսնել, նայիր յեղբորդ»: Յեղբայրս ափիբերան եր մնացել այդ հայտնությունից: Նրա դեմքն արտահայտում եր միաժամանակ և չափազանց մեծ զարմանք և... հիասթափություն:

Հայտնի յե, վոր այն ժամանակներում հասարակ ժողովրդի մեջ շատ ուժեղ եյին կրոնական նախապաշարումները:

Մի խումբ գուրիացի ռեակցիոններներ, ավագ քահանա Նիկ. Թամիշվիլու և Ուզուրգեթի գավառապետ Ջափարիձեյի գլխավորությամբ, վճռում են օգտագործել այդ նախապաշարումները քաղաքական նպատակներով:

Յերբ բյուրոկրատիան ձերբակալություններով ու յերկյուղ տալով չկարողացավ ստիպել գյուղացիներին մատնել «խռովարարներին», ռեակցիոններների վերոհիշյալ խմբակը հետեվյալ միջոցին դիմեց:

Սուրբերից բերել տվին սուրբ Գեվորգի «պատկերը», վոր հասարակ ժողովրդի մեջ հայտնի յե իր «հրաշագործ» ուժով: Գյուղացիներին ստիպում եյին պատկերի վրա յերդվելով պատասխանել, թե ո՞վ ե գրգռում գյուղացիներին և ո՞վ ե ղեկավարում հեղափոխական շարժումը: Պատկերը ներկայացնում եր իսկական մի տրագեդիա: Հավատացյալ գյուղացիների հոգու մեջ սկսվեց մի ներքին պայքար. մի կողմից նրանք հանձին ագիտատորների տեսնում եյին իրենց ազատարարներին ու նրանց մատնելը համարում հուդայական հան-

ցանք, մյուս կողմից նրանց սարսափեցնում եր սուտ յերդումն իր հրաշքներով այնքան հռչակված սուրբ պատկերի առաջ:

Վերջ ի վերջո ծերունի գյուղացիներից վոմանք չըդիմացան այդ փորձությանը ու մատնեցին մի քանի ագիտատորների, նրանց թվում և Յասոն Մեգրելիձեյին:

Այս փաստն ահագին հակակրոնական նշանակություն ունեցավ Գուրիայում և, յերբ կազմակերպության վորոշման համաձայն «հակահեղափոխական պատկերը» գողացվեց ու գողացողները տեղն ու տեղը «չքարացան», ժողովուրդն ըստ արժանույն գնահատեց այդ պատկերի իսկական հրաշագործ ուժը:

1905 թվի հեղափոխության յեռ ու զեռի ժամանակ Վրաստանի առանձին գավառներն ու շրջանները հայտարարական կարգով գրեթե ամեն տեղ մտցրին իրենց սեփական հեղափոխական ինքնավարությունը, վոր բյուրոկրատների աչքին պատկերանում եր իբրեվ «Հանրապետական» կառավարություն:

Այսպես հետագայում, ռեակցիայի տարիներին դատաստանական գործեր ծրագրեցին Գուրիայի, Սենակի, Զուգդիդի, Ղվիրիլի, Սոչիի և այլ հանրապետությունների առթիվ:

Այս հանրապետությունները յոլա եյին գնում առանց պրեզիդենտների, ըստ վորում դրանցից յուրաքանչյուրում կուսակցական կոմիտեն եր «պրեզիդենտի» պաշտոն կատարողը: Չկային այդտեղ օրենսդիր ժողովներ, օրենսդիրն ինքը հեղափոխական ժողովուրդն եր, վոր վոտքի յեր կանգնել նոր-լուսավոր կյանքի համար:

Այն ժողովուրդը, վոր խորտակելով դարավոր ըստրկության կուռ շղթաները, հանդգնել եր հին աշխարհին տալ «վերջին վճռական մարտը» վո՛չ միայն հանուն քաղաքական ազատության, այլ և հանուն հասարակական հավասարության, հանուն կախարդական «երթոբայի» *):

Այդ բոլոր «հանրապետություններից» առանձնապես նշանավոր ու ինքնատիպ եր Գուրիան, ուր հեղափոխական շարժումն ընդգրկել եր հանուր աշխատավոր բնակչության: Յեվ պետք ե ասած, վոր այդ բընակչությունն հասել եր քաղաքական վերին աստիճանի գիտակցության, կազմակերպչականության ու կարգապահության:

Գուրիայում սահմանվել եյին հետեվյալ կարգերը. գավառը բաժանված եր չորս շրջանների: Տեղական վոստիկանությունը հեռացված եր ու փոխարինված կարմիր միլիցիայով: Գավառում միաժամանակ գոյություն ունեյին յերկու զուգընթաց կազմակերպություններ՝ կուսակցական և ընդհանուր դեմոկրատական: Դեմոկրատական կազմակերպությունները, հանձին ընտրովի տասնապետների ու հարյուրապետների, կիրառում եյին կյանքի մեջ կուսակցական կոմիտեյի դիրեկտիվները: Բոյկոտ եր հայտարարված կառավարչական հիմնարկություններին ու յեկեղեցուն: Կազմակերպության բոլոր անդամներն ամսական 20-ական կոպեկ եյին մուծում: Այդ կերպ հանգանակված փողերով ձեռք եր բերվում զենք: Հեղափոխական ժողովուրդը խլում եր զենքերը նաև հին կառավարական գործակալներից, թալանդրավում կառավարչական հիմնարկություններից

*) Երթոբա—միություն:

և առհասարակ զինվում եր ձեռքի տակ յեղած բոլոր միջոցներով: Հին իշխանության զինաթափման ու ժողովրդի զինված գործը ղեկավարում եր Ռ. Ս. Դ. Բ. Կուսակցության Գուրիայի Կոմիտեյին կից գործող հեղափոխական շտաբը:

Հին դատարանի տեղ հիմնված եր «ժողովրդական դատարան»—ընտրովի դատավորներով: Դատարանի կազմի մեջ մտնում եյին համեմատաբար ավելի ազդեցիկ ու հեղափոխական շրջաններում հարգանք վայելող հասարակության անդամները:

Ոզուրգեթի քաղաքային ինքնավարությունը ցրվեց ու փոխարինվեց նոր ավելի դեմոկրատիկ ինքնավարությամբ:

Դպրոցները կառավարելու համար հաստատվեց դպրոցական բյուրո:

Գյուղացիք հրաժարվեցին կապալավարձ վճարել կալվածատերերին ու վերջիններիս հայտարարեցին ընդհանուր բոյկոտ:

Հեղափոխական ժողովուրդն անողոք կերպով հալածում եր մատնիչներին, պրովոկատորներին ու գողերին, վորի հետեվանքով Գուրիայում հաստատվեց որինակելի կարգ ու կանոն. վերացան գողությունները ու ավազակությունները, աշխատավոր դասի առանձին խմբակների փոխհարաբերությունները միանգամայն կերպարանափոխվեցին, քան ցարական ժամանակներն եյին ու դարձան իրար աջակցող, մեկ-մեկու վստահող:

Մինչև իսկ ժանդարմական իշխանության միակողմանի ու կողմնակալ բնորոշմամբ հեղափոխական շարժումը Գուրիայում մի արտասովոր յերեվույթ եր հենց ամեն տեսակետից:

Կառավարչական պաշտոնական վերսիայով հեղա-
փոխական շարժումը Գուրիայում արտահայտվեց (տես
«Գործ փոխարքայի գրասենյակի առանձին բաժանմուն-
քի «ցուցակ № 89. արխիվ № 5162)՝ «գյուղերում հե-
ղափոխական գաղափարներ տարածելով, ինչպես մի-
տինգներում ու ժողովներում բանավոր պրոպագանդի
միջոցով, այնպես էլ անլեգալ թռուցիկներ ու գրակա-
նություն տարածելով: Կալվածատիրական հողերը խը-
լելով ու կապալավարձ վճարելուց հրաժարվելով: Ար-
դյունաբերական ու առևտրական հիմնարկություննե-
րի ծառայողների մեջ գործադուլներ կազմակերպելով,
բոյկոտ հայտարարելով ու սպանելով առանձին, ինչ-
պես մասնավոր, այնպես էլ պաշտոնական անձանց, վո-
րոնք կասկածվում էին հեղափոխական շարժման չը-
համակրելու մեջ. օրինակ՝ ազնվական Քարցիվաձեյի
հաշտարար միջնորդ Նակաշիձեյի, պրիստավ Կոստա-
վայի սպանությունները, պրիստավ Կվաշելու և շա՛տ ու
շատ ստրաժնիկների դեմ կատարված մահափորձերը,
բոյկոտը՝ Թակայիշվիլու, Պոտկոլզինի, Մգելաձեյի,
Ջակելիի, Ճկոնիայի և ուրիշ շատերի: Կառավարչա-
կան հիմնարկություններին, առանձնապես վոստիկա-
նության ու դատարանին բոյկոտ հայտարարելով, ընդ-
վորում վերջինս փոխարինվեց «ժողովրդական դատա-
րանով», վոր գործում էր հեղափոխական կազմակեր-
պությունների ղեկավարությամբ: Հիմնելով իրենց
վարչական հաստատություններն ու կատարողական
մարմիններն, ինչպես «տասնապետներ», «հարյուրապետ
ներ», «շրջանային ներկայացուցիչներ»: Կառավարչա-
կան դպրոցները խլելով, կառավարության դեմ ապըս-
տամբություն պատրաստելով, ժողովրդին զինելով ու

կազմակերպելով այսպես կոչված «կարմիր հարյուրյակ-
ներ» կամ մարտական ջոկատներ, վորոնց մեջ մտնում
էյին, հաճախ հակառակ իրենց կամքի, բոլոր զենք կը-
րելու ընդունակ մարդիկ: Ստիպողական միջոցներով
հանգանակելով մարդուց ամսական 20 կոպ. ու այլ
հարկադրումներով, զինելու և պահելու համար հա-
րյուրյակներն ու իրենց միության կարիքները հոգալու
համար: Զենք ձեռք բերելով անխտիր ամեն տեսակ
միջոցներով, մինչեվ իսկ հարձակումներ գործելով
մասնավոր անհատների, վոստիկանական պաշտոնյա-
ների ու կառավարչական հիմնարկությունների վրա:
Ցեվ վերջապես պատրաստվելով կռվելու կառավարչա-
կան զորքերի դեմ և հարձակումներ գործելով զինվո-
րական առանձին աստիճանավորների, նույն իսկ վաշ-
տերի վրա»:

«Վերոհիշյալ շարժման ղեկավարությունը Գուրի-
այի-Ոզուրգեթ գավառում սկզբներում ստանձել էր
Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության
Բաթումի Կոմիտեն, իսկ հետո, 1905 թվի սկզբներին
նրանից բաժանվեց մի առանձին կոմիտե «Գուրիայի
Կոմիտե» անունով ու տեղափոխվելով Ոզուրգեթ, շա-
րունակեց գործել նախ գաղտնի, իսկ 1905 թվի հոկ-
տեմբերի 17-ից հետո միանգամայն բացարձակ, միաց-
նելով իր բոլոր անդամների գործունեյությունն ու լիա-
զոր իշխանությամբ կառավարելով ահաբեկված գավա-
ռի վողջ կյանքը: Գուրիայում տիրապետում էր բա-
ցառապես սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը»:

«Գուրիայի Կոմիտեն», վորի ակումբը գտնըված
էր Ոզուրգեթի քաղաքական ակումբի տեղը, կուսակ-
ցության կենտրոնական ղեկավար մարմին հանդիսա-
նալով, իր գործունեյությունը համաձայնեցնում էր

Ռուսաստանի ընդհանուր հեղափոխական շարժման
ընթացքին ու աստիճանաբար անց էր կացնում Ռուսաս-
տանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակ-
ցության խնդիրներն ու ծրագիրը, ինչպես մշակվել էր
այն սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմա-
կերպությունների յերկրորդ համագումարում: Կոմի-
տեյի կատարողական մարմինները՝ «տասնապետներն»
ընտրվում եյին տվյալ գյուղի կամ քաղաքի տասը
բնակչի կողմից, «հարյուրապետներն» ընտրվում եյին
տասը տասնապետների կողմից, իսկ հասարակության
ներկայացուցիչները—տվյալ հասարակության բոլոր
հարյուրապետների կամ համայնական ընդհանուր ժո-
ղովի կողմից: Մի քանի համայնքներ միասին կազմում
եյին մի շրջան, վորն ուներ իր առանձին շրջանային ներ-
կայացուցիչը: Ոզուրգեթի գավառում այդպիսի յոթը
շրջաններ կային»:

Բացի այս կային և գործում եյին նաև տեղական
ու շրջանային կազմակերպություններ, ինչպես օրինակ՝
Ջոխատաուրիայի, Լանչխութիայի և այլն»:

«Իբրև օժանդակ հիմնարկություն, Գուրիայի Կո-
միտեյին կից գոյություն ուներ «Զինվորական Շտա-
բը», վորի անմիջական պարտավորություններն եյին՝
Կոմիտեյի մարտական ուժերի կառավարելը, ինքնա-
պաշտպանության ու հարձակման հարցերի մշակումը,
նույնպես և զենքի ու պատերազմական պաշարների
հայթայթելը, պահելն ու տարածելը»:

«Հեղափոխական Զինվորական Շտաբը տեղավոր-
ված եր Ոզուրգեթ քաղաքի բնակիչ Նոյ Ջիգուդձեյի
տանը, վորտեղ գտնվում եր նաև զենքի պահեստը»:

«Բացի այս, Կոմիտեյի տրամադրության տակ գը-
տնվում եր նաև իր հավաքած տերրորիստների առան-

ձին խումբը, վոր ուներ հատուկ դեր և ի կատար
եր ածում Կոմիտեյի վորոշումները, վորի համար այդ
խմբի անդամներն ստանում եյին առանձին վարձա-
տրություն: Հենց այդ տերրորիստներն եյ խլում եյին
մասնավոր անձանց ու կառավարչական պաշտոնա-
տարների զենքերը:

«Զորքերի հետ զինված ընդհարումների ու առհասա-
րակ զինվորական գործողությունների համար ունեյին
զենքի պահեստներ՝ Ոզուրգեթ քաղաքում և Սուրեբի
ու Խիթիսթավի գյուղերում, ինչպես նաև Կարմիր
խաչի սանիտարական ջոկատ»:

«Պրոպագանդի նպատակով Կոմիտեյի կոչերն ու
հայտարարությունները տպելու համար Կոմիտեյին
կից ունեյին հատուկ տպարան:

«Գուրիայի Կոմիտեյի հեղափոխական գործունե-
յությունն առանձնապես զարգացավ 1905 թվի հոկ-
տեմբերից մինչև 1906 թվի հունվարի շրջանը, յերբ
ընդհանուր յերկաթուղական ու փոստ-հեռագրական
գործադուլի շնորհիվ կառավարչական մարմինների
գործունեյությունը բոլոր կետերում միանգամայն խա-
փանված եր»:

«Գուրիայի Կոմիտեյի այդ հանցավոր գործու-
նեյությունն արտահայտվեց գլխավորապես հետևյալ
ձեռնարկներով.

1) 1905 թվի հոկտեմբերի 21-ի գիշերը, Նասակի-
րալի լեռնանցքում (перевал), վոր գտնվում է Ոզուր-
գեթից մի քանի վերստի վրա, զինված հարձակում գոր-
ծեցին 2-րդ Պլաստունական գումարտակի և վոստիկա-
նական պահակների զորախմբի վրա, վորոնք վերադառ-
նում եյին Ջախատաուրիայի արշավից, վոր կազմակեր-

պել էր գավառապետ Լազարենկոն, յերբ տեղեկություն էր ստացել, վոր հեղափոխական ամբոխը զինված հարձակում է գործել Զոխատուրիայի գավառամասի վոստիկանական վարչության ու փոստի բաժանմունքի վրա, վորի ժամանակ սպանվել է վոստիկանական պահակ Սաուտիյեվը, վիրավորվել են պահակներ Թիղաբովն և Դաշնիանին, իսկ վոստիկանական բաժնի պետ Գագուան և պահակներ Դատմուրզիյեվն ու Ֆարցխվաձեն գերի եյին տարվել:

Պահակների զենքը—10 հրացան, 12 վորսորդական հրացան, փոստ-հեռագրատան կառավարչի պետական ատրճանակն և բոլոր արժեքավոր գույքն յերկու հիմնարկությունից էլ թալանված եր:

«Նասակիրալի լեռնանցքի հարձակումն սկսվեց մթնով, դարանից, հրացանների համազարկով ու պայթուցիկ նյութեր նետելով և շարունակվեց 21-ի ամբողջ օրն, ընդ վորում կազակների ու պահակների վաշտը շրջապատված եր ամեն կողմից ու հարձակումը դադարեց միայն հոկտեմբերի 22-ին, յերբ Ոզուրգեթից ոգնության հասավ կազակների յերկրորդ հարյուրյակը, վորին իմաց եյին տվել պաշարման շղթան կտրած ու փախած պլաստունները, վորոնցից յերեքը սակայն բռնվել եյին, մերկացվել, թալանվել ու սպանվել: Սրանց դիակներն ու վիրավոր ստրաժնիկ Բեչխոտովը գազանային տանջանքների ու այլանդակման եյին յենթարկվել:

«Այս կազմակերպված հարձակման հետեվանքով, վոր իսկական ճակատամարտի բնույթ եր կրում, սպանվեցին ու վերքերից մեռան՝ 6 կազակներ և 2 ստրաժնիկներ, վիրավորվեցին՝ 13 կազակ, անհայտ

կորան՝ 5 ստրաժնիկ, 8 ձի սատկեցին, 15-ը բռնվեցին ու կորան: Սպանվածների զենքերը նույնպես հափշտակեցին խռովարարները: Վկաների ցուցմունքով հարձակվողների թիվը հասնում եր մի քանի հազարի և հաստատված է, վոր լեռան ամբողջ զառիվերին, ուր դարան եյին մտել խռովարարները, նախորոք փորված եյին խրամատներ ու դիրքեր, իսկ անտառում կտրված են յեղել անցքեր, գնդակոծելու համար այն ճանապարհը, վորով պիտի անցներ մեր վաշտը:

«Նախնական քննության ժամանակ հարցաքննության յենթարկված մի շարք վկաների ցուցմունքներով հաստատված է, վոր այդ հարձակումը կատարվել է Գուրիայի Կոմիտեյի կարգադրությամբ, վորի անդամների մեջ այն հարցի առթիվ, թե՝ անհրաժե՞շտ է արդյոք հարձակումը թե՞ վոչ, տարաձայնություն է յեղել, սակայն ձայների մեծամասնությամբ վորոշվել և իրագործել հարձակումը, զենքերը խլելու համար և Կոմիտեն իր անդամների ղեկավարությամբ ուղարկել և իր կարմիր հարյուրակները հարձակման վայրը»:

«2) 1905 թվի դեկտեմբերի 7-ի գիշերը, յերբ պլաստունների գումարտակը հեռացավ գավառից, զինված հարձակում գործեցին Ոզուրգեթի գավառային վարչության վրա, ընդ վորում այնտեղ գտնվող վոստիկանական պահակներից զինված ամբոխը խլել եր 25 կառավարչական բերդանի հրացաններ իրենց փամփուշտներով, իսկ վարչության արխիվից թալանել եյին զանազան զենքեր, վոր պահվում եյին այնտեղ իբրև իրական ապացույցներ զանազան հանցագործությունների»:

«Այդ հարձակմանը հաջորդեցին մի շարք այլ հար-

ձակումներ գավառային վարչության ու նրա հետ միասին մի տան մեջ գետեղված զինվորական ատյանի վրա, ընդ որում միշտ հափշտակվում էին զենքերն ու արժեքավոր իրերը, իսկ գործերն ու փաստաթղթերը ոչնչացվում: Այդ հարձակումները տեղի ունեցան 1905 թվի դեկտեմբերի 7-ին և 10-ին, ընդ որում վկաների ցուցմունքով հաստատված է, որ հարձակվողների մեջ յեղել են զինված կարմիր հարյուրակայիններ, որոնց ղեկավարում էին Կոմիտեյի անդամները: Բացի ոստիկանական պահակներից խլածից, գավառական վարչությունից տարել են ընդամենը՝ 58 հատ զանազան սիստեմի հրացաններ, 9-ը բերդաններ, 82 ատրճանակ, 22 դաշույն, 6 թուր և մի պիստոլետ»:

«Առանց Գուրիայի Կոմիտեյի որոշման, որը միշտ տեղյակ էր գավառի ու քաղաքի բոլոր անց ու դարձին, ոչինչ չէր ձեռնարկվում և ոչինչ չէր կարելի կատարել, զինվորա-դաշտային հեղափոխական դատարանի յերկյուղից»:

«Այսպես Զինվորական Շտաբի կողմից գավառում ու քաղաքում հայտարարված էր ի միջի այլոց հետևյալը՝ «Գուրիայում գոյություն ունի Զինվորա-Հեղափոխական Շտաբ, որի պարտականությունների մեջ են մտնում՝ կազմակերպել գուրիական մարտական խումբերն ու ղեկավարել նրանց կարիք յեղած դեպքում, այս կամ այն հեղափոխական յելույթի ժամանակ: Զինվորա-Հեղափոխական Շտաբը խստորեն հետևվում է զինվորա-հեղափոխական կարգապահության: Մարտիկ անհատներից ոմանք, կողմնակի անձանց հետ միացած, գործում են ուղղակի խուլիգանորեն, թալանելով ա՛մենն, ինչ ընկնում է ձեռքերը, ուստի Զինվորական Շտաբը սրանով հայտարարում է, որ՝

1) Խստիվ արգելվում են այդպիսի վարմունքները:

2) Ոզուրգեթ քաղաքում արգելվում է մասնավոր անձանց զենք կրելը:

3) Արգելվում է զենքի ու պատերազմական նյութերի ամեն տեսակի առեվտուրն ու փոխանակումն առանց Զինվորական Շտաբի հատուկ թույլտվության:

4) Զինվորական Շտաբը նշանակում է ժամանակավոր քաղաքային պահակներ:

5) Հանցավորները կհանձնվեն զինվորական դատարանին:

Գուրիայի Հեղափոխական Զինվորական Շտաբ

Գուրիայի կոմիտեի տպարան:

1/XII 1905 թիվ»:

«3) Ոզուրգեթի քաղաքային հրապարակում ու քաղաքային այգում կազմակերպում են մի շարք ժողովրդական միտինգներ, որոնց ներկա էին կարմիր հարյուրյակներն իրենց կարմիր դրոշակներով, որոնց վրա մակագրված էին՝ «Կորչի միապետությունը», «Կորչի Նիկոլայ II-ը», «Կեցցե Հանրապետությունը»: Այստեղ զանազան ճառախոսներ ճառեր էին արտասանում, որոնցով դրդում էին ազգաբնակչության ու համոզում՝ զինված ընդհանուր ապստամբության միջոցով տապալել Ռուսաստանում գոյություն ունեցող պետական կարգը և նրա տեղ հաստատել հանրապետություն, դեմոկրատիկ սկզբունքներով: Առանձնապես բազմամարդ էին 1905 թվի դեկտեմբերի 6-ի և 1906 թվի հունվարի 9-ի Ոզուրգեթի միտինգները, նույնպես

և Շեմոկմեդի գյուղի միտինգը, ուր քննադատության նյութն էր Նասակիրալի լեռնանցքի հարձակման խընդիրը»։

«4) 1905 թվի նոյեմբերի վերջին հեռացնում են Օզուրգեթի քաղաքային ինքնավարության պաշտոնյաների օրինական կազմը և ընդհանուր, հավասար, ուղղակի ու գաղտնի ձայնատվության սկզբունքներով ու առանց սեռի խտրության, այդ պաշտոնների համար ընտրում են նոր մարդիկ, վորի համար նախորոք կատարել էյին քաղաքի ազգաբնակության մարդահամար, իսկ ընտրություններից հետո, յերբ Կոմիտեյի ճնշման տակ ընտրված դուրս յեկան հենց նույն Կոմիտեյի անդամները, գրավեցին քաղաքային ինքնավարության շենքն ու գործավարությունը»։

5) «Քութայիսի և Թիֆլիսի հեղափոխական շարժման վայրերն ուղարկում են կարմիր հարյուրյակներ այն տեղերում հեղափոխական շարժմանը զինված աջակցություն ցույց տալու համար և թույլ չտալու, վոր կառավարչական զորքերը մտնեն Քութայիսի նահանգը։ Այս նպատակով 1905 թվի նոյեմբերի 15-ից Նոթանեբի կայարանում կանգնած էր զինվորական մարտիկների առանձին զորախումբ, վոր պաշտպանում էր Օզուրգեթ տանող խճուղին, և հենց դրա համար էլ խճուղու վրա շինված էյին բարրիկադներ, իսկ Բաթումի կողմի յերկաթուղին քանդված էր»։

«6) Հիմնել էյին գավառի համար դպրոցական բյուրո, ընդ վորում կազմված էյին առանձին խորհուրդներ Օզուրգեթի արական ու իգական դպրոցների համար, վորի մեջ իբրև խորհրդի անդամներ մտնում

էյին հեղափոխական գործիչներ—Գուրիայի Կոմիտեյի գործակալները»։

Հոկտեմբերյան մանիֆեստի ու նրան հետևող հեղափոխական տրամադրության բարձրացման մասին վողջ Վրաստանում յես առանձնապես կանգ չեմ առել այստեղ։ Այսքանն ասեմ միայն, վոր պետական վարչությունը մեկուսացված էր միանգամայն և հեղափոխական կուսակցությունների քաղաքական ակումբները գործում էյին բացարձակ։ Իսկ ինչ վերաբերում է կուսակցական կոմիտեներին, մանավանդ բոլշևիկյան, նրանք պահպանեցին իրենց գաղտնի կազմակերպությունները։ Եվ այս բանի շնորհիվ էր, վոր կոմիտեյի բոլոր անդամներն ազատ մնացին զինվորական դատարանից, մահապատժից, տաժանակիր աշխատանքից ու ռեակցիայի մյուս հրաշալիքներից։

Ի զուր չէր, վոր Քութայիսի բանտում Ղվիրիլի գործի մասնակիցները կես հանաքով մեզ ասում էյին. «Ո՞ւր է արդարությունը, յես հանձնված եմ զինվորական դատարանի, մինչդեռ դու միայն վարչական հանցավոր ես համարվում»։

1906 թվի հունվարին, յերբ Ալիխանով-Ավարսկու պատժիչ ջոկատը շարժվում էր դեպի Արևմտյան Վրաստան, Քութայիսում տեղի ունեց բոլշևիկների ու մենշևիկների միացյալ համագումարը։ Որակարգի գլխավոր խնդիրն էր, թե՝ ինչ տակտիկայի հետևել-արդյոք ամրացնե՞լ Սուրամի լեռնանցքը, վորպեսզի արգելք հանդիսանանք Ալիխանովին, քանի այդ հնարավոր է, թե՞ զինաթափ անել ու ցրվել մեր ջոկատները։ Պետք էր վճռել և այն հարցը, թե ինչպես օգտա-

գործել Ղվիրիլիի գանձարանից բռնագրավված յերկու հարյուր հազար ռուբլին: Դեռ մինչև համագումարն այդ հարցերը դիսկուսիայի նյութ եյին դարձել Քութայիսի կազմակերպության մեջ: Պետք ե նկատել, վոր մենք այդ միջոցին դեռ վոչինչ չգիտեյինք Մոսկվայի ապստամբության ճնշման մասին: Այդ մասին մեզ հասնում եյին խուլ, կցկտուր լուրեր միայն:

Քութայիսի բոլշևիկյան մասսաների մեջ գոյություն ունեյին յերկու կարծիքներ: Առաջին կարծիքի կողմնակիցներն ասում եյին, թե՝ հեղափոխությունն այս անգամ պարտություն կրեց և զինված տրամադրությունը վոչ մի արդյունք չի տա, բացի նոր արյունհեղությունից, ուստի, այդ խմբի կարծիքով, պետք ե անմիջապես զինաթափ անել մեր ջոկատներն ու արձակել:

Բայց կային կողմնակիցներ և մյուս կարծիքի: Նրանք ասում եյին, վոր դժվար ե դեռ այդպես վստահորեն ասել, թե հեղափոխությունը պարտություն ե կրել համառուսաստանյան մասշտաբով: Մարտական ջոկատների անհապաղ զինաթափումն ու արձակումը ծանր տպավորություն կթողնի մասսաների վրա: Թե այս և թե այն դեպքում ռեակցիան, միևնույն ե, պիտի անի իր անելիքը ու քար քարի վրա չպիտի թողնի: Այդ իսկ պատճառով ավելի լավ ե դիմադրել: Հակառակ դեպքում ժողովուրդը կարող ե ասել, թե՝ մենք իրենց թողինք դժվարության մեջ ու ինքներս ազատվեցինք:

Ձայները գրեթե կես յեղան: Այդ պատճառով ել համագումարում ընտրվեցին ներկայացուցիչներ յերկու հոսանքների կողմից ել՝ 1) Ս. Քավթարաձեն առաջին հոսանքի կողմից, իսկ 2) յես— իբրև յերկրորդ հոսանքի արտահայտիչ:

Նահանգական համագումարում այս հարցը չատ կրակոտ վիճաբանության նյութ դարձավ: Վերջիվերջո հաղթող հանդիսացավ առաջին կարծիքը ու վորոշվեց զինաթափ անել ու արձակել ջոկատները: Այս վորոշման չեթարկվեց ընկ. Աֆրասիոն Մերկվիլաձեն, վորն իր փոքրաթիվ, բայց անվեհեր խմբով յերկու տարի շարունակ անհավասար կռիվ մղեց հեղափոխության հաղթահարող հակառակորդի դեմ, մինչև վոր դավաճան պրովոկատորների շնորհիվ ընկավ թշնամու գնդակից:

Ինչ վերաբերում ե այն փողի ոգտագործմանը, վոր գրավել եյինք Ղվիրիլիի գանձարանից, մենշևիկներից վոմանք առաջարկեցին վերադարձնել կառավարության, սակայն համագումարի անդամների մեծամասնությունը չհամաձայնեց այդ առաջարկին և վորոշեց գործադրել արտասահմանում զենք ձեռք բերելու համար: Այս վորոշման գործնական իրագործումը հանձնվեց մի հատուկ հանձնաժողովի, վորի մեջ մտան բոլշևիկներից ընկեր Ս. Քավթարաձեն և Ն. Քարցիվաձեն, իսկ մենշևիկներից՝ Կ. Սուլաքվելիձեն:

Շուտով սրանից հետո Արևմտյան Վրաստանում տեղի ունեցան սիրտ մորմոքող դեպքեր: Գեներալ Ալիխանով-Ավարսկին պատժիչ ջոկատի գլուխն անցած, շարժվում ե դեպի այդ կողմն ու ամբողջ նահանգը սրի ու հրի ճարակ դարձնում: Ալ-բոցերի մեջ այրվեցին ավաններ ու գյուղեր: Սկսեցին գործել զինվորա-դաշտային դատարանները: Գազանացած կազակները խուժեցին ժողովրդի վրա, տեղն ու տեղն սպանելով մի փոքր անգամ կասկածելի մարդկանց: Վրա հասան դաժան,

ան օրեր, յերբ բախտավորություն էր համարվում ձերբակալվելուց հետո կենդանի բանտ հասնելը: Հունվարի վերջերին ձերբակալվեցին ընկ. Դուլյա Ռեվազիշվիլին և Թեոֆիլ Ծվերիձեն: Գաղտնաբար գնդակահարեցին նրանց սպիտակ կամուրջի մոտ, վոստիկանական բաժնից բանտ տանելիս: Հունվարի 27-ին ցերեկով ձերբակալեցին ինձ ու տարան կենտրոնական վոստիկանական վարչություն: Վճռված էր իմ հաշիվս էլ մաքրել, ինչպես Ռեվազիշվիլուն ու Ծվերիձեյին, սակայն ընկերներիս հաջողվեց ազդել վոստիկանապետ Տեր-Անտոնովի վրա. ազդեցիկ մարդկանց միջոցով: Վերջ ի վերջո նա անձամբ յեկավ վոստիկանական բաժանմունքն ու իմ ներկայությամբ կարգադրեց պրիստավին, վոր գիշերները ինձ պահեն վերևում, Թաղապետի սենյակում, իսկ կազակների պահանջին, վոր ինձ տան գնդակահարելու, պատասխանեցին, թե՝ ինձ արդեն տարել են բանտ: Այնուամենայնիվ կազակներն ամեն գիշեր գալիս եյին ու պահանջում, վոր ինձ դուրս տան, բայց քթերը կախած յետ եյին գնում:

Յերրորդ օրը ցերեկով, զինվորների ուղեկցությամբ ինձ ուղարկեցին ժանդարմական վարչություն, ուր յերես առ յերես կանգնեցրին պրովոկատոր զինվորի հետ, վորի մասին հիշեցի վերևը: Այնուհետև ինձ տարան Քութայիսի նահանգական բանտը: Յերբ ընկերներս տեսան, վոր յես կենդանի յեմ ու ինձ չեն սպանել, չափազանց զարմացան նրանք ու շնորհավորեցին ինձ: Մի ամսից հետո թյուրիմացություն պատահեց ու իմ փոխարեն աքսորեցին ինչ-վոր մի գլխարկ կարող Սերգեյ Բիբիլեյշվիլու, իսկ ինձ ազատեցին նրա տեղ:

Յերբ ռեակցիայի սանձարձակությունը մեղմվեց մի փոքր, մենք ձեռնարկեցինք քար ու քանդ յեղած կազմակերպությունների վերականգնման: Սկզբում որակարգի խնդիրն էր՝ բոյկոտ հայտնել պետական Դումային: Յերբ Դուման ցրեցին, անհրաժեշտ էր, ինչպես էլ լիներ, մեծ քանակությամբ տպագրել «Վիբորգի կոչը» ու տարածել ժողովրդի մեջ նրա լոզունգները՝ «վո՛չ մի զինվոր կառավարության, վո՛չ մի կոպեկ գանձարանին»: Այս նպատակով, կոմիտեյի վորոշմամբ, մենք օգտագործեցինք Կուրցխալիայի և Փերաձեյի յերկու լեգալ տպարանները, իսկ ընկ. Կիլաձեյի տպարանը, վորը միշտ մեզ մեծ ծառայություններ էր մատուցանում, վորոշվեց այս անգամ հանգիստ թողնել: Նշված տպարաններն ամբողջ մի օր զբաղված եյին Վիբորգի կոչերը տպագրելու համար:

1906 թվի գարնանը, թե ամառը Ջիխայիշի գյուղում տեղի ունեցավ բոլշևիկների ու մենշևիկների միացյալ համագումարը: Բոլշևիկների Փրակցիայից մասնակցում եյին Միխա Ոկուջավան ու յես, իսկ մենշևիկներից Նոյ Ժորդանիան ու Գ. Լորթքիփանիձեն:

Համագումարում քննվում եյին գլխավորապես տակտիկական խնդիրներ: Յեվ անհետաքրքիր չէ նշել, վոր Նոյ Ժորդանիան կիսով չափ թեքված էր մեր կողմը, իսկ Գ. Լորթքիփանիձեն պինդ կանգնած էր մենշևիկների դիրքերում:

ՅՈԹՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Քութայիսի բանտի տակ ական փորելն ու կարևոր քաղաքական բանտարկյալների փախուստը:

2. Պրովոկատոր Ալ. Մուսերիձեն:

3. Դարձյալ բանտում:

4. Աքսոր՝ Հարավային Ռուսաստան:

5. Իմպերիալիստական պատերազմը: Ազգայնական տապը և անորոշություն սոցիալիստների շարքերում:

6. Հարավ-արևմտյան ֆրոնտում:

1907 թվին Քութայիսի նահանգական բանտը բեր-
նե–բերան լիքն էր քաղաքականներով: Անդրկովկասի
զանազան անկյուններից ամեն որ բերում էին նոր
ձերբակալվածներ: Վարչական կարգով աքսորվածների
էտապներն անընդհատ շարժվում էին դեպի հյու-
սիս, բայց բանտի բնակչությունը չէր պակասում բը-
նավ: Այդ մռայլ տան հիմնական բնակչությունն հան-
դիսանում էին վերջին զանազան պրոցեսների մասնա-
կիցները, վոր մեղադրվում էին քրեական որենսդրու-
թյան հռչակավոր 101 և 102 հոդվածներով: Այդտեղ
կային՝ «Ղվիրիլի, Ռաճա–Լեչխումի, Զուգդիդի,
Գուրիայի և այլ հանրապետությունների» մասնակից-
ներ: Մարդիկ տարիներով նստած էին ու սպասում
էին դատի: Դրանց մեջ կային մարդիկ, վոր դատ-
վել էին յերեք–չորս անգամ ու հանրագումարում դա-
տապարտվել քառասուն, շատ անգամ և հիսուն տարվա
տաժանակիր աշխատանքների: Բանտում կային հա-
տուկ խցեր «մահապարտների» համար:Այդտեղ նստած
էին նրանք, վորոնց սպասում էր պատժի գերագույն
չափը՝ մահապատիժ կախաղանի միջոցով: Կարելի
կա՞ ասելու, վոր յուրաքանչյուր բանտարկյալի դե-
րագույն իղձն էր փախչել բանտից: Բանտում հորին-
վում էին ամեն տեսակի ծրագրեր փախուստի, բանտի
տակը փորելու և այլն: Քննած չէր նաև բանտի վարչու-
թյունը:

Բանտի պահպանությունը կազմակերպված էր շա՛տ լավ ու սովորաբար փախուստի ամեն մի փորձ վերջանում էր անհաջողությամբ:

Իբրև բացառություն պատահում եյին, իհարկե, և փախուստի մասնակի հաջող դեպքեր: Հենց 1907 թվին տեղի ունեցան այդպիսի յերկու դեպքեր: Առաջինը Ջաքարիա Գուրուլիի դեպքն էր, վորին հաջողվեց տեսակցության ժամանակ սողոսկել ցանցաձև արգելարանից, վոր բաժանում էր բանտարկյալներին այցելուներից: Հսկիչը, վոր հետևում էր տեսակցություններին ու այցելուների բերած իրերն ստանալուն, կաշառված էր, ուստի և չտեսնելու տվեց, յերբ Ջ. Գուրուլին սողոսկեց արգելակի փոքրիկ ճեղքից:

Յերկրորդ դեպքը—դա Ավրասիոն Մերկվիլաձեյի մարտական խմբի անդամներից մեկի՝ յերիտասարդ Ամբակո Սամանիշվիլու փախուստն էր, վորին ուրիշ ընկերոջ փոխարեն, իրենց հետ ետապի մեջ վերցրին Կ. Ցինցաձեն ու Մ. Բիբինեյշվիլին: Իսկ այն բանտարկյալը, վորին պիտի ուղարկեյին իսկապես, հիվանդ ձևացավ ու այդ միջոցին պառկեց բանտի հիվանդանոցում: Բայց ի՞նչ դուրս կգար մի յերկու փախըստականով: Ստեղծված պայմաններում պետք էր մի անցք փորել բանտից և այնպիսի լայնությամբ, վոր կարողանային այնտեղից անցնել մեծ քանակությամբ քաղաքական հանցավորներ:

Այս հարցն առաջին անգամ բարձրացրեց բանտում ընկ. Ցինցաձեն, վորը խոստացավ ընկերներին վարչական աքսորից վերադառնալուն պես լուրջ կերպով կպչել այդ գործին:

1907 թվի սեպտեմբերին ընկ. Ցինցաձեն փախավ

Վյատկայից ու հասավ Քութայիս: Ընկերների նեղ շըրջանում վորոշվեց սկսել բանտի տակը փորելը դըրսի կողմից:

Անհրաժեշտ էր խստագույն գաղտնապահություն: Այդ պատճառով էլ այդ հարցը նույն իսկ կազմակերպության մեջ չքննվեց: Այս գործում, վորքան ինձ հայտնի յե, մենշևիկներից սկզբում մասնակցություն ունեցավ միայն Ջ. Գուրուլին:

Քութայիսի նահանգական բանտի հարավային կողմից անցնում է Ոբոլինյան փողոցը: Այդ փողոցի սկզբին, նրա մյուս կողմը, հենց բանտի դեմ ու դեմ գտնվում էր Վարլամ Փանցխավայի միհարկանի տունը: Այդ տան ու բանտի պարսպի միջև տարածությունն հասնում էր մոտավորապես տաս-տասներկու սաժենի: Ներսից բանտի շինության ու պարսպի միջև պահակ էր կանգնած: Դրսից, Ոբոլինյան փողոցի անկյունում, Փանցխավայի տան հենց դռան մոտ կանգնած էր պահակի բուդկան, այնպես վոր տան ու բանտի պարսպի միջև նույնպես պահակ էր կանգնած: Այսպես դըրսի փորվածքը պետք էր սկսել տան միջից ու այնտեղից ամենակարճ ճանապարհով հասցնել մինչև № 1 գաղտնի խցի տակ, վոր գտնվում էր բանտի ներքին հարկում: Այդպես էլ վորոշվեց անել: Սկսվեցին նախապատրաստական աշխատանքներ:

Ձեռնարկության հաջողությանը չափազանց նպաստեց հետևյալ հանգամանքը: Դուրս յեկավ, վոր Փանցխավայի տունը միհանգամայն դատարկ էր: Իր ժամանակին այս տունը շատ վատ համբավ է ունեցել բանտային վարչության աչքում: Բանտի վերին հարկի պատուհանները նայում են ուղղակի Փանցխավայի տան

բակլին և նրա այդ դիրքերը լայն կերպով օգտագործվելիս է յեղել բանտարկյալների ազգականների ու բարեկամների կողմից։ Բանտի ու տան միջև շարունակ տեղի յեր ունենում խոսակցություն միմիկայով ու զանազան պայմանական նշաններով։ Բանտի վարչությունն, ինչպես յերևում է, պահանջ է դրել մաքրել այդ տունը բնակչությունից, և մաքրել եր, վորը մեզ համար, իհարկե, շատ նպաստավոր եր։ Պետք եր վարձել տունը և այնպես անել, վոր բնակվողները լինեն մեր վստահելի ընկերներից։

Շա՜տ մեծ ռիսկ եր, իհարկե, բայց գտնվեցին ընկերներ, վորոնք վո՛չ մի բանի առաջ կանգ չեյին առնի։

Տան մեջ բնակվեցին՝ . 1) մեր հին ընկեր Ցեր. Լոմթաթիձեն, վոր առաջ կառավարում եր անլեգալ գրականության պահեստը, 2) ընկ. Մարո Բոճորիձեն, իբրև ընկ. Լոմթաթիձեյի «կինը» և 3) Նատաշա Կալանդաձեն, իբրև նրա «քույրը», վոր հետագայում դարձավ մեր հանգուցյալ ընկեր Ակակիա Դալաքիշվիլու կինը։ Ահա այս յերրորդությունը, վոգեվորված մեր դժվարին մտադրությամբ, հաստատվեց Փանցխավայի տանը։ Բոլոր ընկերներն ուրիշի անձնագրերով եյին։ Ընկ. Լոմթաթիձեն վարձեց տունը վեց ամսով ու ըսկըզբից վճարեց ամբողջ քրեհը։

Իմ տնից վերցրին կնոջս՝ ընկ. Լ. Բիբինեյշվիլու գուլպա գործելու մեքենան իր բոլոր անհրաժեշտ պարագաներով։

Բոլոր «համր խոսակցությունները» բանտի հետ դադարեցին։ Անշուշտ բանտի վարչությունը չափազանց գոհ մնաց այս բանից։

Փանցխավայի տունը դարձավ «գուլպայի գործա-
րան»։ Պատուհաններից, իբրև օրինակներ, ցուցադըր-
վեցին գուլպաներ։ Գործարանի լուրը տարածվեց շըր-
ջակա բնակչության մեջ։ Ստացվեցին պատվերներ։
Գալիս եյին նաև բանտի ծառայողներից շատերը։ Բան-
տի վարչությունը կատարյալ վստահությամբ եր վե-
րաբերվում տան բնակիչներին, վորոնք ամենափոքր
ցանկություն անգամ չեյին ցուցաբերում խոսակցել
բանտարկյալների հետ։

Ականի (տունել) վրա աշխատանքն սկսվեց տան
նկուղային հարկից։ Փորած հողը վորոշեցինք կիտել
հենց նկուղում։ Բերինք փորելու համար կարևոր գոր-
ծիքներ։

Ընկ. Կ. Ցինցաձեն և Բ. Կուպրաշվիլին Ճիաթու-
րայից յեկած յերկու հանքափոր բանվորների օգնու-
թյամբ սկսեցին աշխատանքը։ Յեթե հիշողությունս չի
խաբում ինձ, այդ փորելու աշխատանքներին մասնակ-
ցում եյին մեր ընկերներից (արդեն մեռած) նաև՝ Իլիկո
Ճաճխաշվիլին, Ակակի Դալաքիշվիլին և Կ. Փարջանա-
ձեն։ Ստիպված եյին աշխատել նախապետական պրի-
միտիվ գործիքներով։ Այդ պատճառով էլ քանի գործն
առաջ եր գնում, այնքան դժվարանում եր աշխատանքը։
Գետնի տակ օդ չկար շնչելու, մոմը հանգչում եր, յեր-
մարդու շունչը կտրվում։ Պայքարի մեջ կոփված, յեր-
կաթե կամքի տեր հեղափոխականը միայն կարող եր
սկսել ու իր վախճանին հասցնել այս գործը։

Աշխատանքը մոտենում եր իր վախճանին, յերբ
հանկարծ մի աննշան դեպք քիչ եր մնում փչացներ այն-
քան հաջող սկսված ու առաջ տարված գործը։

Տնատեր Փանցխավան, ինչպե՛ս է յեղել, իմացել է,

վոր իր տանից անցք են փորում դեպի բանտը: Նա լիկույն վազ է տվել ու կամեցել է մտնել նկուղը, բայց մերոնք թույլ չեն տվել նրան, առարկելով, թե՝ բնակվողը տանը չե և բանալիքն էլ հետը տարել է, թող մի փոքր հետո գա: Յերբ Փանցխավան հեռանում է, ընկ. Ցեր. Լոմթաթիձեն հետևում է նրան, թե չլինի՞ հանկարծ շուռ գա դեպի «կասկածելի տեղեր»:

Գաղտագողի Փանցխավային տեղ հասցնելուց հետո ընկ. Լոմթաթիձեն վազ է տալիս ինձ մոտ ու պատմում դեպքի մասին: Ամպի պես յես վորոտացի զարմանքից ու հանդիմանանքներով հարձակվեցի նրա վրա:

Յես չեյի հասկանում, թե ինչպես նրանք, այդպիսի փորձված մարդիկ, չմտածեցին անմիջապես ձերբակալել Փանցխավային ու օգտագործել տունելի աշխատանքներում: Կարելի յեր հարկադրել նրան, վոր մի նամակ գրի ընտանիքին, վոր իբր ինքը գնացել է Թիֆլիս և կվերադառնա մի շաբաթից հետո: Նամակը կարելի յեր փոստարկղը գցել Թիֆլիսում:

Բայց բանը բանից անցել եր արդեն: Հիրավի, նա չեր հանդգնի մատնել մեզ, բայց կարող եր օգտագործել մեր գաղտնիքն ու մեր վզին փաթաթել զանազան պայմաններ, վորոնք մենք հարկադրված կլինենք կատարել: Այդ եր իմ հանդիմանանքներիս միտքը: Ընկ. Ցեր. Լոմթաթիձեն համաձայն եր ինձ հետ բոլոր կետերում: Նա արդարանում եր միայն նրանով, վոր Փանցխավան շատ անպասելի կերպով եր հայտնվել ու նրանք դրա շնորհիվ հնարավորություն չեյին ունեցել մտածել, թե՝ ինչպես դուրս գան ստեղծված դրությունից:

Այժմ մեզ մնում եր միայն մի բան՝ գտնել վորևե ազդեցիկ անձնավորություն ու նրա միջոցով պայմանավորել Փանցխավայի հետ, խոստանալով նրան վճարել բոլոր այն վնասները, վոր կարող եյին հասնել նրան մեր ձեռնարկությունից: Մեր ընտրությունն, իբրև այդպիսի անձնավորության, կանգ առավ հին հեղափոխական ու հասարակական գործիչ Գեորգի Զդանովիչի վրա:

Մենք անկեղծորեն կարող եյինք պատմել նրան բոլորը, իսկ Փանցխավայի համար նա բավականաչափ հեղինակավոր եր: Վորոշվեց Գեորգի Զդանովիչի հետ բանակցել մենշևիկ Լորթքիփանիձեյի միջոցով, վորը ընկ. Լ. Ցինցաձեյի ու Ցեր. Լոմթաթիձեյի ուղեկցությամբ գնացին Գ. Զդանովիչի մոտ: Վերջինս 3000 ռուբլու մուրհակ տվեց Փանցխավային, և հետագայում մենք հարկադրված լիովին վճարեցինք այդ գումարը:

Սեպտեմբերի 25-ին յերեկոյան տունելը պատրաստ եր: փախուստը պիտի կատարվեր մյուս որը՝ սեպտեմբերի 26-ին ցերեկվա ժամի 4-ին քաղաքականների ընդհանուր զբոսանքի ժամանակ:

Նախապատրաստված եյին բոլոր մանրամասնությունները: Մենք կազմել եյինք բոլոր այն ընկերների ցուցակը, վորոնք պիտի փախչեյին ու մշակել փախուստի կարգը: Ցուցակի մեջ մտել եյին 37 քաղաքական բանտարկյալներ: Բանտում ջոկված եր ընկերներից մի փոքրիկ խմբակ, վորը պիտի ղեկավարեր փախուստը բանտի ներսում:

Փախուստին մասնակցողներից մեկը՝ բելետրիստ Լեո Քիաչելին այսպես է նկարագրում փախուստի պլա-

նի մշակումը բանտի ներսում ու նրա կիրառումը կյան-քում.

«Աշխատանքի ներգրավեցինք վարչական մեղա-դրյալներից այնպիսի վստահելի ընկերների, վորոնք անձամբ շահագրգռված չէին փախուստի գործում: Մեկին հանձնարարվեց հսկել № 1 գաղտնի խցի մոտ, վորտեղից բանտարկյալները պիտի իջնեյին ականը: Նրա ձեռին կար յերկու թաշկինակ-կարմիր ու սպի-տակ: Յեթե վտանգ չկար ու ճանապարհն ազատ էր, նա պիտի բարձրացներ իտես սպիտակ թաշկինակը և բանտարկյալները մեկը մյուսի յետևից բակից պիտի մտնեյին գաղտնի խուցն ու այնտեղից անցնեյին ակա-նով: Իսկ յեթե վորևե պատճառով կարևոր լիներ առ-ժամանակ դադարեցնել փախուստը, նույն ընկերն ի ցույց պիտի բարձրացներ կարմիր թաշկինակը, վորը տեսնելուն պես բանտարկյալները կանգ պիտի առնեյին ու չմտնեյին գաղտնի խուցը, մինչև վոր կարմիր թաշ-կինակի տեղ ընկերոջ ձեռին կերևար սպիտակը: Մի ուրիշ ընկեր վերին հարկից հսկում էր Փանցխավայի տան ու բակի վրա: Տան կողմից վտանգի ազդանշան ստացվելու դեպքում հիշյալ ընկերն անմիջապես հա-տուկ սուրհանդակ պիտի ուղարկեր բանտի ներքին մա-սը և հաղորդեր ընկերներին վտանգի մասին:

Ընկերներից մեկը շրջում էր բանտի բակում ու ցու-ցակով կանչում հերթով փախուստի կանդիդատներին, նրանցից յուրաքանչյուրին առաջարկելով զգուշու-թյամբ գաղտնի խցով իջնել ականը: Կանչված ընկերը, կարծես զբոսանքից հոգնած, դանդաղ շարժվում էր ա-ռաջ:

Երբ հերթական փախստականը դուրս էր գալիս

տունելից (ականից), համապատասխան ձևով ի-մաց էր տրվում ցուցակով կանչվող ընկերոջն և նա կանչում էր հետևյալին:

Վարչական կարգով համարվող բանտարկյալ Վիկ-տոր Քավթարաձեին հանձնարարված էր զբաղեցնել ներքին հարկի վերակացուին բանտային խանութում: Ընկ. Քավթարաձեն պիտի հյուրասիրեր նրան հավի մսով, վոր նախօրոք պատրաստված էր այնտեղ:

Ջուղինիձեյի գաղտնի սենյակում, վոր գտնվում էր բանտի վերին հարկում, բանտային յեկեղեցու դեմ ու դեմ, սենյակի տերն ամենքին կոնյակ էր բաժանում, վորպեսզի աշխույժ տրամադրություն ստեղծի ակա-նով ճանապարհորդելու համար: Չգիտեմ այս միտքն ո՞ւմ գլխումն էր ծագել ամենից առաջ, բայց պետք է ասած, վոր «կոնյակով հաղորդվելու» գործողությունն անպայման աշխուժացնող ազդեցություն էր ունենում: Ընկ. Թոմա Ջուղինիձեն ամենքին առանձնապես տա-նում էր իր սենյակն ու կամացուկ մի բաժակ կոնյակ տալով, ասում՝ «տե՛ս, վախկո՛տ չլինես»:

Տունն առաջուց դատարկված էր: Այնտեղ մնացել էին միայն ընկ. Ցերեմիան, Մարոն ու Նատաշան: Բանտից վոչ հեռու կանգնած էին յերկձի կառքեր, կամ ինչպես մեզանում են անվանում «ֆայետոններ»: Ընկերները տունելից դուրս գալով, մոտենում էին այդ ֆայետոններին, փոխադարձ ասում իրար նախօրոք պայմանավորված նշանաբանը ֆայետոնին ուղեկցող հատուկ ուղեցույցների հետ և ապա ուղևորվում նա-խօրոք պատրաստված բնակարանները:

Փախստականների մեծ մասը, վորը վոտքով, վորը ֆայետոնով յեկան «Գուրիա» հյուրանոցը, վորտեղ յես

ապաստում եյի նրանց մի քանի ընկերների հետ միասին: Մենք այդտեղ բաժանում եյինք նրանց զանազան տների վրա, ընդ վորում մինչև նշանակված տեղը փախըստականներին ուղեկցում եյին դարձյալ նույն հատուկ ուղեկցույցները:

Պետք է ասած, վոր այս փոքրիկ, բայց հանդուգն մտածված ու հաջող իրագործված ձեռնարկը միանգամայն արդարացրեց այն հին ասացվածքը, թե՝ ավելի հեշտ է հեղափոխությունը կատարել, քան կանգնեցնել նրա նվաճումները:

Մեր ամբողջ ուշադրությունը մենք կենտրոնացրել եյինք ականը (տունելը) փորելու վրա, իսկ փախչող ընկերներին թաքցնելը մեզ թվում եր դատարկ բան: Սակայն գործնականում բոլորովին ուրիշ բան դուրս յեկավ: Միանգամայն իրավացի յեր ընկ. Լ. Ցինցաձեն, վոր նկատեց, թե՝ «պետք է ասել, վոր ականը փորելու կազմակերպումն անհամեմատ ավելի հեշտ բան եր, քան փախած ընկերներին տեղավորելը: Դրանց համար պետք է բնակարան գտնել, փող, հագուստ, փոմանց ուղարկել Թիֆլիս, նախորոք դեմքերը ծածկելով դիմակներով և այլն: Մի խոսքով՝ ահագին գործ կա դեռ, և դուրս յեկավ, վոր այդ գործն ավելի բարդ է, քան հողը փորելն ու ընկերներին դուրս բերելը»:

Ցեվ իսկապես, հանա՞ք բան է միթե, մի փոքրիկ մեշչանական քաղաքում, ինչպիսին եր Քութայիսը, փորել վո՛չ թե փոքրիկ անցք, ինչպես առհասարակ մենք անվանում եյինք այն, այլ իսկապես տունել ամբա ցրած կամարներով, լուսավորությամբ, 12–13 սաժեն յերկարությամբ, վորտեղից փախան մինչև քառասուն հոգի ամենալուրջ քաղաքական հանցավորներ, վոր

նստած եյին չարունակ մահապատժի, տաժանակիր աշխատանքների ու Սիբիր աքսորվելու սպառնալիքի տակ: Ցեվ այս բանը կատարվեց որը ցերեկով: Սրանից հետո ինչացո՞ւ եյին Քութայիսի ժանդարմերայի աչքերը:

Ցեվ հիրավի, վառքի հանեցին տեղական վողջ ժանդարմերիան ու վոստիկանությունը: Նրանք գործ դրին ամե՛ն միջոց, վորպեսզի գտնեն փախուստը կազմակերպողներին ու նորից ձերբակալեն բանտից փախած քաղաքական հանցավորներին:

Քաղաքական հանցավորների այսպիսի հանդուգն ու հաջող փախուստն ահագին վոգևորություն առաջ բերեց աշխատավորության մեջ ու բավական լուրջ յերկյուղ պատճառեց հասարակության քաղքենի մասին: Ծըն-

Վոստիկանությունը չափչփում է քաղաքը:
չումները չափազանց խստացան: Շատ դժվար դարձավ փախած ընկերներին թաքցնելը:

Մինչև իսկ ազնվական-ինտելիգենտ մասն հասարակության համակրանքով վերաբերվեց փախուստին ու ամեն կերպ աջակցեց մեզ, տալով շատ հարմար գաղտնի անկյուններ փախստական ընկերներին թաքցնելու համար:

Այս հողի վրա տեղի ունեցան և կուրյոզներ: Այսպես, որինակ, քաղաքական փախստականներից մեկը՝ Տենդինյան գնդի նախկին զինվոր Մոյսեյ Բեյալերը թաքնվում է նահանգապետի գրասենյակի «չերդաքում», շնորհիվ նույն գրասենյակի մի խոշոր աստիճանավորի՝ Բաղուա Ձիքովանու, վորն ինքն եյ տանում եր ամեն որ ընկ. Բեյալերին կերակուր:

Ավելի մեծ չափով նպաստեց ու աջակցություն

ցույց ավեց ազնվականության գավառական պարագլուխ Կոծխա Երիսթավին: Վերջինս իր հովանավորության տակ վերցնելով անմոռաց ընկեր Թոմա Ջուբինիձեյին—քաղաքական փախստականներից ամենածանր «հանցավորին», անձամբ ուղեկցեց նրան մինչև Ռիոն կայարանն ու այնտեղից էլ ճանապարհ դրեց Թիֆլիս:

Ավելորդ է ասել, թե՝ վորքա՛ն վտանգավոր բան էր սա նրա համար այն ժամանակներում:

Ինչ վերաբերում է մենշևիկներին, նրանք մասամբ չխփեցին փախստին օգնելու համար և կոպեկ չըծախսեցին տոնելը փորելու վրա: Տոնելը փորելու գործում նրանց ամբողջ մասնակցությունն արտահայտվեց նրանով, վոր Զ. Գուրուլին մի քանի օր մասնակցեց փորելու աշխատանքներին և Գրիշա Լորթքիփանիձեն, ինչպես վերևն ասել ենք, մեր ընկերների հետ միասին բանակցություն վարեց Գ. Ջղանովիչի հետ:

Ընկերներից մեծագույն մասն իրենց միանգամայն ապահով էյին զգում իրենց հատկացված բնակարաններում ու անկյուններում: Նրանցից չորս թե հինգ հոգի միայն չվստահանալով քաղաքի բնակարանների վրա, մտածում են, ինչպես հետո պարզվեց, անմիջապես ուղեվորվել իրենց տները, բայց Մուխրանի կայարանում ձերբակալվում են ու նորից վերադարձվում բանտ: Դրանց թվում էր և ընկ. Գեղենիա Կաճարավան:

Մի քանի օրից տեղեկություն ստացանք, վոր մեր ընկերներից յերկուսը՝ Զ. Ասաթիանին և Լ. Քիաչելին թափառում են Գողոզանի անտառներում: Ցես իսկույն ուղարկեցի այնտեղ ընկ. Գ. Ժվանիային, վորն ընկերներին բերեց Քութայիս: Կարող եմ առանց չափազան-

ցության ասել, վոր փախած ընկերներին թագցնելու և ավելի ապահով տեղեր ուղարկելու ամբողջ ծանրությունն ընկած էր ինձ վրա, ըստ վորում յես ամենից լավ ճանաչում էյի ազգաբնակությունը ու ծանոթ էյի տեղական պայմաններին:

Ցերբ հիշում եմ այն բոլոր հոգսերը, վազվզոցը, բանակցությունները, ինձ ապշեցնում է վո՛չ թե այն անսպառ ջեռանդը, վոր այն ժամանակ հայտաբերում էյինք մենք բոլորս, այլ ինձ զարմացնում է այն հանգամանքը, վոր այս ամենը գաղտնի մնաց վոստիկանական վարչությունից: Ախր պետք էր բնակարաններ գտնել, չուկայում հագուստներ գնել, անձնագրեր պատրաստել ևայլն: Ցեվ այս ամենը յես ստիպված էյի անել գրեթե մեն-մենակ:

Իր հիշողությունների մեջ ընկ. Կ. Ցինցաձեն գըրում է (տես «Հեղափոխության որագիրը» № 4, յերես 74). «Ամենաջեռանդուն աշխատանք էր տանում ընկ. Բիբինեյշվիլին: Համարձակ կարելի յէ ասել, վոր տեղական ընկերներից միայն նրա վրա յէր ծանրացած փախստականների հոգսը: Ի միջի այլոց, յես ինքս թագնված էյի նրա մոտ: Ամեն կարևոր բանի համար դիմում էյին նրան: Մեկին վարսավիրա յէր հարկավոր, մյուսին՝ հագուստ, յերրորդին՝ բնակարան,—և այս ամենը պիտի հոգար ընկ. Բիբինեյշվիլին: Նա կաշվից դուրս էր գալիս, բայց հասցնում ու հոգում ամեն ինչ: Այդպիսով մենք յերեքով՝ Բարոնը, յես ու Կուպրաչվիլին զբաղված էյինք փախստականների խնամքով ու նրանց Թիֆլիս տեղափոխելով»:

Վորոշվեց առաջին հերթին ուղարկել համեմատաբար ավելի ծանր «հանցավորներին», իսկ հետո արդեն

նրանց, որոնց ավելի քիչ վտանգ էր սպառնում: Ամենից առաջ ուղարկեցինք Մոյսեյ Բեյտլերին, որին մինչև Թիոն կայարանն ուղեկցեց Ալ. Մուսերիձեն: Հետո ճանապարհ դրինք Թոմա Զուբինիձեյին ու Իսմայիլ Ծումբուրիձեյին: Մենք արդեն յերրորդ խումբն էինք պատրաստում, յերբ հանկարծ հոկտեմբերի 2-ի (հին տոմարով) լուսաբացին ոստիկանությունը շրջապատեց Արխիյերեյան լեռն ու սկսեց ամենախիստ խուզարկություն: Ոստիկանները տակն ու վրա էին անում տները, թփերը, ցանկապատները... Այն գիշեր Արխիյերեյան լեռան վրա թաքնվել էին մի քանի ընկերներ, որոնց թվումն էին և Սաշա Ստեփանովն ու Դաթիկո Սուլխաշվիլին: Յերբ սկսվում է խուզարկությունը, ընկ. Ստեփանովը դուրս է գալիս տնից ու թաքնվում թփերում, սակայն այնտեղից շուտով դուրս են հանում նրան: Դ. Սուլխաշվիլին ազատ մնաց: Նա թաքնվել էր մայր յեկեղեցու տիրացու Կանդելակու մոտ (որ հարել էր բոլշևիկներին):

Այդ խուզարկությունն ու տապալումը մեզ համար կատարյալ անակնկալ էր: Մենք ընկճվեցինք, բայց այնուամենայնիվ նպատակ դրինք ինչ էլ որ լինի փրկել մնացած ընկերներին: Իսկ դրա համար անհրաժեշտ էր փութացնել նրանց տեղափոխությունը:

Յես այնքան պարզ մտաբերում եմ այդ ժամանակները, որ կարծես հենց յերեկ է կատարվել բոլորը:

Օրը կիրակի յեր: Աշնանային հրաշալի յեղանակ: Յես ու վերոհիշյալ Կանդելակին ամբողջ օրն առանց հոգնելու շրջում էինք շուկայում: Գնեցինք յերեք ձեռք հագուստ—յերկուսը տղամարդու և մեկը կանացի: Յերեկոյան յես հրավիրեցի ինձ մոտ՝ բնակարանս ան-

կուսակցական, բայց միանգամայն վստահելի մի վարսավիրայի բոլոր կարևոր պարագաներով, ներառյալ և պարիկները: Տաս ուրբլու անձնագրի բլանկներ գնեցի մեշչանների ավագ Իսմայիլ Գոգոլաշվիլուց, որ անձնագրեր էր մատակարարում ս.-ռեվոլյուցիոներական կազմակերպություններին: Կանչեցի ինձ մոտ նաև Ս. Մուսերիձեյին և տիրացու Կանդելակիին, որպեսզի ուղեկցեն գնացող ընկերներին: Ընկ. Կ. Ցինցաձեյին կանչելու կարիք չկար, որովհետև նա միշտ ինձ մոտ էր ապրում: Պետք է ուղարկեյինք յերեք ընկերների՝ Ալեքսանդրե Զիքավային, Լավրենտի Եսվանջիային և Ջոխաձեյին:

Մթնում է: Սենյակումս յեռում է աշխատանքը: Վարսավիրան փախստականներից մեկին թրաշեց, մյուսին պարիկ դրեց: Ջոխաձեն բոլորովին յերիտասարդ էր, վարսավիրան նրան միայն պուդրի քսեց: Կոտեն այդ միջոցին նրա հագուստն էր չափում: Նրան մենք կանացի շոր հագցրինք: Իր ամբողջ դեմքով նա շատ նման էր կնոջ, բայց քայլվածքը բոլորովին տղամարդու յեր: Մենք շատ ծիծաղեցինք ու համոզում էինք, որ սովորի մանր քայլերով ման գալ:

Ահա բոլորը հագնված են, սանրվածքները կարգին, բոլորը միանգամայն կերպարանափոխվել են ու անճանաչելի դարձել: Ալ. Զիքավան խնդրում է իրան ամենավստահելի անձնագիրը տալ: Յես ջոկեցի նրա համար գավառական վարչության բլանկներից մի հատ ու սկսեց ինչ-որ մեկին տրված իսկական անձնագրի բնագրից արտագրել տեղեկանքները: Մեջ է ընկնում Ալփես Մուսերիձեն և խնդրում, որ ջոկեմ մեշչանական վարչության բլանկներից: Յես չեմ լսում նրան ու

չարունակում եմ աշխատանքս: Մուսերիձեն սկսեց ապացուցել Ալ. Զիքավային, վոր մենշևիկյան վարչության անձնագրերն ավելի վստահելի յեն: Վոչ վոք, ինարկե, դրան ուշադրություն չդարձրեց: Յես հանաքով նկատեցի միայն՝ «Դու, յեղբա՛յր, մի վախեցնի էս մարդկերանց: Իսկ դու, Թանգադին Ալեքսանդր (Զիքավա) ինձ ավելի հավատա, քան նրան: Ամեն այսպես թե այնպես, ինչքան էլ լինի, վոստիկանական ծառայող է»:

Բոլորը ծիծաղեցին ու այդ նյութի մասին խոսակցությունն այլևս դադարեց:

Բոլորիս տրամադրությունն էլ հրաշալի յեր: Մենք չափազանց բավարարված եյինք զգում մեզ, վոր ընկերներին աշխարհ ենք բաց թողնում այսպես ասած կատարելապես զինված: Կոտեն ու յես համբուրեցինք ճանապարհ ընկնող ընկերներին:

Յես համբուրեցի նաև Ալ. Մուսերիձեյին ու ասացի, վոր սովորականի պես խելոք ու զգույշ հասցնի նրանց մինչև Ռիոն կայարան ու այնտեղից էլ ճանապարհ դնի Թիֆլիս: Յես խնդրեցի նրան անմիջապես ինձ իմաց տալ, յեթե ճանապարհին վորևե անախորժություն պատահի:

Ուշ եր արդեն: Անկողին մտանք, բայց քներս ինչ-վոր չեր տանում: Ընկ. Կոտեն խախտեց լռությունն ու ինձ հարցրեց՝

—Ո՞վ է այդ աստիճանավորը, վոր այդպես յեռանդով ոգնում է մեզ:

Յես պատմեցի նրան, թե՝ վո՛րտեղից նա հայտնվեց, ով է և ի՛նչ ծառայություններ է մատուցել մեզ:

Կոտեն շուտով քնեց: Յես լռեցի ու մտքերիս մեջ

թաղվեցի: Իմ էլ քունս տանում եր արդեն, յերբ հանկարծ լսվեց զանգի ձայնը: Իսկույն մտքիցս անցավ, թե՝ չլինի՞ «վոստիկանությունն է»: Յես սկսեցի ձայն տալ Կոտեյին ու հենց այդպես էլ յենթադրաբար ասացի, թե՝ վոստիկանությունն յեկել է, պետք է ծլկել: Նա ինչ-վոր փնթփնթաց ու տեղից չշարժվեց: «Դեհ՛, գլուխդ քարը, վոր չես ուզում զարթնել: Չես վեր կենա, կգան կբանտարկեն ու գնա այն ժամանակ քեֆ արա», ասացի յես բարկացած ու քայլերս ուղղեցի դեպի դուռը: Բաց արի դուռն ու տեսա ֆայետոնի մոտ պադեզդի առաջ կանգնած Մուսերիձեյին: Դողը ջանս ընկավ: Յես հասկացա, վոր մերոնց ձերբակալել են: «Այս բոլորը Մուսերիձեյի սարքածը չի՞ արդյոք» մտքիցս անցավ հանկարծ, բայց յես իսկույն թողի այդ միտքն ու հարցրի Մուսերիձեյին՝ «Հը՞, ի՞նչ կա, ի՞նչ է պատահել»:

—«Բոլորն ընկան: Հենց վոր վագոն նստեցինք, մեզ շրջապատեցին, նրանց ձերբակալեցին, յես հազիվ ազատվեցի»:

Հետագա խոսակցությունից պարզվեց, վոր նրանց ձերբակալել է գավառապետն իր պահակներով, թեև կայարանը գտնվում է քաղաքում և յենթարկվում է վոստիկանապետին:

Յես ասացի Մուսերիձեյին, վոր վաղն առավոտյան անպատճառ մտնի ինձ մոտ բանկը: Կոտեն ու յես ընկանք մեր մահճակալներին, վշտից առանց մի խոսք անգամ ասելու իրար:

Վերջապես, խելքս գլուխս յեկավ ու յես հայտնեցի Կոտեյին այն միտքը, վոր ծագել եր մեջս Մուսերիձեյին տեսնելիս: Յես սկսեցի ապացուցել, վոր ընկերնե-

լին Մուսերիձեն է մատնել: Յես հիշեցի, թե ինչպես նա չեր ուզում, որ ընկերներին իր բերած բլանկներից անձնագրեր տանք: Կասկածելի թվաց և այն, որ ընկերներին ձերբակալել է դավաճանը և ոչ ոստիկանությունը:

Ինչպես յերևում է Մուսերիձեյի մասին կասկած եր ծագել և Կոտեյի մեջ, բայց Կոտեն նրան քիչ եր ճանաչում և ընդամենը, ախր մի քանի ժամ առաջ եր, որ յես պատմեցի նրան, թե ով է Մուսերիձեն և ի՞նչ է արել նա կուսակցության համար:

Մենք կատարյալ վիճաբանություն բաց արինք, կարծես դատում եյինք Մուսերիձեյին ու մեզնից ամեն մինը կարծես դատվող մի կողմն եր ներկայացնում: Յերբ յես պաշտպանում եյի, Կոտեն մեղադրում եր և ընդհակառակը:

Մենք տակն ու վրա արինք Մուսերիձեյի չորս տարվա գործունեյությունն ու խիստ քննության յենթարկեցինք: Մենք վերադնահատեցինք նրա գործունեյության ամենափոքր մանրամասնությունները անգամ, որ հայտնի եյին մեզ: Արդեն լուսանում եր, յերբ մենք յերկուսս ել յեկանք այն յեզրակացության, որ լուրջ նկատառումներ կան, որ մերկացնում են Մուսերիձեյի մատնությունը:

Պետք եր կամ բոլորովին կասկածը ցրել, առանց տարածելու այն, կամ հաստատել, ինչպես ել լիներ: Յես այդ գործը վերցրի ինձ վրա, որովհետև հինգ մատիս պես ճանաչում եյի Մուսերիձեյին: Նա առհասարակ յերևում եր միամիտ յերեխայի պես և յես կարծում եյի, թե նա չի կարող խաբել ինձ: Իմ կարծիքները յես հաղորդեցի Կոտեյին ու խնդրեցի յերեք օր

միայն ոչ ոքի ոչինչ չասել այս գործի մասին: Յես փորձի համար ուզում եյի Մուսերիձեյին որևե հանձնարարություն անել կամ հայտնել դիտմամբ հնարված որևե գաղտնիք: Կոտեն համաձայնեց: Պետք եր գործել:

Ինչպես պայմանավորվել եյինք, Մուսերիձեն նշանակված ժամին յեկավ ինձ մոտ բանկը: Սկզբում մենք խոսեցինք մի քիչ տեղի ունեցած փորձանքի մասին: Այնուհետև յես շատ զգուշությամբ խոսք բաց արի ընկերների մասին: Յես սկսեցի հայհոյել ու հանդիմանել նրանց, որ ամբողջ աշխատանքը բարձել են ինձ վրա ու ոչ ոք նրանցից չի օգնում ինձ, բացի Կոտեյից: Ասենք Կոտեն ել մի բան չի, նա յել ծույլի մեկն է: Մինչև անգամ յերեկ, յերբ կարծում եյինք, թե ոստիկանությունը թափվել է վրաներս, նա տեղից ել վեր չկացավ, որ փախչենք: Բոլոր բանտից փախածները, բացի Բեյալերից ու յերեկվա ձերբակալվածներից, գտնվում են այստեղ: Դրանց բնակարան է հարկավոր, խնամք է հարկավոր և յես չգիտեմ մենակ ի՞նչ անեմ: Յես ուրախությամբ կթողնեյի այս ամենը, բայց ընկ. Թոմա Զուբինիձեյին եմ ափսոսում միայն: Յեթե այսօր ևեթ նրան չփոխադրեմ մի ուրիշ բնակարան, նա կորած է, անպայման կգտնեն նրան ու կձերբակալեն: (Մինչդեռ ընկ. Թ. Զուբինիձեն արդեն Թիֆլիսումն եր):

Մոտավորապես այսպես խոսեցի յես Մուսերիձեյի հետ: Նա առաջարկեց ինձ Թ. Զուբինեձեյին փոխադրել իր բնակարանը: Յես հրաժարվեցի այդ առաջարկից, հայտնելով, որ դա անհարմար է: Նա ապրում է աներոջ տանը, որի մոտ հազար ու մի մարդ է գնում-գա-

լիս, մեկն ու մեկը լեզվից բաց կթողնի և Ջուբինիձեն կկորչի։ Սակայն, յեթե մինչև յերեկո համար սենյակ չճարեմ, ստիպված կլինեմ դիմել իր աջակցությանը։ Յես խնդրեցի նրան հանդիպել ինձ մոտ յերեկոյան ժամի վեցին կամ յոթին։ Մենք բաժանվեցինք։ Ճիշտ ժամի վեցին նա իմ բնակարանումս եր։ Յես շնորհակալություն հայտնեցի նրան ճշտապահության համար և ասացի, վոր ընկ. Ջուբինիձեյի համար հաջողվեց ինձ սենյակ գտնել հաշվապահ Ս. Կորիձեյի մոտ, վոր ծառայում է Փ. Ճելիձեյի գինու պահեստում։ Ամեն տեսակետից բնակարանը շատ լավն է, միայն մի անհարմարություն կա, այն է, վոր արդեն մի քանի հոգի գիտեն մեր այդ գաղտնիքը։ Բայց ի՞նչ արած. յես այլևս վոչինչ չեմ կարող անել, ինչ վոր լինելու յե, թո՛ղ լինի, կորչելու յե, թո՛ղ կորչի։ Խոմ չեմ կարող յես բոլորի փոխարեն նահատակվել։

Յես սեղմեցի Մուսերիձեյի ձեռը և նա գնաց։ Իսկ ինքս իսկույն վազեցի կարմիր կամուրջի մոտ Ճելիձեյի գինու պահեստն ու գտնելով Կորիձեյին, նախազգուշացրի, թե շպիկներն ինձ հետևում են։ Նրանք տեսել են, թե ինչպես անցյալ անգամ յես մոտ այստեղ։ Շատ հավանական է, վոր հենց այսոր նրան խուզարկեն, ուստի տանն ինչ վոր կասկածելի բան ունի, թո՛ղ այրի։

Մյուս որը յես վոչ Մուսերիձեյին տեսա, վոչ Կորիձեյին։ Յերրորդ որն առավոտյան վաղ յես վազեցի Ճելիձեյի պահեստն ընկ. Կորիձեյի մոտ։ Դեռ ինքս վոչինչ չհարցրած, նա ինքն ինձ հայտնեց, թե՝

— «Ի՛նչ լավ ժամանակին նախազգուշացրիր։ Հենց նույն գիշերը գավառապետն իր պահակներով յեկավ

ինձ մոտ ու վողջ տունն ու տեղս տակն ու վրա արեց։ Հորեղբորս վորդին հյուր եր ինձ մոտ։ Քիչ եր մնում են խեղճին ձերբակալեյին։ Նրանց մոտ ինչ վոր լուսանկարներ կային։ Շարունակ նայում եյին այդ նկարներին ու հորեղբորս վորդուն։ Ինչպես յերեվում եր, համեմատում եյին»։

Այժմ ամեն ինչ ինձ համար պարզ եր։ Յես ոձի խեթածի պես տուն ընկա։ Շարունակ մտածում եյի, թե այս փաստը բավակա՞ն է արդյոք իբրև ապացույց, վոր Մուսերիձեն պրովոկատոր է։

Յես վորոշեցի խոսել այս մասին Կոտեյի հետ ու քայլերս ուղղեցի դեպի նրա տունը։ Բուլվարի մոտ, միանգամայն անսպասելի կերպով հանդիպեցի Մուսերիձեյին։ Նա շա՛տ ընկճված եր։ Նրա հետ եր և իր քենին։ Բարևելով, հարցրի, թե՛ ինչո՞ւ այդպես տխուր է։ Նա պատասխանեց, վոր մեռել է մոտ որերս ծնված իր յերեխան և այժմ գնում են գագաղ պատվիրելու։ Յես ցավակցություն հայտնեցի այդ առթիվ ու մի կողմ տանելով ասացի ականջին՝

— «Թեև գիտեմ, իհարկե, վոր ներկայիս դու գլուխ չունես մեր ընկերներով հետաքրքրվելու, բայց և այնպես քեզ պետք է հաղորդեմ մի շատ ուրախալի լուր։ Մեր Թոման (Ջուբինիձեն) ուղղակի հրաշքով ազատվեց։ Հիշո՞ւմ ես, յես քեզ ասացի, վոր նա թաքնված է Ճելիձեյի մոտ։ Յերեկ չէ առաջի որը գիշերով գալիս է վոստիկանությունը Կորիձեյի մոտ ու խստորեն խուզարկում»։

— «Յեվ ի՞նչ է լինում հետո»—անհամբեր հարցրեց Մուսերիձեն։

— «Իսկ հետո այն, վոր Կորիձեն ուղղակի հան-

ճար է, փոխանակ Զուբինիձեյին իր սենյակում պա-
հելու, ինչպես յես խորհուրդ էյի տվել նրան, բանից
դուրս է գալիս, վոր Զուբինիձեյին տանում է ուղղակի
գինու մառանն ու այնտեղ թաքցնում տակառի մեջ:
Նա հենց այժմս էլ մառանումն է: Ճիշտ է, ընկերներից
շատերն արդեն գիտեն այդ մասին, բայց ինչ արած:
Յես վո՛չ մի տեղ չեմ կարող դրանից լավ բնակարան
գտնել նրա համար»:

Այս խոսակցությունից հետո մենք բաժանվեցինք:

Հետևյալ առավոտ յես նորից գնացի Հաշվապահ-
Կոբիձեյի մոտ:

Վերջինս տեսնելով ինձ, ասաց.

— «Սա ի՞նչ բան է, յեղբա՛յր, դու պրովոկատո՞ր
ես, ի՞նչ է. հենց վոր հայտնվում ես ինձ մոտ, քո յե-
տևից գալիս է վոստիկանությունն ու խուզարկում ինձ:
Յերեկ էլի գավառապետն յեկավ իր պահակներով:
Այս անգամ նրանք հարձակվեցին գինու մառանի վրա,
բոլոր տակառները տակն ու վրա արին, կարծես մուկ
էյին փնտրում և վոչ մարդ»:

Այս խոսքերից հետո իմ մեջ այլևս վո՛չ մի կասկած
չմնաց, վոր Ալվես Մուսերիձեն պրովոկատոր է: Այդ
մասին յես անմիջապես հաղորդեցի ընկերներին: Վո-
րոշվեց վերացնել նրան, ինչ էլ վոր լինի: Բայց ուղե-
ցինք նախորոք իմանալ, թե՝ ո՞ւմն է արդեն կարողա-
ցել մատնել: Մենք վորոշեցինք հափշտակել նրան, իսկ
մինչ այդ պահպանել նրա հետ մեր նախկին հարաբե-
րությունները: Յես համոզված էյի, վոր նա ինձ կը-
մատնի ամենից վերջը, ըստ վորում նա միշտ միայն
ինձ հետ է ունեցել անմիջական գործ ու ինձ ամենից

առաջ մատնելը հենց իրա համար վտանգավոր կլի-
ներ: Մենք անմիջապես հայտնեցինք բոլոր ընկերնե-
րին, վոր վո՛չ վոք առանց ինձ նրա հետ անմիջական
հարաբերություն չունենա: Այս նախազգուշացումը
խախտեց միայն մենշևիկ Նեստոր Ջիխկվիշվիլին, վորին
մենշևիկների կազմակերպությունն հանձնարարել էր
սպանել գավառապետին: Ջիխկվիշվիլին դիմում է նրան
մի քանի տեղեկությունների համար, թե՝ յե՞րբ է
դուրս գալիս գավառապետը, ո՞ւր և ի՞նչ փողոցներով
է գնում նա, և այլն: Սա տեղի յեր ունենում այն ժա-
մանակ, յերբ Մուսերիձեն արդեն դարձել էր պրովո-
կատոր և նա վճռում է ձերբակալել Ջիխկվիշվիլուն: Նա
դուրս է գալիս բուլվար, իսկ յետևից, բավական հե-
ռու, հետևում են նրան պահակները (ստրաժնիկները):
Պայմանավորված են լինում, վոր պահակները ձերբա-
կալեն նրան, ում ձեռ կտա Մուսերիձեն: Ինձ անհրա-
ժեշտ էր այդ օրն անպայման տեսնել նրան ու կանչել
ինձ մոտ, բնակարանս յերեկոյան ժամի վեցին: Մեր
ծրագիրն այսպես էր. յեթե Մուսերիձեն մենակ կգա,
իսկույն բռնել նրան, իսկ յեթե կգա պահակների հետ
միասին, սպանել: Այն ընկերները, վորոնք պիտի բըռ-
նեյին նրան ու փախցնեյին, նախորոք թաքնված էյին
իմ բնակարանում:

Յես դուրս յեկա բուլվար ու սկսեցի թափառել
յետ ու առաջ, աչքերովս վորոնելով Մուսերիձեյին:
Հանկարծ մենք դեմ դիպանք իրար ու յես ձեռս մեկնե-
ցի նրան: Նա կարծես ակամայից սեղմեց ձեռս: Իսկ
նրա դեմքը այդ միջոցին չափազանց տարօրինակ էր ու
աչքերը խառնված: Տեսնում եմ, վոր նա ինչ-վոր շուրջն
կանդիտերսկին: Ճանապարհին նա հանդիմանանքով ա-

րագ հեռացա նրանից: Բայց մի յերկու քայլ դեռ չեյի անցել, վոր յետևիցս հասան պահակները յափունջիներով: Հայտնեցին ինձ, վոր ձերբակալված եմ ու տարան առաջ: Մենք անցանք բուլվարի մյուս կողմը, այնտեղ, ուր գտնվում է Լադիձեյի գործարանը: Իմ գրպանումս մի ատրճանակ կար Մարսի սիստեմի, վոր ընծա յեյի ստացել ընկ. Կամոյից և արտասահմանից հենց նոր ստացված գրականություն ու մի նամակ: Գնալիս յես մտածում եյի, թե՝ ինչպես վոչնչացնեմ կամ աննկատելի կերպով վայր գցեմ նամակը: Հանկարծ մեր յետևից հասնում է Մուսերիձեն, մի կողմ է կանչում պահակների պետին ու ինչ վոր ասում է նրան, ձեռքով ինձ ցույց տալով: Հետո մոտենում է ինձ, հայտնում, վոր ինձ սխալմամբ են ձերբակալել ու կարող եմ ազատ գնալ:

Յես խնդրեցի նրան ուղեկցել ինձ մինչև Սեմյոնովի կանդիտերսկին: Ճանապարհին նա հանդիմանանքով ասաց ինձ, —«Տարօրինակ բան է, չարունակ հավաքվում եք բուլվարում»:

Յես կոշտ պատասխանեցի նրան, թե՝ հիմա քարոզի ժամանակ չե, յերեկոյան կխոսենք այդ մասին ու շտապ հեռացա նրանից: Բայց այլևս իմ բնակարանս չվերադարձա յես, այլ թաղնվեցի Գիգա Ծուլուկիձեյի տանը:

Հենց նույն որն յերեկոյան, նշանակված ժամին Մուսերիձեն մի քանի պահակների հետ գալիս է իմ բնակարանս, բայց հեռանում է այնտեղից դատարկաձեռն: Մյուս որն արդեն ինքը մենակ, հալածեյ վորոնում է ինձ վողջ քաղաքում, բոլոր ծանոթներին հայտ-

նելով, վոր յես չափազանց հարկավոր եմ նրան ու խնդրում է տեսակցություն նշանակել:

Ինչպես յերևում եր, նա արդեն հասկացել եր, վոր մենք գիտենք նրա մատնությունները: Նա գիտեր, թե նման դեպքերում մենք ինչպես ենք հաշիվներս մաքրում մատնիչի հետ և յերևի ուզում եր համոզել մեզ: Մենք հաստատ վորոշեցինք այլևս չպատահել նրան:

Հետևյալ որն, առավոտյան ժամի տասին նա դուրս է գալիս իր տնից պահակների ուղեկցությամբ: Այնուհետև պահակներն ուր-վոր կորչում են: Մուսերիձեն մենակ մտնում է գրավաճառ Իսիդորե Կվիցարիձեյի խանութն ու հանձնում է նրան անձնագրի մի քանի բլանկներ, վոր ինչպես յերևում է Կվիցարիձեն խնդրած է յեղել նրանից: Կվիցարիձեյի կինը նկատում է նրա հիվանդոտ գունատությունն ու հարցնում, թե՝ ինչ է պատահել, հիվանդ խոմ չե՞: Մուսերիձեն պատասխանում է, թե՝ մեջքն է ցավում:

Մինչդեռ այդ միջոցին մատնիչին քայլ առ քայլ հետապնդելիս է լինում տերորիստ Նիկալյան ու սպասում հարմար րոպեյի, վոր հաշիվը մաքրի: Նա ուզեցել է գրավաճառանոցի առաջ խփել Մուսերիձեյին, բայց կանգ է առել, վախենալով, թե դա կարող է վնասել Կվիցարիձեյին:

Յերբ Մուսերիձեն դուրս է գալիս գրավաճառանոցից ու հասնում Ֆիլիպովի խանութին, հանկարծ մի տրաքոց է լսվում: Պրովոկատորն սպանված եր: Նա կարողանում է միայն ասել. «շուտով հայտնեցեք գավառապետին»: Յեվ հիրավի, տաս րոպե չանցած գավառապետն իջավ անցքի վայրը: Բայց պրովոկատորն արդեն կորցրել եր խոսելու ընդունակությունն ու գա-

վառապետն այդպես էլ չկարողացավ այլես լսել վոչ նրա մերկացումները և վո՛չ էլ խնդիրը պաշտոնի մասին։

Տրաքոցի ձայնին պատշգամբ են վազում հողային բանկի պաշտոնյաները, ուր ծառայում եյի և յես։ Տեսնելով սպանված Մուսերիձեյին, տարակուսած հարցնում են իրար. «Սա ի՞նչ բան է, ինչո՞ւ համար են սպանել սրան, չէ՞ վոր սա Բարոնի ընկերն եր»։

Ինչպես հետո պարզվեց, Մուսերիձեն այդ ժամանակ արդեն նշանակված եր Տղիբուլի շրջանի պրիստավ, բայց չկարողացավ պրիստավի դեղին ուսադիրներով պճնվել։

Հենց նոր նկարագրածս տեռորիստական ակտն իր արտացոլումն է գտել նաև գրականության մեջ։ 1908 թվին սոցիալ-դեմոկրատական թերթերից մինում զետեղված եր բելետրիստ Ցես. Նիկոլայշվիլու «Հուդայի համբույրը» պատմվածքը։

Մի քանի շաբաթ հետո դարձյալ մեր տեռորիստների ձեռքով սպանվեց նաև նախկին դրագիր Ափշիլավան, վոր հենց նոր եր նշանակվել Քութայիսի բանտի բանտապետ և վորը ականը փորելուց հետո անտանելի կարգեր եր մացրել բանտում։

Այս յերկու ակտով էլ վերջանում է ականի պատմությունը։

Համարձակ կարելի յե ասել, վոր ռեակցիայի ամենամռայլ տարիներումն էլ (1908-1912 թ.) մեր անլեգալ կազմակերպությունն անընդհատ պահպանեց իր գոյությունն ու մենք նույնպես անընդհատ շարունակեցինք մեր ընդհատակյա սիստեմատիկ աշխատանքը, թեև իհարկե աննշան չափերով—պարապմունքներ խըմ-

բակներում առաջավոր բանվորների ու գյուղացիների հետ, ագիտացիա Պետական դումայի կամպանիաների ժամանակ (Պետական դումայի ընտրությունների), վիճաբանություններ լիկվիդատորների դեմ, աջակցություն ձերբակալված ու աքսորված ընկերներին, զենքի պահեստների պահպանություն և այլն և այլն։

1908 թվի սկզբներին ճնշումները խստացան ու ըսկըսվեցին ակտիվ աշխատավորների մասսայական ձերբակալություններ։ Քութայիսի նահանգական բանտը նորից լցվեց բանտարկյալներով։ Ձերբակալեցին և ինձ ու տեղավորեցին նահանգական բանտի բաժանմունքներից մինում։

Մեր խցում լցված եյին մոտ քառասուն հինգ բանտարկյալներ, վորոնց թվում՝ ընկ. Միշա Ոկուջավան, Կոլյա Ոկուջավան, վորն այն ժամանակ դեռ բոլորովին մանուկ եր, 4-րդ դասարանի գիմնազիստ, Կր. Լոմթաթիձեն և ուրիշները։ Բանտում տարածված եր բծավոր տիֆ։ Տիֆով հիվանդացան մեր ընկերներից Մ. Ոկուջավան ու Գեր. Լոմթաթիձեն։ Յես խնամում եյի նըրանց, օր ու գիշեր չհեռանալով մոտերից։ Վողջ բանտում այնպիսի մի դրություն եր ստեղծվել, վոր անհնարին է բառերով նկարագրել։ Խցերում բանտարկյալների յերեք քառորդը հիվանդ եյին։ Գիշեր չէր անցնում առանց մեռելի, բայց վո՛չ մի տեղից վոչ օգնություն կար, վո՛չ ուշադրություն դարձնող...

Վերջապես մի օր հայտնվեց բժշկական հանձնաժողովն ու կարգադրեց բաժանել առողջներին հիվանդներից ու առողջներին փոխադրել նահանգական բանտը։ Առողջները բոլոր բանտարկյալների քսան-քսանհինգ տոկոսն էլ չեյին կազմում։ Մեր խուցը հիվանդանոց

դարձրին: Ինձ հայտնեցին, որ աքսորում են Օրենբուրգի նահանգը: Գրեթե ամեն ետապի նշանակում էին և ինձ ուղարկելու, բայց ինձ միշտ հաջողվում էր յետ մնալ ետապից, մինչև որ վեց թե յոթ ամիս հետո հաջողվեց բոլորովին ազատվել ու նորից վերադառնալ անլեգալ աշխատանքներին:

Անցնում էին տարիներ: 1912 թվին տեղի ունեցավ Լենայի բանվորների գնդակահարությունը: Լենայի գնդակահարությունը ցնցեց Ռուսաստանի աշխատավորության լայն խավերին: Շարժումն սկսեց աճել ու խորանալ: Բեկումն սկսվեց և մեզ մոտ: Աշխատանքն ուժեղացավ:

1913 թվի սեպտեմբերին Քութայիսում տեղի ունեցավ բոլշևիկների ու մենշևիկների միացյալ համագումարը: Բոլշևիկներից մասնակցում էինք համագումարին՝ Սեվ. Կուխալեյշվիլին և յես, ներկա յեր համագումարին նաև ընկ. Շ. Ելիավան, իսկ մենշևիկների ներկայացուցիչներն էին՝ Ն. Ռամիշվիլին, Ն. Խոմերիկին և Ցեվ. Գեգեճկորին: Համագումարում քննվում էին կազմակերպչական ու տակտիկական խնդիրներ: Այդ համագումարը մեծ ուշադրություն դարձրեց նաև գյուղացիների մեջ գործադրվելիք աշխատանքի վրա:

1913 թվի դեկտեմբերի 9-ին մասսայական խուզարկությունների հետևանքով Քութայիսում ձերբակալվեցին՝ ընկ. Ռ. Կալանձեն, Թ. Ժղենտին, յես և 12 հոգի մենշևիկներից: Ընկ. Ռ. Կալանձեյին աքսորեցին Աստրախանի նահանգը, իսկ ինձ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը ներկայացրեց վոստիկանության

դեպարտամենտին աքսորելու Տուրուխանի կամ Նարիմի կողմերը: Սակայն Պետական դումայի անդամներ Չխեյձեյի ու Գեգեճկորու օգնությամբ յես հաջողեցրի փոխարքայի վճիռը մեղմացնել. յես աքսորվեցի Կովկասի սահմաններից, առանց իրավունք ունենալու համալսարանական ու գործարանային քաղաքներում ապրելու:

Ապրիլի 13-ին յես թողի Կովկասի սահմանները: Ինձ թույլ չտվին մնալու վո՛չ Ռուսաստանում, վո՛չ Տագանրոգում, վոչ Սիմֆերոպոլում: Երկար նեղություններից հետո վերջապես ինձ թույլ տվին ապրելու Կերչում, ուր այդ ժամանակ քաղաքապետ էր հայտնի Կլիմովիչը, վոր հետագայում վոստիկանական դեպարտամենտի դիրեկտոր դարձավ:

Կերչում Կլիմովիչին հաջողվել էր ցրիվ տալ բոլոր բանվորական կազմակերպություններն ու խեղդել հասարակական նախաձեռնության ամեն տեսակի հայտնաբերում: Կլիմովիչի հաստատած ռեժիմը թույլ չէր տալիս անգամ յերազելու ընդհատակյա աշխատանքի մասին: Դիոգենի լապտերով անգամ անկարելի յեր գտնել վո՛չ միայն ակտիվ հեղափոխականի, այլև շատ թե քիչ սոցիալիստորեն տրամադրված մի մարդու:

Ինչպես պարզվեց, ամբողջ քաղաքում յես միակ խռովարարն էի, վորի պատճառով էլ ժանդարմերիայի ու վոստիկանության առանձին ու բացառիկ ուշադրության առարկա էի դարձել:

Հինգ ամսվա ընթացքում յես ամեն օր ներկայանում էի վոստիկանության, վորն անթիվ անգամներ խուզարկել էր սենյակս: Ի միջի այլոց Կլիմովիչը թույլ չտվեց ինձ մտնել վորևէ հասարակական ծառայության

և անշուշտ քաղցից կմեռնեի, յեթե չգտներ ինձ հողային բանկը, վորն ամբողջ մի տարի ինձ համարում եր պաշտոնյա և ուղարկում ռոճիկս:

Ամբողջ կես տարի անցնելուց հետո միայն ինձ հաջողվեց կազմակերպել բանվորների մի փոքրիկ խմբակ Մեսակսուդու ծխախոտի գործարանում: Յեվ հենց դրանով էլ վերջացավ իմ անլեգալ գործունեությունը Կերչում:

1914 թվի օգոստոսին բռնկվեց համաշխարհային իմպերիալիստական պատերազմը:

Կերչում սկսվեցին «հայրենասիրական» ցույցերը՝ Շովինիստական տապը բռնել եր ինտելիգենցիայի լայն խավերը: Չեր կարելի վորոշել ձախ թերթերը աջերից: Բոլորը տրամադրված եյին շովինիստական միաբանությամբ: Իզուր յեղան իմ վորոնումները «День» ձախ թերթում գտնել իսկական հեղափոխական սոցիալ-դեմոկրատական հայացքներ պատերազմի մասին:

Յեվ վո՛չ միայն Ռուսաստանում, այլ մյուս բոլոր պետությունների մեջ ես սոցիալ-դեմոկրատները հայտնի կերպով անցան իրենց կառավարությունների կողմն ու յեռանդուն մասնակցություն ցույց տվին հայրենիքի պաշտպանության գործում:

Յես ապրում եյի խորը հոգեկան տրագեդիա: Իմ գիտակցությունս չեր կարողանում հաշտվել այն բանի հետ, ինչ անում եր ու քարոզում սոցիալ-դեմոկրատական կուսակցության պաշտոնական մեծամասնությունը: Ո՞վ եր սխալվում արդյոք, նրա՞նք, համաշխարհային պրոլետարիատի այդ փորձված առաջնորդները՝ թե՞ յես: Յեվ ի՞նչպես իմանալ այդ ո՞ւմ հետ փոխանակես մտքերդ ու հայացքներդ: Ի՞նչպես է կենտ-

րոնի կարծիքը: Փնտրում եմ ընկերներ, վորոնում անլեգալ հրատարակություններ, բայց ավա՜ղ, վո՛չ մեկից չեմ ճարում, վո՛չ մի տեղ: Կերչում ապրում եր ու արտահայտվում միմիայն հայրենասիրական միապաղաղ քաղքենիությունը:

Վերջապես յես վճռեցի նամակ գրել Քութայիս ընկ. Գ. Լորթքիփանիձեյին ու Բ. Ծավճանիձեյին: Նամակում յես հաղորդեցի ընկերներիս իմ հայացքները պատերազմի մասին:

Ինձ թվում եր, վոր մեզ համար ավելի ձեռնտու յե Ռուսաստանի պարտությունը, վոր վերջինի հաղթանակը մեծ վտանգ կստեղծի հեղափոխության համար՝ Յես բառացի հիշում եմ նամակիս հետեվյալ կետը. «Իմպերիալիստների թնդանոթի առաջին գնդակն ընկավ Յերկրորդ Ինտերնացիոնալի մեջ ու կործանեց նրան: Նա այլևս չի կարող հուսալ, վոր առաջիկայում իր ձեռը կառնի համաշխարհային բանվորական հեղափոխության ղեկավարությունը»:

Վորպեսզի խուսափեմ զորահավաքից ու բանակ ուղարկվելուց, յես 1915 թվին անլեգալ կերպով ֆրոնտ գնացի ու Քաղաքների Միության բժշկա-սննդատու ջոկատի աշխատակից մտա: Մի փոքր հետո յես նշանակվեցի ջոկատի լիազորի տեղակալ: Այդ ջոկատի հետ միասին յես յեղա հարավ-արևմտյան և Գալիցիայի ֆրոնտներում:

Հնարավորության սահմաններում, սանիտարական ջոկատներում յես կազմակերպեցի պարապմունքների համար խմբեր: Լայն կուսակցական աշխատանքների մասին, ինարկե, յերազել անգամ չեր կարելի:

1918 թվի փետրվարին, ավստրիացիների հարձակ-

ման նախօրյակին, երբ ջոկատը ու յես ել նրա հետ թողինք Կամենեց-Պոդոլսկին ու վերցնելով մեզ մոտ լցված պետական գույքը, ուղևորվեցինք Մոսկվա, այդ գույքը Քաղաքների Միությանը հանձնելու:

Կրեմլում յես տեսա ընկ. Ստալինին ու Ա. Ենուքիձեյին ու իմացա Անդրկովկասի ու մասնավորապես Վրաստանի վերջին անցքերի մասին:

Հենց այդ ժամանակ ու այդտեղ ել առաջին ու վերջին անգամ տեսա մեծ Լենինին:

Ընկեր Ենուքիձեյից ստանալով մանդատ ու ընկեր Ստալինից հրահանգիչ նամակ Վրաստանի ընկերների անունով, ուղևորվեցի դեպի Կովկաս ու յեկա Սուխում, ուր այն ժամանակ խորհրդային իշխանություն եր, բայց հետո տապալվեց մենշևիկների ձեռքով:

Ապրիլի վերջերին յես Սուխումից ճանապարհվեցի Քութայիս:

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. «Դեմոկրատական դրախտում»:
2. Բանտային մարոդյորների մեջ:
3. Ապստամբություն մենշևիկական Վրաստանում:
4. Մայիսմեկյան բոլշևիկական ցույց Թիֆլիսում 1920 թվին:
5. Անտիմենշևիկական կամպանիա մամուլում:
6. Մենշևիկական «դեմոկրատիայի» վերջին օրերը:

Քութայիս վերադառնալուս պես ես մտա մեր
կուսակցության Քութայիսի կոմիտեի մեջ ու ակտիվ
մասնակցություն ունեցա նրա աշխատանքներին ընկ.
Ս. Ոկուջավայի, Մամիա և Մարիա Օրախելաշվիլինե-
րի, Դ. Լորթքիփանիձեյի ու այլոց հետ միասին։
Քութայիսի կոմիտեն ղեկավարում էր այն ժա-
մանակ Մինգրելիայի և Լեչխումի գավառներում տեղի
ունեցող գյուղացիական ապստամբությունը։
1918 թվի մայիսին Քութայիսում տեղի ունեցավ
բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդակցու-
թյուն, որին մասնակցեցին Թիֆլիսից գործուղված
ընկերներ Ֆ. Մախարաձեն և Կ. Ցինցաձեն։ Խոր-
հրդակցության ժամանակ քննարկվում էր գլխավո-
րապես մեր տակտիկայի խնդիրը գյուղացիական ապըս-
տամբությունների ժամանակ։
Մի քանի շաբաթ անցած, Թիֆլիսի շրջանային կո-
միտեյին կից տեղի ունեցավ նոր խորհրդակցություն,
որտեղ Քութայիսի կողմից ներկայացուցիչներ էյինք
ընկ. Մ. Ոկուջավան ու ես։ Մենք զեկուցում տվինք
Քութայիսի նահանգի գործերի դրության մասին, վո-
րի հետեվանքով խորհրդակցությունը վորոշեց՝ լիկվի-
դացիայի յենթարկել Մինգրելիայի ապստամբությունը
և ընկ. Ս. Գեգեճկորիի ջոկատը տեղափոխել Վլադի-
կավկազ։
Ջոկատում պետք մնային միմիայն նրանք, վորոնք
չեյին կարող այլեվս վերադառնալ լեգալ կյանքի։

Խորհրդակցության վորոշումը կյանքում կիրառելու համար Քութայիսից Մինգրելիա ուղարկվեց ընկ. Սանդրո Մախարաձեն։

Ընկ. Սաշա Գեգեճկորին իր ջոկատով Լեչխումի վրայով շարժվեց դեպի Վլադիկավկազ, իսկ ընկ. Սանդրո Մախարաձեն լիկվիդացիայի յեր յենթարկում ապստամբությունը մյուս շրջաններում։

Խոնիի ճանապարհին նա ձերբակալվեց։ Նրա մոտ գտնվել եյին կոմիտեյի դիրեկտիվներն ու այլ փաստաթղթերի, իմ ձեռքով գրած։ Հենց նույն գիշերը խուզարկություններ կատարվեցին Քութայիսում։ Ձերբակալվեց ընկ. Վասո Կանդելակին, իսկ յես պատահմամբ ազատ մնացի ու անցա Թիֆլիս աշխատանքի։

Այդ ժամանակ Քութայիսում գեներալ-նահանգապետ եր Վ. Ջխիկվիլիշվիլին, վորն իմ գործս հանձնեց առանձին—կարևոր գործերի քննիչ Ն. Մաճավարիանուն։ Շուտով Արխազիայում խորհրդային իշխանությունն ընկավ և Վ. Ջխիկվիլիշվիլին տեղափոխվեց այնտեղ գերագույն կոմիսարի պաշտոնով։ Մասամբ սրա հեռանալով, մասամբ էլ ընկերներիս ազդեցությամբ իմ գործը քնեց։

1918 թվի հուլիսից յես աշխատում եյի Թիֆլիսում։ Մի տարուց ավելի Թիֆլիսի կոմիտեյի անդամ եյի, վորի մեջ զանազան ժամանակներում գործում եյին, վորքան հիշում եմ՝ ընկ. Ստ. Ալլահվերդյանը (դավաճանորեն սպանված դաշնակներից Հայաստանում), Ջավահիր Խուտուլաշվիլին, Վիրապը, Շահսուվարյանը, Ռուբենը, Բ. Մաչայիձեն, Գալ. Նուցուբիձեն, Վալ. Վաշակիձեն, Նուշիկ Զավարյանը և ուրիշները։

1919 թվին յես առաջին անգամ ձերբակալվեցի մենշևիկներից։ Դա տեղի ունեցավ մարտի սկզբներին։

Հավլաբարում, յերեկոյան ժամի 6-ին թե յոթին նշանակված եր Թիֆլիսի կազմակերպության ժողով։ Նշանակված ժամին մտնում եմ սենյակ ու այնտեղ գտնում հատուկ ջոկատի պետ քաղ. Կեդիային ու իր գործակալներին։ Մեր ընկերներից սենյակում կային դեռ յերեք թե չորս հոգի միայն։ Յես ուզեցի յետ դառնալ ու գնալ, վորպեսզի նախազգուշացնեմ մնացած ընկերներին թակարդից։ Բայց արդեն ուշ եր։ Կեդիան իսկույն ճանաչեց ինձ ու առանձնապես չեշտված պատկառանքով բարևեց։ Մինչ այդ կամաց-կամաց գալիս եյին մյուս ընկերները։ Յերբ հավաքվեցինք արդեն դյուժինից ավելի, մեզ տարան Հատուկ ջոկատը։

Հատուկ ջոկատի շենքի առաջ մեզ հանդիպեց հայտնի Փաչուլիան։ Նա ուշի-ուշով դիտեց մեզ, իսկ յերբ դիտելու հերթն ինձ հասավ, նրա ուշադրությունը կրկնապատկվեց։

— Ձե՞ք ճանաչում, պարոն Փաչուլիա,—հարցրի յես։

— Վո՛չ, չեմ ճանաչում,—պատասխանեց նա։

— Վոր այդպես է, յես կհիշեցնեմ ձեզ։ Մենք հանդիպել ենք Քութայիսում 1908 թվի ռեակցիայի ժամանակ, յերբ դուք ինձ ձերբակալեցիք, ըստ վորում ցարական պրիստավ եյիք այն ժամանակ։

Պարոն Փաչուլիան վո՛չ մի պատասխան չտվեց։ Յեվ ի՞նչ էլ պիտի պատասխաներ։ Համենայն դեպս այդ հիշեցումն այնքան էլ մեծ բավականություն չըպատճառեց նրան։

Կեսգիշերին մեզ ուղարկեցին նահանգական բանտը։ Ժամանակն ուշ լինելու պատճառով մենք ստիպված եյինք գիշերել բանտի գրասենյակում։ Առա-

վոտյան մեր յետեվից մի քանի բանտարկյալներ եկին ուղարկել, վորոնք տարան մեզ խուցը։

Ցես կարծեցի, թե բանտարկյալների մեջ ինքնավարություն են մտցրել և այդ բանն ինձ շատ դուր յեկավ։ Տարօրինակ թվաց միայն այն, վոր մեզանից չվերցրին մոտերնիս գտնված վո՛չ փողը, վո՛չ արժեքավոր իրերը, ինչպես՝ ժամացույց, մատանի և այլն։

Բանտարկյալները մեզ տարան վերին հարկը։ Վերին հարկի միջանցքում բոլորս կանգնեցինք։ Կարգադրվեց խուցը կարգի բերել, վոր լիքն եր աղբ ու ախբիրով, բայց չկար վո՛չ մահճակալ, վոչ սեղան, վոչ աթոռ։ Վերակացու վո՛չ մի տեղ չեր յերևում, բացի մեկից, վոր չղջիկի պես թաք եր կացել անկյունում, կարծես վախենում եր ցերեկվա լույսից։

Հանկարծ լսվեց մի աղմուկ։ Բանտարկյալներն սկսեցին կռվել իրար հետ։ Մաքովս անգամ չանցավ, վոր այդ բոլորը սարքովի բան ե։ Բանտարկյալներից մինը գրպանից հանեց ատրճանակը ու հրամայեց. «Տեղե՛րդ»։

Բոլորն առանց հետ նայելու ցրվեցին իրենց խուցերը։ Ատրճանակով բանտարկյալն առաջարկեց մեզ մտնել մեր խուցը։ Հենց վոր ներս մտանք, դուռը պինդ փակվեց։ Մենք զարմացած իրար յերես նայեցինք։ Մեր ամբողջ խումբն իրենից ներկայացնում եր կարծես մի բազմադեմ հարցական նշան՝ «իսկ հետո ի՞նչ ե լինելու»...

Մի փոքր ժամանակ անցնելուց հետո նորից բացվեց մեր խցի դուռն ու ներս մտան հինգ-վեց բանտարկյալներ, վոր հարցրին, թե բանտ մտնելիս խուզարկե՞լ են մեզ։ Յերբ մենք բացասական պատասխան տվինք, սկսվեց խուզարկությունը։ Հարկադրեցին հանել ինչ

վոր մոտներս կար՝ փող, ժամացույց, մատանի և այլն։ Բանտարկյալներից մեկը հավաքեց այդ բոլորն ու վերցրեց, ընդ վորում նույնիսկ փողը չհամարեցին, թե ինչքան ե։ Նա բնավ չհետաքրքրվեց, թե վոր իրն ում ե պատկանում և վոչ մի տեղ չցուցակագրեց վերցրածները։

Ուղղակի ինչ ձեռն ընկավ, կոխեց գրպանը։ Յերբ իրերիս թալանը վերջացրին, հերթն յեկավ հագուստներիս. ընկերներիցս մեկն ստիպված յեղավ հանել հագի տուժուրկան, մյուսը կոշիկները, յերրորդը վերարկուն։ Մի խոսքով թալանեցին բոլորիս, մաքուր-մաքրազարդեցին, վերցրին ինչ աչքերը տեսավ ու գնացին, դուռը փակելով իրենց յետեվից։ Այժմ ամեն ինչ պարզ եր մեզ համար։

Տաս րոպե չանցած, նորից մեր խուցը մտան մեզ «մաքրազարդողներից» յերեք հոգի։ Այդ հաճելի խումբն այս անգամ առաջնորդում եր մի պճնված, խնամքով ածիլված, դուլա (չեկակարմիր) յերիտասարդ, բրիլիանտի մատանիներով ու վոսկե շղթայով։ Նա ներկայացավ մեզ վորպես Ես-եր Ծինտկիրիա։ Կերենսկու ժամանակ նա ինչ-վոր բարձր պաշտոն ուներ, իսկ այժմ բանտարկյալների ավագն եր բանտում։ Ինքնաբավական ճառերի հեղեղից հետո նա մի առանձին պաֆոսով վերջացրեց այսպես՝ «Ցես իմացա, վոր դուք կոմունիստներ եք։ Ցես ինքս գաղափարական մարդ եմ ու չափազանց հարգում ու սիրում եմ գաղափարական մարդկանց։ Ինձ ընտրել են այստեղ ավագ։ Ցեթե ձեզ վորևե բան հարկավոր լինի կամ վորևե մեկից նեղացնեն, խնդրում եմ դիմեք ինձ։ Ցես միշտ պատրաստ եմ ձեզ ծառայելու։ Բանտարկյալները հենց նոր ինձ նվեր

բերին ինչ-որ իրեր։ Նրանց մեջն էր և այս ժատանին։ Սակայն յես չեմ կարծում, թե նա ձերը լինի»։

Մեր ընկերներից մեկն ասաց.

— «Դա իմ մատանին ե։ Մի քանի րոպե առաջ մատից հանեց այս բանտարկյալը»։

Ընդ. ամին ցույց տվեց նրա կողքին կանգնած բանտարկյալին։ Խինդկիրյան իսկույն մատանին վերադարձրեց մեր ընկերոջը։ Այդ ժամանակ մատանին խլող բանտարկյալը դուրս կանչեց մեր ընկերոջը—մատանու տիրոջը միջանցք։ Բանտարկյալն ու մեր ընկերը դուրս յեկան։ Հանկարծ միջանցքում լսվեց ապտակի ձայն։ Մեր ընկերը ներս ընկավ ջարդված քիթուբերանով ու արյունլվիկ յերեսով..Իսկ Խինդկիրյան դուրս յեկավ խցից իր չքախմբով։

Մենք սկսեցինք դատել ու քննադատել, թե՝ ի՞նչ անենք հիմա։ Յես առաջարկեցի կանչել բանտապետին ու պատմել պատահածի մասին, սակայն ընկերներից վոչ վոք հավանություն չտվեց իմ առաջարկին։

Նրանք վախենում եյին, թե այդ ավազակները (բանդիտները) վրեժխնդիր կլինեն կամ հենց ուղղակի կմորթեն, յեթե իմանան, վոր մենք վարչության իմաց ենք տվել իրենց խուլիգանական արարքները։Ցուտով մենք իմացանք, վոր դեպ քաղաքական բանտարկյալները տեղի ունեցող նման վերաբերմունքն այստեղ սիստեմատիկ բնույթ ե կրում։ Ակներեվ եր, վոր բանտի վարչությունը շա՛տ լավ տեղյակ եր բանտի բոլոր անցու դարձին ու հավանորեն հենց ինքն եր իր բաժինը ունեց «վորսից»։

Համառ լուրեր եյին տարածված, թե իբր մենք բանտում թալանել ենք մի սպեկուլյանտի ու հետո հանել

նույնիսկ ատամները, վորովհետեվ բերանում մի շարք վոսկի չուրջկալով ատամներ ե ունեցել նա։

Մերժելով իմ առաջարկս, ընկերներս վորոշեցին պահանջել, վոր վերակացուն իրենց յերկու-յերկու կամ յերեքական հոգի տեղավորի այսպես կոչված «տաժանակիրների» հետ։ Նրանց այդ ցանկությունը կատարեցին։

Հարբեցողությունն ու անառակությունն այդ շրջանում սովորական յերեվույթ եր բանտում։ Յերբ վերակացուն բաց եր անում խցերի դռները, բանդիտագլխավորները հավաքվում եյին այդ խցերից մեկում։ Յերբ մթնում եր, յերկյուղը տիրում եր ամենքին։ Վո՛չ վոք չգիտեր, թե իր գլուխն ինչ կգա այդ գիշեր։

Մի գիշեր ել յես, Շախսուվարյանն ու մի ուրիշ ընկեր ընկանք միասին մի խուց։ Հենց վոր մութն ընկավ, մեր խուցը մտավ ինչ-վոր մի բանտարկյալ ու պահանջեց, վոր յես հետևեմ իրեն հարեվան սենյակը։ Յես յերկար հրաժարվում եյի, բայց նա այնպես համառ պնդում եր իր առաջարկը, վոր յես ստիպված յեղա համաձայնել։ Հարեվան խցում կային մի քանի հոգի։ Նրանք սկսեցին հարցուփորձ անել ինձ, թե՝ ո՞վ եմ յես, վո՞րտեղացի և ի՞նչու համար բանտարկված։ Յես շատ հակիրճ պատասխանեցի հարցերին։ Հանկարծ բանտարկյալներից մեկը դարձավ, թե՝

— «Այն բոլորն, ինչ ասում եք, սուտ ե։ Մենք միանգամայն վստահելի աղբյուրներից տեղեկություն ունենք, վոր դուք մենշեվիկյան կոմիսար եք ու շատ նեղացրել եք ժողովրդին։ Այդ պատճառով ել մենք վորոշեցինք պատասխանատվության կանչել ձեզ։ Յեթե կամենում եք կենդանի մնալ, վճարեցեք բանտարկյալների օգտին հազար ռուբլի»։

Ես պատասխանեցի, որ փողերս, ծխամորճս և առհասարակ ինչ որ արժեքավոր բան կար մոտս, վերցրել են:

Բանտարկյալներն առաջարկեցին դրսից փող պահանջել, իսկ մինչ այդ իբրև գրավ իրանց մոտ թողնել կոստյումս ու վերարկուս:

Կոստյումս պատահաբար ազատ էր մնացել առավոտվա «մաքրագործումից»:

Յես փորձեցի հակաճառել, բայց բանավոր ինչ արգումենտ կամ մորալ կարող էր ազդել մարդկային պատկերը կորցրածների վրա:

Այդ յերկար խոսակցության միջոցին հայտնվեց, վոր բանտարկյալներից յերկուսը ճանաչում են ինձ:

Յերկար չանակ-բազար անելուց հետո վերջիվերջո հարցը թողնվեց հետևյալ օրվան, առանց վորևե վորոշման հանգելու:

Հետևյալ օրը մենք իմացանք, վոր ներքին հարկում տեղավորված են Դուշեթի ապստամբության մասնակցող գյուղացիները: Մենք վորոշեցինք տեղափոխվել նրանց մոտ: Նրանց հետ այլևս չէյինք վախենա ճակատագրական անակնկալներից:

Մենք քանդեցինք յերկաթե մահճակալներից մինն ու մահճակալի այդ յերկաթե կտորտանքով զինեցինք համեմատաբար ճարպիկ գյուղացիներին: Գիշերն էլ դուռը պինդ ամրացրինք ներսից:

Մի անգամ առավոտյան ինձ մոտ յեկավ մեր առաջին կողոպտմանը մասնակից բանտարկյալներից մինը: Բանտում նրան անվանում էյին «Ֆրանգի Ժորա»: Նա ինձ հայտնեց, վոր ժամացույցս ինչ-վոր բանտարկյալներից մեկի մոտն է յեղել: Իբր թե ինքը գնել է այն 60 ռուբլով և այժմ առաջարկում է ինձ գնել» 80 ռուբլով: Յես սկսեցի սակարկել ու համաձայնության յեկանք 60 ռուբլով: Թանդ չէ, իհարկե, յերբ սեփական ժամացույցիդ վճարում ես 60 ռուբլի:

Հետևյալ օրն այցի օր էր. բայց ինձ փող չբերին: Ընկերներս հավաքվել էյին հարևան սենյակում, տաժանակիրների մոտ: Այնտեղ յեկավ և «Ֆրանգի Ժորան» ու սկսեց պահանջել ժամացույցի փողը: Յես հայտնեցի նրան, վոր խաբար եմ արել դուրսը, վոր փող ուղարկեն, հենց վոր ստանամ, կվճարեմ:

Յեվ նա վախենալու վոչինչ չունի, վորովհետև այսքան մարդ կան, վոր կարող են ինձ յերաշխավորել: Մի շաբաթվա ընթացքում նա անպայման կստանա իր փողը:

Բայց նա բղավում էր, հայհոյում ու յետ պահանջում ժամացույցը: Յես հանգստացնում էյի նրան, բայց նա շարունակում էր իրանը: Վերջապես նա կատաղած, բոլոր ուժով խփեց իմ դեմքիս ու դանակը քաշած, զոռով հանեց գրպանիցս ժամացույցս ու փախավ դուրս: Խցում քսան մարդ կար, բայց վո՛չ վոք չհամարձակվեց ծպտուն հանել: Ել համբերությունս հատավ ու վճռեցի գնալ բանտի դրասենյակը, բայց ընկերներս հետևում էյին ամեն քայլափոխիս և այս յերկրորդ անգամն էր, վոր թույլ չտվին ինձ մեր դրության մասին պատմելու բանտի վարչության: Յես վազում էյի դրասենյակ, իսկ նրանք զոռով բռնում էյին ինձ:

Չնայելով ընկերներիս համոզելուն ու առարկություններին, յես վճռեցի այս ամենի մասին մանրամասն գրել ներքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլուն: Առանց քաշվելու դարձվածներիս մեջ, յես հանուն նորին պայծառափայլության դիմումիս մեջ գրեցի. «Մինչդեռ մի շաբաթից հետո պիտի գումարվի Վրաստանի Հիմնա-

դիր ժողովը, վորի անդամների ինը տասներորդից ավելին իմ նախկին սոցիալ-դեմոկրատ ընկերներս են լինելու, և յեթե վոչ բոլորը, ապա մեծագույն մասը նրանց ծանոթ են ինձ իրենց աշխատանքով ու պատրաստ իրենց առաջին նիստը հավերժացնելու «դեմոկրատական ազատության» դեկլարացիայով, հենց այդ միջոցին, Հիմնադիր ժողովի հենց կողքին, մայրաքաղաքի բանտում քաղաքական բանտարկյալները գտնվում են աննկարագրելի պայմաններում, վորոնց համեմատությամբ կնսեմանան և ռեակցիայի շրջանի բանտային ամենադաժան պայմաններն անգամ»:

«Ինչո՞վ ենք մեղանչել մենք, բոլշևիկներս, մեր վո՞ր մեղքի համար մեզ յենթարկում են այսպիսի անտանելի վիրավորանքների ու ստորացման: Յեթե մեր ֆիզիկական գոյությունը հանցանք է համարվում դեմոկրատական հանրապետության մեջ, այն ժամանակ ավելի լավ է գնդակահարեք մեզ, քան հարկադրեք տանել նման ստորացումներ»:

Այնուհետեվ նամակումս մանրամասն նկարագրված եր բանտում ստեղծված դրությունը:

Հետեվյալ որն յես այդ նամակն ուղարկեցի ընկեր Կամոյի քրոջն՝ ընկ. Ջավահիրին, վորպեսզի նա անձամբ տա Ն. Ռամիշվիլուն: Գաղտնապահական նկատառումներով ընկ. Ջավահիրը նամակի վրայից ջնջել եր իր հասցեն ու տվել ժամանակավոր կառավարության նախկին սենատոր սոց-դեմոկրատ Ն. Սոկոլովին, վորն իր կողմից հանձնել եր նամակս Ն. Ռամիշվիլու տեղակալ Գ. Մախարաձեյին: Իբրեվ լրացումն նամակիս բերանացի պատմել եյին բանտարկյալների դրության մասին:

Շուտով օրանից հետո մեր ամբողջ խումբն ազատեցին: Հիմնադիր ժողովը մի հանձնաժողով ընտրեց Ռ.

Ղլիփիանու նախագահությամբ քննելու համար բանտի դրությունը:

Վերջ ի վերջո հաջողվեց վերջ դնել բանտային այդ այլանդակ բանդիտիզմին, շղթայելով բոլոր մարոդյորներին ու ցրելով զանազան բանտերը:

Բանտն ամեն յերկրում, ամեն տեսակի ռեժիմի ժամանակ իրենից ներկայացնում է տվյալ յերկրի հասարակական կազմի ու կենցաղի աստառը:

Խստորեն կարգավորված, մարդկային կամքը մեռցընող արևմտյան բուրժուական յերկրների բանտերը, Հյուս. Ամերիկ. մխ մաշող մեքենայի դեր կատարող բանտերը, անկարգ, կեղտոտ, անկազմակերպ բանտային վորջերը Տաճկաստանի, բալկանյան յերկրների ու Հարավային Ամերիկայի—բոլորը սրանք բնորոշ են իրենց յերկրների ռեժիմի համար: Բնորոշ են նաև մեր խորհրդային բանտերը:

Յերբ արտասահմանյան վոճրագետները (կրիմինալիստները) այցի յեն գալիս մեր բանտերը,—իսկ դա վերջին ժամանակներս հաճախ է պատահում,—այնտեղից հեռանում են տարակուսանքի մեծ զգացումով ու գաղտնի ամոթով: Ըստ վորում, մեր բանտերը հիմնված են հանցագործի ու հանցանքի անալիզի հողի վրա: Մենք չենք պատժում, վրեժխնդիր չենք լինում, չենք կոտրում, մեռցնում մարդու կամքը—մենք աշխատում ենք վորոշել հանցանքի բնույթն ու ըստ այնմ հանցագործին տալ հնարավորություն անցնելու գործունեյության ուրիշ գծի, ուրիշ ռելսերի վրա:

Այդ պատճառով էլ մեր բանտերում թագավորում է աշխատանքային սկզբունքը: Մենք հնարավորություն ենք տալիս հանցագործներին ունենալու իրենց բանտային կոլեկտիվը, ըստ վորում հավատում ենք, վոր կո-

լեկտիվը՝ կազմված թեկուզ հանցագործներից, յեթե դրված է աշխատանքային նպաստավոր պայմաններում, կորզի, կմաքրի մարդու միջից այն արատներն ու թերությունները, վոր ժառանգել է նա հասարակական կարգի դարավոր անկատարությունների ու պակասության հետևանքով:

Հենց այս տեսակետից ոգտակար էր դիտել մենշևիկյան բանտը, թե ինչ դրության էր նա Վրաստանում «դեմոկրատական դրախտ» ստեղծելու մոմենտին:

Մի քանի ամիս անցած, ընկեր Սերյոժա Քավթարաձեն և Կոտե Ցինցաձեն Մետեխի բանտից ինձ հաղորդեցին, վոր իմ իրերս վերցրել են մի բանտարկյալից և պահվում են բանտի գրասենյակում, վորտեղից վերջապես յես ստացա յետ:

Բանտից դուրս գալուց հետո յես անմիջապես դարձյալ լծվեցի անլեգալ աշխատանքի: Դարձա Թիֆլիսի կոմիտեյի անդամ ու գանձապահ:

Մենք տանում էինք շատ աշխուժ աշխատանք— ժողովներում դուրս էինք գալիս խիստ քննադատությամբ մենշևիկյան քաղաքականության դեմ ու հակադրում նրան մեր կուսակցության լոզունգները:

Աշխատավորական լայն մասսաները մեծ համակրությամբ էին վերաբերվում մեզ:

Այսպես գնաց գործը մինչև 1919 թ. աշունը:

1919 թվին, կարծեմ հոկտեմբերի յերկրորդ կեսին, Թիֆլիսի Հավլաբար թաղում տեղի ունեցավ խորհրդակցություն, վորին ներկա էին ընկերներ՝ Ֆ. Մախարաձեն, Լ. Դումբաձեն, Վ. Բոլքվաձեն, Իլիկո Մգելաձեն, Վալ. Վաշակիձեն, Գր. Մախարաձեն և

ուրիշները— մոտ քսան հոգի: Խորհրդակցության ներկա էի և յես:

Խորհրդային Ռուսաստանն այդ միջոցին ապրում էր մեծ կրիզիս: Հակահեղափոխությունն, ամեն տեսակի աջակցություն ստանալով Անտանտայից, հարձակում էր գործում ամեն կողմից: Վտանգ էր սպառնում և՛ Մոսկվային, և՛ Լենինգրադին: Խորհրդակցության մեջ քննվում էր մեն-մի հարց— համատարած ապստամբություն կազմակերպել Վրաստանում: Մի փոքր ուշ դարձյալ տեղի ունեցավ նման մի նիստ, նույնպիսի տաք վիճաբանություններով: Զինվորական կազմակերպության մեջ այն ժամանակ աշխատում էր հանգուցյալ ընկեր Իլիկո Մգելաձեն: Նա չափազանց լավատես մի զեկուցում կարդաց մեր ուժերի ու շանսերի մասին: Նրան հակաճառեցինք յես ու ընկ. Գր. Մախարաձեն: Սակայն բոլոր ձայներով ընդդեմ իմի, վորոշվեց սկսել Վրաստանում ընդհանուր ապստամբություն:

Մեր վորոշումը շատ շուտով կիրառվեց կյանքում:

Ապստամբություններ բռնկվեցին Վրաստանի զանազան անկյուններում:

Մենշևիկները պատասխանեցին խիստ ճնշումներով: Սկսվեցին գնդակահարություններն ու հալածանքները: Բանտերը նորից լցվեցին մեր ընկերներով, իսկ նրանք, վոր ազատ մնացին հալածանքից, դարձան ընդհատակյա:

1920 թվի մայիսի մեկին մեր կուսակցության Թիֆլիսի կոմիտեն կազմակերպեց մայիսմեկյան ցույց: Բանվորական պալատի ու Ազգային գալերեայի առաջ դուրս յեկան բեռնակիր ավտոները, զարդարված կարմիր դրոշակներով ու պլակատներով, վորոնց վրա փայլում էին կոմունիստական լոզունգներ: Առանձին

յեռանդով այդ լոզունգները հրապարակում եյին ընկ. Նատալիա Կիկոձեն ու Լոլյա Բերինեյշվիլին: Ժողովրդական հեծելազորն ու միլիցիոներներն հարձակվեցին մեզ վրա, պատառոտեցին դրոշակն ու սկսեցին ծեծել ու ձերբակալել ցուցարարներին: Կին ցուցարարներին ցած քաշեցին ավտոմոբիլներից: Նույն գիշերը ձերբակալեցին և ինձ ու կնոջս՝ Լոլյային ցույցին մասնակցելու համար: Մեզ, մյուս քաղաքական բանտարկյալների հետ, բաց թողին միայն այն ժամանակ, յերբ դաշնագիր կնքվեց Խորհրդային Ռուսաստանի հետ (վորն ստորագրվեց 1920 թվի մայիսի 7-ին):

Մենշևիկական «Երթոբա» թերթն իր 1920 թվի մայիսի 4-ի համարում հետևյալ բառերով է բնորոշում վերոհիշյալ անցքերը.

«Մեր բանվոր դասակարգը՝ Մայիսի մեկի տոնն անցկացրեց մեծ հանդիսավորությամբ, հավերժացնելով այն մի հսկայական ցույցով»:

«Միայն բոլշևիզմի անմիտ, վաճառված գործակալներից վոմանք աններդաշնակություն մտցրին մասսաների այդ ամբողջ միաբանության մեջ: Մի քանի դավաճաններ, վորոնց բոլշևիկները ճարել են իրենց կոմունիստական միլիոններով, ժողովրդի բուռն դայրույթն առաջացրին, վորի համար և կրեցին իրենց արժանավոր պատիժը նույն մասսաների ձեռքով:

Այդ խեղճերը կորցրած մարդիկ դուրս յեկան մեծապետական լոզունգներով, փորձելով իրականացնել ռուս-տաճկական իմպերիալիստական ցնորքները: Նրանք դուրս յեկան ինչպես արտասահմանյան մեզ թշնամի ուժերի առաքյալներ»:

«Դա դավաճանություն է բանվոր դասակարգի դեմ, դավաճանություն ազգի դեմ: Այդպիսի գործեր կարող

են կատարել միայն մատնիչները, միայն այն մարդիկ, վորոնք կամենում են մեր հանրապետության անկումն ու արտասահմանյան ուժի տիրապետության հաստատումը մեզանում»:

Անլեգալ գրականության տպագրությունն ու տարածումը Թիֆլիսի Կոմիտեն դրել եր համեմատաբար լայն ծավալով: Մենք ոգտվում եյինք ամեն հարմարավոր դեպքից, վորպեսզի թռուցիկներ տարածենք Անտանտայի զորքերի մեջ—պարզ է հենց իրանց լեզուներով:

Մեր այդ աշխատանքին մեծ արգելք եր հանդիսանում այն հանգամանքը, վոր շատ դժվարությամբ եյինք ճարում վստահելի թարգմանիչներ: Հիշում եմ, մի անգամ ընկ. Ջավահիրի հետ թերթի ռուսերեն բնագիրն ուղարկեցինք մեզ «համակրողներից» մեկին (Վրաստանի խորհրդայնացումից հետո նա դարձավ պատասխանատու գործիչ-կոմունիստ), խնդրելով թռուցիկի բնագիրը թարգմանել գերմաներենի: «Համակրողն» հրաժարվեց այդ վտանգավոր առաջարկը կատարելուց. և նույնիսկ սկսեց հայհոյել մեր առաջնորդին այդպիսի անմիտ ցնորքների համար:

Հետագայում Թիֆլիսի Կոմիտեն մի խմբագրական մարմին ընտրեց, վորի կազմի մեջ մտան՝ ընկ. Մ. Տոլոչելլիձեն, Ն. Կիկնաձեն և յես: Այդ մարմնին հանձնարարվեց հրատարակել պարբերական բյուլետեններ: Մենք բաց թողինք բավական հարուստ բովանդակությամբ մի քանի համար բյուլետեններ:

Կպատմեմ, թեկուզ մի քանի խոսքով, թե ինչպես յես ծառայում եյի մենշևիկյան հիմնարկներում:

Ինչպես միապետության ժամանակ, այնպես էլ մենշևիկների որերում, յես ստիպված եյի և լեգալ հիմնարկներում ծառայել, և անլեգալ աշխատանք վարել:

Յես միշտ աշխատում եյի կարգին պաշտոն ձեռք բերել լեգալ հիմնարկներում, վորպեսզի դրանով կարողանամ քողարկել իմ անլեգալ աշխատանքը:

Թիֆլիս գալուս պես յես սկսեցի պաշտոն վորոնել: Ֆինանսների մինիստրի ոգնական Ն. Կանդելակին ինձ հաշվապահի պաշտոն տվեց իր հիմնարկության մեջ: Սակայն մի շաբաթ չանցած, նա կանչեց ինձ իր առանձնասենյակն ու հայտնեց, վոր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի (մենշևիկների) անդամներից մեկը բողոքում ե բոլշևիկներին պաշտոն տալու դեմ, մինչև վոր նրանք պաշտոնապես չհայտարարեն, թե դուրս են գալիս բոլշևիկյան կուսակցությունից: Միաժամանակ մինիստրի ոգնականն ավելացրեց, վոր նա բնավ չի կամենում ինձ արձակել պաշտոնից և գնահատում ե ինձ իբրև հրաշալի աշխատակցի, ուստի առաջարկում ե դիմել Ն. Ժորդանիային և նրանից մի փոքրիկ նամակ բերել, թե նա վոչինչ չունի իմ ծառայության դեմ: Այդպիսի առաջարկն յես չափազանց վիրավորական համարեցի ինձ համար, ուստի անմիջապես թողի պաշտոնս, հրաժարվելով նույնիսկ մի շաբաթվա աշխատավարձից հոգուտ «իսկական-դեմոկրատական հանրապետության»:

Յես փորձեցի մտնել Ցեկավշիրի գրասենեկապետի պաշտոնով, բայց ինձ մերժեցին: Այն պաշտոնը, վոր յես եյի խնդրում, տվին մի մենշևիկի, վոր անհամեմատ ավելի քիչ պատրաստություն ուներ, քան յես:

1919 թվի մարտին յերկաթուղային պարենավորման կոմիտեյի նախագահ Ա. Աթաբեկյանը ինձ ընդունեց ծառայության գլխավոր հաշվապահի պաշտոնով: Այստեղ յես ծառայեցի մինչև 1920 թվի հուլիս ամիսը, յերբ Պաշտպանության խորհրդի կարգադրությամբ յես արտաքսվեցի պաշտոնից: Սրանից հետո յերկու ամիս շարունակ յես աշխատեցի հողային միության մեջ, սակայն նորից հեռացրին ինձ պաշտոնից, իբրև քաղաքականապես անվստահելի անձնավորության: Վերջապես յես անցա Ադրբեջանի արտառևտրի բաժանմունքն, ընդ միշտ մնաս բարև տալով մենշևիկյան հիմնարկներին:

Կոմունիստական կուսակցությունն, ինչպես հայտնի յե, վոչ միայն չի ծածկում իր անդամների հանցանքներն ու ապորինի արարքները, այլ ընդհակառակը, կատաղի կռիվ մղում այդպիսիների դեմ, յենթարկելով նրանց ավելի խիստ պատիժների, քան այն հանցավորներին ու որինազանցներին, վորոնք կոմունիստական միջավայրից չեն: Մեզ մոտ գործադրվող սեփական կուսակցական շարքերի պարբերական զտումը մեն-մի նպատակ ունի՝ հեռացնել մեր շարքերից բոլոր կասկածելի, անհուսալի, տատանվող տարրերին, վոր մտել են կուսակցության մեջ շահագիտական ու կարյերիստական նպատակներով: Բոլշևիկյան կուսակցությունն յերբեք չի ընկել իր անդամների քանակության յետևից: Նրանք բնավ չեն ձգտել ավելացնել կուսակցության անդամների քանակը ի վնաս վորակի: Իզուր չեր, վոր դեռ 1903 թվին անջատման պատճառ դարձող գլխավոր խնդիրներից մեկն ել այն եր, թե ո՞ւմ համարել կուսակցության անդամ (կանոնադրության առաջին հոդված): Վրաստանի խորհրդայնացումից հետո ինտելիգենցիայի և այլ մանր-բուրժուական ելեմենտների մուտքը կուսակցության մեջ չափազանց դժվարացած ե: Ճըշմարիտ եմ ասում, «ուղտն» ավելի հեշտությամբ կը-

մանի տեղի ծակը, քան այդ էլեմենտները կուսակցության մեջ:

Այդպիսի բան մենք չենք տեսել մենշևիկների մոտ: Դեռ ցարիզմի ժամանակ, մինչև սոցիալ-դեմոկրատական կուսակցության անջատման ձևավորումը, նրանց հետաքրքրում եր գլխավորապես իրենց անդամների քանակը: Նրանց կարևոր եր ըստ կարելվույն շատ ձայներ ունենալ ժողովներին ու համագումարներին: Յերբ Վրաստանը դարձավ մենշևիկյան «տաղխ» ու այնտեղ հաստատվեց մենշևիկ կուսակցության դիկտատուրան, նրանք հավատարիմ մնացին իրենց կազմակերպչական սովորություններին ու տրադիցիաներին: Նրանք լայն բաց արին կուսակցության դռները բոլոր սպեկուլյանտների ու մկխտանչիների առաջ և իր գոյության ամբողջ ընթացքում այդ կուսակցությունը և' վոչ մի անգամ «զտում» չկատարեց իր շարքերում: Դեռ ավելին—մենշևիկյան կուսակցությունը միշտ յեռանդով պաշտպանում եր իր անդամներին, թեկուզ ինչ հանցանք էլ գործած լինեյին նրանք: Այս դրությունը պատկերացնող անթիվ օրինակներ կարելի յեր բերել, սակայն յես կանգ կառնեմ միայն այն կամպանիայի վրա, վոր 1920 թվի նոյեմբերին սկսվեց վրացական մամուլում ու տևեց ամիս ու կես:

Մի տարուց ավելի յես ծառայեցի Վրաստանի յերկաթուղիների պարենավորման կոմիտեյում: Յես հնարավորություն ունեյի այստեղ հետևվելու վոչ միայն պարենավորման կոմիտեյի, այլև յերկաթուղայինների կենտրոնական կոմիտեյի գործունեյությանը: Պետք է ասեմ, վոր թափթփվածությունն ու չարաշահություններն այստեղ միանգամայն սովորական ու համախակի յերևույթներ եյին: Ինչպես հայտնի յե, յերկաթուղական պրոլետարիատն առհասարակ հանդիսանում է բանվոր դասակարգի ամենագիտակից ու առաջավոր մասը, նրա ավանգարդը: Յերկաթուղայինների կենտրոնական կոմիտեյի անդամ ընտրվում եյին միշտ համեմատաբար ավելի ազդեցիկ, ժողովրդականություն վայելող գործիչներից — մենշևիկյան իշխանության սյուներից: Այս պատճառով էլ միանգամայն պարզ ու հասկանալի յե, թե ինչու մենշևիկյան կառավարությունն ու մամուլը սարի պես կանգնած եյին նրանց թիկունքին — պաշտպանելով նրանց թե' հասարակական, թե' մասնավոր կյանքի ամեն մի դեպքը:

Յերկաթուղայինների պարենավորման ու կենտրոնական կոմիտեն աշխատում եյին սերտ համերաշխությամբ: Գտնվելով նույն շենքում, նրանք դրեթե ձուլվել եյին մեկ մեկու հետ, այնպես վոր շատ անգամ դժվար եր վորոշել, թե վո՞րտեղ է վերջանում մի կազմակերպությունն և վո՞րտեղ սկսվում մյուսը: Յեթե պարենավորման կոմիտեյի անդամներն եժան գնով ու ապառիկ ձեռ եյին բերում մեծ քանակությամբ լավ ապրանքներ ու մթերքներ, նրանք բաժին եյին հանում դրանից և Կենտրոնական Կոմիտեյի անդամներին: Յեթե առաջավոր բանվորներից մեկն ու մեկը դժգոհություն հայտներ այդ առթիվ ու անցներ ոպոզիցիայի կողմն, իսկույն նրան մի տաք տեղ կտային պարենավորման կամ կենտրոնական կոմիտեյում: Յեթե սրանից հետո յել այդ բանվորը չհանգստանար, նրան հայտարարում եյին Վրաստանին դավաճանող բոլշևիկ: Յես—

վճռեցի ընտրություն կատարել կուտակված նյութերից ու կամպանիա սկսել մամուլի մեջ վերոհիշյալ կազմակերպությունների դեմ։ Յես ընտրեցի հարմար մոմենտ հենց նախօրյակի յերկաթուղայինների համագումարի, վոր նշանակված եր 1920 թվի նոյեմբեր ամսի վերջին օրերին։

Նախքան մամուլի մեջ դուրս գալը, պարենավորման և կենտրոնական կոմիտեների կատարած զեղծումները բացի յես մեր I ռայոնի բջիջների ընդհանուր ժողովի առաջ։ Ժողովը միանգամայն հավանեց մամուլի մեջ իմ առնելիք կամպանիայի պլանը։ Այնուհետև նույն նյութի հետ յես ծանոթացրի մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի անդամ ընկ. Մամիա Օրախելաշվիլուն։ Իմ առաջին նամակս լույս տեսավ մեր «Ախալի կոմունիստի» թերթի № 103-ում, «Թափթփվածություն թե՞ չարաշահություն» վերնագրով։ Հոդվածում առաջ եյին բերված բազմաթիվ օրինակներ վո՛չ միայն անփութության ու անուշադրության դեպի բանվորների կարիքները, այլ բացարձակ հանցանքների, ինքնամատակարարման, սպեկուլյացիայի և այլն։ Լիդերները ձրի ստանում եյին ամենալավ մթերքները։ Անժամկետ ապառքը չերմայեր միայն։ Սահմանված նորման խանգարվում եր միշտ և այդ այն ժամանակ, յերբ բանվորներն ստանում եյին մթերքներ մինիմալ քանակությամբ, թանգ գնով ու կանխիկ հաշվով։

Այս բոլորն հաստատված եյին անվիճելի փաստաթղթերով, վորոնք ներկայացրել եյի յես խմբագրության։

Իմ առաջադրած մեղադրանքները վերաբերում

եյին վոչ միայն պարենավորման կոմիտեյի անդամներին, այլև յերկաթուղայինների կենտրոնական կոմիտեյի գլխավոր անդամներին։ Ահա թե ինչո՞ւ տակն ու վրա յեղան յերկաթուղային բոլոր ղեկավար կազմակերպությունները։

Իմ հոդվածները չփոթություն ու տագնապ առաջ բերին մենշևիկների բանակում։

Համագումարն հետաձգվեց։

Ինձ մոտ ուղարկեցին թաքուն իրենց ականավոր ընկերներից մեկին (ներկայիս անդամ Կենտկոմի), առաջարկելով, թե նրանք թերթում կզետեղեն միանգամայն «կորրեկտ» մի պատասխան միայն իմ մերկացումներին, յեթե յես համաձայնեմ այդ պատասխանը թողնել անպատասխան, առանց այլևս շարունակելու պոլեմիկան։ Այդ առաջարկը յես արհամարհանքով մերժեցի։ Այս բանակցությունների ¦ հետ զուգընթաց, մենշևիկյան չորս թերթեր տպագրեցին հերքումներ։ Յես էլ իմ հերթին մի շարք հոդվածներով շարունակեցի իմ հարձակումները։ (Տես՝ «Ախալի կոմմունիստի» թերթի 1920 թվի դեկտեմբեր ամսի 111, 115, 116 համարները)։

Նոր մերկացումները մենշևիկներին միանգամայն արդեն հանեցին պատշաճության սահմաններից։ «Երթոբայի» (վրացական մենշևիկների օրգան) էջերում կատաղի հալածանք սկսվեց իմ դեմ։ Թափվեցին քսու ամբաստանություններով լի հոդվածներ։ Հոդվածներին դնում եյին պրովոկացիոն վերնագրեր (հոդվածներից մեկն, օրինակ, կրում եր այսպիսի վերնագիր. «Ժողկոմի Թեկնածուն»)։

«Երթոբա» թերթի 1920 թվի դեկտեմբերի 3-ի 276

համարում տվեց վորոշումն այն հատուկ հանձնաժողովի, վոր յերկաթուղայինների համագումարն ընտրել եր իմ ներկացրած զեղծումների առթիվ: Այդ վորոշման վերնագիրն եր՝ «Կոմունիստ թերթը և յերկաթուղայինների համագումարը»:

«Վրաստանի յերկաթուղային կազմակերպությունների կոնֆերենցիան իր հենց առաջին նիստում «Կոմունիստ»-ում հայտարարված մեղադրանքների առթիվ հանեց հետեվյալ վորոշումը. «Վրաստանի բանվորական կազմակերպությունները լայն հնարավորություն ունեն բազմակողմանի քննադատության յենթարկելու տնտեսական ընթացիկ հարցերը: Մենք ամեն ժամանակ կարող ենք մեր ընտրած կազմակերպություններին պատասխանատվության կանչել, կարգի հրավիրել ու վստահության հարց հարուցել: Այդ տեսակետից մենք բնավ կարիք չենք զգում կոմունիստների միջամտության ու հովանավորության: Մենք շա՛տ լավ գիտենք, թե ինչպես են նրանք հոգս քաշում Ռուսաստանի ու Ադրբեջանի աշխատավոր ժողովրդի մասին: Վրաստանի յերկաթուղային պրոլետարիատը թույլ չի տա «Կոմմունիստի» ղեկավարներին խառնվելու իր գործերին»:

Իհարկե ստում ու բամբասում եյին «Երթոբան» ու մեծ դժվարություններով հավաքված մենշևիկյան կոնֆերենցիան: Մինչդեռ Վրաստանի պրոլետարիատը մտածում ու իրերի դրությունը գնահատում եր միանգամայն այլ կերպ:

Մենշևիկյան աղբյուրներից մեզ հաղորդում եյին, վոր ընդհակառակը, բանվորները պահում են «Կոմմունիստի» այն համարները, ուր տպված եյին իմ

հոդվածներս: Այն օրերին, յերբ տպվում եյին իմ ներկացումներս, իրիկնապահին այլևս «Կոմմունիստի» վո՛չ մի համար չեր կարելի ճարել:

Այս կամպանիայում մենշևիկները թե իրավաբանորեն, թե՛ բարոյապես մեծ պարտություններ կրեցին:

Նրանք չկարողացան հերքել մեր առաջադրած փաստերից, մեր ներկացումներից բացարձակապես և վո՛չ մեկը և միաժամանակ նրանց բոլոր թերթերը՝ թե կուսակցական, թե արհեստակցական, պաշտպան հանդիսացան բացարձակ ու հայտնի հանցագործներին:

Իբրև հատուցումն այդ արարքիս, մենշևիկները վորոշեցին ձերբակալել ինձ: Այդ վորոշումն, ինչպես յերևում է, նրանք հանած են յեղել դեռ 1920 թվի դեկտեմբերի 31-ին, իսկ հունվարի 2-ին յերեկոյան յես հանդիպեցի հայտնի մենշևիկ Ալփես Խելաձեյին, վորն իբրև հին բարեկամ, խորհուրդ տվեց ինձ տանը չքնել, հայտնելով, վոր իմ ու Տորոշելիձեյի ձերբակալության օրդերներն արդեն ստորագրված են:

Յես շնորհակալություն հայտնեցի նրա մատուցած ծառայության համար ու գնացի յեղբորս մոտ գիշերելու:

Մութն ընկավ, գիշեր դառավ, ժամի մեկը խփեց, բայց իմ քունս չեր տանում: Յես բնավ չեյի կարողանում հանգստանալ, յերբ մտածում եյին, վոր այդ գիշեր պիտի ձերբակալեն ընկ. Մ. Տորոշելիձեյին: Այլևս չդիմանալով այդ մտահոգության, յես հագնվեցի ու ճանապարհ ընկա ընկ. Մ. Տորոշելիձեյի մոտ, նախազգուշացնելու նրան:

Այդ ժամանակներում շա՛տ դժվար եր թաքնվելը: Յերկու-յերեք օրը մեկ պետք եր բնակարանը փոխել:

Հաճախ «մեր» գործերի դրության մասին տեղեկություն ստանալու համար հարկավոր եր լինում գընալ խորհրդային միսսիան ընկ. Մամիա Օրախելաշվիլու մոտ։

Մի յերեկո յել քիչ եր մնում յես ծուղակն ընկնեյի։ Նոր եյի մտել մեր միսսիան, յերբ ընկերների մեջ հանկարծ հոհռոց բարձրացավ։ Յես ապշած հարցրի պատճառը, թե՛ ախր ինչո՞ւմն է բանը։

—Ել հնար չունես այստեղից դուրս գալու, միսսիան շրջապատված է», պատասխանեց ընկ. Յաս. Ջորբենաձեն։

Իմ բախտից, մի փոքր հետո յեկավ Հայաստանի ներկայացուցիչ ընկ. Շահվերդովը։ Յերբ նա գնում եր, յես աննկատելի կերպով նստեցի նրա ավտոն ու այդպիսով ազատվեցի ձերբակալումից։

Յես նորից բնակարան չունեյի ու վճռեցի դարձյալ յեղբորս մոտ գիշերել։

Այդպես անցավ մի քանի որ։

Մի անգամ ել գիշերվա ժամի 2-ին յեկան «Հատուկ ջոկատի» աշխատակիցներն ու առաջարկեցին ինձ հետևել իրենց։

Այլևս յելք չկար։ Յես մնաս բարև ասացի տանտերերին ու գնացի նրանց յետևից։

Ճանապարհին գործակալներից մինն ուշի-ուշով նայեց յերեսիս, կարծես ինչ-վոր բան հիշելու համար ու հարցրեց.

— «Դուք չե՞ք ճանաչում ինձ։ Յես Շարաշիձեն եմ, այս-ինչ ժամանակ մասնակցել եմ ձեր տան խուզարկմանն ու ձեր ձերբակալման։ Մենք ախր հեռու ազգականներ ենք»։

Յես պատասխանեցի նրան.

—«Յեթե հիրավի դուք ինձ ազգական եք, այնպես արեք, վոր այսոր ինձ չձերբակալեն, իսկ վաղը յես ինքս կներկայանամ Ն. Ռամիշվիլուն»։

Կարճ բանակցություններից հետո գործակալներն իբրեվ գրավ վերցրին վոսկի ժամացույցս ու մոտիս փողերն ու ինձ ազատ արձակեցին։

Ինքնին հարց է ծագում, թե՝ ինչի վրա յեր հենվում մենշևիկյան կառավարությունը, յերբ մենշևիկ «Հատուկ ջոկատի» գործակալներն այդպես հեշտությամբ կաշառվում եյին։

Անբարոյացման ու քայքայման մեջ այլևս դրանից դենը գնալու տեղ չկար...

Ինձ վիճակվեց նորից բնակարան վորոնել։ Յերկար դեգերումներից ու թափառումից հետո յես վըստահելի մի կայան գտա մի ծանոթ բժշկի մոտ (վոր ապրում եր սենատոր Մ. Քորքաշվիլու մոտ (վերջինս գաղթեց Թուրքիա)) այն շենքում, ուր ներկայիս զետեղված է Վրաստանի Պետքաղվարչությունը։

Դա իմ վերջին անլեգալ բնակարանն եր։

Կոջորի բարձունքից լսվում եր արդեն թնդանոթների վորոտը։ Մենշևիկյան հակա-հեղափոխությունն ապրում եր իր վերջին որերը։

Արդարացան մեր «Ախալի կոմմունիստի» թերթի նախազգուշացումները. «Նախազգուշական վորոտին»*)

*) Առաջ ենք բերում յերկու բնորոշ ցիտատներ մեր այն ժամանակվա թերթերից՝ «Մենշևիկների արգումենտները...»—«Ընկեր Բարոնը բարձրացրեց մեր յերկրի կյանքը քողարկող վարագույրի մի անկյունը միայն ու այնտեղից այնպիսի զարշահոտություն փչեց, վոր յերևի յերկար ժամանակ դժվար կլինի մեթո-

հետևից որհասական, ընչաքաղ կայծակը, վոր մի հարվածով խորտակեց մենշևիկյան իշխանությունն ու քանդեց այն արհեստական պատը, վոր բաժանում եր Վրաստանի բանվորությունն ու գյուղացիությունը Ռուսաստանի պրոլետարիատից, վոր զինված Լենինի մեծ ուսմունքով, տապալեց մեծ բռնությունն ու ճնշման հասարակակարգն ու նրա տեղ հաստատեց բանվորների ու գյուղացիների իսկական իշխանությունը:

Փետրվար 25-ին Վրաստան յեկավ Մեծ Հոկտեմբերը, վորը ուշացել եր գրեթե չորս տարով:

լորդը մաքրել նրանից: Վայնասուն բարձրացրին այդ ճահճի բնակիչները, վորոնց մերկացրեց ընկ. Բարոնը: Զինված վորը քարով, վորը փայտով՝ նրանք մի աննկարագրելի աղմուկ ու իրարանցում բարձրացրին, վորպեսզի խլացնեին իրենց դեմ ուղղված ժողովրդի արդար զայրույթը»: («Ախալի Կոմունիստի» №111-4 XII-1920 թ.)

«Հեղափոխական մրրիկի առաջին վորոտները»: «Վրաստանի աշխատավոր ժողովուրդը գտնվում է անտանելի դրության մեջ: Այդ բանը չի կարող ծածկել, թաքցնել, նույնիսկ իշխող կուսակցությունը: Ժողովուրդն յելք է վորոնում ու արդեն լսվում են շարժման անցնող մասսաների ձայները: Մեր յերկրի մեծ ու փոքր իշխանավորները վրդովվում են այդ դրությունից, ըստ վորում զգում են նրանք իրենց մոտալուտ վախճանը: Նրանք փորձում են իրենց սովորական ճռճռախոս ոճերով, անիրագործելի խոստումներով մի անգամ ևս քնեցնել ժողովրդին յերկար քնով ու այդպիսով շարունակել իրենց տիրապետությունը: Սակայն նրանք այլևս ուժ չունեն այդ անելու և դրա մեջ իրենք էլ համոզված են որոշավորը»:

«Ընկ. Բարոնի մերկացումն այն վակխանալիայի, վոր տեղի ուներ յերկաթուղական պարենավորման կոմիտեյում, առիթ ծառայեց հրապարակ գալու մինչ այդ ծածկված անբարոյականության: Դա պետք է համարել առաջին վորոտը մոտալուտ մրրիկի...»

«Նախազգուշական վորոտն արդեն հնչեց ու գրանդիոզ դեպքերը հեռու չեն...»: («Ախալի Կոմունիստի» №113. 7-XII 1920 թ.)

Հակահեղափոխության վերջին պլացդարմը Անդրկովկասում մաքրվեց. մուսավաթիստների ու դաշնակների յետևից կորան նաև բանվոր դասակարգի սև դավաճաններն և իմպերիալիզմի ու ռեակցիայի դեղին լակեյ-մենշևիկները:

Անտանտի նավերով Սև ծովն ընդունեց ֆեոդալ-բուրժուական Վրաստանի վերջին մնացորդներին:

Ծնունդ առավ նոր, աշխատավորական Խորհրդային Վրաստանը, բանվորների ու գյուղացիների Վրաստանը: Հեղկոմներն իրենց ձեռքն առան յերկրի կառավարությունը:

ՀԱՆՐԱՊԵՏ...
Гос. Публ. библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍԽՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏԱՆԿ

Եր.

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ 3

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

1. Վրացական գյուղն 80-ական թվականներին.
2. Հայրենի գյուղում.
3. Տեսուչ Մուսնիցկին.
4. Թիֆլիսի հաշվապահական կուրսերում.
5. Գարեջրի գործարանում.
6. Բանվոր դասի դրությունն 90-ական թվականներին.
7. Ավագ յերեց Վոստորգովը.
8. «Կվալին» և բանավեճն Ի. Ճավճավաձեի հետ.
9. Աշխատանք բանվորական խմբակներում ու ընկերներիս ձերբակալումը.
10. 1901 թվի մայիսմեկյան ցույցը Թիֆլիսում.
11. Կազմակերպության քայքայումը 1902 թվին և իմ ձերբակալումը: 9

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Սոսո Ջուղաշվիլի (Ստալին).
2. Աբել Ենուքիձե.
3. Լադո Կեցխովելի: 61

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Բանտում խռովություն (բունտ) հունիսի 8-ին.
2. Գործադուլներ և հուզմունքներ Բաթումում.
3. Առաջին անլեգալ խմբակները Բաթումի բանվորների շրջանում.

4. Գործադուլ «Черноморский Вестник» թերթի տպարանում.
5. Մարտի 9-ի անցքերը.
6. Բանվորական շարժման աշխուժացումը Բաքվում.
7. 1905 թվի հեղափոխության նախօրյակին.
8. Բաքուն առաջին հեղափոխության շրջանում.
9. Բաքվի պրոլետարիատի դերը Գուրիայի գյուղացիության զարթոնքի խնդրում։ 93

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Քութայիսի կազմակերպության մեջ.
2. Հարձակում խտապի վրա.
3. Մենշևիկների նենգությունները ու ֆրակցիոն պայքարի սկիզբը.
4. Տերրորիստական գործունեություն Քութայիսի նահանգում.
5. Պրիստավ Մախարաձե։ 129

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Ընկ. Գիորգի Թելիայի ազատվելը.
2. Քութայիսի նահանգական կոնֆերենցիան.
3. Դիսկուսիայի բորբոքումը բոլշևիկների և մենշևիկների միջև.
4. Ընկ. Սաշա Ծուլուկիձե.
5. Պրովոկատոր զինվորը.
6. Ընկ. Կամոն։ 178

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Գաղտնի տպարան Քութայիսում.
2. Կեղծ անձնագրերի կազմակերպություն.
3. Հանրապետություն 1905 թվին.
4. Ռեակցիայի աղջամուղջը.
5. Իմ ձերբակալությունս ու ազատությունս.
6. Բոլշևիկների և մենշևիկների միացյալ համագումարը։ 207

ՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Քութայիսի բանտի տակ ական փորելն ու կարևոր քաղաքական բանտարկյալների փախուստը.

2. Պրովոկատոր Ալո Մուսերիձե.
3. Դարձյալ բանտում.
4. Աֆոն՝ Հարավային Ռուսաստան.
5. Իմպերիալիստական պատերազմը։ Ազգայնական տապը և անորոշություն սոցիալիստների շարքերում.
6. Հարավ-արևմտյան ֆրոնտում։ 245

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. «Դեմոկրատական դրախտում».
2. Բանտային մարդկերների մեջ.
3. Ազատամբություն մենշևիկյան Վրաստանում.
4. Մայիսմեկյան բոլշևիկյան ցույց Թիֆլիսում 1920 թ.
5. Անտիմենշևիկյան կամպանիա մամուլում.
6. Մենշևիկյան «դեմոկրատիայի» վերջին օրերը։ . . 279

ԳԻՆԸ 1 Ռ. 75 Կ.

228

Б. БИБИНЕЙШВИЛИ

25 ЛЕТ

Гиз С. С. Р. АРМЕНИИ

г ЭРИВАНЬ

обложка худ. А. ГАРИБЯНА

ՀՀ Ազգային գրադարան
NL0411841